Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ **http://www.armin.am**

էլ. փոստ՝ **info@armin.am**

ԼԵՆԴՐՈՒՇ ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ

ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 1999 թ.

ԴՏՀ 325
ԳՄԴ 66.3 (2Հ)
Խ 988

Աշխատությունը հրատարակության է երաշխավորել
Երևանի պետական համալսարանի
հայոց պատմության ամբիոնը

Խուրշուդյան Լ.,
Խ 988 **Հայոց ազգային գաղափարախոսություն** Եր.: «Զանգակ-97», 1999

Ընթերցողի ուշադրությանը ներկայացվող սույն գրքում հեղինակը առաջին փորձն է անում տալու հայոց ազգային գաղափարախոսության հիմնադրույթների համակարգված, գիտական շարադրանքը և ձևավորման առանձնահատկությունները: Ուսումնասիրության մեջ՝ որպես ազգային գաղափարախոսության հրամայական, հայ ժողովրդի ու հայ պետականության գոյապահպանման գործոններ, ուրվագծվում են հայոց արդի քաղաքականության հիմնական խնդիրները:

. Աշխատության տարբեր գլուխներում ազգային գաղափարախոսության հիմնախնդիրների քննարկումն ամբողջական ներկայացնելու նպատակով հեղինակն անհրաժեշտ է համարել որոշ տեսակետներ, քիչ դեպքերում՝ նաև նյութեր վերարծարծել:

Գիրքը նախատեսված է ընթերցող լայն շրջանների համար:

Խ $\frac{0803000000}{0003(01)-99}$ 99 ԳՄԴ 66.3 (2Հ)

ISBN 99930-2-062-1

© Լ. Խուրշուդյան

ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ ԼԵՆԴՐՈՒՇ ԱՐՇԱԿԻ

Երեւանի պետական համալսարանի հայոց պատմության ամբիոնի վարիչ, Պատմաբանների հայկական ընկերության նախագահ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1927 թվականի մայիսի 1-ին Հայաստանի Հանրապետության Գորիսի շրջանի Շինուհայր գյուղում: Ավարտել է Երեւանի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետը: Աշխատել է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում: 1977 թվականից ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի վարիչն էր:

Զբաղվում էր հայ ժողովրդի պատմության նոր եւ նորագույն շրջանների հիմնահարցերով:

Խուրշուդյանը պատկանում է մեծանուն գիտնական Աշոտ Հովհաննիսյանի կողմից հիմնված պատմագիտական դպրոցին, նրա աշակերտն էր եւ հետեւորդը: Այդ գիտական դպրոցին բնորոշ է տեսական հայեցակարգային վերլուծական մոտեցում՝ պատմական երեւույթները լուսաբանելիս: Ստեղծագործաբար զարգացնելով այդ ուղղության ավանդույթները, նա թողեց գիտական ժառանգություն, որը լուրջ ներդրում է հայ պատմագիտության մեջ, նոր խոսք եւ ուղենիշ՝ հետագա ուսումնասիրողների համար:

Խուրշուդյանի գիտական հետաքրքրությունների շրջանակում էին գտնվում Հայոց ազգային գաղափարախոսության, Հայկական հարցի, Լեռնային Ղարաբաղի, հայ ազգային-ազատագրական պայքարի, հայ ավանդական ազգային կուսակցությունների, հայոց ցեղասպանության, Հայաստանի Առաջին Հանրապետության, քաղաքացիական կռիվների, հայ ազգայնականության եւ Անդրկովկասի հեղափոխական շարժումների պատմության հիմնախնդիրները:

«Հայոց ազգային գաղափարախոսություն» ուսումնասիրությունը տարիների տքնաջան աշխատանքի արդյունք է: 1999 թվականի գարնանը, ծանոթանալով բժիշկների անողոք ախտորոշմանը, արդեն

ծանր հիվանդ վիճակում Խուրշուդյանն իր մեջ գտավ ուժ եւ արիություն՝ ավարտին հասցնելու գիրքը: Բայց, ավա՜ղ, չհացրեց տեսնել գրքի լույսընծայումը:

Անվանի պատմաբանը վախճանվել է 1999 թ. հունիսի 7-ին:

Հրատարակության համար պատրաստ է «Հայաստանի բաժանումը 1920 թվականին» խորագրով աշխատությունը, որում հեղինակը նորովի է լուսաբանում քննարկվող պրոբլեմները:

ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԱՐՏԻԿՆԵՐԻ ԱՊԱԳԱ ՍԵՐՈՒՆԴՆԵՐԻՆ, ՈՐՈՆՑ ՀԱՐԱՏԵՎ ՊԱՅՔԱՐՈՎ Է ԿՅԱՆՔԻ ԿՈՉՎԵԼՈՒ ՄՆԿԱԽ ԵՎ ՄԻԱՑՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԸ

ՄՈՒՏՔ

Ժողովուրդներն առաջացել են դարերի խորքում: Նրանց մի մասը պատմության ընթացքում ոչնչացել է, մյուս մասը գոյատեւում է մինչեւ մեր օրերը:

Ազգային գաղափարախոսության նպատակը ազգի գոյապահպանումն է: Բոլոր այն ժողովուրդները, որոնք ունեցել են ազգային գաղափարախոսություն եւ ղեկավարվել են այդ գաղափարախոսության հիմնադրույթներով, բռնել են պատմության քննությունը:

Պատմության քննությունը չեն բռնել այն ժողովուրդները, որոնք չեն ղեկավարվել ազգային գաղափարախոսության հրամայականով:

Ահա թե ինչու ազգային գաղափարախոսությունը ժողովուրդների գոյապահպանման միակ եւ հիմնական երաշխիքն է:

Ահա թե ինչու ազգային գաղափարախոսությունը մշտապես հանդիսացել է հարատեւող բոլոր ժողովուրդների ազգային եւ պետական քաղաքականության առանցքը:

Ազգային գաղափարախոսությունն այլընտրանք չունի:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Վերջին տարիների ընթացքում, հատկապես առնչված Ղարաբաղյան շարժման նոր փուլի հետ,Հայաստանում հաճախակի են դարձել ազգային գաղափարախոսության եւ ազգային ծրագրի մշակման անհրաժեշտության մասին առաջարկները: Նման առաջարկներ սկսել են առաջ քաշվել դեռեւս 1988 թվականի միտինգներում, այնուհետեւ արծարծվել են մամուլում, գիտաժողովներում եւ ընդհանրապես բազմաբնույթ բազմաթիվ հավաքույթներում:

Ազգային գաղափարախոսության մշակման մասին կոչերը սուբյեկտիվ բնույթ չեն կրում՝ կապված այս կամ այն կուսակցության, կազմակերպության կամ գործիչի ցանկության հետ, այլ բխում են հայ ժողովրդի պատմության արդի փուլի հիմնախնդիրների լուծումը գտնելու անհրաժեշտությունից:

Հարցն այն է, որ 1988 թ. սկզբներից հայ ժողովուրդը մտնում է իր պատմության նոր, եւ դա պետք է հատուկ շեշտվի՝ բախտորոշ շրջանը: Այդ բախտորոշ շրջանը կոչվում է անցման շրջան, երբ հայ ժողովուրդը մերժելով բոլշեւիկյան սոցիալիզմը, գոյատեւման առաջընթացի նոր ուղիներ է որոնում:

Անցման շրջանում պատմությունն առաջ է քաշել մի շարք չափազանց կարեւոր հիմնախնդիրներ, որոնց լուծման գործում հայ ազգային-քաղաքական միտքը սխալվելու իրավունք չունի, քանզի սխալվելը հավասարազոր է կործանման:

Հայ ժողովրդի ներկա սերունդները պետք է լուծեն պրոբլեմների մի համակարգ, որը պատմության մեջ ստացել է «Ազգային գաղափարախոսություն» անվանումը, մի հասկացություն, որի ակունքները սկիզբ են առնում դարերի խորքում:

Ու՞ր ենք գնում, ո՞րն է մեր նպատակը, որո՞նք են հայ ժողովրդի գոյապահպանման գործոնները, ովքե՞ր են հայոց դաշնակիցները. այս եւ նման շատ հարցեր այսօր հուզում են բոլորին: Հայ քաղաքական միտքը, ամբողջ հայ ժողովուրդը որոնումների մեջ է: Մինչդեռ, այդ հարցերի պատասխանները վաղուց են տրված հայոց ազգային գաղափարախոսության կողմից:

Տեսնենք, թե ինչպես է ձեւավորվել հայոց ազգային գաղափարախոսությունը, որոնք են այդ գաղափարախոսության հիմնադրույթները եւ ինչպիսի ուղիներ են առաջարկում հայ ժողովրդին՝ ստեղծված իրավիճակից դուրս գալու համար:



ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

1. Ազգային գաղափարախոսության ակունքները. էությունը

Ազգային գաղափարախոսությունը ստեղծվել է դարերի խորքում: Յուրաքանչյուր էթնոս պատմության բեմահարթակ իջնելու պահից, որպես հիմնական խնդիր, ձեռնամուխ է լինում իր գոյապահպանման համակարգի ստեղծմանը, որը ստացել է Ազգային գաղափարախոսություն անվանումը*:

Երկիր մոլորակը իր գոյության ընթացքում վկա է եղել բազմաթիվ էթնոսների առաջացմանը, զարգացմանը եւ անհետացմանը: Բազմաթիվ ժողովուրդներ են առաջացել ու կործանվել, իսկ շատերն էլ գոյապահպանվել են ու հզորացել:

Բնականաբար, հարց է առաջանում. ո՞րն է պատճառը, ինչու՞ ցեղերի ու ժողովուրդների մի մասը անհետացավ պատմության ասպարեզից, իսկ մյուս մասը շարունակում է գոյատեւել եւ զարգանալ:

Մարդկային ցեղը ի ծնե բնության կողմից օժտված է ինքնապահպանման բնազդով: Ինքնապահպանման բնազդով օժտված են նաեւ կենդանական աշխարհի բոլոր տեսակները:

Բնության մեջ կենդանի էակների պայքարը, որը գիտական գրականության մեջ բնութագրվում է որպես «ագրեսիա», համաձայն ավստրիական գիտնական, Նոբելյան մրցանակի դափնեկիր Կ. Լորենցի, ծագել է որպես բիոլոգիական տեսակի ինքնապահպանման ֆունկցիա[1]: «Ագրեսիան,- գրում է նա,- իսկական առաջնային բնազդ է՝ ուղղված տե-

---

* *Ազգային գաղափարախոսություն հասկացության մեջ «ազգ» բառը մենք օգտագործում ենք նաեւ « ցեղ» եւ «էթնոս» իմաստով:*

1. К. Лоренц, Агрессия, Москва, 1994, стр. 30.

սակի պահպանմանը»[1]

Բիոլոգիական տեսակի ինքնապահպանման բնազդը. ինքնապահպանման ֆունկցիան էթնոսի մոտ վերածվում է գիտակցորեն մշակված ինքնապահպանման համակարգի՝ ազգային գաղափարախոսության, որի նպատակը ժողովրդի ինքնապահպանումն է:

Առանց ինքնապահպանման մեխանիզմի բնության մեջ բիոլոգիական ոչ մի տեսակ չի կարող գոյատևել:

Դա բնության օրենքն է, որի մասին՝ որպես «ճշմարիտ բանականության պահանջ», անգլիացի փիլիսոփա Թոմաս Հոբսը գրել է.

«Բնության առաջին եւ հիմնական օրենքը ասում է. անհրաժեշտ է ամենուրեք, որտեղ դա հնարավոր է, ձգտել խաղաղության, եթե խաղաղության հասնել հնարավոր չէ, պետք է միջոցներ որոնել պատերազմ վարելու համար»[2]:

Այնուհետեւ Հոբսը ավելի է խորացնում իր միտքը.

«Բնական իրավունքի առաջին հիմքը կայանում է նրանում, որպեսզի յուրաքանչյուրը իր հնարավորությունների սահմաններում պահպանի իր կյանքն ու մարմինը»[3]:

Եվ, վերջապես, երրորդ միտքը, որը ամբողջացնում է առաջին երկուսը.

«Յուրաքանչյուրը՝ ինքնապահպանման իրավունքով, իրավունք ունի նաեւ օգտվել բոլոր միջոցներից եւ կատարել բոլոր գործողությունները, առանց որոնց չի կարող ապահովել իր ինքնապահպանությունը»[4]:

Ուրեմն, բնության առաջին եւ հիմնական օրենքի պահանջը անհատի, ցեղի, ժողովրդի եւ ազգի ինքնապահպանությունն է, ազգային գաղափարախոսության ստեղծումը.

Մարդկության արեւածագին ազգային գաղափարախոսության, գոյապահպանման համակարգը չափազանց պարզունակ է եղել, սակայն, գնալով այն ավելի ու ավելի կատարյալ է դարձել:

Նախնադարյան ցեղերի եւ ժամանակակից հզոր ու զարգացած ժողովուրդների ազգային գաղափարախոսությունները ելակետային նույն խնդիրների հենքի վրա են կառուցված, սակայն, եթե առաջինը խիստ պարզունակ է եղել, ինչպես մարդկային ցեղը, ապա երկրորդը չափազանց բարդ ու կատարյալ է, ինչպես ժամանակակից ազգը:

Այն ժողովուրդները, որոնք բնության կողմից տրված ինքնապահպանման բնազդը չեն վերածում գիտակցորեն հիմնավորված ազգային գաղափարախոսության, կործանվում են:

1. Նույն տեղում. էջ 56:
2. Томас Гоббс, "Сочинение в двух томах", т.1. М.1989. стр. 295
3. Նույն տեղում. էջ 289:
4. Նույն տեղում. էջ 289-290.

Այն էթնոսները, որոնց ինքնապաշտպանական բնազդը թույլ է եղել, որոնք ի վիճակի չեն եղել ստեղծելու ինքնապահպանման անհրաժեշտ համակարգ, չեն դիմացել պատմության քննությանը եւ կործանվել են՝ իրենց տեղը զիջելով ավելի կազմակերպվածներին ու կենսունակներին: Նույնն է տեղի ունեցել նաեւ կենդանական աշխարհում:

Ահա թե ինչու ազգային գաղափարախոսությունն այլընտրանք չունի:

1908 թ. մայիսին «Մեծ Ռուսաստանի» գաղափարախոս, Ռուսաստանի խոշորագույն պետական գործիչներից մեկը՝ Պ. Ստոլիպինը Պետական Դումայում արտասանած ճառում ազգային գաղափարախոսության նշանակության մասին ասել է հետեւյալը.

«Այո, պարոնայք, ժողովուրդները երբեմն մոռանում են իրենց ազգային խնդիրները, բայց այդպիսի ժողովուրդները ոչնչանում են, նրանք դառնում են հող, պարարտանյութ, որի վրա աճում եւ ամրապնդվում են ուրիշ, ավելի ուժեղ ժողովուրդներ»[1]:

Ավելի ուշ, 1930 թվականին, իր «Մասսաների ապստամբությունը» խորագրով ուսումնասիրության մեջ, 20-րդ դարի արեւմտյան հայտնի մտածող, իսպանացի փիլիսոփա Խոսե Օրթեգա-ի-Գասսետը գրել է.

«Ազգի գոյատեւման համար բավական է, որ նա ունենա իր սեփական գոյատեւման ծրագիրը»[2]:

Այժմ տեսնենք, թե երկրի փրկության գործում ինչ տեղ ու դեր են հատկացնում ազգային գաղափարախոսությանը՝ երկարատեւ ճգնաժամի մեջ գտնվող արդի Ռուսաստանի գիտնականներն ու հասարակական- քաղաքական միտքը:

Գիտնականներ Խ. Բոկովը եւ Ս. Ալեքսեեւը գրում են.

«Գործնականում ընդհանուր ճանաչում է գտել այն տեսակետը, որ Ռուսաստանի տեւական հասարակական- քաղաքական ճգնաժամի պատճառներից մեկը հանդիսանում է հիմնավորված եւ խոր մշակված ազգային գաղափարախոսության բացակայությունը»[3]: Նույն հեղինակները, արծարծելով ազգային գաղափարախոսության հիմնախնդրի հարցը, գրում են. «Ազգային գաղափարախոսությունը հիմնախնդիր դարձնելով ազգային արժեքների եւ իդեալների պահպանությունը՝ հակազդեցության հզոր զենք է դառնում դրանց քայքայմանն ուղղված տվյալ ազգային ընդհանրության թշնամի ուժերի դեմ»[4]:

«Հոգեւոր ժառանգություն» պետական- հայրենասիրական միավո-

1. П. А. Столыпин. Нам нужна великая Россия. М. 1991. стр. 149.
2. Хосе Ортега-и- Гассет. Дегуманизация искусства. М..1991.стр.211.
3. Х.Х.Боков, С.В.Алексеев, Российская идея и национальная идеология народов России. М. 1996, стр.9.
4. Նույն տեղում. էջ 32:

ռում անունը կրող քաղաքական ուժերի բլոկը, որի մեջ է մտնում նաեւ ՌԴ կոմկուսը, ընդունելով, որ ազգային գաղափարախոսության նպատակը «Ազգի գոյապահպանությունն ու վերածնունդն է»[1], գրում է. «Մեծ տերության (Ռուսաստանի- Լ.Խ.) վերածննդի անկյունաքարը ազգի հոգեւորության ձեւավորումն է: Համազգային դոկտրինան պետք է հենվի ազգային գաղափարախոսության վրա, որը իր հերթին հանդիսանում է բոլոր վերափոխությունների կարեւորագույն պայմանը»[2]: Անդրադառնալով պատմության ընթացքում ռուսաց ազգային գաղափարախոսության ունեցած դերին, բլոկը հայտնում է հետեւյալ տեսակետը.

«Մեր Հայրենիքի պատմության կրիտիկական շրջաններում ազգին փրկել են ռուս ժողովրդի հոգեւոր ուժերի հզոր պաշարները: Այդ ֆենոմենի հիմքում ընկած է եղել ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՌՈՒՍԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ»[3]:

Այդ տեսակետներն են առաջ քաշվում նաեւ «Մանիֆեստ՝ Ռուսաստանի վերածնության» խորագիրը կրող ծրագրային փաստաթղթում, որը կազմվել է ռուսական հասարակական- քաղաքական մտքի լավագույն նվաճումների հիման վրա:Փաստաթղթում ասվում է. Մանիֆեստը ստեղծվել է ռուս փիլիսոփաներ՝ Ի.Իլինի, Ի.Սոլոնեվիչի, Ն.Բերդյաեւի, Կ.Լեոնտեւի, Ն.Դանիլեւսկու, Ս.Բուլգակովի, Վլ.Սոլովյովի, Կ.Պոբեդոնոսցեւի եւ մի շարք արդի մտածողների եւ հրապարակախոսների գաղափարների հիման վրա: Ծրագիրը կազմվել է «Ռուսաստանի վերածնության միություն» եւ «Ռուսական համայնքների կոնգրես» կազմակերպությունների նախաձեռնությամբ եւ չի հանդիսանում որեւէ առանձին քաղաքական կազմակերպության փաստաթուղթ[4]:

«Մանիֆեստ՝ Ռուսաստանի վերածնության» ծրագրային փաստաթղթում ռուսաց ազգային գաղափարախոսությունը բնութագրվում է «որպես ռուս ժողովրդի եւ ռուսական պետության գոյության գլխավոր առանցք»[5]: «Ռուսաց գաղափարախոսությունը, ասվում է փաստաթղթում, ռուսական սովորույթների եւ ժամանակակից նվաճումների սինթեզն է՝ հոգու, մշակույթի, գիտության, տեխնիկայի եւ տնտեսության բնագավառներում: Նպատակադրվածությունը դեպի ապագան նրան իրավունք է տալիս լինելու ամենաժամանակակից միջոցը՝ Ռուսաստանի

1. *Современная русская идея и государство, М. 1995, стр.41.*
2. *Նույն տեղում,էջ 39:*
3. *Նույն տեղում էջ 168:*
4. *Манифест возрождения России. В книге: Д.Рогозин, Русский ответ, Санкт- Петербург, 1996, стр.168.*
5. *Նույն տեղում, էջ 201:*

ազգային նպատակներին հասնելու համար»[1]:

Ահա այդպես է բնութագրում արդի ռուս գիտությունը, հասարակական- քաղաքական միտքը ռուսաց ազգային գաղափարախոսության էությունը, նրա տեղն ու դերը Ռուսաստանի վերածնության գործում:

Այսպիսով, ազգային գաղափարախոսությունը ժողովրդի ինքնապաշտպանության բնազդի գիտական հիմնավորումն է: Մարդը իր բանականությամբ ինքնապահպանման բնազդը բարձրացնում է ամենաբարձր մակարդակի՝ ստեղծելով ազգային գաղափարախոսություն:Ազգային գաղափարախոսությունը մարդկային ցեղի ինքնապահպանման բնազդն է՝ հիմնավորված աշխարհաքաղաքական, պատմական եւ այլ բազմաթիվ ընդհանուր ու առանձնահատուկ բնույթ ունեցող կարեւորագույն գործոններով:

Մարդկային հասարակության արդի փուլում միայն այն ժողովուրդները կարող են գոյապահպանվել եւ իրականացնել իրենց ազգային իդեաները, որոնք ունեն պատմության փորձից բխող գիտականորեն հիմնավորված ազգային գաղափարախոսություն:

Ազգային գաղափարախոսությունը չի կարող մշակվել պետական իշխանությունների կողմից եւ ժողովրդին պարտադրվել պետական որոշումով: Ազգային գաղափարախոսությունը ստեղծվում է ազգային էլիտար մտավորականության եւ ազգային կազմակերպությունների կողմից: Դասակարգային կազմակերպությունները եւս, ելնելով իրենց բնույթից, իրավունք չունեն մշակել ազգային գաղափարախոսություն եւ այն պարտադրել ժողովրդին: Ազգային գաղափարախոսությունը հանրաքվեի չի դրվում:

Եթե ազգային գաղափարախոսությունը արտահայտում է ազգային շահերը, ելնում է ազգային հիմնադրույթներից, ապա նա կամավոր կերպով ընդունվում է տվյալ էթնոսի մեծամասնության կողմից:

Աշխարհի բոլոր ժողովուրդներն էլ ունեն իրենց ազգային գաղափարախոսությունը: Սակայն, ազգային գաղափարախոսությունը տարբեր ժողովուրդների մոտ, պատմության թելադրանքով, արտահայտման տարբեր ձեւեր ունի եւ պայքարի առաջին պլանում՝ տարբեր հիմնախնդիրներ:

Այն ժողովուրդները, որոնց նկատմամբ պատմությունն անարդար է գտնվել, որոնք կորցրել են իրենց Հայրենիքը կամ Հայրենիքի մի մասը, որպես կանոն, իրենց ազգային գաղափարախոսության հիմքում առաջին հերթին դնում են Հայրենիքի ազատագրության հարցը:

Ահա թե ինչու հայերի ազգային գաղափարախոսությունը պատմա-

1. *Նույն տեղում. էջ 180:*

կանորեն ստացել է Հայկական հարց, Հայ դատ եւ Պահանջատիրություն անվանումները, որը նշանակում է կորցրած Հայրենիքի ազատագրում:

Հրեաների ազգային գաղափարախոսությունը ստացել է Սիոնիզմ անվանումը, որի նպատակը հրեաների պատմական Հայրենիքի ազատագրումն է, հրեական պետության ստեղծումը:

Բայց կան ժողովուրդներ, որոնց ազգային գաղափարախոսության առանցքը, հիմնական նպատակը պատմականորեն եղել է «հողահավաքի» քաղաքականությունը, այսինքն՝ ուրիշ ժողովուրդների նվաճած հայրենիքներից մեծ եւ հզոր կայսրության ստեղծումը:

Այդպիսի ժողովուրդների թվին են պատկանում թուրքերը, որոնց ազգային գաղափարախոսությունը՝ Պանթուրքիզմը, նպատակ է հետապնդում՝ ձուլել կամ ֆիզիկապես ոչնչացնել նվաճված ժողովուրդներին, այդ ժողովուրդների հայրենիքներից ստեղծել սեփական, թուրքական հայրենիք, իսկ այնուհետեւ բոլոր թուրքական ժողովուրդներին միավորել Մեծ Թուրանի պետության մեջ :

Այդպիսի ժողովուրդների թվին են պատկանում նաեւ ռուսները, որոնց ազգային գաղափարախոսությունը կրել է «Մոսկվան՝ Երրորդ Հռոմ» անվանումը, որի առանցքը նույնպես եղել է «հողահավաքի» քաղաքականությունը՝ այլ ժողովուրդների հայրենիքների նվաճումը, ռուսական մեծ եւ հզոր կայսրության ստեղծումը, Հռոմեական կայսրության ժառանգ դառնալը:

Նման ժողովուրդներ, որոնք գործել են «հողահավաքի» քաղաքականության հրամայականով, ստեղծել են հսկայածավալ կայսրություններ, պատմության մեջ շատ են եղել: Սակայն, այդ կայսրությունները ի վերջո որոշակի օրինաչափությամբ քայքայվել են, իսկ կայսերաստեղծ ժողովուրդները ամփոփվել են սեփական հայրենիքի սահմաններում: Բոլոր կայսրություններին սպասում է նույն ճակատագիրը, եթե նրանք շուտափույթ ճանապարհ չգտնեն այդ տերությունների կազմում գտնվող բոլոր ժողովուրդներին Եվրոմիության նման մի միության մեջ համախմբելու համար:

Գոյություն ունի նաեւ ժողովուրդների երրորդ խումբ, որոնց նկատմամբ պատմությունը բարեհաճ է գտնվել, որոնք կարողացել են դիմակայել պատմության փորձություններին եւ լուծել ամբողջական հայրենիքի հարցը: Այդ ժողովուրդները տարածքային հարցեր չունեն: Նրանք ունեն անկախ եւ ամբողջական հայրենիք: Այդպիսի ժողովուրդների ազգային գաղափարախոսության հիմնական նպատակը, բնականաբար, դառնում է անկախ Հայրենիքի պաշտպանության եւ անվտանգության ապահովման խնդիրը, որը անվանվում է «Ազգային անվտանգության

կոնցեպցիա»: Այս խմբին պատկանող բոլոր ժողովուրդներն էլ ունեն իրենց ազգային անվտանգության կոնցեպցիան, որը եւ հանդիսանում է նրանց ազգային գաղափարախոսությունից բխող ազգային ծրագիրը:

Այսպիսով, այս խմբի ժողովուրդների ազգային գաղափարախոսության առաջնահերթ խնդիրը արդի փուլում պատմության հրամայականով դառնում է նրանց հայրենիքների անվտանգության ապահովումը, որն իր մեջ ամփոփելով ազգի ռազմավարական եւ մարտավարական ծրագրերը, հանդես է գալիս որպես «Ազգային անվտանգության կոնցեպցիա»:

2.ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ազգային գաղափարախոսությունը բաղկացած է՝ ազգի գոյապահպանման, ամբողջական Հայրենիքի, անկախ պետականության, ազգային մշակույթի եւ կրոնի հիմնադրույթներից:

Ազգի, Հայրենիքի, պետականության, մշակույթի եւ կրոնի գաղափարները այն հիմնաքարերն են, որոնց վրա կառուցվում է Ազգային գաղափարախոսության ամբողջ համակարգը: Միաժամանակ, բնականաբար, Ազգային գաղափարախոսության համակարգում յուրաքանչյուր ժողովուրդ՝ պայմանավորված իր պատմական զարգացման առանձնահատկություններով, ունի նաեւ յուրահատուկ խնդիրներ:

Ազգային գաղափարախոսությունը բաղկացած է ռազմավարական եւ մարտավարական ծրագրերից:

Ռազմավարական ծրագիրը բաղկացած է՝ ազգի գոյապահպանման, ամբողջական հայրենիքի, պետականության, մշակույթի եւ կրոնի հիմնադրույթներից: Այդ ծրագրում անհրաժեշտաբար իրենց պատշաճ տեղն են գրավում նաեւ յուրաքանչյուր ազգի պատմական առանձնահատկություններից բխող առանձնահատուկ հիմնախնդիրները:

Ազգային գաղափարախոսության հաղթանակի համար բավական չէ միայն ռազմավարական ճիշտ ծրագրի մշակումը: Հաջողության համար պետք է նաեւ բոլոր անհրաժեշտ գործոնները հաշվի առնող մարտավարական մանրակրկիտ մշակված եւ գիտականորեն հիմնավորված ծրագիր: Մարտավարական ծրագիրը ժողովրդի պատմության տարբեր փուլերում, տարբեր պատմական պայմաններում ռազմավարական ծրագրի հիմնախնդիրների լուծման ուղիների համակարգն է: Եթե մարտավարական ծրագիրը չի ելնում պատմական իրականության բոլոր անհրաժեշտ գործոնների գիտական, պատմական եւ քաղաքական վերլուծություններից, նրա մեխանիզմը չի գործում: Հետեւաբար, մարտավարական ծրագրի տապալմամբ չի իրականանում նաեւ ռազմավարական ծրագիրը: Ռազմավարական ծրագիրը կյանքի է կոչվում դարերի, իսկ մարտավարական ծրագիրը՝ պատմական ավելի կարճ ժամանակահատվածի համար:

Ազգային գաղափարախոսության բոլոր հիմնադրույթները, ռազմավարական եւ մարտավարական ծրագրերը մշտապես պետք է գտնվեն պետության, ժողովրդի, բոլոր ազգային կազմակերպությունների ուշադրության կենտրոնում, որի հիմքում ընկած են ազգային շահերը:

Առաջին հիմնադրույթ

ԱԶԳԻ ԳԱՂԱՓԱՐԸ. ԱԶԳԱՊԱՀՊԱՆՈՒՄԸ՝ ԳԵՐԽՆԴԻՐ

Ազգային գաղափարախոսության հիմնախնդիրը ժողովրդի գոյապահպանումն է, նրա ազատ, անվտանգ, բնականոն ու բազմակողմանի զարգացումը:

Ազգը կենդանի օրգանիզմ է, պատմաէթնիկական կատեգորիա: Յուրաքանչյուր ազգի գոյապահպանման համար անհրաժեշտ են հետեւյալ ԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ. ԼԵԶՈՒ, ՄՇԱԿՈՒՅԹ,ՊԱՏՄԱԿԱՆ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ, ՄՏԱԾՈՂՈՒԹՅՈՒՆ, ԻՆՔՆԱԳԻՏԱԿՑՈՒԹՅՈՒՆ, ԲՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ, ՀՈԳԵԿԱՆ ԿԵՐՏՎԱԾՔ, ՆԿԱՐԱԳԻՐ, ՁԳԱՑՈՒՄ՝ ԱԶԳԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ, ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՊԱՐՏՈՒԹՅՈՒՆ, ՈԳԻ, ԸՆՏԱՆԻՔ, ԿՐՈՆ, ՃԱՇԱԿ, ԿԵՆՑԱՂ, ԷԹՆԻԿԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐ ու ՍՈՎՈՐՈՒՅԹՆԵՐ եւ այլն:

Դարերի ընթացքում ճակատագրի ընդհանրությամբ հիշյալ ազգային գործոնների հիման վրա ձեւավորվում է յուրաքանչյուր ազգի ազգային ինքնությունը, ազգային դիմագիծը եւ ազգային անհատականությունը: Թվարկված գործոնները մտնում են ազգի գաղափարի մեջ եւ հանդիսանում ազգային գաղափարախոսության բաղկացուցիչ տարրեր:

Այդ ազգային գործոնները գիտության կողմից տարբեր խորությամբ եւ տարբեր ընդգրկումներով ուսումնասիրվել են: Այդ բնագավառում ձեռք են բերվել լուրջ նվաճումներ, գոյություն ունեն վեճեր եւ իրարամերժ տեսակետներ: Սակայն, այդ նույնը չի կարելի ասել հայոց գիտության մասին, որը այդ ազգային գործոնները՝ ազգային գաղափարախոսության ուսումնասիրության տեսանկյունից չի քննարկել: Մինչդեռ անվիճելի է, որ այդ գործոններից յուրաքանչյուրը առանձին ուսումնասիրության նյութ է, առանց որի հնարավոր չէ տալ ազգի հիմնադրույթի էությունը, տեղն ու դերը ազգային գաղափարախոսության համակարգում:

Մասնագիտական գրականությունը ժողովուրդների պատմության, ազգային գաղափարախոսության մեջ բախտորոշ, վճռական դեր է հատկացնում հատկապես ազգային բնավորությանը, ազգային հոգե-

կան կերտվածքին եւ ընդհանրապես ազգային հոգեբանությանը[1]:

Անվիճելի է, որ պատմության փորձությունները հաղթահարելու, գոյապահպանման դարավոր կռվից հաղթող դուրս գալու համար ազգը պետք է ունենա ուժեղ ազգային բնավորություն, հոգեկան կերտվածք, ազգային դիմագիծ:

Լեբոնը որպես ազգային բնավորության կարեւորագույն դիմագծեր նշում է՝ քաջությունը, էներգիան, հաստատակամությունը, կամքը եւ կամքից բխող ընդունակությունները, գաղափարի համար անձնազոհության ընդունակությունը, անհաղթահարելի համառությունը, ինքնատիրապետումը, նախաձեռնության ոգին, բարոյականությունը՝ որպես ժառանգական հարգանք օրենքների նկատմամբ եւ այլն[2]: Ընդ որում, նա ընդգծում է, որ եթե որեւէ ազգ ընդունակ չէ ինքնատիրապետման, ապա նա տիրապետվում է ուրիշների կողմից:

Պատմական հարուստ նյութի ընդհանրացման հիման վրա Լեբոնը ազգային բնավորության եւ ազգի հոգեկան կերտվածքի մասին հանգում է հետեւյալ չափազանց կարեւոր եզրահանգումներին. բնավորության ազդեցությունն ամենահզոր գործոնն է ժողովուրդների կյանքում, բնավորության վրա են հենվում հասարակությունները, կրոնները եւ կայսրությունները, բնավորությունն է որոշում ժողովուրդների ճակա-

1. Անհրաժեշտ ենք համարում բազմաթիվ ուսումնասիրություններից նշել մի քանիսը.
   1. Гюстав Лебон. Психология народов и масс. Санкт-Петербург. 1995.
   2. Эрих Фромм. Анатомия человеческой деструктивности, М.1994.
   3. Преступная толпа . Сборник.
      С.Сигеле. Преступная толпа (Опыт коллективной психологии)
      З.Фрейд. Психология масс и анализ человеческого Я
      В. Вундт. Проблемы психологии народов М. 1998.
   4. Революционный невроз. Сборник
      А. Фуллье. Психология французского народа
      О. Кабанес и Л. Насс. Революционный невроз .М.1998.
   5. Психология толп. Сборник
      Г.Лебон. Психология толп
      Г.Тард. Мнение и толпа. М. 1998.
   6. М.Л. Рукепт. О знании масс (Опыт политической психологии). М.1998.
   7. Карл Густав Юнг. Душа и миф. Шесть архетипов, Киев-Москва. 1997.
   8. С.Московичи. Век толп. М. 1996.
   9. В. Одайник. Психология политики, "Овента" 1996.
2. Гюстав Лебон. Психология народов и масс, Санкт-Петербург. 1995.

տագիրը, բնավորությունն է ժողովուրդներին հնարավորություն տալիս զգալու եւ գործելու, պատմությունը ժողովուրդների բնավորության արդյունքն է, հիմնական օրենքները բխում են ժողովուրդների բնավորությունից եւ ստեղծում են ազգի ճակատագիրը, յուրաքանչյուր քաղաքակրթության զարգացման ընթացք հիմնականում բխում է բնավորությունից, ժողովրդի ճակատագրի մեկնության բանալին նրա բնավորությունն է եւ հավատալիքը, ժողովրդի պատմությունը միշտ բխում է նրա հոգեկան կերտվածքից, ռասայի հոգեկան կերտվածքից է բխում նրա հասկացությունն աշխարհի եւ կյանքի մասին, հետեւաբար՝ վարքագիծը եւ վերջապես՝ պատմությունը[1]:

Ինչպես տեսնում ենք, համաձայն Լե Բոնի, ազգի բնավորությունը, հոգեկան կերտվածքը վճռորոշ դեր են կատարում նրա պատմական ճակատագրում:

Բայց չէ՞ որ պատմության անբարենպաստ ընթացքը ազդում է ժողովրդի բնավորության որակի վրա: Հատկապես աննկատ չի անցնում օտարի դարավոր տիրապետությունը ազգի բնավորության եւ հոգեկան կերտվածքի վրա: Դարերի ընթացքում սկսում են խաթարվել ժողովրդի բնավորության ավանդական գծերը, հոգեկան կերտվածքը:

«Բնավորության որակը հաստատուն է եւ կազմում է յուրաքանչյուր ժողովրդի բնավորության անփոփոխ էլեմենտը»[2],- ընդգծում է Լե Բոնը,ավելացնելով, որ դրանից չի կարելի եզրակացնել, թե ռասայի հոգեբանական առանձնահատկությունները բոլորովին՝ փոփոխության չեն ենթարկվում: Ժողովրդի հոգեկան կերտվածքը եւ բնավորությունը փոխվում են դանդաղ, դարերի ընթացքում, շատ դանդաղ ժառանգական կուտակումների միջոցով[3]:

«Ժողովուրդները,- գրում է Լե Բոնը,- կործանվում են իրենց բնավորությունների որակի փչացմանը համաչափ»[4]: Ժողովուրդների կործանման հիմնական գործոնը միշտ եղել է նրանց հոգեկան կերտվածքի փոփոխությունը, որը բխել է նրանց բնավորության որակի ցածրացումից[5]:

Պատմությունը դաժան է, փորձությունները՝ անհամար: Պատմության շրջադարձային պահերին ոչ բոլոր ժողովուրդներն են քննություն բռնում:

«Ժողովուրդներին դարեր են պետք հոգեկան կերտվածք ձեռք բերե-

1. Гюстав Лебон . Психология народов и масс, Санкт-Петербург, 1995. стр. 32-35,51. 54. 105. 122.
2. Լե Բոն. նշվ. աշխ., էջ 29:
3. Նույն տեղում. էջ 28:
4. Նույն տեղում. էջ 76:
5. Նույն տեղում. էջ 131:

լու համար, բայց երբեմն նրանք այդ հոգեկան կերտվածքը կորցնում են շատ կարճ ժամանակում»,- նշում է Լե Բոնը, նկատի ունենալով այդպիսի պատմական շրջադարձային պահերը[1]:

Այս կարեւոր հանգամանքը պետք է երբեք չմոռանան բոլոր այն ժողովուրդները, որոնք ցանկանում են մնալ պատմության բեմահարթակում:

Ազգային բնավորության դերը կարեւորում են հատկապես ճապոնացիները, որոնց ազգային գաղափարախոսությունը հիմնված է ժողովրդի ավանդույթների, ազգային առանձնահատկությունների եւ ինքնատիպության վրա:

«Ճապոնական ոգին» ձեւավորվել է դարերի ընթացքում եւ ընկած է «Ճապոնականության» գաղափարախոսության հիմքում: Այդ գործընթացում մեծ դեր է կատարում ճապոնական նացիոնալիզմը, որպես ազգային ավանդույթների եւ առանձնահատկությունների անզիջում պաշտպան[2]:

Ճապոնիայում ստեղծված է «Ազգային բնավորության ուսումնասիրության կոմիտե»: Այդ Կոմիտեն հինգ տարին մեկ անգամ ուսումնասիրում է ճապոնացիների ազգային բնավորության բնագավառում կատարվող փոփոխությունները եւ ձեռք է առնում համապատասխան միջոցառումներ: Ճապոնիայում դա համազգային խնդիր է[3]:

Շնորհիվ ազգային գաղափարախոսության, ճապոնացիները կարողացել են դարերի ընթացքում պահպանել իրենց ազգային բնավորությունը, հոգեկան կերտվածքը, հոգեբանությունը եւ ընդհանրապես բոլոր կարեւոր ազգային ավանդույթներն ու առանձնահատկությունները:

Պատմության պրոցեսին հետեւելիս, որպես կանոն, աչքի է խփում այն երեւույթը, երբ նույն ժողովուրդը մի էպոխայում բնավորության, հոգեկան կերտվածքի հերոսական դրսեւորում է ցուցաբերում, իսկ այլ էպոխայում՝ գոյատեւման համար անհրաժեշտ բնավորության այդ գծերի կորուստ: Նման ժողովուրդները սկսում են կրել անհաջողություններ, պարտություններ, շատ անգամ կորցնում են անկախությունը, իսկ երբեմն էլ՝ կործանվում:

Անցյալի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ շատ ժողովուրդներ պատմության անբարենպաստ զարգացման պայմաններում, հատկապես երբ կորցնում են անկախությունը եւ երկարատեւ ժամանակահատված գտնվում ուրիշ ժողովուրդների տիրապետության տակ, մանավանդ եթե նվաճողն էլ քաղաքակրթության ցածր մակարդակի վրա է

1. Նույն տեղում, էջ 141:
2. «Дух Ямато» в прошлом и настоящем, М. 1989.
3. Նույն տեղում, էջ 28:

գտնվում, սկսում են կորցնել տարբեր չափերով ու խորությամբ, իրենց ազգային բնավորության ավանդական գծերը եւ աստիճանաբար փոխել հոգեկան կերտվածքը:

Այդպիսի ժողովուրդները ձեռք են բերում թերարժեքության բարդույթ, որը Քրիստափոր Միքայելյանը բնութագրում է որպես «Պատմական չարիք»[1]:

Թերարժեքության բարդույթի դրսեւորման հիմնական ձեւերն են՝ բնավորության ավանդական գծերի թուլացում, երբեմն էլ՝ անհետացում, զոհի բարդույթ, սեփական ազգային հավաքական ուժի նկատմամբ անվստահություն, «Ես»-ի հաղթանակ «Մենք»-ի նկատմամբ, ազգային հպարտության կորուստ, անմիաբանություն, ազգային համաձայնության գաղափարի թուլացում կամ լիովին անհետացում, պարտվողականություն, ստրուկի հոգեբանության առաջացում եւ այլն: Բնավորության նման գծերով, հատկապես առանց ազգային համաձայնության, համերաշխության, ոչ մի ժողովուրդ չի կարող հասնել պետական անկախության եւ հարցականի տակ է դնում անգամ իր գոյապահպանման հնարավորությունը:

Պատմական տարբեր էպոխաներում ժողովուրդների հերոսական վերելքները եւ անպատվաբեր վայրէջքները, հաղթանակներն ու պարտությունները շատ հաճախ պայմանավորված են հիշյալ պատմահոգեբանական գործոններով, որոնք պատմագիտության մեջ, ցավոք, միշտ չէ, որ հաշվի են առնվում:

Թերարժեքության բարդույթ ունեցող ժողովուրդները, եթե ցանկանում են գոյապահպանվել եւ մնալ պատմության բեմահարթակի վրա, առաջին հերթին պետք է ձերբազատվեն այդ «պատմական չարիքից»: Ժողովրդի ազգային, հասարակական- քաղաքական ուժերը, կուսակցությունները պետք է քաջություն ունենան բացահայտելու թերարժեքության բարդույթի արմատները, արտահայտությունները եւ գտնելու դրանց վերացման ուղիները: Իհարկե, հաճելի գործ չէ քննարկել սեփական ժողովրդի՝ պատմության պրոցեսում ձեռք բերած բնավորության արատավոր գծերը: Բայց ավելի լավ է անել այդ տհաճ գործը, քան թե ականատես լինել ազգի դանդաղ կործանմանը: Սեփական երկիրը առանց պայքարի, առանց արյան թշնամուն են թողնում միայն նրանք, որոնց մեջ թուլացել են կամ բթացել Հայրենիքի եւ անկախ պետականության գաղափարները:

Վերը շարադրվածից բխում է այն միակ եզրակացությունը, որ թե-

1. Քրիստափոր Միքայելյան. Պատմական չարիք. Դրոշակ. 1900թ. համ. 6,9. 1901 թ. համ.3:

ռարժեքության բարդույթ ունեցող ժողովուրդների քաղաքական ղեկավարությունը, ի տարբերություն լիարժեք զարգացում ապրած ժողովուրդների, ազատագրական պայքարում ունի նաեւ ուրույն խնդիրներ, որոնք չլուծելու դեպքում հաջողության չի կարող հասնել:

Ազգային գաղափարախոսության տեսանկյունից՝ ազգային հոգեբանության, հոգեկան կերտվածքի եւ ազգային բնավորության հիմնախնդիրների քննարկումը ամբողջական համարել չի կարելի, եթե չանդրադառնանք մի կարեւոր պրոբլեմի եւս:

Հարցն այն է, որ արդի գիտությունը պետք է պատասխան տա նաեւ այն չափազանց կարեւոր հարցին, թե ներկա սերունդների գործունեության վրա ի՞նչ ազդեցություն են թողնում մեր նախնիները: Չէ՞ որ ժողովրդի ներկա սերունդները իրենց գործունեության մեջ լիովին ազատ չեն եւ անգիտակցաբար ղեկավարվում են ինչ-որ չափով նաեւ նախնիների թողած բարոյական նորմերով, դրական եւ բացասական գործոններով, որոնք որպես գենետիկական ժառանգություն կրում են իրենց հոգեբանության, հոգեկան կերտվածքի, ավանդույթների ու սովորույթների մեջ:

«Ռասայի հոգեկան կերտվածքը,- գրում է Լե Բոնը,- իրենից ներկայացնում է ոչ միայն այն կազմող կենդանի էակների սինթեզը, այլեւ հատկապես նրա ստեղծմանը օժանդակած բոլոր նախնիների սինթեզը: Ոչ միայն ապրողները, այլեւ մեռածներն են գերակշիռ դեր կատարում որեւէ ժողովրդի արդի կյանքում: Նրանք են նրա բարոյականության արարիչները եւ նրա վարքագծի անգիտակից շարժիչները»[1]:

Արդի սերունդների ճակատագրում նախնիների ունեցած դերի գնահատման հարցում Լե Բոնը ավելի է առաջ գնում, գրելով. «Ժողովրդի ճակատագիրը ավելի մեծ չափով ղեկավարում են մեռած սերունդները, քան ապրողները: Ռասայի հիմքը դրված է հենց միայն նրանց կողմից: Հարյուրամյակներ հարյուրամյակների ետեւից նրանք արարել են գաղափարներ եւ զգացումներ եւ, հետեւաբար, մեր վարքագծի բոլոր դրդապատճառները: Մեռած սերունդները մեզ են փոխանցում ոչ միայն իրենց ֆիզիկական կազմակերպությունը, նրանք մեզ են ներշնչում նաեւ իրենց մտքերը: Մեռածները ապրողների միակ անվիճելի տերերն են: Մենք կրում ենք նրանց սխալների ծանրությունը, մենք պարգեւատրվում ենք նրանց առաքինությունների համար»[2]:

Սույն հիմնախնդրի բարձրացման, նրա բազմակողմանի ուսումնասիրության տեսանկյունից հետաքրքիր մոտեցումներ է թելադրում հատ-

1. Լե Բոն. նշվ. աշխ. էջ 139:
2. Նույն տեղում, էջ 20:

կապես ազգային հոգեբանությունը: Ժողովուրդների հոգեբանության հիմքում մասնագետները, որպես հիմնական պրոբլեմներ, դնում են՝ դիցաբանությունը, ավանդույթները եւ լեզուն[1]:

Ազգային հոգեբանությունը սկզբնավորվել է մարդկության պատմության ՆԱԽԱՍԿԶԲՆԱԿԱՆ շրջանից՝ որպես ազգային գաղափարախոսության հիմնական բաղադրամասերից մեկը: Հետեւաբար, ազգային գաղափարախոսության եւ մասնավորապես ազգային հոգեբանության ձեւավորման ակունքների ուսումնասիրությունը անհրաժեշտորեն պետք է սկսել ԴԻՑԱԲԱՆՈՒԹՅԱՆ, ՍՈՎՈՐՈՒՅԹՆԵՐԻ, ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԻ ԵՎ ԼԵԶՎԻ ՀԱՄԱԽՆԴԻՐՆԵՐԻ քննարկումից:

Այս ուղին է ներկա սերունդներին տանում դեպի ՆԱԽՆԻՆԵՐԻ ԱՇԽԱՐՀԸ, թույլ տալիս հասկանալու նրանց բնավորությունը, հոգեկան կերտվածքը, հոգեբանությունը եւ այն ազդեցությունը, որ նրանք ունեն ժողովուրդների արդի պատմության վրա:

Անվիճելի է այն թեզը, որ «Առասպելաբանական նյութը եղել է առասպելաստեղծ ժողովուրդների եւ՝ ինքնաարտահայտման ձեւը, եւ՝ մտածողության ձեւը, եւ՝ կյանքի ձեւը»[2]:

«Դիցաբանությունը պատմում է ակունքների կամ ծայրահեղ դեպքում՝ այն մասին, ինչ եղել է նախասկզբնական շրջանում»[3]:

Ահա թե ինչու առասպելներն ունեն կենսականորեն կարեւոր նշանակություն, դրանք հենց պրիմիտիվ ցեղի կյանքն են: «Եվ եթե ցեղը կորցնում է իր դիցաբանական ժառանգությունը, նա անմիջապես տրոհվում է եւ քայքայվում... Ցեղի դիցաբանությունը նրա կենդանի կրոնն է, որի կորուստը ամենուրեք եւ միշտ, անգամ քաղաքակիրթ ժողովուրդների մոտ բարոյական կատաստրոֆա է»[4]:

Վ.Վունդտը այդ հիմնախնդրին տալիս է հետեւյալ բացատրությունը.

«Լեզուն իր մեջ բովանդակում է ժողովրդի հոգու մեջ ապրող պատկերացումների եւ նրանց կապող օրենքների ընդհանուր ձեւը:

Առասպելները պահում են իրենց մեջ այդ պատկերացումների նախասկզբնական բովանդակությունը՝ զգացումների եւ հակումների պայմանավորվածության մեջ: Վերջապես սովորույթները իրենցից ներկայացնում են այդ պատկերացումներից եւ հակումներից առաջացած կամքի ընդհանուր ուղղությունները»[5]:

1. В.Вундт, Проблемы психологии народов. В сборнике: Преступная толпа. М. 1998, 225.
2. К.Г. Юнг, Душа и миф. Шесть архетипов, Киев- Москва, 1997, стр. 15.
3. Նույն տեղում, էջ 18:
4. Նույն տեղում, էջ 89-90:
5. В.Вундт, Проблемы психологии народов, в сборнике: Преступная толпа. М. 1998, стр 225.

Վունդտի տեսակետի համաձայն, «դիցաբանություն» տերմինը ընդգրկում է ամբողջ նախնադարյան աշխարհընկալումը, իսկ «սովորույթ» հասկացությունը ընդգրկում է միաժամանակ իրավական կարգի այն բոլոր սաղմերը, որոնք նախորդում են իրավունքի համակարգի՝ որպես պատմական պրոցեսի, պլանաչափ զարգացմանը[1]:

Ավանդույթները չափազանց կարեւորվում են նաեւ Լե Բոնի կողմից, որը այդ մասին գրում է. «Ավանդույթներում արտահայտվում են ռասայի անցյալի գաղափարները, պահանջմունքները եւ զգացումները: Նրանցում ամփոփվում է՝ մեզ ճնշող ամբողջ ծանրությամբ, ռասայի սինթեզը»[2]:

Որպես ազգի հոգեբանության հատկանիշների ձեւավորման հիմնական գործոն, գրում են արդի ռուս գիտնականները, հանդիսանում է «կուլտուրական միջավայրի ազդեցությունը», որովհետեւ իր պատմական զարգացման պրոցեսում յուրաքանչյուր էթնոս ստեղծում է կուլտուրական արժեքների իր սեփական համակարգը, նույն թվում՝ լեզուն եւ որոշակի էթնիկական մոդելներ, էսթետիկական արժեքների իր համակարգը[3]: Նրանք գտնում են, որ ազգային գաղափարախոսությունը սերտորեն կապված է էթնիկական հոգեբանության հետ, որը հանդիսանում է նրա հատկանիշներից մեկը[4]:

Ազգային գաղափարախոսության բոլոր գործոնների պահպանման ու զարգացման հիմնական միջոցը մշակույթն է: Առանց ազգային մշակույթի ազգ գոյություն ունենալ չի կարող: Ազգային գաղափարախոսության բոլոր գործոնների ձեւավորման եւ զարգացման համար առաջին հերթին անհրաժեշտ է համապատասխան կուլտուրական միջավայր՝ ազգային մշակույթ:

Ահա թե ինչու մշակույթի, կրթության եւ գիտության համակարգերը իրենց բնույթով պետք է լինեն ազգային եւ մշտապես գտնվեն պետության ուշադրության կենտրոնում:

Ժողովրդի գոյապահպանման կարեւորագույն գործոններից է պատմական հիշողությունը: Առանց պատմական հիշողության ժողովուրդ չկա: Ազգի խաղաղ ոչնչացումը սկսվում է պատմական հիշողության ոչնչացումից: Այդ պատճառով էլ լեզուն եւ պատմությունը ժողովրդի գոյապահպանման ու զարգացման ամենակարեւոր գործոններն են համարվում: Լեզուն եւ պատմությունը հավերժական բնույթ ունեցող վեր-

1. Նույն տեղում, էջ 225
2. Լե Բոն, նշվ. աշխատությունը, էջ 204:
3. Х.Х.Боков, С.В.Алексеев. Российская идея и национальная идеология народов России, М. 1996, стр. 28.
4. Նույն տեղում, էջ 27:

դասակարգային, վերկուսակցական համաժողովրդական արժեքներ են:

Ազգային գաղափարախոսության կրողը պատմությունն է: Դարերի ընթացքում ժողովրդի գոյապահպանման պայքարի փորձը, ազգի գաղափարը սերնդից սերունդ է փոխանցվել պատմական հիշողության միջոցով: Պատմական հիշողության կորուստը հանգեցնում է ազգի գաղափարի կորուստին:

Ժողովրդապահպանության գործում պատմական հիշողության եւ ընդհանրապես պատմության խաղացած կարեւորագույն դերից բխում է պատմության ազգային կոնցեպցիայի մշակման անհրաժեշտությունը, որը պետք է կազմի ազգային գաղափարախոսության տարրերից մեկը:

Ժողովրդի պատմության մեջ շատ հաճախ, արմատական հեղափոխություններից հետո, ամեն մի նոր ղեկավարություն, կարծելով թե իրենով է սկսվում պատմությունը, փորձում է այն հարմարեցնել իր քաղաքականությանը: Սկսվում է պատմությունը «նորովի իմաստավորելու», մկրատելու շրջան: Սակայն, անցնում են ժամանակները, գալիս են նոր սերունդներ, պատմությունը դեն է նետում փրփուրը եւ նորից ընթանում դարերի հարթած ճանապարհով:

Այդ առումով էլ կարելի է ասել, որ լեզվի եւ պատմության «վերափոխողների» դեմ մղած պայքարը իր նշանակությամբ չի զիջում ժողովուրդների պատմության մեջ տեղ գտած բախտորոշ հերոսամարտերին:

Ժողովրդին ինքնապահպանման բնազդից զրկելու եւ ոչնչացնելու հիմնական միջոցը դպրոցի, բուհի եւ ազգային մշակույթի ապազգայնացումն է, պատմական հիշողությունից զրկելը, նացիոնալիզմի դեմ խաչակրաց արշավանքի կազմակերպումը:

ՆԱՑԻՈՆԱԼԻԶՄԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Նացիոնալիզմը ազգի ինքնապահպանման բնազդի արտահայտման ձեւն է: Ազգին սպառնացող վտանգի դեմ ինքնապահպանման բնազդի մեխանիզմը առաջ է քաշում նացիոնալիզմը: Նացիոնալիզմը ոչ թե հարձակողական, այլ ինքնապաշտպանական զենք է:

Երբ նախնադարում առաջին ցեղը ընդհարվում է մի այլ ցեղի հետ, առաջանում են «Մենք» եւ «Նրանք» հասկացությունները: Իսկ «Մենք» եւ «Նրանք» հասկացությունների առաջացմամբ ծնունդ է առնում նացիոնալիզմը՝ ցեղի ինքնապահպանման բնազդը, որը հիմք է դառնում ազգային գաղափարախոսության համակարգի ստեղծման համար: Նացիոնալիզմը ամբողջ ժողովրդի ինքնապահպանման բնազդի արտահայտությունն է:

Այդ հիմնախնդրի գիտական պատասխանը տալիս է Էրիխ Ֆրոմը՝ ագրեսիայի երկրորդ տեսակի իր հետեւյալ սահմանումով. «Անհրաժեշտ է խստորեն տարբերել կյանքի պահպանման ֆունկցիա ունեցող բարորակ ագրեսիան՝ կյանքի պահպանման հետ կապ չունեցող չարորակ ագրեսիայից»[1]: Ֆրոմը, ինչպես տեսնում ենք, համաձայնելով Կ.Լորենցի տեսակետին՝ ինքնապահպանման բնազդը որպես ագրեսիա բնութագրելու մասին, միաժամանակ գտնում է, որ մարդու մոտ պետք է տարբերել ագրեսիայի երկու բացարձակ տարբեր տեսակներ:

Առաջին տեսակը, որն ընդհանուր է եւ մարդու, եւ բոլոր կենդանիների համար, «բարորակ ագրեսիան է, որը ծառայում է անհատի եւ ցեղի գոյատեւման գործին. նա ունի գոյատեւման կենսաբանական ձեւեր եւ հանգչում է, երբ վերանում է վտանգը»[2]: Կյանքի պահպանման ֆունկցիա ունեցող բարորակ ագրեսիան Ֆրոմը բնութագրում է որպես պաշտպանական ագրեսիա, գրելով. «Պաշտպանական ագրեսիայի մեխանիզմը «տեղադրված է» մարդու եւ կենդանու ուղեղում եւ կոչված է պահպանելու նրանց կենսական կարեւոր շահերը՝ վտանգներից»[3]: Քանի որ պաշտպանական ագրեսիան՝ կողավորված գենետիկական ռեակցիա է՝ անհատին սպառնացող վտանգի կապակցությամբ, այդ

1. Էրիխ Ֆրոմ. Անատոմիա չելովեչեսկոյ դեստրուկտիվնոստի, Մ., 1994, էջ 163
2. Նույն տեղում, էջ 22:
3. Էրիխ Ֆրոմ. Անատոմիա չելովեչեսկոյ դեստրուկտիվնոստի, Մ., 1994, էջ 162

պատճառով էլ փոխել նրա կենսաբանական հիմքերը հնարավոր չէ[1]: Պահպանական բարորակ ագրեսիան ծնվում եւ մեռնում է անհատի եւ էթնոսի հետ՝ որպես բնության կողմից նրանց շնորհված գոյապահպանման կենսաբանական հզոր զենք: Առանց այդ մեխանիզմի մարդկությունը վաղուց դադարած կլիներ գոյություն ունենալուց: Կենսաբանական բնույթ ունեցող «Ես»-ի գոյապահպանման բնազդը էթնոսի մոտ վերածվում է «Մենք»-ի հավաքական գոյապահպանման բնազդի, որը հասարակական գիտությունների մեջ բնութագրվում է որպես նացիոնալիզմ:

Ագրեսիայի երկրորդ տեսակը Ֆրոմը բնութագրում է որպես «չարորակ» ագրեսիա: Համաձայն Ֆրոմի, չարորակ ագրեսիան ապակառուցողական է եւ դաժան, որը հատուկ է միայն մարդուն եւ գործնականում բացակայում է այլ կաթնասունների մոտ. նա չունի ֆիլոգենետիկական ծրագիր, չի ծառայում կենսաբանական հարմարվողականությանը եւ չունի ոչ մի նպատակ»[2]:

Այսպիսով, բարորակ ագրեսիան պաշտպանողական ֆունկցիա ունեցող նացիոնալիզմն է, չարորակը՝ ապակառուցողական, դաժան ու հարձակողական՝ ազգայնամոլությունը, շովինիզմը:

Անհրաժեշտ է ընդգծել նաեւ, որ Էրիխ Ֆրոմի կողմից բնական գիտությունների հիման վրա փայլուն կերպով հիմնավորված սույն տեսակետը գիտական շրջանառության մեջ էր գտնվում շատ վաղուց: Ս.Դուբնովը դեռ 1907 թվականին հրատարակած իր աշխատության մեջ վերլուծելով նացիոնալիզմի հիմնախնդիրները, գրել է, որ նրանում գոյություն ունի երկու կատեգորիա՝ դրական եւ բացասական: Դրականը նա բնութագրում է «պաշտպանողական կամ ազատագրական նացիոնալիզմ», իսկ բացասականը՝ «հարձակողական կամ ճնշող (ասիմիլացնող) նացիոնալիզմ»[3]:

Ինքնապահպանման բնազդը Ն.Բերդյաեւը բնութագրում է որպես «հինկտակարանային, պահպանական նացիոնալիզմ»[4], որի հիմքը էլեմենտար-բիոլոգիական է»[5]: «Նացիոնալիզմը,- գրում է նա,- հաստատում է ժողովուրդների անհատական-պատմական կեցության հոգե- կենսաբանական հիմքը, որից դուրս ոչ մի առաքելականություն չի կարելի կատարել»[6]:

1. Նույն տեղում, էջ 188:
2. Նույն տեղում, էջ 22:
3. Ս.Մ. Դուբնով, Բ.Ց. Դինուր. Դվե կոնցեպցիի եվրեյսկոգո նացիոնալնոգո վոզրոժդենիյա, Իզրաիլ, 1981, էջ 110-111
4. Н. Бердяев, Судьба России, Москва, էջ 98:
5. Նույն տեղում, էջ 105:
6. Նույն տեղում, էջ 107:

Ելնելով հիշյալ դրույթից, Ն. Բերդյաեւը շարունակում է. «Զողոգիական ազգային զգացումը եւ բնազդը, որոնք այդպես վախեցնում են հումանիստ-կոսմոպոլիտներին, դա էլեմենտար եւ մութ, դեռ տարերային վիճակ է, որը պետք է վերափոխվի ազգային ստեղծագործական զգացումի եւ բնազդի»[1]:

Այդ բոլորից Բերդյաեւը անում է հետեւյալ եզրակացությունը. «Նացիոնալիզմը դրական բարիք է ու արժեք՝ որպես ստեղծագործական հաստատում, ինդիվիդուալ ժողովրդական կեցության բացահայտում եւ զարգացում: Առանց նախասկզբնական տարերային սիրո հնարավոր չէ ոչ մի ստեղծագործական պատմական ուղի»[2]:

Ռուսական նացիոնալիզմի խոշոր տեսաբան Պ.Կովալեւսկին այդ հիմնախնդրի շուրջ գրել է. «Նացիոնալիզմը հարգանքի, սիրո եւ նվիրվածության արտահայտություն է, նվիրվածություն մինչեւ զոհաբերություն՝ ներկայումս, հարգանք եւ խոնարհում՝ անցյալի նկատմամբ եւ բարօրության, փառքի ու հաջողության ցանկություն՝ ապագայում այն ազգին, այն ժողովրդին, որին պատկանում է տվյալ մարդը»[3]:

Եթե ինքնապահպանման բնազդի թերզարգացումը, թուլացումը կամ մարումը հանգեցնում է կոսմոպոլիտիզմի, ապա գերազանցումն էլ իր հերթին հանգեցնում է ազգայնամոլության, շովինիզմի: Եթե կոսմոպոլիտիզմը ոչ մի կապ չունի ինտերնացիոնալիզմի հետ, ապա ազգայնամոլությունն էլ ոչ մի կապ չունի նացիոնալիզմի հետ: Հիմնախնդրին նվիրված պատմական եւ տեսական գրականության մեջ շատ հաճախ ազգայնամոլությունը նույնացվում է նացիոնալիզմի հետ, որը եւ հիմք է դառնում թյուր եզրակացությունների համար:

Նացիոնալիզմը ցեղի ինքնապահպանման բնազդն է: Նացիոնալիզմի ոչնչացմամբ ոչնչանում է ցեղի ինքնապահպանման բնազդը՝ «Մենք»-ի գաղափարը, առանց որի ցեղը չի կարող ինքնապահպանվել:

Ազգային ինքնության եւ նացիոնալիզմի հիմնախնդիրներին նվիրված նորագույն ուսումնասիրություններում մենք տեսնում ենք նոր հարցադրումներ եւ պրոբլեմի նոր ու առողջ լուծումներ:

Այդ առումով մեծ հետաքրքրություն է ներկայացնում ամերիկացի ճանաչված գիտնական Անտոնի Դ.Սմիթի՝ «Ազգային ինքնություն» խորագրով աշխատությունը, որի որոշ կարեւոր դրույթների հետ անհրաժեշտ ենք համարում ծանոթացնել ընթերցողներին:

1. *Նույն տեղում, էջ 101:*
2. *Նույն տեղում, էջ 105:*
3. *П.И.Ковалевский, Русский национализм и национальное воспитание в России, Санкт- Петербург, 1912, стр.91.*

Սույն հեղինակը նացիոնալիզմին տալիս է հետեւյալ գնահատականը.

«Ազգայնականությունը գաղափարախոսական շարժում է՝ նպատակամղված ազգի ինքնիշխանության, միասնության եւ ինքնության պահպանմանը»[1]:

«Միասնության հասկացությունը,- շարունակում է նա,- ունի նաեւ պարզ եւ ավելի էզոթերիկ ազգայնական նշանակություն: Պարզագույն մակարդակում այն նշանակում է ազգային տարածքի կամ հայրենիքի, եթե այն բաժանված է, միացում եւ բոլոր ազգակիցների հավաքում նույն տարածքում: Նույնիսկ այստեղ ազգայնականները ներկայացնում են ավելի փիլիսոփայական գաղափար. հայրենիքից դուրս ապրող ազգակիցները համարվում են «կորած» եւ այն հողերը, որտեղ նրանք են բնակվում, հատկապես հայրենիքին սահմանակիցները համարվում են «չվերադարձված» (չմիավորված) եւ պետք է դրանք վերադարձնել եւ «փրկել»: Սա ծնում է ազգայնական այնպիսի շարժում, ինչպիսին է իռեդենտիզմը»[2]:

Հեղինակը առանձնացնում է «ազգային միասնության» մեկ կարեւոր նշանակություն եւս, նա գրում է. «Բայց կա ազգային միասնության իդեալի մեկ նշանակություն եւս: Ազգայնական լեզվում «միասնություն» նշանակում է սոցիալական համակեցություն, ազգի բոլոր անդամների եղբայրությունը մեկ ազգի մեջ»[3]:

Իսկ ո՞րն է նացիոնալիզմի բովանդակությունը: Անտոնի Դ.Սմիթը այդ հարցին պատասխանում է.

«Ազգայնականություն» տերմինը օգտագործվել է մի քանի նշանակությամբ: Այն կարող սահմանվել որպես.

1. Ազգերի կամ ազգ-պետությունների ձեւավորման ողջ գործընթացը,
2. Նույն ազգին պատկանելու գիտակցությունը, այդ ազգի անվտանգության շուրջ մտածումներով ու բարգավաճման մասին ձգտումներով հանդերձ,
3. «Ազգի» լեզուն եւ խորհրդանիշները,
4. Գաղափարախոսությունը, ներառյալ ազգի մշակութային հայեցակարգը ու ազգային կամքն իրականացնելու մղումը,
5. Հասարակական եւ քաղաքական շարժումը՝ հասնելու ազգային նպատակներին եւ իրականացնելու ազգային կամքը»[4]:

Հեղինակը հատուկ անդրադառնում է նաեւ նացիոնալիզմի գաղափարախոսությանը, այն գրեթե նույնացնելով ազգային գաղափարախո-

1. *Անտոնի Դ.Սմիթ. Ազգային ինքնություն. Նեւադա, 1991, էջ 74:*
2. *Նույն տեղում, էջ 75-76:*
3. *Նույն տեղում, էջ 76:*
4. *Նույն տեղում, էջ 72:*

սության հետ:

Նա գրում է. «Եկեք սկսենք ազգայնականության գաղափարախոսությունից: Մենք կարող ենք գաղափարախոսության կենտրոնական դրույթները կամ «հայեցակարգի միջուկը» սահմանել հետեւյալ կերպ.

1. Աշխարհը բաժանված է ազգերի, որոնցից յուրաքանչյուրն ունի իր սեփական ինքնությունը, պատմությունն ու նպատակակետը,
2. Ազգն է բոլոր հասարակական եւ քաղաքական ուժերի աղբյուրը եւ ազգի նկատմամբ հավատարմությունը պետք է գերակա լինի,
3. Մարդկային էակները պետք է իրենց ինքնությունը խարսխեն ազգայինի վրա, եթե ուզում են լինել ազատ եւ ինքնահաստատ,
4. Ազգերը պետք է լինեն եւ ապահով, եթե խաղաղությունն ու արդարությունն իշխեն աշխարհում»[1]:

Վերոհիշյալ նյութերից հեղինակը անում է հետեւյալ եզրակացությունը. «Ազգայնականությունը, գլխավորաբար, մշակութային դոկտրին է, կամ ավելի ստույգ՝ իր կենտրոնում մշակութային դոկտրին ունեցող քաղաքական գաղափարախոսություն»[2]:

Անտոնի Դ. Սմիթը Ազգային ինքնությանը նվիրված իր սույն ուսումնասիրությունն ավարտում է հետեւյալ ամփոփումով.

«Մարդու խմբային ինքնության բոլոր դրսեւորումների մեջ ազգայինը ամենահիմնարարն է ու տարողունակը: Խմբային ինքնության այլ դրսեւորումները՝ սեռ, դասակարգ, կրոն կարող են մասնակի համընկնել, սակայն, երբեք չեն կարող լինել այդքան ընդգրկուն:

Եթե կա մի երեւույթ, որն ունի համաշխարհային ընդգրկում՝ դա ազգայնականությունն է: Ներկայումս այն համատարած է:

Ազգային ինքնությունն այսօր ոչ միայն համաշխարհային է, այլեւ այլափոխիչ: Այն փոփոխում է ոչ միայն անհատի կյանքը, այլեւ ամբողջ հասարակությունների...

Այսօր աշխարհը բաժանված է «ազգ-պետությունների», որոնք սերտորեն համախմբված են տարածաշրջանային միջպետական համակարգերում: Այդ համակարգերի համար գործող դերակատարները ազգ-պետություններն են, որոնք իրենց քաղաքացիներին հստակորեն տարանջատում են օտարներից: Եթե նման միտումը նպաստում է էթնիկապես միատարր պետությունների ուժեղացմանը, բայց միաժամանակ այն թուլացնում է բազմազգ երկրները, քանի որ պետությունների միջեւ տրոհված ազգերի մոտ առաջացնում է հակազդեցություն եւ միավորվելու ձգտում»[3]:

1. Անտոնի Դ. Սմիթ. Ազգային ինքնություն, Նեւսդա, 1991, էջ 74:
2. Նույն տեղում, էջ74:
3. Նույն տեղում, էջ 143:

Ուրեմն, ազգայնականության նպատակը «ազգ-պետության» ստեղծումն է ու հզորացումը: Այդ պատճառով էլ ազգայնականության հիմնական թշնամին պատմականորեն միշտ եղել են բազմազգ կայսրությունների եւ պետությունների տիրապետող ազգերը, որոնք դարերի ընթացքում նվաճել են փոքր ժողովուրդների Հայրենիքները եւ վերջիններիս պայքարը անկախության համար, «ազգ-պետություն» ստեղծելու համար գնահատել որպես նացիոնալիզմ, անջատողականություն, Հայրենիքի դավաճանություն:

Ընդ որում, եթե բազմազգ պետություններում տիրապետող ազգը որպես կանոն իրականացնում է փոքր ազգերին ձուլելու քաղաքականություն, ապա Թուրքիայում «ազգ-պետության» համար պայքարող ժողովուրդները պարզապես ցեղասպանության են ենթարկվում:

Ազգայնականության կատաղի հակառակորդներն են նաեւ տարբեր բնույթի ապազգային, կոսմոպոլիտ ուսմունքները, կուսակցությունները, կազմակերպությունները եւ դրանց հիմքի վրա ստեղծված պետությունները:

Թվարկված բոլոր գործոնների միացյալ ջանքերով ստեղծվել է ազգայնականության «թշնամու կերպարը» եւ արդի շրջանում տարածված միանգամայն անընդունելի գնահատականը:

Մինչդեռ պրոբլեմի անգամ թռուցիկ ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նացիոնալիզմի մասին տարածված բնութագրումները հատուկ են միայն ազգայնամոլությանը եւ շովինիզմին: Վերը թվարկված ուժերը քաղաքականացնում, շահարկում են պրոբլեմը եւ այդ նպատակով ազգայնականությունը նույնացնում ազգայնամոլության եւ շովինիզմի հետ:

Նացիոնալիզմի հակառակորդը ապազգային, կոսմոպոլիտ ուժերն են, որոնք ազգային գաղափարախոսությանը հակադրում են կոսմոպոլիտիզմի գաղափարախոսությունը:

Կոսմոպոլիտիզմի գաղափարախոսությունը ձգտում է ընդհանրապես ոչնչացնել ազգայինը, ժողովուրդներին կտրել իրենց ազգային, պատմական արմատներից եւ ստեղծել մարդկային կոսմոպոլիտ հասարակություն, իսկ այդ նպատակի իրականացման համար պետք է ոչնչացնել ազգային գաղափարախոսությունն ու նացիոնալիզմը:

Մարդկային հասարակությունը դարեր շարունակ ականատեսն է եղել կոսմոպոլիտիզմի անողոք, անզիջում կենաց ու մահվան կռվին:Ընդ որում, կոսմոպոլիտիզմը նման է քամելյոնի, նա անհրաժեշտության դեպքում փոխում է պայքարի ձեւերը, հարմարվում իրավիճակին, տարբեր գույներ ընդունում, տարբեր դիմակներ հագնում: Ավելի հաճախ կոսմոպոլիտիզմը հանդես է գալիս ինտերնացիոնալիզմի դիմակով:

Սակայն, ճշմարիտ ինտերնացիոնալիզմը եւ նացիոնալիզմը հակա-

ռակորդներ չեն, նրանք ծառայում են նույն նպատակին՝ ազգերի ինքնապահպանմանը, զարգացմանը եւ մոտեցմանը, համամարդկային արժեքների ստեղծմանը, որոնք ծնվում են ազգայինից:

Կոսմոպոլիտիզմը, գրում է Բերդյաեւը, եւ փիլիսոփայորեն, եւ կենսականորեն անհիմն է, նա վերացական է կամ ուտոպիա[1]: «Կոսմոպոլիտիզմը միասնականության, եղբայրության եւ կատարյալ մարդկության երազի այլանդակ, անիրականանալի արտահայտությունն է. կոնկրետ, կենդանի մարդու փոխակերպումը վերացական ուտոպիայի»[2]: Բերդյաեւը գտնում է, որ ով չի կարող սիրել իր ժողովրդին, նա չի կարող սիրել եւ մարդկությանը[3]: «Կուլտուրայի մեջ ամբողջ ստեղծագործականը իր վրա կրում է ազգային հանճարի կնիքը... Ազգայինը եւ համամարդկայինը չեն կարող հակադրվել»[4]:

Կոսմոպոլիտիզմը իր գաղափարախոսության իրականացումը գործնականորեն սկսում է կրթության, մշակույթի եւ գիտության ազգային համակարգերի ոչնչացումից: Ահա թե ինչու այդ ազգային համակարգերը չպետք է թույլ տալ, որպեսզի անցնեն ապազգային ուժերի տնօրինությանը, ահա թե ինչու ապազգային ուժերը մեծ ջանքեր են թափում այդ համակարգերի ղեկավարությունը իրենց ձեռքը վերցնելու համար:

Կրթության, մշակույթի եւ գիտության համակարգերը ապազգային ուժերին թողնելը կարող է ճակատագրական նշանակություն ունենալ ժողովրդի համար: Կրթական համակարգում պատմության դասագրքերի ստեղծումը կարեւոր ազգային գործ է: Այդ դասագրքերը պետք է գրվեն պատմության ազգային կոնցեպցիայի հիման վրա եւ պետք է ելնեն ազգային գաղափարախոսության հիմնադրույթներից:

Ազգապահպանումը գերխնդիր է:

Սակայն, այդ բոլորով հանդերձ, ազգի գոյապահպանման հիմնական պայմանը Հայրենիքի եւ անկախ ազգային պետականության առկայությունն է:

Առանց Հայրենիքի, անկախ պետականության ոչ մի ժողովուրդ գոյություն ունենալ չի կարող:

1. Ն.Բերդյաեւ. նշվ. աշխ. էջ 94:
2. Ն.Բերդյաեւ. նշվ. աշխ. էջ 95:
3. Նույն տեղում:
4. Նույն տեղում. էջ 96:

Երկրորդ հիմնադրույթ

ՀԱՅՐԵՆԻՔԻ ԳԱՂԱՓԱՐԸ

Հայրենիքն այն է, որ չեն որոնում:
Հայրենիքն այն է, որ գտնված է
Ի սկզբանե, ի ծնե եւ միշտ,
Ուրեմն նաեւ նա չի էլ կորչում:

ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ

Մարդկային ցեղը գոյապահպանվելու եւ բնականոն կյանքով ապրելու համար որպես նախապայման նախ եւ առաջ պետք է ունենա իր ազատ եւ անկախ Հայրենիքը:

Հայրենիքը ժողովրդի պատմական ապրելատարածքն է: «Սակայն, ամեն մի ապրելատարածք դեռ Հայրենիք չէ: Հողը հայրենիք է դառնում դարերի ընթացքում, երբ այն պատվում է ժողովրդի պատմամշակութային, ազգագրական, ճարտարապետական հուշարձաններով, նախնիների գերեզմաններով, երբ այն սրբագործվում է թշնամիների դեմ մղած պատերազմներում տարած հաղթանակներով եւ լեգենդար հերոսների թափած արյունով, երբ ձեւավորվում են ազգային բնավորության գծերը, ազգային նկարագիրը, ավանդույթները, բարքերը, տարազը, լեզվական առանձնահատկությունները եւ ազգային ինքնագիտակցությունը, երբ այդ հողը ժողովրդի պատմական հիշողության մեջ է մտնում ֆոլկլորային առասպելներով, էպոսով, երգերով ու հեքիաթներով, հարազատանում հոգեպես, երբ ժողովուրդը դառնում է հոգեւոր ամբողջություն, երբ «հող» հասկացությունը վերածվում է «տուն» հասկացության, իսկ «տուն» հասկացությունն էլ «Երկիր» ու «Հայրենիք» հասկացությունների եւ մտնում է ցեղի արյան ու գենի մեջ՝ որպես նրա գոյատեւման հիմնական պայման»[1]:

Անտոնի Դ.Սմիթը գրում է. «Ժողովուրդը եւ հողը պատկանում են մի-

1. Լեւոնդուշ Խուրշուդյան. Հայկական հարցը. բովանդակությունը, ծագումը, պատմության հիմնական փուլերը. Երեւան, 1995. էջ 3:

մյանց, ամեն մի տարածք եւ հողակտոր դեռ հայրենիք չեն, Հայրենիքը «պատմական» հող է, «բնօրրան» է: Տարածքն ու Հայրենիքը դարերի ընթացքում ունենում են ներգործուն փոխազդեցություն: Հողը Հայրենիք է դառնում, երբ այն վերածվում է պատմական հուշերի ու պատկերների շտեմարանի, ուր ապրում են տվյալ ժողովրդի իմաստունները, սրբերն ու հերոսները, լեռներն ու ձորերը սրբագործվում են: «Այս ամենը Հայրենիքը դարձնում են միակը եւ անկրկնելին»[1]:

Այնուհետեւ նա շարունակում է. «Ավելի շուտ հողին հաղորդակից լինելն է որոշում էթնիկ ինքնությունը, քան բնակությունը այնտեղ: Դա մեր պատկանելությունն է: Հաճախ դա սուրբ հող է, մեր նախնիների, մեր արքաների ու մեր իմաստունների, բանաստեղծների ու քարոզիչների հողը, որը դրանով իսկ դառնում է մերը: Մենք պատկանում ենք նրան, ինչպես նա է պատկանում մեզ: Հայրենիքի սրբավայրերը ազգության անդամներին քաշում են դեպի իրենց, թեեւ նրանք ապրում են հեռվում եւ նրանց բաժանումը հայրենիքից եղել է երկարատեւ:

Այսպիսով, ազգությունը կարող է գոյատեւել, մինչեւիսկ, երբ հարկադիր բաժանումը հայրենիքից կարող է լինել երկարատեւ: Այդպես է, մեծ մասամբ, Սփյուռքի հրեական եւ հայկական համայնքների կարոտախտը»[2]:

Հեղինակը թվարկում է նաեւ ազգության ինքնության էթնիկ հիմքի վեց հիմնական տարրեր.

1. Ընդհանուր հատուկ անուն:
2. Ընդհանուր նախնի ունենալու մասին առասպելի առկայություն:
3. Միասնական պատմական հիշողություններ:
4. Միասնական մշակույթի կամ մեկ ավելի զատորոշիչ տարրի առկայություն:
5. Ընդհանուր, միասնական հայրենիքի զգացողություն:
6. Բնակչության որոշակի խմբերի համար համերաշխության զգացողություն»[3]:

Ապրելատարածքը ազգային դիմագիծ է ստանում, հայրենիք է դառնում ազգային մշակույթով:

Հայրենիքի գաղափարը, որպես կանոն, սկսում է ձեւավորվել այն ժամանակահատվածից, երբ քոչվոր ցեղերը անցնում են նստակյաց կյանքի եւ հարազատանում այն ապրելատարածքին, որը հետագայում աստիճանաբար նրանց գիտակցության մեջ ձեւավորվում է որպես Հայրենիք:

1. Անդրոնիկ Դ. Սմիթ. Ազգային ինքնություն. Նեւադա. 1991 . էջ 9:
2. Նույն տեղում. էջ 23:
3. Նույն տեղում. էջ 21:

Հայրենիք կոչվող ապրելատարածքը պետք է լինի ազատ եւ անկախ: Անկախ Հայրենիքը այն հզոր գործոնն է, որն ապահովում է ժողովրդի գոյապահպանման ու զարգացման հնարավորությունը:

Առանց հայրենիքի ազգ չկա: Ժողովուրդների գոյապահպանման հիմնական պայմանը անկախ Հայրենիքի առկայությունն է: Այդ է պատճառը, որ բոլոր ժողովուրդներն էլ ազատագրական պայքարի դժվարին ճանապարհ են անցնում, մեծամեծ զոհեր են տալիս ազատ ու անկախ Հայրենիք ունենալու համար: Ահա թե ինչու բոլոր ժողովուրդների ազգային գաղափարախոսությունների հիմքում ազգի գաղափարի հետ ընկած է նաեւ ամբողջական Հայրենիքի գաղափարը:

Հայրենիքի գաղափարը կյանքի կոչվելուց հետո, մտնելով ցեղի գենի մեջ, ժողովրդի պատմական ճակատագրում դառնում է հզոր գործոն:

Հայրենիքի գաղափարը մտնում է ժողովրդի ինքնապահպանման բնազդի մեխանիզմի մեջ եւ որպես այդպիսին այլընտրանք չունի:

Ժողովուրդը ղեկավարվում է «Հայրենիքի հրամայականով»: Հայրենիքը ժողովրդի համար դառնում է սրբություն:

Հայրենիքը ամբողջական պատմական հասկացություն է: Եթե պատմության բերումով ժողովուրդների հայրենիքները կիսվում են մասերի՝ երկու Գերմանիա, երկու Կորեա, երկու Վիետնամ, երկու Հայաստան եւ այլն, ապա այդ բոլորովին չի նշանակում, թե նշված ժողովուրդների մեկ ամբողջական հայրենիքը վերածվում է երկուսի:

Արեւելյան Հայաստանը հայոց հայրենիքի մի փոքր մասն է, տարածքային առումով՝ շուրջ մեկ տասներորդ մասը: Արեւելյան Հայաստանը հռչակելով հայոց միակ հայրենիք, մենք դրանով փոխակերպում ենք հայոց հայրենիքի գաղափարը, հրաժարվում ենք պահանջատիրությունից եւ փորձում սփյուռքահայությանը ապացուցել, որ հայությունն ունի մեկ Հայրենիք՝ Արեւելյան Հայաստանը: Այդ մոտեցումը մշակվել է Խորհրդային իշխանության տարիներին եւ ելել է այն հիմնադրույթից, որ հայկական հարցը լուծված է, հայերը հողային պահանջներ, կորցրած հայրենիք չունեն: Նման մոտեցումը հակապատմական է եւ հակազգային: Ժողովրդի պատմական ապրելատարածքի յուրաքանչյուր անկյուն չի կարող հայրենիք անվանվել, նա մասն է Հայրենիք ընդհանուր պատմական հասկացության:

Հայրենիքի պահպանման հիմնական գործոնը հայրենասիրությունն է, որի գաղափարը դարերի ընթացքում հարստանում եւ սերնդից սերունդ է փոխանցվում պատմական հիշողության միջոցով: Ժողովրդի բոլոր սերունդների հայրենասիրության դրսեւորումների լավագույն ավանդույթները պատմագիտությունն ամփոփում է Հայրենիքի գաղափարի մեջ:

Շատ հաճախ, գրում է ռուս գիտնական Պ.Կովալեւսկին, նացիոնալիզմը շփոթում են պատրիոտիզմի՝ հայրենասիրության հետ, սակայն նրանց միջեւ գոյություն ունի լուրջ տարբերություն. «Նացիոնալիզմը դա ժողովրդի նկատմամբ անսահման սերն է եւ անձնազոհության պատրաստակամությունը, իսկ պատրիոտիզմը նույնպիսի սեր եւ անձնազոհության պատրաստակամություն է հայրենիքի նկատմամբ: Նացիոնալիզմը ավելի շուտ հոգե- մարդաբանական հասկացություն է, իսկ հայրենասիրությունը՝ պատմաաշխարհագրական»[1]:

Նացիոնալիզմը ազգասիրությունն է, պատրիոտիզմը՝ հայրենասիրությունը: Այդ հասկացություններն այնքան են սերտաճած, որ պատմաքաղաքական գրականության մեջ շատ հաճախ նույնացվում են:

«Անկյունաքարային ներքին հիմքերից մեկը, որի վրա հենվում է պետության ուժը, ամրությունը եւ կենսունակությունը, հզոր հենարաններից մեկը, որը պահպանում է նրա ամբողջականությունը եւ բարեկեցությունը- այդ ժողովրդի սերն է իր հայրենիքի նկատմամբ, ժողովրդական հայրենասիրությունը»[2],- գրում է Պ.Կովալեւսկին:

Ժամանակակից ռուս գիտնականները եւս Հայրենիքի եւ հայրենասիրության մասին ունեն նույն մոտեցումները: Նրանք գրում են. «Հայրենասիրական գիտակցությունը-այդ սեփական պատմական կեցության ինքնագիտակցությունն է, պատմության մեջ սեփական ժողովրդի տեղի իմաստավորումն ու զարգացումը: Պատրիոտիզմը Հայրենիքի նկատմամբ ունեցած արժեքների համակարգն է: Հայրենիքը, ինչպես հարազատ մորը, ընտրել չի կարելի»[3]:

Նույն գիտնականները, քննարկելով ազգային զգացումների հիմնախնդիրը, գրում են. «Ազգային զգացումների ամենաուժեղ արտահայտությունը հայրենասիրությունն է, սեփական ազգային պետության եւ սեփական ժողովրդի մեծարման ձգտումը, նրանց պաշտպանությունը հնարավոր բոլոր ուժերով եւ բոլոր միջոցներով»[4]:

Հարազատ հողը, հայրենական մշակույթը, մայրենի լեզուն, սեփական պատմությունը-ահա այն բոլորը, որոնք սնում են իսկական հայրենասիրությունը, եզրակացնում են ռուս գիտնականները[5]:

Հայրենիքը եւ հայրենասիրությունը ժողովրդի գոյապահպանման հիմնական պայմանն են:

1.П.Н.Ковалевский, Русский национализм и национальное воспитание в России, Санкт-Петербург, 1912, стр.92.
2. Նույն տեղում, էջ 93:
3. Խ.Բոկով, Ս. Ալեքսեեւ, նշվ. աշխ. էջ 81:
4. Նույն տեղում, էջ 30:
5. Նույն տեղում, էջ 81:

Ահա թե ինչու հայրենասիրության քարոզչությունը, ժողովրդին հայրենասիրության ոգով դաստիարակելը հանդիսանում են ազգային գաղափարախոսության հիմնախնդիրներից մեկը:

Առանց հայրենասիրության Հայրենիք գոյություն ունենալ չի կարող, հայրենիք պահել հնարավոր չէ: Հայրենիքը ժողովրդի բոլոր սերունդների դարավոր, հերոսական պայքարի արդյունքն է: Առանց անձնազոհության, առանց արյունի ոչ մի ժողովուրդ Հայրենիք չի կարող ունենալ: Հայրենիքի համար զոհվելը հերոսություն է: Հերոսների արյունով ներծծված մայրենի հողը քաջերի նոր սերունդներ է կյանքի կոչում: Ժողովուրդը աճում է, Հայրենիքը՝ ոչ:

Ահա թե ինչու Հայրենիքի գաղափարի քարոզչությունը մշտապես պետք է գտնվի ամեն մի ժողովրդի պետականության, ազգային, հասարակական- քաղաքական մտքի, ազգային կազմակերպությունների ուշադրության եւ հոգատարության կենտրոնում:

Այդ չափազանց կարեւոր խնդիրը գործնականում իրագործելու համար յուրաքանչյուր ժողովուրդ պետք է ունենա իր իսկական ազգային դպրոցը, ազգային կրթական համակարգը:

«Հայրենիքի գոյատեւման միակ միջոցը,- գրում է Ժյուլ Միշլեն,- այդ բոլորին այնպիսի ներդաշնակ կրթություն տալն է, որը երեխաների սրտում ստեղծում է Հայրենիքի կերպարը: Փրկության ուրիշ ուղի չկա»[1]:

Այս անվիճելի մտքից հետո նա ավելացնում է.

«Ի վերջո, Հայրենիքի մասին ավելի սկսնառու, ամբողջական եւ կուռ պատկերացում երեխաները պետք է ստանան դպրոցում, իսկական ազգային դպրոցում»[2]: Հեղինակը նկատի ունի հանրակրթական դպրոցը:

Հայրենիքը առաջին հերթին դավանանք է, երկրորդ հերթին՝ լեգենդ[3]: Հայրենիքը Աստծո նախակերպարն է. «Թող մարդը մանկուց սովորի հանձին հայրենիքի տեսնել Աստծո կերպարը», «Հայրենիքը պատահական հրաշք չէ, այլ անանց հրաշք, բնության ու պատմության հրաշք»,- գրում է Ժյուլ Միշլեն[4]:

Անգլիական դպրոցներն այցելած նախարար Գիզոյին անգլիացի մանկավարժը ասել է. «Ես ձգտում եմ երեխաների հոգին լիցքավորել երկաթով»[5]: Հայրենիքի գաղափարի հետ միասին Անգլիայի ազգային դպրոցում երեխային տալիս էին Հայրենիքը պաշտպանելու հաստա-

1.Жюль Мишле, Народ, М.1965, стр.149.
2. Նույն տեղում, էջ 158:
3. Նույն տեղում, էջ 160:
4. Նույն տեղում, էջ. էջ 156, 157:
5. Լեւ Բոն, նշվ. աշխ., էջ 137:

տակամություն, որը համարվում էր մանկավարժների հիմնական խնդիրներից մեկը: Այսպես են ստեղծվել ուժեղ պետությունները եւ ուժեղ ժողովուրդները. նրանք ունեցել են ազգային կրթական համակարգ, որը կոփել է ուժեղ ազգային հոգի, ուժեղ ազգային բնավորություն:

Միշլեն Հայրենիքի գոյատեւման ու զարգացման համար անհրաժեշտ է համարում «ուսումնասիրել նրա անցյալը, թափանցել նրա ազգային ոգու մեջ»[1]: Հեղինակի այս թեզը հիմնադրույթային է: Յուրաքանչյուր ժողովուրդ, եթե ցանկանում է գոյատեւել եւ առաջ գնալ, առաջին հերթին պետք է հենվի իր անցյալի պատմության վրա, գործի նրանից բխած եւ արդի պատմության թելադրանքից ելնող ծրագրերով: Այսօրվա եւ ապագայի ազգային խնդիրների արմատները շատ դեպքերում գտնվում են անցյալի բազմաձալք պատմության ակունքներում: Նրանք, ովքեր փորձում են ժխտել անցյալի պատմությունը կամ էլ խեղաթյուրել, դատապարտված են անհաջողության:

Այդ առումով չափազանց հետաքրքիր է ճապոնացիների կրթական համակարգը, որի հիմքում ընկած են ազգային գաղափարախոսությունից բխող հետեւյալ երեք ստրատեգիական սկզբունքները.

1. Կրթության համակարգի օգտագործումը՝ հարուստ պետություն եւ ուժեղ բանակ ստեղծելու համար:
2. Ազգայնական աշխարհայացքի ձեւավորում, որը նախատեսում է յուրաքանչյուր անհատի պատասխանատվությունը պետության ճակատագրի համար:
3. Ազգի միասնության ապահովում, որպես կարեւորագույն գործոն պետության վերընթացի գործում դեպի վեհություն[2]:

Ճապոնիայում մեծ ուշադրություն է դարձվում մանկավարժական կադրերի պատրաստման գործին, ելակետ ընդունելով այն դրույթը, որ .

ա. «Ճապոնական ազգի ձեւավորումը կախված է դասատուի անձնական գծերից»,

բ. «մանկավարժական դպրոցները վճռորոշ են ոչ միայն կրթական համակարգի ծաղկման կամ անկման գործում, այլեւ հանդիսանում են պետության ուժի եւ հարստության հիմքը»[3]:

Ճապոնական դպրոցում ժամաքանակի առյուծի բաժինը տրվում է դպրոցականների «կամքի ձեւավորմանը», որը այդ երկրում համարվում է «մարդու առանցքային որակ»: «Կամքի ձեւավորումը» ապահովում է դպրոցականի «ինքնուրույնությունը»՝ իր առջեւ նպատակ դնելու, որոշում ընդունելու եւ այն իրականացնելու գործում[4]:

1. Ժյուլ Միշլե. նշվ. աշխ. . էջ 156:
2. "Дух Ямато" в прошлом и настоящем. М., 1989, стр.82-83.
3. Նույն տեղում. էջ 83:
4. Նույն տեղում. էջ 88:

Ելնելով ազգային գաղափարախոսությունից, ճապոնիայում կրթական համակարգը համարվում է Ազգային անվտանգության կոնցեպցիայի առանցքային հիմնադրույթ:

Ժողովրդի պատմական ճակատագրում անցյալի պատմության նշանակության մասին անվիճելի գնահատական է տվել Հովհաննես Թումանյանը.

«Անցյալի պատմությունը մի լուսավոր լապտեր է, որ ամեն մի ժողովուրդ ձեռքին պետք է ունենա իր ճամփեն անմոլոր գնալու համար»:

Քննարկվող խնդիրը անհրաժեշտ ենք համարում ամփոփել Թոմաս Կառլեյլի հետեւյալ տեսակետով.

«Ապագայի կանխագուշակումը, ներկայի ղեկավարումը այդքան անհնարին չէր լինի, եթե անցյալին չվերաբերվեինք այդքան սրբապղծորեն-հիմար, եթե նրան այդպես չմերժեինք եւ, որ ավելի վատ է, չխեղաթյուրեինք»[1]:

Այդպիսին է Հայրենիքի՝ բնության ու պատմության այդ հրաշքի գոյատեւման միակ ուղին: Հայրենիքի գաղափարը ժողովրդի գիտակցության մեջ է մտնում, միս ու արյուն է դառնում կրթական համակարգի միջոցով, ամբողջ երկրում ազգային, հայրենասիրական մթնոլորտ ստեղծելու միջոցով: Այդ պատճառով էլ կրթական համակարգը պետք է սրբությամբ պահպանել եւ հեռու պահել ապազգային ուժերից:

Այդ բոլորից մենք հանգում ենք պատմության փորձով հաստատված այն եզրակացությանը, որ ամեն մի ժողովրդի հաղթության, պարտության եւ ընդհանրապես գոյատեւման հարցը որոշվում է ոչ այնքան ռազմի դաշտում, որքան ազգային դպրոցում, ազգային կրթական համակարգում:

Հայրենիքի հարցում զիջումներ չեն լինում: Հայրենիքի կորուստը վաղեմություն չունի: Հայրենիքին համահավասար փոխարժեքներ գոյություն չունեն: Հայրենիքը պատկանում է ամբողջ ժողովրդին՝ անցած դարերի բոլոր մեռածներից մինչեւ ապագայում ծնվելիք բոլոր սերունդները: Այդ պատճառով էլ ժողովրդի ոչ մի սերունդ, ոչ մի գործիչ իրավունք չունի թեկուզ մի թիզ հող նվիրաբերելու, հանձնելու, զիջելու այլ ժողովուրդների կամ էլ հրաժարվելու կորցրած հայրենիքի տարածքներից:

Ազգային գաղափարախոսությունը նման քայլը որակում է որպես ազգային դավաճանություն:

Վերջին տարիների ընթացքում տարածում է գտել «Հող՝ խաղաղության դիմաց» կարգախոսը, որով մեծ տերությունները Իսրայելին հարկադրում են հանուն խաղաղության հրաժարվել իր տարածքի որոշ մա-

1. Томас Карлейль. Теперь и прежде, М. 1994, стр. 273.

սերից:

Հրեա ժողովուրդը անընդունելի համարեց այդ կարգախոսը: Իսրայելի վարչապետ Ռաբինի սպանությունը, համաժողովրդական քվեարկությամբ Նաթանյահուի իշխանության գլուխ գալը ցույց տվեցին, որ դարեր շարունակ Հայրենիքի համար պայքարած, պատերազմներից հոգնած, բայց անկախություն ձեռք բերած հրեա ժողովուրդը մերժում է «հող՝ խաղաղության դիմաց» կարգախոսը:

Պատմությունը մեկ անգամ ևս ապացուցեց, որ Հայրենիքի հարցում զիջումներ չեն արվում:

Հայրենիքը սուրբ է ու հավերժական:

Ահա թե ինչու Հայրենիքի գաղափարը ազգային գաղափարախոսության հիմնադրույթներից է:

Երրորդ հիմնադրույթ

ԱՆԿԱԽ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԸ. ՊԵՏԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Յուրաքանչյուր ժողովուրդ գոյապահպանման եւ բնականոն զարգացման համար պետք է ունենա անկախ ազգային պետականություն: Պետությունը կյանքի է կոչվում ազգային գաղափարախոսության հիմնադրույթները իրականացնելու համար: Առանց անկախ ազգային պետության ոչ մի ժողովուրդ չի կարող երկար ժամանակ գոյապահպանվել:

Պետությունը ժողովրդի կյանքում Նոյան տապանի դերն է կատարում: Նա փոթորկված օվկիանոսում ուղիներ է որոնում ժողովրդին արհավիրքից փրկելու եւ բնականոն զարգացման հունով տանելու համար:

Պետությունը ժողովրդի ինքնապահպանման բնազդի արտահայտության բարձրագույն ձեւն է: Ազգային պետությունը ղեկավարվում է ազգային գաղափարախոսության հիմնադրույթներով:

Ազգային գաղափարախոսությունը տեսություն է, ինքնապահպանման համակարգ, որի իրականացման համար դարերի ընթացքում կյանքի են կոչվել իշխանությունների եւ պետականությունների տարբեր ձեւեր: Ահա թե ինչու անհեթեթություն է ազգային եւ պետական գաղափարախոսությունները իրար հակադրելը: Ժողովուրդը պետականություն է ստեղծել իր ազգային գաղափարախոսությունը իրականացնելու համար, եթե իշխանավորները չեն կատարում այդ խնդիրը, նրանք հեռացվում են իշխանությունից:

Նույնը վերաբերում է նաեւ պետականության ձեւերին: Յուրաքանչյուր ժողովուրդ կյանքի է կոչում պետականության եւ հասարակարգի այն ձեւը, որն ավելի լավ է արտահայտում եւ իրականացնում իր ազգային գաղափարախոսությունը:

Պետական գաղափարախոսությունը ելնում է ազգի գերագույն շահերից, որոնք ամբողջությամբ ամփոփված են ազգային գաղափարախոսության մեջ:

Ազգային գաղափարախոսությունը ռազմավարություն է, պետակա-

նը՝ մարտավարություն: Այդ առումով էլ պետական գաղափարախոսությունը ազգային գաղափարախոսության բաղկացուցիչ մասն է:

Ազգային գաղափարախոսության ռազմավարական եւ մարտավարական ծրագրերի համակարգը կոչվում է ազգային ծրագիր: Յուրաքանչյուր ազգային պետության հիմնական խնդիրը Ազգային գաղափարախոսության ռազմավարական եւ մարտավարական ծրագրերի, այսինքն՝ Ազգային ծրագրի իրականացումն է: Այդ պատճառով էլ ազգային եւ պետական գաղափարախոսությունների միջեւ հակասություններ լինել չեն կարող:

Ազգային պետությունը, ելնելով ազգային գաղափարախոսության հիմնախնդիրներից, մշակում է ազգային անվտանգության կոնցեպցիան, որի հիմնաքարերն են՝ ազգային տնտեսության, արտաքին եւ ռազմական քաղաքականության դոկտրինները, ազգային մշակույթի եւ կրթական համակարգի զարգացման խնդիրները:

Պետության կայացումը եւ հզորացումը, որը պետական գաղափարախոսության առանցքն է, նույնպես հանդիսանում է ազգային գաղափարախոսության հիմնադրույթներից մեկը: Պետական գաղափարախոսությունը, լինելով ազգային գաղափարախոսության բաղկացուցիչ մասը, չի կարող իր էությամբ ազգային չլինել:

Ազգային եւ պետական գաղափարախոսությունները լրացնում են միմյանց եւ ավելի դյուրին դարձնում ազգի ինքնապահպանման եւ հավերժացման համար մղվող պայքարը:

Եթե պետությունը ազգային է, ապա, բնականաբար, նրա նպատակը կարող է լինել միայն ազգի շահերի պաշտպանությունը՝ ազգային գաղափարախոսության կենսագործումը: Պետական գաղափարախոսությունը իր մարտավարական ծրագրով՝ պատմական տարբեր կոնկրետ փուլերում, ելնելով աշխարհաքաղաքական գործոնների առանձնահատկություններից, ազգային գաղափարախոսության հիմնախնդիրների լուծման համար է պայքարում:

Պետական գաղափարախոսությունը եթե անգամ, ելնելով աշխարհաքաղաքական անբարենպաստ պայմաններից, որեւէ պատմական փուլում ազգային գաղափարախոսության որեւէ հիմնադրույթ օրակարգի առաջնահերթ խնդիր չի դարձնում, ապա այդ դեպքում եւս, նա ոչ թե հակասում, այլ ելնում է միայն եւ միայն ազգային գաղափարախոսության ռազմավարական ծրագրից, որի համաձայն ազգային մեծ գաղափարները իրականացվում են փուլ առ փուլ՝ առնչված պատմական ճանապարհի դժվարությունների հետ:

Ազգային պետությունը կենդանի օրգանիզմ է եւ գործում է կոնկրետ պատմական ժամանակաշրջանում, երբ աշխարհաքաղաքական պայմանները ազգային գաղափարախոսության հիմնախնդիրների իրականացման համար կարող են լինել եւ բարենպաստ, եւ անբարենպաստ: Պետական գաղափարախոսությունը ելնելով ազգային ծրագրից՝ ազգային անվտանգության կոնցեպցիայից՝ ազգի, ազգային պետականության պատմության ոչ բարենպաստ պահերին պետք է խուսանավի եւ ազգային գաղափարախոսության ոչ բոլոր հիմնախնդիրները դարձնի օրակարգի առաջնահերթ հարց: Ընդ որում, անբարենպաստ պատմական պահերին պետությունը ազգային գաղափարախոսության որոշ հիմնախնդիրների քարոզչությունը եւ դրանց համար մղվող պայքարը ժամանակավորապես թողնում է ազգային կազմակերպություններին: Ընդհանրապես, յուրաքանչյուր ժողովրդի ազգային գաղափարախոսությունն միշտ էլ իր ռազմավարական ծրագրում ունենում է մոտակա եւ հեռավոր խնդիրներ: Պետությունը, պայքարելով մոտակա խնդիրների իրականացման համար, միաժամանակ ուղիներ է գտնում հեռավոր խնդիրների քարոզչության համար՝ դրանք ժողովրդի պատմական հիշողության մեջ թարմ պահելու համար:

Ազգային պետությունը, որպես կանոն, մշտապես ղեկավարվում է ազգային գաղափարախոսության հիմնադրույթներով: Եթե պետությունը հրաժարվում է ազգային գաղափարախոսությունից, նա դադարում է ազգային պետություն լինելուց, ազգի շահերը պաշտպանելուց:

Առողջ պետության մեջ բնական է տարբեր կուսակցությունների եւ դասակարգերի առկայությունը: Բնական է նաեւ իշխանության համար մղվող քաղաքական պայքարը: Սակայն, քաղաքական պայքարը ունի թույլատրելի սահմաններ եւ չպետք է թուլացնի կամ խարխլի պետականության հիմքերը: Բոլոր ուժերը՝ ազգային թե դասակարգային, իրենց ծրագրերում, գործունեության մեջ պետք է ելնեն պետության հզորացման անհրաժեշտությունից, որովհետեւ վերջին հաշվով դրանից է կախված թե՛ ժողովրդի եւ թե՛ քաղաքական կազմակերպությունների հարատեւման խնդիրը: Պետությունը վերկուսակցական, վերդասակարգային կազմակերպություն է, իշխանությունները իրենց բնույթով կարող են լինել կուսակցական կամ անկուսակցական: Պետականությունը ժողովրդինն է, եւ երկրի բոլոր ուժերը պարտավոր են սրբորեն կատարել իրենց պարտականությունը:

Պետությունը լինելով ժողովրդի ինքնապահպանման բնազդի մեխանիզմի բարձրագույն ձեւը՝ պարտավոր է ստեղծել մի այնպիսի հզոր կառույց, որն ի վիճակի լինի ապահովել իր պատմական դերը՝ երկրի անկախությունը: Իսկ այդ նպատակի համար անհրաժեշտորեն պետք է ստեղծվի ժամանակակից մակարդակի վրա գտնվող հզոր արդյունաբերություն, հատկապես ռազմական, ունենալ ազգային լավագույն ավան-

դույթներով դաստիարակված, ազգային դպրոց անցած մարտունակ բանակ: Զինվորը անհրաժեշտության դեպքում առանց տատանվելու իր կյանքը պետք է զոհաբերի Հայրենիքի համար: Պետությունը պետք է երկրում ստեղծի բանակի եւ զինվորի պաշտամունք: Ազգային բանակում ծառայելը, Հայրենիքի եւ պետականության պաշտպանությունը ազգի յուրաքանչյուր անդամի սուրբ պարտականությունն է:

Պետության անկախությանը վտանգ սպառնալու դեպքում երկիրը պետք է դառնա միասնական ռազմական ճամբար, ժողովուրդը պետք է բռունցքվի եւ մեկ մարդու պես ոտքի կանգնի Հայրենիքը եւ պետականությունը պաշտպանելու համար: Հասկանալի է, որ նման կրիտիկական պահերին բոլոր կուսակցություններն ու կազմակերպությունները մի կողմ են թողնում իրենց բաժանող տարաձայնությունները, դադարեցնում քաղաքական պայքարը, ստեղծում միջկուսակցական կազմակերպություն եւ ամենայն պատասխանատվությամբ լծվում երկրի պաշտպանության գործին:

Պետության անկախության հարցը վիճարկելի չէ: Բոլոր այն ուժերը, որոնք ելնելով կուսակցական, դասակարգային կեղծ դավանանքներից փորձում են հանդես գալ ազգափրկիչների դերում եւ ժողովրդին տանել՝ դեպի դաշինքներ ու միություններ, որոնք հարված են հասցնում պետական անկախությանը , պետք է հրապարակայնորեն բնութագրվեն որպես Հայրենիքի ու պետականության թշնամիներ:

Ազգային գաղափարախոսությունը պետությանը չի թելադրում ի ղեկավարություն ընդունել այս կամ այն դավանանքը՝ մասնավորապես կապիտալիզմը կամ սոցիալիզմը: Ժողովուրդն ինքն է սեփական փորձով ընտրում այնպիսի հասարակարգ, որը լիովին համապատասխանում է իր ազգային կերտվածքին, պատմական առանձնահատկություններին եւ ապահովում է երկրի անկախությունը, բարեկեցիկ կյանքը եւ ժողովրդավարությունը:

Ահա այսպիսին է ազգային գաղափարախոսության հրամայականը ազգային պետականության հարցում, ահա այսպիսին է պետության տեղն ու դերը ժողովրդի կյանքում:

Եթե կենդանական աշխարհում ինքնապահպանման բնազդը մնացել է նախասկզբնական վիճակում, ապա ազգերը իրենց բանականությամբ, քաղաքակրթությամբ այն հասցրել են բարձրագույն մակարդակի՝ ստեղծելով անկախ ազգային պետականություն, որը ազգային գաղափարախոսության կարեւոր հիմնադրույթներից է:

Այդպես են մտածում եւ գործում ազգային ուժերը , որոնց նպատակը Ազգի, Հայրենիքի, Անկախ պետականության գոյապահպանումն ու հավերժացումն է:

Բոլորովին այլ է ապազգային ուժերի մոտեցումը ազգային եւ պետական գաղափարախոսություններին: Նրանք, գալով իշխանության գլուխ, պետական գաղափարախոսությունը հակադրում են ազգային գաղափարախոսությանը, փորձելով անցկացնել գիտության հետ ոչ մի առնչություն չունեցող այն տեսակետը, թե իբր այդ երկու հասկացությունների միջեւ գոյություն ունեն արմատական տարբերություններ եւ անգամ հակասություններ: Ընդ որում, գործը հասնում է այն աստիճանի, որ պետական գաղափարախոսությունը ներկայացվում է որպես ազգային գաղափարախոսության հետ ոչ մի առնչություն չունեցող առանձին գաղափարախոսություն: Դեռ ավելին, ապազգային ուժերը ընդհանրապես մերժում են ազգային գաղափարախոսության գոյությունը:

Ո՞րն է նման քաղաքականության նպատակը, ի՞նչ խնդիրներ են հետապնդում ապազգային ուժերը:

Ապազգային ուժերը գրավելով իշխանությունը, ինչպես նշեցինք, մերժում են ազգային գաղափարախոսությունը եւ պետական մեխանիզմը դարձնում լծակ՝ իրենց ապազգային քաղաքականությունը իրականացնելու համար: Ապազգային ուժերը իշխանությունը գրավելուց հետո գործադրում են բոլոր ջանքերը «պատմության բեռից» ազատվելու, ժողովրդի պատմական անցյալը, պատմական հիշողությունը մերժելու համար:

Հենց այդ նպատակով էլ ապազգային ուժերը պետական գաղափարախոսությունը արհեստականորեն անջատում են ազգային գաղափարախոսությունից, այն ներկայացնում որպես առանձին քաղաքական կատեգորիա եւ հակադրում իրար: Առանձնացնելով իրարից, ապազգային ուժերը պետական գաղափարախոսությունը հայտարարում են միակ եւ հիմնական նպատակ: Դրանով իսկ ապազգային ուժերը ազատվում են «պատմական բեռից»՝ ազգային գաղափարախոսությունից:

Պետական գաղափարախոսության նպատակը հռչակվում է՝ պետության հզորացումը, ժողովրդի բարեկեցիկ կյանքի ապահովումը, ժողովրդավարական եւ քաղաքացիական հասարակության ստեղծումը:

Նման համամարդկային խնդիրների ֆոնի վրա աստիճանաբար, ծրագրավորված սկսում են վարկաբեկվել ազգային գաղափարախոսությունը՝ ամբողջությամբ եւ այդ գաղափարախոսության հիմնադրույթները՝ առանձին- առանձին:

Ապազգային ուժերը ձգտում են ստեղծել ազգային հիմքից կտրված մարդկային կոսմոպոլիտ հանրության պետություն, ապազգային պետություն:

Ազգային գերխնդիրներից, ազգային գաղափարախոսությունից կտրված նման պետությունները իրենց էությամբ ազգային չեն եւ երկար

ժամանակ գոյատեւել չեն կարող:

Առանց ազգային գաղափարախոսության ոչ ազգ կարող է գոյություն ունենալ, ոչ էլ ազգային պետականություն:

Այսպիսով, ազգային պետության համար ազգային գաղափարախոսությունը Մեծ ու Սուրբ գաղափար է, ազգի ու Հայրենիքի գոյապահպանման հիմնապայմանը:

Չորրորդ հիմնադրույթ

ԱԶԳԱՅԻՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ

Ազգային գաղափարախոսության համակարգում կարեւորագույն տեղ է գրավում ազգային մշակույթը: Համաձայն ազգային գաղափարախոսության, առանց ազգային մշակույթի ոչ ազգ կարող է գոյություն ունենալ, ոչ էլ Հայրենիք:

Ազգերն իրարից տարբերվում են ազգային մշակույթով: Հայրենիքը ազգային դիմագիծ է ստանում, ազգայնանում է ազգային մշակույթով: Յուրաքանչյուր ազգ ունի իր ուրույն ազգային մշակույթը: Յուրաքանչյուր ազգի գոյություն պայմանավորված է իր ազգային մշակույթով: Յուրաքանչյուր ժողովրդի ազգային կերպարը, նկարագիրը, բնավորությունը եւ հոգեբանությունը պայմանավորված են ազգային մշակույթի առանձնահատկություններով:

Բազմազան ազգային մշակույթները մարդկային ցեղի՝ դարերի ընթացքում ստեղծած անվիճելի հարստությունն են:

Մշակութային համամարդկային արժեքները ստեղծվում են ազգային հիմքի վրա, ազգային մշակույթներից:

Ելնելով վերոհիշյալ ճշմարտություններից, ազգային գաղափարախոսությունը ժողովրդի պատմական ճակատագրում ազգային մշակույթին առանձնահատուկ տեղ է հատկացնում: Մշակույթի, գիտության եւ կրթության համակարգերը պետք է լինեն ազգային: Ազգային գաղափարախոսությունը այդ համակարգերում է մշակվում, այդ համակարգերում է զարգանում:

Հիշյալ համակարգերը մշտապես պետք է գտնվեն ազգային պետության ուշադրության կենտրոնում եւ պետք է ղեկավարվեն ազգային ուժերի կողմից:

Ազգային մշակույթի եւ գիտության այն բնագավառներին, որոնք անմիջականորեն առնչվում են ժողովրդի ինքնության պահպանմանը, կրթական համակարգում պետք է առանձնահատուկ ուշադրություն դարձվի: Խոսքը առաջին հերթին վերաբերվում է լեզվին եւ պատմությանը, որոնք հատուկ կարգավիճակ պետք է ունենան:

Մշակույթի համակարգը պետք է հեռու պահել ապազգային ուժերից: Ժողովրդին ազգային ուղուց շեղելու, ազգային հիշողությունից զրկելու

համար ապազգային ուժերը առաջին հերթին հարվածի տակ են առնում եւ փորձում հիմնահատակ կործանել մշակույթի, կրթության եւ գիտության ազգային ավանդական համակարգերը:

Ժողովրդի ոչնչացումը սկսվում է մշակույթի ոչնչացումից, մշակույթի ցեղասպանությունից: Այդ է հաստատում պատմության դարավոր փորձը:

Ցեղասպան պետությունները եւ ժողովուրդները շատ լավ գիտեն, որ ժողովրդի գոյապահպանման, նրա ավանդական ազգային նկարագրի պահպանման հիմնական երաշխիքներից մեկը ազգային մշակույթի համակարգն է:

Պատմական հուշարձանները, պատմական, հնագիտական, ազգագրական, գրական թանգարանները, մատենադարանները, գրադարանները եւ ընդհանրապես ազգային-մշակութային արժեք ներկայացնող բոլոր համակարգերը հատուկ պետական որոշումներով պաշտպանության տակ պետք է առնվեն: Այդ է թելադրում ժողովրդի ինքնապահպանման բնազդը: Պատմության փորձությանը դիմանում են այն ժողովուրդները, որոնք հոգատար վերաբերմունք են ցույց տալիս ազգային մշակույթի պահպանման եւ զարգացման կարեւոր խնդիրների լուծմանը, այն դարձնում են պետական քաղաքականության առանցք:

Ահա թե ինչու ազգային մշակույթը հանդիսանում է ազգային գաղափարախոսության հիմնադրույթներից մեկը:

Հինգերորդ հիմնադրույթ

ԱԶԳԱՅԻՆ ԿՐՈՆ

Ազգային գաղափարախոսության համակարգում հիմնադրույթային տեղ է գրավում կրոնը: Յուրաքանչյուր ժողովուրդ ունի իր կրոնը: Համաշխարհային կրոնները տարբեր ազգերի մոտ պարտադիր կերպով ազգայնանում են: Առանց կրոնի ժողովուրդներ գոյություն չունեն:

Եկեղեցին վերդասակարգային, վերկուսակցական կառույց է:

Եկեղեցին ազգային գաղափարախոսությունը ներառում է հոգեւոր ոլորտի մեջ: Կրոնը սրբացնում եւ աստվածաստեղծ բնույթ է տալիս ազգային գաղափարախոսության հիմնադրույթներին: Եկեղեցին պետականությանը տալիս է կրոնագաղափարական հիմք: Ազգի եւ հայրենիքի գաղափարները եկեղեցու կողմից ներկայացվում են որպես աստվածաստեղծ սրբություններ: Հայրենիքի գաղափարը դարերի ընթացքում սրբանում է:

Եկեղեցին ժողովրդին համախմբում է ազգային գաղափարների շուրջ: Եկեղեցին հանդես է գալիս որպես ազգային համաձայնության եւ ազգային համերաշխության գաղափարախոս: Նա ժողովրդին համախմբող կառույց է:

Լինելով ժողովրդին համախմբող կառույց՝ եկեղեցին, որպես կանոն, դարեր շարունակ պայքարել է ազգային պետականության անկախության եւ հզորացման համար, ժողովրդի պատմության վտանգավոր պահերին միշտ էլ ազգային իշխանությունների հետ միասին գտնվել է Հայրենիքի համար մղվող պայքարի առաջին գծում: Պետականություն չունեցող ժողովուրդների ազատագրական պայքարը ղեկավարել է եկեղեցին: Պետականազուրկ ժողովուրդների մոտ եկեղեցին փոխարինել է պետությանը:

Եկեղեցու դերը չափազանց մեծ է ազգային մշակույթի պահպանման, զարգացման եւ քարոզչության գործում: Ազգային մշակույթը դարեր շարունակ զարգացել է հիմնականում կրոնական կառույցի շրջանակներում:

Այսպիսով, եկեղեցին կրոնական գաղափարախոսության մեջ է ներառել նաեւ ազգային գաղափարախոսությունը եւ դարերի ընթացքում զորացրել է ժողովրդի ինքնապահպանման բնազդը: Այս առումով եկեղեցու դերը ժողովրդի գոյապահպանման գործում դժվար է գերագնահատել:

Հիմնական գծերով այսպիսին է եկեղեցու դերը ազգային գաղափարախոսության համակարգում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ՝ ԱՌԱՋԻՆ ԳԼԽԻ

Այսպիսով, ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ազգային գաղափարախոսության հիմքում ընկած են՝ ազգի գոյապահպանման, ամբողջական Հայրենիքի, անկախ ազգային պետականության, ազգային մշակույթի եւ կրոնի հիմնադրույթները:

Ազգային գաղափարախոսությունն իր մեջ ամփոփում է ազգի ռազմավարական եւ մարտավարական ծրագրերը:

Ազգային գաղափարախոսության մեջ մտնող հիմնադրույթների իրականացման գործնական համակարգը կոչվում է Ազգային ծրագիր, որն իր արտահայտությունն է գտնում ազգի ռազմավարական եւ մարտավարական ծրագրերում:

Ազգային գաղափարախոսության նպատակը, ինչպես տեսանք,ազգի գոյատեւումն է, զարգացումը եւ հզորացումը, որը, ի վերջո, առաջին հերթին հանգում է պետության պատերազմ վարելու կարողությանը:

Իսկ ազգային գաղափարախոսության ո՞ր գործոններն են վճռորոշ դեր կատարում պետության հզորության հաստատման մեջ:

Հիսնախնդրի մասնագետ Դավիթ Յաբլոնսկին առաջարկում է ազգային հզորության հետեւյալ բանաձեւը.

Հզ. = / Կզ. + Տ + Ռ / x / Ս+ Կ /, որտեղ

Հզ.- հզորություն
Կզ.-Կարեւոր զանգված- բնակչություն եւ տարածք
Տ.- Տնտեսական կարողություն
Ռ.- Ռազմական կարողություն
Ս.- Ստրատեգիական նպատակ
Կ.- Ազգային ստրատեգիա հետամտելու կամք:

Համաձայն այս բանաձեւի, անկախ յուրաքանչյուր երկրի տարածքի եւ բնակչության մեծությունից, տնտեսական եւ ռազմական հզորությունից, եթե նրա ժողովրդի ստրատեգիական նպատակը եւ ազգային ստրատեգիա հետամտելու կամքը զրո է, ապա յուրաքանչյուր

թիվ, բազմապատկած զրոյով, հավասար է լինելու զրոյի:

Ուրեմն, ազգային հզորության հիմքում ընկած է ստրատեգիական նպատակը եւ Ազգային ստրատեգիա հետամտելու կամքը:

Դ.Յաբլոնսկին գրում է.

«Անկախ Հզ. արժեքի հաշվարկման մեջ դրա ակնկալվող ներդրումից, այս բանաձեւը մի քանի կարեւոր դասեր է տալիս: Ավելի նյութական տարրերը (Կզ., Տ, Ռ,), որոնք կարող են օբյեկտիվորեն հաշվարկվել, կարող են ներառել նաեւ առարկայական որակավորումների զանազան աստիճաններ: Տարածք, որը թեեւ մեծ չափեր ունի, սակայն, ծածկված է լեռնաշղթաներով եւ փոքրաթիվ նավարկելի գետերով, բնակչություն, որը թեեւ բազմաքանակ է, սակայն, տկար է եւ տգետ, կան դեպքեր, երբ չնայած մի կողմից տեխնոլոգիայի եւ զենքերի, ռազմական քանակական առավելությանը, հակառակորդն ի վիճակի է գերազանցության հասնել այնպիսի բաների շնորհիվ, ինչպիսիք են ղեկավարությունն ու բարոյականությունը:

Իսկ ինչն ավելի կարեւոր է, ցուցադրելով, որ ազգային հզորությունն իր տարրերի արդյունքն է եւ ոչ թե գումարը, այս բանաձեւը հիշեցնում է, թե որքանով են կարեւոր հարաբերակցելի եւ ենթատեքստային ասպեկտները: Միացյալ Նահանգները Վիետնամում հայտնաբերեցին, որ անկախ այն բանից, թե որքանով է նյութական, տնտեսական եւ ռազմական ունակությունների հանրագումարը մեծ եւ հզոր հակառակորդինի համեմատ, դրանց օգտակարությունը որոշվում է Ստրատեգիական նպատակի եւ Ազգային կամքի տեսանկյունից:

Յուրաքանչյուր թիվ, բազմապատկած 0-ով, հավասար է զրոյի, անկախ նրանից, թե ինչքան մեծ է այդ թիվը»[1]:

Ահա թե ինչպիսի վճռորոշ դեր է խաղում Ազգային գաղափարախոսությունը ժողովրդի գոյատեւման, զարգացման եւ հզորացման գործում:

Ահա թե ինչու Ալֆրեդ Ֆուլլեն գրում է, որ «Ինչպես ազգային, այնպես էլ անհատական բնավորության ամենահիմնական գիծը կամքն է»[2]:

1. *Դավիթ Յաբլոնսկի. Ազգային հզորությունը, Parametrs, v 27. № 1. Spring. 1977. pp 34-54.*
2. *Альфред Фуллье, Психология французского народа. (Сборник: Революционный невроз), М. 1998, стр.24.*



ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ

1. ԹՈՒՐՔԱԿԱՆ ԳՈՐԾՈՆ
Թուրքերի նոր ազգային գաղափարախոսության ձեւավորումը

ա/ Թուրքական գործոնի առաջացումը

11-րդ դարի կեսերից միջինասիական թուրքական վաչկատուն ցեղերը սկսում են նվաճել Փոքր Ասիան եւ Հայոց Հայրենիքը՝ Հայկական լեռնաշխարհը: Այնուհետեւ թուրքական զորքերը շարժվում են դեպի Եվրոպա եւ Աֆրիկա, որտեղ եւս տարածքային հսկայածավալ նվաճումներ են կատարում: Եվրոպական քաղաքակրթությունը վտանգի տակ էր:

14-րդ դարում հիմնվեց Օսմանյան հզոր կայսրությունը, որը արմատապես փոխեց նվաճված ժողովուրդների պատմության զարգացման բնականոն հունը:

Օսմանյան կայսրության նվաճած եւ հարեւան ժողովուրդները, բնականաբար, իրենց ազգային գաղափարախոսության հիմնադրույթները մշակելիս պետք է ելնեին թուրքական գործոնի առկայությունից, թուրքերի ազգային գաղափարախոսությունից: Օսմանյան կայսրության հարեւան ժողովուրդները ծրագրեր էին մշակում, թե ինչպես դիմակայեն թուրքական վտանգին, իսկ նվաճված ժողովուրդները՝ թե ինչ ուղիներով պետք է ազատագրվեն:

Թուրքերը գրավելով հսկայածավալ տարածքներ, նվաճած ժողովուրդների հայրենիքներում ստեղծելով հզոր կայսրություն, մշակեցին նոր ազգային գաղափարախոսություն, որը արմատապես տարբերվում էր Միջին Ասիայում ունեցած ազգային գաղափարախոսությունից:

Փոխվել էին պատմական պայմանները, փոխվել էր աշխարհագրական միջավայրը, փոխվել էին գոյապահպանման պայքարի ձեւերը, հետեւաբար, պետք է մշակվեր նոր ազգային գաղափարախոսություն՝ իր ռազմավարական եւ մարտավարական ծրագրերով:

բ/ Թուրքերի նոր ազգային գաղափարախոսության ձեւավորման փուլերը. օսմանիզմ, պանիսլամիզմ, թուրքիզմ, պանթուրքիզմ:

Աշխարհաքաղաքական եւ պատմական նոր պայմաններում թուրքերի ազգային գաղափարախոսությունը ունեցել է զարգացման չորս փուլ, որոնք պատմության մեջ ստացել են հետեւյալ անվանումները՝ օսմանիզմ, պանիսլամիզմ, թուրքիզմ եւ պանթուրքիզմ:

Թուրքական ցեղերը գրավելով Հայկական լեռնաշխարհը, հենց սկզբից պայքար են սկսում հայոց հայրենիքը սեփականացնելու, այնտեղ թուրքական պետություն ստեղծելու համար: Ձեւավորվում է հայոց հայրենիքը նվաճած թուրքական ցեղերի նոր ազգային գաղափարախոսությունը, որի հիմնական նպատակը այդ տարածքներում թուրքերի նոր հայրենիքի ստեղծումն էր: Թուրքերը ցանկանում էին հայոց հայրենիքը դարձնել թուրքերի հայրենիք:Ընդ որում, թուրքերը այդ նոր հայրենիքը ցանկանում էին ունենալ առանց այդ երկրի իսկական տերերի՝ հայ ժողովրդի: Հայ ժողովուրդը կամ պետք է ձուլվեր, կամ արտագաղթեր, կամ էլ ֆիզիկապես ոչնչացվեր: Հայերի ձուլումը, մահմեդականացումը եւ արտագաղթը Օսմանյան կայսրությունում դարեր շարունակ կազմակերպված բնույթ են կրել:

Թուրքերի նոր, ազգային գաղափարախոսության ստրատեգիան սկզբից մինչեւ մեր օրերը հետապնդում է մեկ հիմնական նպատակ՝ էթնիկական եւ կրոնական միատարր թուրքական պետության ստեղծումը, ժամանակի ընթացքում փոխվել է միայն այդ խնդրի իրականացման տակտիկան:

ՕՍՄԱՆԻԶՄ

Թուրքերի՝ հայերի նկատմամբ վարած ավանդական քաղաքականությունը պետական ծրագրի տեսք է ստանում 1860-1870- ական թվականներին, երբ նոր օսմանները պաշտոնապես առաջ են քաշում օսմանիզմի կոնցեպցիան: Համաձայն օսմանիզմի կոնցեպցիայի, Օսմանյան կայսրությունը հայտարարվում էր նրանում բնակվող բոլոր ժողովուրդների՝ մուսուլման եւ ոչ մուսուլման, «ընդհանուր հայրենիք»:

Օսմանյան կայսրությունում, համածայն այդ գաղափարախոսության, գոյություն ուներ մեկ ազգ՝ օսմանները: Կայսրության բոլոր ժողովուրդները օսմանյան ազգի բաղկացուցիչ մասերն էին, որոնք իրավունք չունեին ինքնուրույն գոյություն եւ անկախ պետականություն ունենալու: Բոլոր ազգությունների ներկայացուցիչները կոչվում էին օսմաններ: Նվաճված ժողովուրդների պայքարը ազգային անկախության համար օսմանիզմը դիտում էր որպես դավաճանություն «ընդհանուր հայրենիքի» նկատմամբ: Օսմանիզմի ծրագիրը կյանքի էր կոչվել Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականությունը պահպանելու, նվաճված ժողովուրդներին ձուլելու, նրանց ազգային- ազատագրական պայքարի առաջն առնելու համար: Օսմանիզմի հայեցակարգը՝ ընդհանուր հայրենիքի եւ օսմանյան միասնական ազգի գաղափարներով, նպատակ էր հետապնդում հավերժացնել թուրքերի կողմից նվաճված տարածքներում Օսմանյան կայսրության գոյությունը:

Միասնական թուրքական պետություն, միասնական օսմանյան հայրենիք, միասնական թուրք ժողովուրդ- ահա այս էր օսմանականության ծրագիրը:

Սակայն, ժամանակի ընթացքում Օսմանյան կայսրության կառավարող շրջանները համոզվեցին, որ պատմության ընթացքը անվերապահորեն տանում է դեպի կայսրության քայքայումը, նվաճված ժողովուրդների անկախությունը, ազգային անկախ պետությունների ստեղծումը: Պարզ դարձավ, որ օսմանիզմի՝ քաղաքականությունը չի կարող արգելակել ազգային - ազատագրական պայքարի այն հզոր պրոցեսը , որ սկիզբ էր առել կայսրությունում: Օսմանիզմի հայեցակարգը նոր պայմաններում քննություն չբռնեց:

Օսմանիզմը Օսմանյան կայսրության նվաճած ժողովուրդների ձուլման, դանդաղ ոչնչացման ծրագիր էր, իսկ 19-րդ դարի կեսերից ծայր առած ազգային- ազատագրական պայքարի հզոր ալիքը ոչնչացնելու համար անհրաժեշտ էին հիմնահարցը լուծելու ավելի արմատական միջոցներ: Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականությունը պահպանելու համար պետք է մշակվեր ազգային քաղաքականության միանգամայն նոր հայեցակարգ:

ՊԱՆԻՍԼԱՄԻԶՄ

Ազգային գաղափարախոսության նոր կոնցեպցիայի որոնման առաջին արդյունքը եղավ պանիսլամիզմը: Պանիսլամիզմը կրոնական գաղափարախոսություն է: Պանիսլամիզմի նպատակը մահմեդական բոլոր ժողովուրդներին մի պետության մեջ համախմբելն է:

Պանիսլամիզմի գաղափարախոսությունը որդեգրվեց Աբդուլ Համիդի կողմից եւ դարձվեց Օսմանյան կայսրության ազգային- պետական քաղաքականություն:

Պանիսլամիզմը թուրքերի ազգային գաղափարախոսության՝ էթնիկ եւ կրոնական առումով միատարր թուրքական հզոր կայսրության ստեղծման՝ կրոնական շղարշով պատված տարբերակն էր:

Պանիսլամիզմի նպատակը Օսմանյան կայսրության հզորացումն էր՝ նրանում բոլոր մուսուլմանական երկրների ու ժողովուրդների ընդգրկմամբ, որը նույնպես, ի վերջո, պետք է հանգեցներ այդ տարբեր ժողովուրդների թուրքացմանը:

Պանիսլամիզմը Օսմանյան կայսրության հզորացման ավելի մեծ հեռանկարներ էր ստեղծում, քան թուրքերի ազգային գաղափարախոսության որեւէ այլ տարբերակ:

Սակայն, պանիսլամիզմի քաղաքականությունը եւս չբռնեց պատմության քննությունը: Պանիսլամիզմը պատրանքային, իրականությունից կտրված գաղափարախոսություն էր՝ ի սկզբանե դատապարտված անհաջողության:

Ազգերի գոյատեւման պայքարում վճռականը ազգային գործոնն է եւ ոչ թե կրոնականը: Ժողովուրդները ղեկավարվում են ազգային գաղափարախոսությամբ, ազգային հիմնադրույթներով, որոնց մեջ կրոնական գործոնը խաղում է կարեւոր, բայց ոչ վճռորոշ դեր:

Հենց սկզբից էլ գաղտնիք չէր, որ մահմեդական ժողովուրդները, ելնելով իրենց ազգային գաղափարախոսություններից, ազգի եւ Հայրենիքի անկախությունը վեր են դասելու բոլոր այլ կարգի խնդիրներից: Եվ այդպես էլ կատարվեց, որի պատճառով պանիսլամիզմը պարտվեց: Պանիսլամիզմը մնաց որպես օժանդակ գործոն՝ քրիստոնեական երկրների ու ժողովուրդների դեմ մղվող պայքարում:

Ազգային նոր գաղափարախոսության որոնումները շարունակվում էին:

ԹՈՒՐՔԱԼԵԶՈՒ ՌԱՍԱՅԻ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ. ՊԱՆԹՈՒՐՔԻԶՄ (ՊԱՆԹՈՒՐԱՆԻԶՄ)

Ստեղծված իրավիճակով մտահոգված, թուրք նոր սերնդի մտավորականության որոշ ներկայացուցիչներ Ռուսաստանի թաթարական շրջաններում եւ Թուրքիայում հանդես են գալիս ընդդեմ օսմանիզմի եւ պանիսլամիզմի գաղափարախոսությունների եւ հիմք դնում մի նոր գաղափարախոսության, որը պատմության մեջ է մտել պանթուրքիզմ կամ պանթուրանիզմ անուններով:

1903 թվականին Կահիրեի «Թյուրք» թերթում հրապարակվում է պանթուրքիզմի հիմնադիր եւ խոշորագույն գաղափարախոս Յուսուֆ Աքչուրայի «Երեք քաղաքական համակարգեր» խորագրով ծրագրային հոդվածը, որում մերժելով օսմանիզմը եւ պանիսլամիզմը, համառոտակի ներկայացնում է պանթուրքիզմի գաղափարախոսությունը, առաջ քաշելով հետեւյալ հիմնադրույթները.

Օսմանիզմի հիմնական նպատակը՝ միավորելով կայսրության տարբեր ժողովուրդների, ստեղծել մեկ ազգ. անիրականանալի է:

Օսմանիզմը.

«ա/ Հակառակ է ԹՈՒՐՔԵՐԻՆ զգացումներուն եւ բաղձանքներուն: Ատով Թուրքը պիտի զրկուի տիրող ազգի իրավունքներեն եւ պիտի ըլլայ ռայայի հավասար:

բ/ Հակառակ է ԻՍԼԱՄՈՒԹՅԱՆ, որովհետեւ անհավատն ու հավատացյալը հավասար կը նկատե:

գ/ Հպատակ ժողովուրդներու ձգտումներուն հակառակ է. անոնք անկախություն կուզեն. չեն կամենար զիրենք ստրկացնող ազգին միանալ:

դ/ Ռուսաստանի փառատենչական ծրագիրներուն, անոր համասլավոնական, քրիստոնեական եւ այլ ծրագիրներուն, Պոլսի վրա սնուցած յավակնություններուն հակառակ է:

ե/ Եվրոպայի հասարակաց կարծիքին հակառակ է. անոնք կուզեն «բարբարոս» թուրքը արտաքսել Եվրոպայեն եւ քրիստոնյաները ազատել անոր լուծեն»[1]:

Այսքանը՝ օսմանիզմի գաղափարախոսության անընդունելի լինելու մասին:

Ինչ վերաբերում է պանիսլամիզմին, Աքչուրան գրում է.

1. Զարեւյանդ, Միացեալ, անկախ Թուրանիա, Աթենք, 1988, էջ 38:

«Պանիսլամիզմը մեկ կողմե կը բախի երկիրներու մեջ հետզհետե զարգացող ազգայնական ուժեղ ձգտումներուն եւ մյուս կողմե արեւմտյան բոլոր գաղութային մեծ ու փոքր տիրություններու շահերուն. ան, հետեւաբար, չի կրնար հաստատուն կռուան ըլլալ Օսմանյան կայսրության վերածնության եւ հզորացման:

ԿԸ ՄՆԱՅ ՈՒՐԵՄՆ ԵՐՐՈՐԴ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ՝ ՊԱՆԹՈՒՐԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ: ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՒԺԵՂԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՄԻԱԿ ՎՍՏԱՀԵԼԻ ՏԱՐԸԸ ԹՈՒՐՔ Է. ԹՐՔՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՊԵՏՔ Է ՈՐՈՆԵԼ ՓՐԿՈՒԹՅՈՒՆԸ. ՄԻԱՑՆԵԼ ԲԱԶՄԱՄԻԼԻՈՆ ԹԸՐՔՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆ-ԲԱԺԱՆ ԵՂԱԾ ՄԱՍԵՐԸ. ԱՀԱ ԹԵ ՈՒՐ ՊԵՏՔ Է ՉԳՏԻՆ ՄԵՐ ՁԱՆՔԵՐԸ:

ՊԱՆԹՈՒՐԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵԱՆԱՊԱՐՀԸ ԳՐԵԹԵ ՁԵՐԾ Է ԲՈԼՈՐ ԽՈՒԹԵՐԵՆ, ՈՐՈՆՑ ԿԲԱԽԻՆ ՕՍՄԱՆՑԻՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԱՄԻՍԼԱՄՈՒԹՅՈՒՆԸ: ՀԱՄԱԹՈՒՐԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒՂՂՎԱԾ Է ԱՌԱՎԵԼԱՊԵՍ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԵՄ, ՈՐԸ ԹԵԵՎ ՄԵԾ, ԲԱՅՑ ԱՆՅԱՂԹԵԼԻ ՉԷ»[1]:

Աքչուրան հույս էր հայտնում, որ Եվրոպական մյուս տերությունները արեւելքում ունեցած իրենց հակադիր շահերի պատճառով ոչ թե կխանգարեն, այլ կնպաստեն պանթուրքիզմի հաջողությանը:

Եվ այսպես, պանթուրքիզմի հիմնադիրը թուրքերի նոր ազգային գաղափարախոսության կենսագործման ճանապարհին որպես հիմնական հակառակորդ տեսնում էր ցարական կայսրությանը:

Օսմանյան կայսրության փրկությունը պանթուրքիզմի գաղափարախոսության հաղթանակի մեջ է. ահա այսպիսին է Յուսուֆ Աքչուրայի եզրակացությունը:

Բայց դա նշանակում էր ռուսաց ազգային գաղափարախոսության եւ թուրքերի ազգային գաղափարախոսության գոտեմարտ, որն էլ պետք է որոշեր այդ ժողովուրդների հետագա պատմական ճակատագիրը:

Աքչուրան, բնականաբար, մի հոդվածի շրջանակներում չէր կարող խորությամբ ու բազմակողմանիորեն շարադրել պանթուրքիզմի գաղափարախոսության բոլոր հիմնադրույթները: Այդ խնդիրը լուծել է պանթուրքիզմի խոշոր տեսաբան Զիա Գեոկալպը իր «Թուրքիզմի հիմունքները» խորագրով աշխատության մեջ: Նշված աշխատությունը Թուրքիայում մի քանի հրատարակություններ է ունեցել եւ սեղանի գիրք է պանթուրքիստների համար:

Ահա թե ինչու անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ Գեոկալպի աշխատության հիմնադրույթներին եւս, առանց որի ամբողջական պատկերացում պանթուրքիզմի մասին դժվար կլինի կազմել:

Զիա Գեոկալպը «Թուրքիզմի հիմունքները» խորագրով գրքում բա-

1. Զարեւյանդ. նշվ. աշխ. էջ 38-39:

ցահայտում է օսմանիզմի եւ պանիսլամիզմի գաղափարախոսությունների սնանկությունը եւ ապացուցում, որ նրանք Օսմանյան կայսրությունը տանում էին դեպի անխուսափելի կործանում:

Գեոկալպը օսմանիզմի մասին գրել է.

«Օսմանիզմի կողմնակիցները երբեք չէին մտածում, որ իրենք ինչ էլ անելու լինեն, այս օտար ազգերը պետք է աշխատեն անջատվել օսմանյան հավաքականությունից: Որովհետեւ այլեւս անհնարին էր շարունակել հարյուրավոր ազգերից բաղկացած այս արհեստական հավաքականության գոյությունը: Սրանից հետո յուրաքանչյուր ազգ պետք է ձգտի լինել անջատ պետություն, ապրել միատարր, սերտ, բնականոն հասարակական կյանքով:

Անտարակույս, հինգ հարյուր տարուց ի վեր Եվրոպայի արեւմուտքում սկսած հասարակական զարգացման այս խոշոր շարժումը տարածվելու էր նաեւ արեւելքում: Համաշխարհային պատերազմում Ռուսաստանի, Ավստրիայի եւ Օսմանյան կայսրությունների կործանումն էլ ցույց տվեց, որ շատ մոտ է եղել հասարակական այս հեղաշրջումը»[1]:

Պանթուրքիստները խորապես համոզված էին, որ բազմազգ կայսրությունները պատմության քննությունը չեն բռնելու եւ անխուսափելիորեն քայքայվելու են:

Գեոկալպը բազմազգ պետությունների կործանման անխուսափելիության մասին գրել է.

«Եվրոպայում այս պրոցեսը հինգ դարուց ի վեր շարունակվում էր: Հետեւաբար, այս պրոցեսից դուրս մնացած Ավստրիական, Ռուսական եւ Օսմանյան կայսրություններն էլ լուծարքի պետք է ենթարկվեին իրենց նախորդների պես»[2]:

Պանթուրքիստները, ինչպես վերը ասացինք, մերժեցին նաեւ պանիսլամիզմը: Նրանք գտնում էին, որ պանիսլամիզմը եւս Օսմանյան կայսրության փրկության ուղին չէ:

Գեոկալպը տալիս է պանիսլամիզմի հետեւյալ բնութագրումը.

«Մի ժամանակ կարծիք կար, թե պանիսլամիզմի գաղափարը պիտի ապահովեր իսլամ ժողովուրդների անկախության արժանանալը եւ գաղութային վիճակից պիտի ազատեր այդ երկրները: Մինչդեռ գործնական փորձերը ցույց տվեցին, որ պանիսլամիզմը մի կողմից՝ ստեղծում է թեոկրատիայի եւ կլերիկալիզմի նման հետադեմ հոսանքներ, մյուս կողմից՝ հակառակ լինելով ազգայնական մտածողությանը եւ ազգային գիտակցությանը, ինչպես դեմ է մուսուլման ժողովուրդների առաջադիմությանը, արգելք է նաեւ նրանց անկախությանը, որովհետեւ իսլամական աշխարհում ազգային գիտակցության արգելակ լինել նշանակում է մուսուլման ազգերի անկախությանը արգելք լինել»[1]:

1. Զիա Գեոկալպ. Թուրքիզմի հիմունքները. (չորրորդ հրատարակություն). Ստրասբուրգ, 1961, էջ 33:
2. Նույն տեղում. էջ 29:

Որպես ստեղծված փակուղուց դուրս գալու, Օսմանյան կայսրությունը քայքայումից փրկելու, թուրքական ժողովուրդներին մի հզոր պետության մեջ միավորելու միակ միջոց, Գեոկալպը նույնպես առաջարկում է պանթուրքիզմի գաղափարախոսությունը: Նա մանրամասն մշակել է պանթուրքիզմի գաղափարախոսությունը, ստեղծել ամբողջական կոնցեպցիա:

Գեոկալպը պանթուրքիզմը դիտում է որպես եռաստիճան համակարգ: Եվ որ ամենակարեւորն է, այդ համակարգում առանձնացված է թուրքիզմը՝ որպես թուրք ժողովրդի ազգային գաղափարախոսություն, եւ պանթուրքիզմը՝ որպես թուրքալեզու ժողովուրդների գաղափարախոսություն:

Համաձայն պանթուրքիզմի գաղափարախոսության, թուրքալեզու ժողովուրդների միավորումը մի պետության մեջ պետք է իրականացվեր եռաստիճան ծրագրով:

«Պանթուրքիզմը,- գրում է Գեոկալպը,- գաղափարի մեծության տեսակետից կարող ենք բաժանել երեք աստիճանի:

1. Թուրքիզմ,
2. Օղուզականություն կամ թուրքմենականություն,
3. Թուրանականություն»[2]:

Պանթուրքիզմի նպատակը թուրքական ռասայի ժողովուրդների միասնական պետության՝ Մեծ Թուրանի ստեղծումն է:

Գեոկալպը պանթուրքիզմի ծրագիրը բաժանում է երկու մասի՝ մոտավոր եւ հեռավոր: Մոտավորը՝ Օղուզական պետության ստեղծումն է, հեռավորը՝ Մեծ Թուրանի պետության ստեղծումը:

Իսկ թուրքիզմը այն ելակետն է, այն հիմքը, որի վրա պետք է խարսխվեն պանթուրքիզմի մոտավոր եւ հեռավոր ծրագրերը: Այդ առումով թուրքիզմը՝ որպես թուրք ժողովրդի ազգային գաղափարախոսություն, առանձնանում է պանթուրքիզմի համակարգում եւ վերածվում առանձին գաղափարախոսության:

Առանց թուրքիզմի իրականացման ոչ մի խոսք չէր կարող լինել պանթուրքիզմի մոտավոր եւ հեռավոր ծրագրերի իրականացման մասին: Միայն այն բանից հետո, երբ Թուրքիայում կիրականացվեր թուրքիզմը, երբ թուրքական էթնիկապես միատարր պետությունը կդառնար թուրքական աշխարհի դրոշակակիրը, կարելի կլիներ սկսել Մեծ Թուրա-

1. Նույն տեղում. էջ 58-59:
2. Նույն տեղում. էջ 19:

նի ծրագրի իրագործումը:

Պանթուրքիստները որդեգրեցին եւ իրենց ստեղծած գաղափարախոսության առաջին փուլ համարեցին ավելի առաջ ստեղծված եւ պանիսլամիզմին զուգահեռ՝ Աբդուլ Համիդի կողմից դեռ 19-րդ դարի վերջերից իրագործվող թուրքիզմի գաղափարախոսությունը:

Այդ պատճառով էլ մենք, թուրքիզմը ընդունելով որպես պանթուրքիզմի առաջին աստիճան, միաժամանակ այն դիտում ենք որպես թուրքերի ազգային գաղափարախոսություն:

Այժմ առանձին-առանձին անդրադառնանք պանթուրքիզմի գաղափարախոսության երեք աստիճաններին:

Առաջին աստիճան

ԹՈՒՐՔԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ. ԹՈՒՐՔԻԶՄ

Թուրքիզմը թուրքերի ազգային գաղափարախոսությունն է: Թուրքիզմը գաղափարախոսական հիմնադրույթների համակարգ է: Թուրքիզմի նպատակը Թուրքիան էթնիկական միատարր պետություն դարձնելն էր, Թուրքիան թուրքացնելը: Այդ գաղափարախոսության համաձայն, Թուրքիան պետք է մահմեդականացվեր, որը նշանակում էր քրիստոնյաների, առաջին հերթին, իհարկե, արեւմտահայության ֆիզիկական ոչնչացում: Թուրքիզմի գաղափարախոսության համաձայն, Թուրքիան առաջին հերթին միատարր պիտի դառնար կրոնական առումով եւ հետո միայն՝ ազգային: Այդ թեզից հետեւում էր, որ Օսմանյան կայսրության ոչ թուրք ժողովուրդների ֆիզիկական ոչնչացման ծրագիրը պետք է իրագործվեր երկու փուլով: Առաջին փուլում պետք է ոչնչացվեին Օսմանյան կայսրության ոչ մահմեդական ժողովուրդները, երկրորդ փուլում՝ ոչ թուրք մահմեդական ժողովուրդները:

Պայքարը հողի եւ հայրենիքի համար Օսմանյան կայսրությունում մշտապես դաժան եւ անողոք է եղել: Այդ է ապացուցում թուրքերի՝ տարբեր ժամանակներում իրագործած ազգային գաղափարախոսությունների՝ օսմանիզմի, պանիսլամիզմի, թուրքիզմի եւ պանթուրքիզմի վերլուծությունը:

Թուրքերի ազգային գաղափարախոսությունը պաշտոնական կամ ոչ պաշտոնական ձեւով մշտապես դրված է եղել պետական գաղափարախոսության հիմքում:

Թուրքերի պետական քաղաքականությունը դարեր շարունակ ղեկավարվել է միայն ազգային գաղափարախոսության հիմնադրույթներով: Դրանով է բացատրվում այն հանգամանքը, որ Օսմանյան կայսրության, իսկ հետագայում՝ Թուրքիայի հանրապետության բոլոր ղեկավարությունները ազգային հարցում վարել են նույն քաղաքականությունը: Այդ առումով տրամաբանական է, որ հայոց ցեղասպանության կազմակերպիչների ածյունները տասնամյակներ հետո վերաթաղվում են Թուրքիայում: Այդ ցույց է տալիս, որ թուրքական իշխանությունները արդարացնում են իրենց նախորդների ցեղասպանության քաղաքականությունը:

Թուրքերի ազգային գաղափարախոսության առանցքը հողի եւ ժողովրդի գաղափարն է: Թուրքերի ազգային գաղափարախոսության խոշորագույն տեսաբանները այդ պատճառով էլ իրենց ուսմունքի հիմքում դնում են հողի եւ ազգի գաղափարը, երբեմն էլ՝ նույնիսկ դրանք նույնացնելով: Հողի եւ ազգի գաղափարները վեր են դասվում բոլոր գաղափարներից:

Զիա Գեոկալպը գրում է. «Ամենից ավելի արժեք ունեցող գաղափարը պետք է լինի Հայրենիքի գաղափարը: Որովհետեւ հասարակական խմբերի միջեւ անկախ եւ ամբողջական կյանքի տերը եւ մի հասարակական օրգանիզմի հանգամանք ցուցաբերողը միայն այն հավաքականությունն է, որին ազգ կամ հայրենիք անունն են տալիս...

Ուրեմն ազգային գաղափարը ուրիշ խմբերի վերաբերող գաղափարներից՝ հավատացյալների գաղափարից, քաղաքականության եւ միջազգայնական գաղափարներից ավելի բարձր է: Այս պատճառով Հայրենիքի գաղափարն էլ մյուս գաղափարներին պետք է գերազանցի:

Մասնավորապես մեզ նման քաղաքական թշնամիներ շատ ունեցող ազգերի համար ամենամեծ հենարանը կարող է լինել Հայրենիքի գաղափարը: Եթե մեր Հայրենիքի գաղափարը ուժեղ չլինի, չենք կարող պահպանել ոչ մեր անկախությունը, ոչ ազատությունը եւ ոչ էլ մեր Հայրենիքի ամբողջականությունը: Թուրքիզմը ամեն բանից ավելի պետք է թանկ գնահատի ազգի եւ հայրենիքի գաղափարները[1]:

Թուրքերի ազգային գաղափարախոսները գտնում են, որ պատմականորեն ի սկզբանե Հայրենիքի գաղափարը թուրքերի համար վեր է եղել բոլոր այլ գաղափարներից: Այդ թեզը հիմնավորելու համար Գեոկալպը գրում է. «Թուրքի հայրենասիրության որպես օրինակ կարող ենք հիշատակել հոների պետության հիմնադիր Մեդեն: Թաթարների վեհապետը, որպես պատերազմի պատրվակ, պահանջեց նրա շատ սիրած ձին: Այս ձին ժամում հազար փարսախ ճամփա էր կտրում: Մեդեն իր հայրենակիցներին պատերազմի աղետներին չենթարկելու համար իր ձին ուղարկեց թաթար վեհապետին: Թաթար վեհապետը պատերազմի պատրվակ էր փնտրում: Այս անգամ էլ Մեդեի ամենասիրած կինը պահանջեց: Ժողովում՝ մինչ բոլոր բեյերը պահանջում էին պատերազմ հայտարարել, Մեդեն ասելով՝ «Ես իմ հայրենիքը իմ սիրո համար չեմ կարող ոտնակոխ անել տալ», իր սիրած կնոջը թշնամուն տալու մեծ զոհաբերության որոշում ընդունեց:

Այդ պատճառով էլ թաթար վեհապետը հոների երկրից անբերրի, չմշակված, անտառազուրկ, հանքեր չունեցող, անբնակ մի հողակտոր պահանջեց:

1. Նույն տեղում, էջ 104-105:

Եվ որքան որ Կուրուլթայը հայտնեց, թե այդպիսի անբերրի մի հողակտոր տալու մեջ ոչ մի անպատեհություն չկա, Մեդեն ասաց.

«ՀԱՅՐԵՆԻՔԸ ՄԵՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ Չէ: ԳԵՐԵԶՄԱՆՈՒՄ ՊԱՌԿԱԾ ՄԵՐ ՆԱԽՆԻՆԵՐԸ ԵՎ ՄԻՆՉԵՎ ԱՇԽԱՐՀԻ ՎԵՐՋԸ ԾՆՎԵԼԻՔ ՄԵՐ ԹՈՌՆԵՐԸ ԱՅՍ ՆՎԻՐԱԿԱՆ ՀՈՂԻ ՎՐԱ ԻՐԵՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆ ՈՒՆԵՆ: ՀԱՅՐԵՆԻՔԻՑ ՈՉ ՈՔ ՆՈՒՅՆԻՍԿ ՄԻ ԹԶԱՉԱՓ ՀՈՂ ՏԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԻ, ՈՒՐԵՄՆ, ՊԻՏԻ ՊԱՏԵՐԱԶՄԵՆՔ:

Ահավասիկ ես ձիս քշում եմ դեպի թշնամին, իմ ետեւից չեկողը մահապատժի է ենթարկվելու» ասելով՝ արշավեց թաթարների վրա:

Դուք կարող եք պատմական այս դեպքից եզրակացնել, ավարտում է իր միտքը Գեոկալպը, թե հին թուրքերի համար որքան նվիրական էր հայրենիքը»[1]:

Ահա թե թուրք ազգային գաղափարախոսները ինչպիսի ազգային սկզբունքներով էին դաստիարակում թուրք ժողովրդին, ինչպիսի անգիջում վերաբերմունք ունեին հողի եւ Հայրենիքի հարցում:

Հայրենիքը սրբություն է աշխարհի բոլոր ժողովուրդների համար: Հայրենիքի տարածքի անգամ մի թիզ հողը ոչ մի ժողովուրդ առանց պատերազմի, առանց արյունի չի զիջում թշնամուն: Մարդկային հասարակության պատմության ընթացքում տեղի ունեցած պատերազմները մղվել են հողի եւ Հայրենիքի համար: Այն ժողովուրդը, որը դադարում է Հայրենիքը սրբություն համարել, որը առանց պայքարի հայրենի տարածքները զիջում է թշնամուն, լքում է Հայրենիքը, դատապարտված է անխուսափելի կործանման:

Սա անվիճելի ճշմարտություն է:

Սակայն, հարցն այն է, որ թուրքական քոչվոր ցեղերը նվաճած տարածքները եւս դիտում էին որպես սեփական հայրենիք: Թուրքը առանձնահատուկ վերաբերմունք է ունեցել ինչպես սեփական, այնպես էլ նվաճած տարածքների նկատմամբ: Զիա Գեոկալպը գրում է.

«Թուրքերի բոլոր պատերազմների նպատակը եղել է հաստատել խաղաղության տեւական շրջան: Թուրքական իշխանության բոլոր շրջաններում՝ Մանջուրիայից մինչեւ Հունգարիա, թուրանական հողամասը ապրել է երջանիկ, խաղաղ եւ հանգիստ կյանքով: Թուրք ցեղապետները իմպերիալիստ էլ չէին, որովհետեւ գոհանում էին միայն թուրք երկրների միացումով եւ չէին աշխատում նվաճել ուրիշ ազգերի երկրներ»[2]:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք , ըստ Գեոկալպի՝ ա/ թուրքերի բոլոր պատերազմների նպատակը եղել է խաղաղության տեւական շրջա-

1. Նույն տեղում, էջ 102-103:
2. Նույն տեղում, էջ 104:

նի ստեղծումը, բ/ թուրքերը ուրիշ ազգերի հայրենիքներ չեն նվաճել, գ/ Մանջուրիայից մինչեւ Հունգարիա թուրանական, այսինքն՝ թուրքական հողամաս է, դ/ այդ տարածքը ապրել է երջանիկ, խաղաղ եւ հանգիստ կյանքով:

Գեոկալպի այս տողերը գրված են թուրքալեզու ժողովուրդների, մասնավորապես թուրքերի համար եւ ունեն դաստիարակչական նշանակություն: Թուրքալեզու ժողովուրդները դեռ ազգային խնդիրներ ունեն լուծելու: Հետեւաբար, նրանք դեռ կարիք ունեն համապատասխան դաստիարակության:

Դրա հետ միասին, թուրքերը մեծ աշխատանք են տանում աշխարհի ժողովուրդներին իրենց ազգային պատմությունը բարձր մակարդակով, հումանիստական դիրքերից ներկայացնելու համար: Թուրքերի ազգային գաղափարախոսները այդ նպատակն են հետապնդում :

Թե դա ինչպիսի մակարդակով է կատարվում, ցույց են տալիս Գեոկալպի հետեւյալ խոսքերը.

«Թուրք պատմությունը ամբողջովին բարոյական առաքինությունների ցուցահանդես է: Պարտված ազգերին եւ նրանց ազգային ու կրոնական հաստատություններին ազգային եւ կրոնական ինքնավարություն տալը վեր է ամեն գնահատանքից: Սակայն, այս լավության փոխարեն, պարտված ազգերը՝ վեհանձն թուրքերի կողմից իրենց շնորհված այս արտոնությունները թուրքերի դեմ դարձնելով, աշխատեցին կապիտուլյացիա անունը կրող շղթաներով կապել եւ խեղդել թուրքերին:

Վերոհիշյալ երկու տեսակի վերաբերմունքը, կողմերի բարոյականության արտացոլման տեսակետից, վերին աստիճանի հատկանշական է»[1]:

Պարզվում է նաեւ, որ աշխարհի մեծ ազգերից յուրաքանչյուրը քաղաքակրթության առանձին ասպարեզում առաջնություն է շահել, թուրքերն էլ շահել են բարոյականության մեջ[2]:

Թուրքերի ազգային գաղափարախոսները լրջորեն փորձում են աշխարհի ժողովուրդներին հավատացնել, որ Երկիր մոլորակի ամենաբարոյական եւ առաքինի ժողովուրդը թուրքերն են:

Թուրքիզմի գաղափարախոսները գտնում են.

«Յուրաքանչյուր ազգ երկրի երեսին ունի իր պատմական եւ քաղաքակրթական առաքելությունը: Իսկ թուրք ազգի առաքելությունն է գործնականորեն հրապարակ հանել իր բարոյական բարձրագույն առաքինությունները եւ ապացուցել անհնարին համարված զոհաբերությունների ու հերոսությունների կարելիությունը»[3]:

1. Նույն տեղում. էջ 102:
2. Նույն տեղում:
3. Նույն տեղում. էջ 116:

Բարոյականության բնագավառում թուրքերը ցուցաբերեցին միայն անբարոյականություն: Նրանք աննախադեպ նվաճումներ ունեցան միայն ցեղասպանության, կոտորածների եւ ընդհանրապես մարդկային քաղաքակրթության դեմ ուղղված հրեշավոր գործունեությամբ: Հենց մարդկային քաղաքակրթության դեմ մղվող պայքարում թուրքերն ապացուցեցին, որ ի վիճակի են անհնարինը կարելի դարձնել:

Նվաճել ուրիշ ժողովուրդների հայրենիքները, բոլոր ոչ մարդկային միջոցները գործադրել այդ հայրենիքները սեփականացնելու, նվաճված ժողովուրդներին ֆիզիկապես ոչնչացնելու համար եւ անբարոյական անվանել այն ժողովուրդներին, որոնք պայքարում են գոյատեւման եւ սեփական հայրենիքի ազատագրման համար- ահա սա է, ինչպես տեսնում ենք, թուրքի բարոյականությունը:

Թուրք ազգային գաղափարախոսները մշակել են նաեւ հիմնադրույթների մի համակարգ, որի նպատակը հայրենիքի պաշտպանության եւ ամբողջականության ապահովումն է: Թուրքիզմը Հայրենիքի եւ ազգի գոյատեւման հիմքում դնում է ազգային մշակույթի, ազգային ինքնագիտակցության եւ ազգային համերաշխության գաղափարները: Համաձայն թուրքիզմի գաղափարախոսների, Հայրենիքի բովանդակությունը ազգային մշակույթն է:

Գեոկալպը գրում է.

«Հայրենիքի գաղափարի բարձրությունը հիմքն է ազգային համերաշխության, որովհետեւ Հայրենիքը չի նշանակում այն հողը, որի վրա բնակվում ենք: Հայրենիքը՝ մեր ազգային մշակույթն է: Այն հողը, որի վրա բնակվում ենք, նրա միայն կեղեւն է կազմում եւ նրա կեղեւը (պատյանը) լինելու համար է, որ նվիրական է: Հայրենիքի գաղափարը նշանակում է ազգային մտածողություններից, ազգային պարտականություններից բաղկացած մի գաղափար:

Ուրեմն, ազգային համերաշխությունը զորացնելու համար ամեն բանից առաջ անհրաժեշտ է բարձրացնել Հայրենիքի գաղափարը: Սակայն, ի՞նչ պետք է անենք Հայրենիքի գաղափարը բարձրացնելու համար:

Ասել էինք, որ «հայրենիքը ազգային մշակույթ է»: Նշանակում է՝ կրոնական, բարոյական, գեղարվեստի գեղեցկությունների մի թանգարան, մի ցուցահանդես է: Մենք սրտագին սիրով սիրում ենք մեր Հայրենիքը նրա համար, որ նա այդ մաքուր գեղեցկությունների ամբողջությունն է կազմում: Ուրեմն, երբ մենք մեր ազգային մշակույթը իր բոլոր գեղեցկություններով երեւան բերենք, այդ ժամանակ է, որ մենք ամենից շատ կսիրենք մեր Հայրենիքը, եւ մեծագույն ուժգնությամբ սիրած մեր Հայրենիքի սիրո համար, ինչպես այժմ, սրանից հետո նույնպես, թե վտանգի ժամերին եւ թե խաղաղության ժամանակ պիտի կարողանանք զո-

հաբերել մեր անձնական եւ խմբային բոլոր ցանկություններն ու շահերը:

Ինչպես տեսնում ենք, «ազգային համերաշխությունը զորացնելով, համար ազգային մշակույթը բարձրացնելու պարտականությունը ընկնում է մտավորականության վրա, որը պետք է ամենից առաջ այս գործի հաջողությունն ապահովի»[1]:

Թուրքիզմի գաղափարախոսները ազգային ինքնագիտակցությունը համարում են «ազգային անկախության սկզբնարմատը եւ հենակետը»[2], իսկ «ազգային համերաշխության ուժեղացումը՝ հիմքն է հասարակական կարգ ու կանոնի եւ առաջադիմության, ազգային ազատության ու անկախության»[3]:

Թուրքիզմի գաղափարախոսները թուրք մշակույթը համարում են «Աշխարհ եկածներից եւ առաջիկայում եկողներից ամենագեղեցիկը»[4]:

Այդ «ամենագեղեցիկ» մշակույթին թուրքերի ազգային գաղափարախոսությունում տրվում է առանձնահատուկ, կարեւորագույն նշանակություն: Հողը Հայրենիք է դառնում մշակույթով, ազգային ինքնագիտակցությունը պահպանվում ու զարգանում է մշակույթով, ազգային համերաշխությունը ձեռք է բերվում մշակույթով: Ազգային գաղափարախոսության բոլոր գործոնների հիմքում փաստորեն դրվում է թուրքական ազգային մշակույթը: Թուրքերի բոլոր հաջողությունների հիմքում դրվում է թուրքական ազգային մշակույթը:

Համաձայն թուրքիզմի տեսաբանների, ահա թե ինչպիսի նշանակություն է ունեցել թուրքերի պատմության մեջ թուրքական մշակույթը.

«Թուրքերի մինչեւ հիմա անկախ մնալը, Դարդանելից անգլիացիներին եւ ֆրանսիացիներին վռնդելը, զինադադարից հետո, անգլիական զենքերով եւ դրամով սպառազինված, հույներին ու հայերին պարտության մատնելը, բարոյապես անգլիացիներին հաղթելը, այս բոլորը ձեռք է բերված շնորհիվ ազգային մշակույթի հզորության»[5]:

Իսկ ազգային մշակույթը զարգանում եւ հզորանում է ազգային մտավորականության ուժերով: Ազգային գաղափարախոսության ստեղծման գործում, այդ պատճառով էլ, հիմնական դերը պատկանում է ազգային մտավորականությանը:

Ելնելով վերը շարադրված տեսական նախադրյալներից, թուրքիզմի գաղափարախոսները հետեւողականորեն առաջ են քաշում լեզվի, պատմության, գրականության, արվեստի եւ ընդհանրապես թուրք ազ-

1. Նույն տեղում. էջ 59:
2. Նույն տեղում. էջ 58:
3. Նույն տեղում, էջ 61:
4. Նույն տեղում. էջ 72:
5. Նույն տեղում, էջ 29:

գային մշակույթի բոլոր բնագավառների, ազգային կրթական ու գիտական համակարգերի վերակառուցման ու զարգացման հարցերը:

Անվիճելի էր, որ թուրքիզմի գաղափարների հաղթանակը պետք է ապահովի ազգային մտավորականությունը:

Թուրքիզմը ամբողջական եւ հետեւողական գաղափարախոսություն է, որի համաձայն Հայրենիքն ու ազգը պետք է ունենան ազգային հիմք:

Գեոկալպը գրում է.

«Թուրքիզմը չի կարող համաձայնել այնպիսի դրության հետ, որը չի ընդունում ազգային հիմքը»[1] եւ մասնավորեցնում. «Թուրքայնությունը չի կարող համաձայնել աշխարհաքաղաքացիության հետ: Ինչպես որ ոչ մի թուրք չի կարող աշխարհաքաղաքացի լինել, այնպես էլ ոչ մի աշխարհաքաղաքացի չի կարող թուրքայնական լինել»[2]:

Համաձայն թուրքիզմի, յուրաքանչյուր ժողովուրդ, եթե ցանկանում է գոյատեւել, իր երկրի պետական քաղաքականության հիմքում պետք է դնի սեփական ազգային գաղափարախոսությունը:

Թուրքիզմը թուրքերի ազգային իղձերի իրագործման լծակն է եղել: Առանց թուրքիզմի գաղափարախոսության իրագործման գոյություն չէր ունենա թուրքական ներկա պետությունը՝ իր հսկայածավալ տարածքներով:

Գեոկալպը գրում է, որ օսմանիզմի մի շարք խղճալի կողմնակիցներ, անգամ Վիլսոնի սկզբունքները հրապարակ նետելուց հետո, ասել են.

«Եթե թուրքիզմը ժամանակին մեր շատերի մտքում եւ հոգիներում տեղ գտած չլիներ, մենք, որ Օսմանյան կայսրությունից անկախ, մասնավոր եւ ազգային կյանքով ապրող, սահմաններն ազգագրական գիտության կողմից գծված ազգային մի հայրենիք ունենք, եւ այս հայրենիքում մենք կատարյալ անկախությամբ այսօր մեզ կառավարելու ազգային իրավունք ունենք, ինչպիսի՞ վիճակում էինք լինելու»:

Բերելով այս խոսքերը՝ Գեոկալպը եզրակացնում է.

«Ուրեմն միայն մի բառ՝ նվիրական եւ օրհնյալ ԹՈՒՐՔ բառն է, որ այս խառնաշփոթության մեջ պատճառ դարձավ ճիշտ ուղին տեսնելու»[3]:

Գեոկալպը «թուրք» բառի տակ նկատի ունի թուրքիզմը, որը իրոք փրկեց Թուրքիան կործանումից:

Թուրքիզմի գաղափարախոսները իրենց ծրագրի հիմքում դնելով Օսմանյան կայսրության մահմեդականացման, էթնիկապես մեկ միատարր պետություն ստեղծելու խնդիրը, միաժամանակ մշակեցին նաեւ այդ պրոբլեմը լուծելու տեսական եւ գործնական ուղիները: Թուրքերի

1. Նույն տեղում. էջ 69:
2. Նույն տեղում. էջ 71:
3. Նույն տեղում. էջ 33:

համար նվաճված ժողովուրդների հայրենիքները համարվում էին թուրքական հայրենիք: Թուրքերը այս թեզը համարում են անվիճելի ճշմարտություն: Նրանք դարեր շարունակ այդպես են լուծել հայրենիքի հարցը: Նվաճված տարածքները թուրքական հայրենիք են, իսկ այդ տարածքների իսկական տերերը կամ պետք է ձուլվեն կամ էլ հեռանան, հակառակ դեպքում՝ դատապարտված էին ոչնչացման:

Իրենց գաղափարախոսությունը արդարացնելու նպատակով թուրքիզմի տեսաբանները առաջ են քաշում երկու հիմնական հակագիտական թեզեր.

Առաջին թեզ. Հայրենիքի գաղափարը.

«Ցեղի բնակած երկիրը,- գրում է Գեոկալպը,- կոչվում է Հայրենիք»[1]: Այս թեզի համաձայն, թուրքական ցեղերի նվաճած բոլոր տարածքները համարվում են թուրքական հայրենիք:

Երկրորդ թեզ. Ազգի գաղափարը.

«Ազգը ո՛չ ցեղային, ո՛չ տոհմական, ոչ քաղաքական, ո՛չ էլ կամավորապես ձեւավորված մի խումբ է: Ազգը լեզվով, կրոնով, բարոյապես եւ արվեստով միեւնույն կրթությունն ստացած անհատների համախմբումն է»[2]:

Գիտության հետ ոչ մի առնչություն չունեցող այս ձեւակերպմամբ թուրքիզմը՝ ցեղասպանության սպառնալիքով ահաբեկված Օսմանյան կայսրության նվաճած ժողովուրդների, հատկապես քրիստոնյաների համար թողնում էր փրկության մեկ ելք՝ թուրքերի մեջ ձուլման ճանապարհը: Թուրքիզմը հարցը դնում էր պարզ ու որոշակի. ձուլում կամ ֆիզիկական ոչնչացում:

Թուրքիզմի գաղափարախոսները վճռականորեն հայտարարում էին.

«ՊԵՏՔ է ԹՈՒՐՔ ՀԱՄԱՐԵԼ ԲՈԼՈՐ ՆՐԱՆՑ, ՈՎՔԵՐ ԱՍՈՒՄ ԵՆ՝ «ԵՍ ԹՈՒՐՔ ԵՄ», ԵՎ ՊԱՏԺԵԼ ԲՈԼՈՐ ՆՐԱՆՑ, ՈՎՔԵՐ ԿԴԱՎԱՃԱՆԵՆ ԹՈՒՐՔԻԶՄԻՆ»[3]:

Եվ այսպես, համաձայն թուրքիզմի գաղափարախոսների կենսագործած քաղաքականության, Օսմանյան կայսրության քրիստոնեական ժողովուրդների մի մասը զանգվածաբար բռնի կերպով կրոնափոխվեց եւ ձուլվեց, մեծ մասը ցեղասպանության ենթարկվեց, մնացածները՝ հրաշքով փրկվեցին եւ ապաստան գտան այլ երկրներում:

Անհրաժեշտ ենք համարում թուրքիզմի հիմնադրույթը քննարկելու կապակցությամբ կանգ առնել սույն պրոբլեմի մի կարեւոր առանձնահատկության վրա:

1. Նույն տեղում, էջ 103:
2. Նույն տեղում, էջ 15:
3. Նույն տեղում, էջ 16:

Հանդիսանալով պանթուրքիզմի եռաստիճան համակարգի առաջին փուլը, այնուամենայնիվ, թուրքիզմը որպես թուրք ժողովրդի ազգային գաղափարախոսություն, ստեղծվել է 19-րդ դարի վերջերին, երբ պանթուրքիզմի գաղափարախոսությունը դեռեւս ձեւավորման շրջանում էր:

Օսմանիզմի եւ պանիսլամիզմի քաղաքականությունը, ինչպես արդեն ասել ենք, սպասված արդյունքները չէր տալիս: Մինչդեռ ազգային եւ քաղաքական իրադարձությունները արագորեն զարգանում էին՝ ավելի բարդացնելով ստեղծված իրավիճակը: Թուրքերը անհանգիստ էին, նրանք շտապում էին: Ինչքան էլ բոլոր թուրքալեզու ժողովուրդները համակրեին իրենց արյունակից թուրքերին, այնուամենայնիվ, Օսմանյան կայսրության ճակատագրի հարցը պետք է լուծեին իրենք՝ Թուրքիայի թուրքերը: Եվ իրոք, այդպես էլ եղավ: Թուրքիայի ազգային գաղափարախոսությունը ստեղծվեց Թուրքիայում՝ թուրքերի կողմից: Այդ գաղափարախոսության առանցքը Օսմանյան կայսրության քրիստոնյա ժողովուրդների ֆիզիկական ոչնչացման միջոցով Թուրքիան թուրքացնելու, մահմեդականացնելու քաղաքականությունն էր:

Պանիսլամիստ Աբդուլ Համիդը իր վարած քաղաքականությանը միացրեց նաեւ թուրքիզմը, որը սկսեց կենսագործել 1890-ական թվականների սկզբներին:

Սկսվեց հայոց ցեղասպանությունը, որին մինչեւ դարի վերջը զոհ գնացին շուրջ 300 հազար հայ, 300 հազար հայ էլ տարագրվեց: Մեծ թվով արեւմտահայեր դավանափոխ եղան: Արեւմտյան Հայաստանը ամայանում էր:

Աբդուլ Համիդը, սակայն, որդեգրելով թուրքիզմը, այն չդարձրեց պաշտոնական պետական քաղաքականություն: Նման քաղաքականությունը շարունակվեց մինչեւ 1908 թվականը:

1908 թվականին Թուրքիայում իշխանության գլուխ եկավ Երիտթուրքերի կուսակցությունը, որը կանգնած էր օսմանիզմի գաղափարախոսության դիրքերում:

1910-1911 թվականներին երիտթուրքերը Սալոնիկի իրենց տարեկան համաժողովներում պաշտոնապես հրաժարվեցին օսմանիզմից եւ ընդունեցին պանթուրքիզմի գաղափարախոսությունը:

Անցման առաջին քայլը կատարվեց 1910 թվականի համաժողովում, իսկ վերջնական որոշումը՝ 1911 թվականին:

Սալոնիկի 1910 թվականի համաժողովում Թալեաթը հայտարարեց.

«Սահմանադրության տրամադրություններով եւ՛ մահմեդականներու, եւ՛ քրիստոնյաներու միջեւ հավասարություն հաստատվեց, բայց այս մեկը անիրականանալի իդեալ մըն է: Շերիաթը, մեր անցյալ ամբողջ պատմությունը եւ հարյուր հազարավոր մահմեդականների զգացումները, եւ նույնիսկ զգացումները քրիստոնյաների, որոնք համառ կերպով

կընդդիմանան օսմանցիության ամեն փորձի, անխորտակելի պատվարը կը ներկայացնեն արդար հավասարության մը հաստատումին դեմ:

Քրիստոնյան օրինական օսմանցի մը դարձնելու անհաջող փորձեր կատարած ենք, եւ այսպիսի փորձերը պիտի անխուսափելի կերպով ձախողվեն այնքան ժամանակ, որքան որ Բալկանյան թերակղզում անկախ փոքր երկրներ Մակեդոնիոյ բնակիչներուն ներս բաժանումի գաղափարը տեւականացնելու դիրքին մեջ կը գտնվին:

Ուրեմն, հավասարության մասին ոչ մի խոսք չի կարող լինել այնքան ժամանակ, քանի դեռ չի հաջողվել կայսրությունը օսմանցիականացնելու մեր գործը՝ երկար եւ սպառիչ աշխատանք մը, որուն մեջ, սակայն, կը համարձակիմ ըսելու, վերջապես պիտի հաջողինք»[1]:

1911 թ. Սալոնիկում տեղի ունեցած Երիտթուրքերի հաջորդ համաժողովը որոշում է.

«Կայսրության նկարագիրը պետք է լինի մահմեդական: Պետք է ապահովվի մահմեդական հաստատությունների եւ ավանդությունների հանդեպ հարգանքը: Պետք է մերժել այլացեղ ազգությունների իրենց մեջ կազմակերպվելու իրավունքը: Ազգությունները զանցառելի քանակություններ են: Թուրք լեզվի տարածումը գերազանց միջոց մըն է հաստատելու մահմեդական գերիշխանությունը եւ յուրացնելով ծուլելու մյուս տարրերը»[2]:

Եվ այսպես, ընտրությունը կատարված էր: Թուրքիզմը դառնում է Թուրքիայի պետական քաղաքականություն, որը նշանակում էր արեւմտահայության ցեղասպանության պետական ծրագրի ընդունում: Այդ ծրագիրը գործնականում կենսագործվում էր Աբդուլ Համիդի կողմից, ինչպես տեսանք, դեռեւս 1890-ական թվականների սկզբներից:

1914 թվականի օգոստոսի 1-ին սկսվում է Առաջին համաշխարհային պատերազմը: Ստեղծվում են նպաստավոր պայմաններ՝ արեւմտահայության ֆիզիկական ոչնչացման, թուրքիզմի իրականացման համար: Թուրքերը մինչ այդ պարբերաբար կազմակերպված զանգվածային կոտորածներից անցնում են ամբողջ արեւմտահայության ցեղասպանության ծրագրի իրականացմանը: Թուրքիայում պետականորեն կազմակերպվում է արեւմտահայության Մեծ եղեռնը, որը հիմնականում իրականացվում է 1915-1916 թվականներին: Արեւմտահայության ամբողջական ցեղասպանությունը՝ Օսմանյան կայսրության տարբեր շրջաններում կազմակերպված կոտորածներով, ավարտվում է 1923 թվականին:

Թուրքիզմի քաղաքականությունը սկսեց կենսագործել Աբդուլ Համի-

1. Լեւոն Վարդան, Թող թուրքը խոսի. Բեյրութ, 1975, էջ 11:
2. Նույն տեղում:

դը, հիմնականում իրականացրեց Երիտթուրքերի կուսակցությունը, իր ավարտին հասցրեց Մուստաֆա Քեմալը:

Զիա Գեոկալպը գրում է.

«Այնուամենայնիվ, թուրքիզմի համար մղվող այս բոլոր շարժումները իզուր կլինեին, եթե երեւան չգար մի մեծ հանճար, որը թուրքերին համախմբեր թուրքիզմի գաղափարների շուրջը եւ կարողանար ազգին փրկել վտանգավոր կործանումից: Կարիք չկա այդ մեծ հանճարի անունը տալու: Այսօր ամբողջ աշխարհը Ղազի Մուստաֆա Քեմալ փաշա անունը ճանաչում է որպես նվիրական մի անուն եւ այն հարգանքով է հիշատակում: Թուրքիայում ինքը՝ թուրք ազգը առաջներում ոչ մի հեղինակություն չուներ: Այսօր բոլոր իրավունքը թուրք ազգինն է: Հիմա հողին տիրում է թուրքը: Քաղաքականության, կուլտուրայի եւ տնտեսության բնագավառներում տիրապետողը միայն թուրք ժողովուրդն է:

Այսպիսի վճռական եւ մեծ հեղաշրջում կատարող անձը հանդիսանում է թուրքիզմի ամենամեծ դեմքը»[1]:

Գեոկալպի մոտեցումը միանգամայն ճիշտ է: Ավանդական պատմագիտությունը թուրքիզմի գաղափարախոսության իրականացումը կապել է Երիտթուրքերի կուսակցության ղեկավարների անվան հետ: Սակայն, պատմական իրողությունը այդպես չի եղել: Ընդունելով հանդերձ, որ Թուրքիան թուրքացրին Երիտթուրքերը՝ կազմակերպելով արեւմտահայության ցեղասպանությունը, այնուամենայնիվ, չի կարելի ժխտել այն իրողությունը, որ թուրքիզմը սկսել է իրականացնել Աբդուլ Համիդը եւ իր հաղթական ավարտին է հասցրել Մուստաֆա Քեմալը: Առանց Քեմալի թուրքիզմի քաղաքականությունը դատապարտված էր անհաջողության:

Առաջին համաշխարհային պատերազմում Թուրքիան ծանր պարտություն կրեց: Հաղթող կողմը՝ Անտանտը, Սեւրի պայմանագրով թելադրեց իր կամքը:

Եթե այդ ժամանակահատվածում պատմական ասպարեզ չմտներ Քեմալը, թուրքիզմը անողոք պարտություն կկրեր, իրենց պատմական տարածքները ստացած կլինեին հայերը, հույները, քրդերը եւ այլ ժողովուրդներ:

Սեւրի պայմանագիրը տապալեց Քեմալը՝ դաշինքի մեջ մտնելով բոլշեւիկյան Ռուսաստանի հետ՝ պատերազմի դաշտում պարտության մատնելով Հայաստանի եւ Հունաստանի բանակներին: Եվ, վերջապես, Քեմալի խոշորագույն հաղթանակն էր 1923 թ. Լոզանի կոնֆերանսը, որով Մեծ տերությունները ընդունեցին իրենց պարտությունը՝ հրաժարվելով Սեւրի պայմանագրից:

1. Զիա Գեոկալպ. նշվ. աշխ. էջ 11:

Հենց այս հանգամանքներն էլ հիմք են տալիս թուրքիզմի գաղափարախոսներին՝ թուրքերի ազգային գաղափարախոսության իրականացման գործում առանցքային, վճռորոշ դեր հատկացնել Մուստաֆա Քեմալին:

Քեմալի դերի գնահատման տեսանկյունից, անհրաժեշտ է անդրադառնալ մի կարեւոր հիմնախնդրի եւս: Շատ հաճախ փորձեր են կատարվում ապացուցել, որ երիտթուրքերի տապալումից, Քեմալի իշխանության գլուխ գալուց հետո, իբր, պանթուրքիզմը դադարել է ազգային-պետական գաղափարախոսություն լինելուց: Նման մոտեցումը արմատապես սխալ է: Պանթուրքիզմը թուրք ժողովրդի ազգային գաղափարախոսությունն է: Երիտթուրքերից սկսած պանթուրքիզմը եղել է եւ մինչեւ այժմ էլ շարունակում է մնալ թուրքերի ազգային իդեալը: Այս թեզը անվիճելի է եւ առարկություններ չի ընդունում:

Այսպիսով, Քեմալի ղեկավարությամբ թուրքիզմը հաղթանակեց: Թուրքիան թուրքացավ եւ կրոնական առումով դարձավ միատարր պետություն: Սակայն, թուրքիզմի հաղթանակը լիակատար չէր: Օրակարգ էր մտնում թուրքիզմի ներքին երկրորդ հիմնական խնդիրը՝ ձուլել կամ ոչնչացնել Թուրքիայի ոչ թուրք մուսուլմանական ժողովուրդներին, ստեղծել ոչ միայն կրոնական, այլեւ էթնիկական առումով միատարր թուրքական պետություն:

Այս խնդրի լուծման համար մղվող պայքարը շարունակվում է մինչեւ մեր օրերը:

Թուրքիան միաժամանակ արտաքին ճակատում մեծ գոտեմարտ է սկսում պանթուրքիզմի մոտավոր եւ հեռավոր ծրագրերի իրականացման համար:

Թուրքիան դառնում է պանթուրքիզմի գաղափարախոսության համար մղվող պայքարի առաջնորդն ու դրոշակակիրը:

Օրակարգի մեջ են մտնում օղուզականության եւ Մեծ Թուրանի ծրագրերը:

Թուրքիզմը այսօր էլ պաշտոնապես Թուրքիայի ազգային-պետական գաղափարախոսությունն է: Այն պաշտպանության տակ է առնված ինչպես Թուրքական Հանրապետության նոր սահմանադրության երկրորդ հոդվածով[1], այնպես էլ «Գործող քրեական օրենսգրքի» 159-րդ հոդվածով, որում ասվում է. «Թուրքիզմին, Հանրապետությանը, Թուրքիայի ազգային Մեծ ժողովին, կառավարությանը, նախարարություններին, պետության ռազմական եւ անվտանգության ուժերին կամ դատական իշխանությունների իրավաբանական անձանց բացահայտ վիրա-

1. Թուրքիայի Հանրապետության նոր սահմանադրություն, Ստամբուլ. 1994, էջ 81

վորանք եւ անարգանք հասցնողները դատապարտվում են ազատազրկման 1-6 տարի ժամկետով»[1]:

Թուրք պատմաբան Ալի Քեմալ Մերամը, շարադրելով թուրքիզմի սկզբունքները, գրում է. «Աթաթուրքը, որի ուժը եւ ոգին սերվում էր թուրքիզմի մաքուր աղբյուրից, պետության հիմքը կառուցեց ահա այդ սկզբունքների հիման վրա եւ մեկ առ մեկ իրականացրեց այդ սկզբունքները»[2]:

1. Գործող քրեական օրենսգիրք. Ստամբուլ, 1998. էջ 138:
2. Ալի Քեմալ Մերամ, Թուրքիզմ եւ թուրքիզմի համար պայքարի պատմություն. Ստամբուլ, 1969. էջ 202:

Երկրորդ աստիճան

ՊԱՆԹՈՒՐՔԻԶՄԻ ՄՈՏԱՎՈՐ ԾՐԱԳԻՐԸ. ՕՂՈՒԶԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ավաճելով հսկայական տարածքներ, այլ ժողովուրդների հայրենիքներից ստեղծելով սեփական Հայրենիք, յուրացնելով կամ ոչնչացնելով պարտված ժողովուրդների մշակույթները, թուրքերը չէին մոռանում նաեւ իրենց նախահայրենիքը: Նրանք այնտեղ էին թողել իրենց արյունակիցներին:

«Ցեղի բնակած երկիրը,- գրում է Գեոկալպը,- կոչվում է Հայրենիք: Թուրքը ուր որ գնար՝ չէր մոռանա իր Նախահայրենիքը, որովհետեւ իր նախնյաց գերեզմանը այնտեղ էր. իր մանկության շրջանը, հայրական օջախը, մայրական գիրկը, բոլորն այնտեղ էին գտնվում»[1]:

Թուրքերի մեջ խոսում էր ցեղի ձայնը, արյան կանչը: Նրանք ձգտում էին թուրքալեզու բոլոր ժողովուրդների տարածքների միավորմանը մի պետության մեջ: Պանթուրքիզմը ձգտում էր նվաճված տարածքներում ստեղծված նոր հայրենիքների եւ նախահայրենիքի միավորմանը մի պետության մեջ, որը պետք է կոչվեր Մեծ Թուրանի պետություն:

Բայց նկատի ունենալով ստրատեգիական խնդրի՝ Մեծ Թուրանի պետության ստեղծման դժվարությունները, պանթուրքիզմը նպատակ էր դնում, ինչպես նշեցինք, այն իրականացնել երկու փուլով:

Առաջին փուլում, համաձայն պանթուրքիզմի, պետք է համախմբվեին օղուզ թուրքերը՝ թուրքմենները, որոնք «Օղուզ խանի թոռներն են» եւ մշակույթով շատ մոտ են: Այդ ճյուղին են պատկանում Թուրքիայի, Ադրբեջանի, Թուրքմենստանի եւ Իրանի թուրքմենները:

Գեոկալպը գրում է.

«Թուրքիայի թուրքմենների նման Ադրբեջանի, Իրանի եւ Հարզեմի (Խորեզմ) երկրների թուրքմեններն էլ պատկանում են օղուզ ճյուղին: Հետեւաբար, մեր մոտավոր նպատակը լինելու է օղուզ կամ թուրքմեն միությունը...

Օղուզ թուրքերը տարածված լինելով այդ չորս երկրներում, ամենքն էլ իրար մոտիկ ազգականներ են: Չորս երկրների թուրքմեն ցեղերի անունները եթե համեմատենք, կտեսնենք, որ սրանցից մեկի մեջ գտնվող մի ցեղը կամ զարմը մյուսների մեջ եւս իր ճյուղերն ունի»[2]:

1. Զիա Գեոկալպ. նշվ. աշխ. էջ 103:
2. Նույն տեղում.էջ 17:

«Ուրեմն, եզրակացնում է Գեոկալպը, Հարզեմը, Իրանը, Ադրբեջանը եւ Թուրքիան թուրք ազգագրական տեսակետով նույն ցեղի հայրենիքներն են: Այդ չորս երկրները միասին վերցրած կարող են Օղուզիստան անվանվել»[1]:

Այսպիսով, եթե թուրքիզմը իրականացնելու՝ Թուրքիան թուրքացնելու համար ոչնչացվեց արեւմտահայությունը, ապա օղուզականության իրականացման համար պետք է ոչնչացվեր նաեւ արեւելահայությունը: Այդ երկրների միավորման համար պետք է ոչնչացվեր հայկական «սեպը»՝ Արեւելյան Հայաստանը:

Թուրքիզմի գաղափարախոսները դեռ առաջին համաշխարհային պատերազմի տարիներին մեծ հույսեր էին տածում, որ ռուսական կայսրությունը կկործանվի, եւ թուրքերի ազգային իդեալը՝ պանթուրքիզմը կիրականացվի:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին պանթուրքիստները լայն գործունեություն ծավալեցին իրենց ծրագրերը իրագործելու՝ մասնավորապես Անդրկովկասը գրավելու եւ արեւելահայությանը ոչնչացնելու ուղղությամբ: Եթե թուրքիզմը իրականացվեց Թուրքիայի ուժերով, ապա օղուզական պետության ստեղծման գործը բաժին ընկավ Թուրքիային եւ Ադրբեջանին, որոնք այդ տարիներին գործադրեցին բոլոր միջոցները՝ հայկական սեպը վերացնելու համար: Այդ նպատակով Թուրքիան եւ Ադրբեջանը 1919 թ. նոյեմբերի 29-ին եւ 1920 թ. ապրիլի 15-ին գաղտնի պայմանագրեր կնքեցին՝ ուղղված Հայաստանի դեմ: 1920 թ. սեպտեմբերի 28-ին Թուրքիան հարձակվեց Հայաստանի վրա: 1920 թ. նոյեմբերի 29-ին Հայաստան մտան նաեւ ռուսական զորքերը:

Հայաստանի Հանրապետությունը դարձավ Թուրքիայի, Ռուսաստանի եւ Ադրբեջանի զոհը: Հայաստանի անկախ պետականությունը կործանվեց, Հայաստանը մասնատվեց: Թուրքիան գրավեց Արեւմտյան Հայաստանը, Կարսի մարզը եւ Սուրմալուի գավառը: Ռուսաստանին անցան արեւելյան Հայաստանը եւ Ադրբեջանը: Ընդ որում, Ադրբեջանը Ռուսաստանին անցավ Մուստաֆա Քեմալի՝ Վ.Լենինին գրած 1920 թ. ապրիլի 26-ի նամակի պայմանների համաձայն: Որպես փոխհատուցում Նախիջեւանը եւ Լեռնային Ղարաբաղը տրվեցին Ադրբեջանին:

Դա պանթուրքիստների մեծ հաղթանակն էր, սակայն նրանք, այնուամենայնիվ, չկարողացան հասնել իրենց հիմնական նպատակին՝ հայկական սեպը չվերացվեց, օղուզական պետությունը չստեղծվեց:

Գեոկալպը 1923 թվականին գրում էր, որ «Այսօր իրականության մեջ գոյություն ունի միայն թուրքիզմը»[2]:

1. Նույն տեղում:
2.Նույն տեղում. էջ 19:

Երրորդ աստիճան

ՊԱՆԹՈՒՐՔԻԶՄԻ ՀԵՌԱՎՈՐ ԾՐԱԳԻՐԸ. ԹՈՒՐԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ի՞նչ է նշանակում թուրանականություն, ի՞նչ բովանդակություն են դնում պանթուրքիստները այդ հասկացության մեջ:

Պանթուրքիստները որոշակիորեն սահմանազատում են «թուրք» եւ «թուրան» հասկացությունները: «Թուրքայնության եւ թուրանականության տարբերությունները հասկանալու համար,- գրում է Գեոկալպը,- անհրաժեշտ է որոշել թուրք եւ թուրան խմբերի սահմանները: Թուրքը՝ մի ազգի անունն է: Ազգ է կոչվում այն խումբը, որն ունի իրեն հատուկ մշակույթ: Ուրեմն թուրքը կարող է ունենալ միայն մի լեզու եւ մի մշակույթ»[1]: Ընդ որում, ինչպես տեսանք վերը, Գեոկալպը այս խմբի մեջ է մտցնում նաեւ ադրբեջանցիներին եւ թուրքմեններին:

Համաձայն պանթուրքիստների, թուրքերի հայրենիքը ընդգրկում է մի հսկայական տարածք, որը ձգվում է Բալկաններից եւ Հունգարիայից մինչեւ Մանջուրիա եւ Չինաստանից մինչեւ Սառուցյալ օվկիանոս:

Եվ քանի որ «թուրքը» մի ազգի անունն է, ապա նշված տարածքում բնակվող բոլոր թուրքալեզու ժողովուրդների միավորման համար «մի նոր անվան անհրաժեշտություն պիտի զգացվի: Ահա այդ ընդհանրական անունն է, որ կոչվում է Թուրան»[2]:

Գեոկալպը գրում է.

«Թուրանը բոլոր թուրքերի՝ անցյալում եղած, ապագայում իրականություն դառնալիք մեծ հայրենիքն է»[3]:

«Թուրանը թուրքերով բնակվող տարածքի հավաքական անունն է... Թուրան պետք է անվանենք բոլոր թուրքական ճյուղերը բովանդակող մեծ Թուրքեստանին»[4]:

Ինչպես տեսնում ենք, պանթուրքիստները առանց վերապահությունների դարերի ընթացքում նվաճած այլ ժողովուրդների հայրենիքները հռչակում են Թուրան՝ բոլոր թուրքերի «Մեծ Հայրենիք», «Մեծ Թուրքեստան»:

1. Զիա Գեոկալպ. նշ. աշխ. էջ 17:
2. Նույն տեղում, էջ 18:
3. Նույն տեղում, էջ 19:
4. Նույն տեղում, էջ 18:

Պանթուրքիզմի հեռավոր նպատակը Թուրան անվան տակ թուրքալեզու բոլոր ժողովուրդների համախմբումն է, Մեծ Թուրանի պետության ստեղծումը:

Համաձայն պանթուրքիստների, յուրաքանչյուր թուրքական ժողովուրդ ունի իր հայրենիքը, իսկ թուրքալեզու բոլոր ժողովուրդները, թուրքական ռասան իր ընդհանուր հայրենիքը՝ Մեծ Թուրանը:

Պանթուրքիստները հասկանում էին, որ թուրանականության գաղափարը հեշտությամբ չի հաղթանակելու, որ նա մեծ արգելքներ ունի հաղթահարելու:

Գեոկալպը գրում է.

«Հարյուր միլիոնավոր թուրքերի մի ազգի մեջ միավորումը թուրքիզմի կողմնակիցների համար հափշտակության ուժեղ մի աղբյուր է: Եթե չլիներ Թուրանի գաղափարը, թուրքիզմը չէր կարողանա այդքան արագ տարածվել:

Բայց եւ այնպես, ով գիտե, թերեւս ապագայում կարելի լինի ԹՈՒՐԱՆ գաղափարի իրականացումը: Գաղափարը անկախություն ստեղծելն է: Երեկ թուրքերի համար ազգային պետությունը անիրականանալի մի գաղափար էր, իսկ այսօր այդ գաղափարը Թուրքիայում իրականություն է դարձել»[1]:

Պանթուրքիզմի գաղափարախոսները թուրքական ժողովուրդներին կոչ էին անում քրիստոնեական ժողովուրդների ցեղասպանությամբ իրականացնել Մեծ Թուրանի գաղափարը:

Մեհմեդ Էմինը գրում էր.

«Մեկ փեթակ ունին բոլոր մեղուները.
Մեկ Թուրան պետք է ունենան
Բոլոր թուրքերը»[2]:

Ընդ որում, նա թուրքական բոլոր ժողովուրդներին կոչ էր անում համախմբվել Մեծ Թուրանի գաղափարի շուրջը, զգուշացնելով, որ առանց արյան ծաղիկ չի աճում, այսինքն՝ առանց զոհի, առանց այլ ժողովուրդների ոչնչացման հայրենիք չի ստեղծվում:

Իսկ Զիա Գեոկալպը «Դեպի Արեւելք» խորագրով բանաստեղծությունների ժողովածուի մեջ գրելով, որ «Անատոլիան ներքին հող չէ, չի բաժանվում արտերկրից», թուրքական ժողովուրդներին կոչ է անում.

1. Նույն տեղում, էջ 19:
2. Տես Լեւոն Վարդան, Հայկական տասնհինգը եւ հայերու լքեալ գոյքերը. Բեյրութ. 1970, էջ 62:

«Ով թրքորդի, ալ ոչ ես կամ, ոչ դուն, ոչ սյլ ամիկա,
Չկա բարձր, չկա խոնարհ, այլ միայն կա Մեծ Թուրան,
Թեքում չկա մեր ճամբուն մեջ , անկախ պեյ կամ խան չկա,
Թուրք հոգիին մեջ կան միայն մեկ Հայրենիք, մեկ իշխան»[1]:

Թուրքական ժողովուրդներին կոչ էր արվում շարժվել դեպի արեւելք՝ Մեծ Թուրան, մեկ միասնական Հայրենիք ստեղծելու նպատակով:

Եթե հիշյալ երկու հեղինակները թուրքական ժողովուրդներին կոչ են անում համախմբվել եւ ստեղծել մեկ միասնակցուն Հայրենիք՝ Մեծ Թուրան, ապա պանթուրքիզմի մի այլ գաղափարախոս՝ էնիս Ավնին արդեն անթաքույց շարադրում է այդ ճանապարհին ընկած ժողովուրդների ոչնչացման ծրագիրը.

«Կոխած տեղերուս ամեն մեկ մասեն արյուն պիտի ժայթքե...
Երկարած թաթիս տակ գարունները՝ աշնան եւ աշունները՝ գնդանի պիտի վերածվեն...
Եթե քարը քարի վրա թողնեմ՝ ետիս թողած օջախս թող քանդվի...
Վարդաստանները մեռելստան պիտի ընեմ սուրովս...
Պատմությանը պիտի թողնեմ անանկ կործանված ու գետնի հավասար ավերակ մը, որ տասը դար մարդիկ չկարողանան քաղաքակրթություն կանգնեցնել անոր վրա»[2]:

Այսպիսով, եթե թուրքիզմի գաղափարախոսության կենսագործմամբ ոչնչացվեց արեւմտահայությունը, ապա պանթուրքիզմի գաղափարախոսության իրականացմամբ պետք է անխուսափելիորեն ոչնչացվեր նաեւ արեւելահայությունը: Հայկական սեպը, որը խանգարում էր Մեծ Թուրանի գաղափարի իրականացմանը, պետք է դադարեր գոյություն ունենալուց:

Եվ Թուրքիան, անկախ այն բանից, թե ովքեր են եղել իշխանության գլուխ, հետեւողականորեն եւ անողոքորեն պայքարել է պանթուրքիզմի ծրագիրը իրականացնելու համար: Այդ պայքարը շարունակվում է: Պանթուրքիզմը գոյատեւելու է այնքան ժամանակ, քանի դեռ չի հասել իր իդեալների իրականացմանը:

Այսպիսին է պատմության առաջին եւ հիմնական դասը հայ ժողովրդի համար: Սակայն, եթե Մեծ Թուրանի գաղափարի իրագործումը մի կողմից սպառնում է գլխովին ոչնչացնել հայ ժողովրդին, հայոց նոր-

1. Նույն տեղում, էջ 64:
2. Նույն տեղում, էջ 65:

ստեղծ անկախ պետականությունը, ապա մյուս կողմից էլ՝ մասնատելու է Ռուսական կայսրությունը՝ նրանից անջատելով թուրքալեզու ժողովուրդներով բնակեցված տարածքները:

Թուրքիան եւ Ռուսաստանը այդ հողի վրա դարձել են հավերժ եւ անհաշտելի թշնամիներ: Պանթուրքիզմի գաղափարախոսները փորեցին այն խրամատները, որի մի կողմում հայտնվեցին Թուրքիան, մյուս կողմում՝ Ռուսաստանը եւ Հայաստանը, որպես դաշնակիցներ:

Պատմությունը հայ ժողովրդին թողեց պանթուրքիզմին դիմակայելու, եղեռնից փրկվելու մի ճանապարհ՝ դաշինք Ռուսաստանի հետ:

Այդպիսին է պատմության երկրորդ կարեւոր դասը հայ ժողովրդի համար:

ՌՈՒՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՆ

Ռուսաց ազգային գաղափարախոսությունը

Հայաստանի անկախության կորստից հետո հայոց հայրենիքին տիրելու համար հիմնական պայքարը գնում էր Օսմանյան կայսրության եւ Պարսկաստանի միջեւ: Այդ պայքարը իր ավարտին հասավ 1639 թվականի պայմանագրով, որի համաձայն Արեւմտյան Հայաստանն անցավ Թուրքիային, իսկ Արեւելյան Հայաստանը՝ Պարսկաստանին:

Սակայն 17-րդ դարի երկրորդ կեսից Սեւ ծովի ափերի, Դարդանելի ու Բոսֆորի, Անդրկովկասի եւ բալկանյան սլավոնական ժողովուրդների տարածքների նկատմամբ սկսում է մեծ հետաքրքրություն ցուցաբերել ցարական Ռուսաստանը:

Արեւելյան հարցը ցարական կայսրությանը մեծ հնարավորություններ է ընձեռում խառնվելու «հիվանդ մարդու»՝ Թուրքիայի ժառանգության բաժանմանը:

Ռուսական կայսրությունը նպատակ ուներ գրավել Սեւ ծովի ափերը, նեղուցները, Բալկանյան թերակղզու քրիստոնյա ժողովուրդների տարածքները, Անդրկովկասը եւ Արեւմտյան Հայաստանը:

Ցարական կայսրությունը պայքարում էր Միջերկրական ծով դուրս գալու համար: 18-րդ դարի վերջերին Ռուսաստանը կարողանում է գրավել Սեւ ծովի հյուսիսային ափերը, իսկ 19-րդ դարի սկզբներին՝ Անդրկովկասը:

Գրավելով Անդրկովկասը՝ ցարական Ռուսաստանը այդ ռեգիոնում դառնում է ամենահզոր գործոնը: Պարզ է դառնում, որ այս ռեգիոնում ոչ մի հիմնախնդիր չի կարող իր արմատական լուծումը ստանալ առանց Ռուսաստանի մասնակցության:

Պարսկաստանը՝ իրեն թողնելով Պարսկահայաստանը, ռեգիոնի քաղաքական կյանքում անցնում է երկրորդ պլան: Հայաստանի համար մղվող պայքարի ասպարեզը մնում է Ռուսաստանին եւ Թուրքիային:

Եվ Ռուսաստանը, եւ Թուրքիան գաղութատիրական պետություններ են: Եթե Ռուսաստանը ձգտում էր անդամահատել Օսմանյան կայսրությունը, գրավել նրա տարածքների մի մասը եւ մուտք ունենալ Միջերկրական ծով, ապա Թուրքիան պայքարում էր Օսմանյան կայսրության ամբողջականությունը պահպանելու եւ Մեծ Թուրանի պետության ստեղծման համար, որի տարածքների մեծ մասը գտնվում էր ցարական

Ռուսաստանի կազմում:

Մեծ Թուրանի պետության ստեղծումը հանգեցնելու է ռուսական կայսրության քայքայմանը՝ թուրքալեզու ժողովուրդների ապրելատարածքների անջատմանը Ռուսաստանից: Պատմականորեն Ռուսաստանի եւ Թուրքիայի ընդհարումը անխուսափելի է: Եվ Ռուսաստանը, եւ Թուրքիան խուսափում են մեծ գոտեմարտից, սպասելով հարմար պահի, բայց երկու կողմն էլ հասկանում են այդ ընդհարման անխուսափելիությունը: Ընդ որում, պարտության դեպքում Ռուսաստանը կդադարի գերիզոր պետություն լինելուց: Հենց այդ հանգամանքով է բացատրվում հակաթուրքական այն հետեւողական քաղաքականությունը, որ դարեր շարունակ վարել է ցարական կայսրությունը:

Բայց դա ամենեւին չի նշանակում, թե Ռուսաստանը պայքարում էր Օսմանյան կայսրության նվաճած ժողովուրդներին անկախություն տալու համար: Գաղութատիրական Ռուսաստանը պայքարում էր նոր գաղութներ ձեռք բերելու համար: Ցարական Ռուսաստանը Հայաստանին անկախություն տալու իրական ծրագիր երբեք չի ունեցել: Սակայն, որոշ դեպքերում, ելնելով պատմական իրավիճակից, Ռուսաստանը հարկադրված է եղել ճանաչել Օսմանյան կայսրության տիրապետությունից ազատագրված առանձին ժողովուրդների անկախությունը:

Սակայն, արմատական տարբերություններ գոյություն ունեին Ռուսաստանի եւ Թուրքիայի գաղութային նվաճումների միջեւ: Թուրքիան նվաճում ու սեփականացնում էր այլ ժողովուրդների հայրենիքները; իսկ բնակչությանը ֆիզիկապես ոչնչացնում: Ռուսաստանը, ընդհակառակը, վարում էր ավանդական գաղութային քաղաքականություն՝ իր բոլոր բացասական հետեւանքներով: Դրա հետ մեկտեղ նվաճված ժողովուրդները Ռուսաստանում ապահովում էին իրենց ֆիզիկական գոյությունը, կոնսոլիդացիան, ազգային մշակույթի զարգացումը եւ այլն:

Ահա թե ինչու ռուսական տիրապետությունը հայոց պատմագրության մեջ բնութագրվում է որպես «Չարյաց փոքրագույնը»:

Այսպիսին է պատմության տրամաբանությունը:

Ստեղծված պատմական իրավիճակում հայ ժողովուրդը այլընտրանք չունի: Նրա ռուսական կողմնորոշման անհրաժեշտությունը միանշանակ է: Ռուսական կայսրության եւ Հայաստանի պատմական ճակատագրերը միահյուսվել են: Հայ ժողովուրդը իր ազգային գաղափարախոսության ռազմավարական հիմնախնդիրների լուծման տեսանկյունից ելնելով, մշտապես պետք է լինի Ռուսական կայսրության ստրատեգիական պլանների ոլորտներում, անկախ այն հանգամանքից, թե ինչ գույն ու ռեժիմ ունի այդ երկիրը:

Ռուսաստանի ստրատեգիական հաղթանակը պանթուրքիզմի դեմ. դա նշանակում է հայոց ազգային գաղափարախոսության հաղթանակ,

անկախ եւ միացյալ Հայաստանի ստեղծում:

Այդպիսին է պատմության հրամայականը:

Այդ պատճառով էլ ռուսաց ազգային գաղափարախոսությունը պատմության նոր եւ նորագույն շրջանում չափազանց կարեւոր նշանակություն է ունեցել հայոց ազգային գաղափարախոսության զարգացման առանձնահատկությունների ձեւավորման գործում: Որպեսզի խորությամբ եւ բազմակողմանիորեն պատկերացնենք հայոց ազգային գաղափարախոսության զարգացման առանձնահատկությունները եւ ուղիները, պետք է հստակեցնենք այն ազդեցությունը, որ ունեցել է ռուսաց ազգային գաղափարախոսությունը հայոց ազգային գաղափարախոսության զարգացման ընթացքի վրա: Իսկ այդ ընթացքը հասկանալու համար անհրաժեշտ է գոնե ընդհանուր գծերով պատկերացնել ռուսաց ազգային գաղափարախոսության այն հիմնադրույթները, որոնք վճռորոշ ազդեցություն են ունեցել հայոց ազգային գաղափարախոսության զարգացման ընթացքի վրա՝ նրա պատմության նոր եւ նորագույն շրջանում:

* * *

ԽՍՀՄ փլուզումից հետո ռուս հասարակական-քաղաքական, հատկապես ազգային միտքը բուռն հետաքրքրություն ցուցաբերեց ռուսաց ազգային գաղափարախոսության նկատմամբ:

«Ռուսաց ազգային գաղափարախոսություն» հասկացությունը ռուսական մասնագիտական գրականության մեջ պատմականորեն ստացել է Ռուսական գաղափար (Русская идея) անվանումը:

«Եթե խոսենք ռուսաց ազգային գաղափարախոսության մասին, ապա նրա պատմականորեն ձեւավորված անվանումն է՝ Ռուսական գաղափար (Русская идея)»,- գրում են ժամանակակից ռուս գիտնականները[1]:

Համաձայն մասնագիտական գրականության, ռուսաց ազգային գաղափարախոսության պատմությունը բաժանվում է երեք փուլերի:

Առաջին փուլ. սկզբից մինչեւ 1917 թվականի Հոկտեմբերյան հեղափոխությունը: Այս փուլի կարգախոսն է եղել Ռուսաստանը՝ Հռոմի երրորդ հանրապետություն, որի հիմնախնդիրներն էին՝ «ուղղափառություն, ինքնակալություն եւ ժողովուրդ»: Ազգային գաղափարախոսության հենց այս կարգախոսից էլ ծնունդ է առնում «Հանուն հավատքի, կայսրի եւ Հայրենիքի» ֆորմուլան, որը ռուսական կենտրոնացված պետությանը տալիս է աստվածային, երկնային բնույթ[2]:

1.Х. Х. Боков, С. В. Алексеев. Российская идея и национальная идеология народов России, М. 1996, стр.38.

2. Современная Русская Идея и государство, М. 1995, стр.35.

Ցարական Ռուսաստանում ռուսական նացիոնալիզմը հենվում էր ազգային գաղափարախոսության վերոհիշյալ երեք հիմնադրույթների վրա: Այդ դրույթները ամբողջովին բխում են ռուս ժողովրդի բնավորությունից եւ հիմնվում են նրա պատմական ճակատագրի վրա, գրում էր ռուսական նացիոնալիզմի խոշորագույն տեսաբան Պ. Կովալեվսկին[1]:

Կովալեվսկին մանրամասն վերլուծում է ռուսաց ազգային գաղափարախոսության երեք հիմնադրույթները եւ տալիս հետեւյալ բնութագրումը.

ա) Ինքնակալությունը բխում է ուղղակի ռուս ժողովրդի բնավորությունից եւ ազգային հատկություններից: Ռուսաստանի ամբողջականությունը, ամրությունը եւ հզորությունը հենվում են ինքնակալության վրա: Այդ դրույթի ամեն մի խախտում հանգեցնելու է ազգի բարեկեցիկության վատացմանը եւ պետության թուլացմանը»[2]:

բ) «Ուղղափառությունը այն բարոյական ֆորմուլան է, որում ռուսի հոգին իր բավարարությունն է գտնում: Եվ հենց ինքը՝ ուղղափառությունը հետագայում հաստատում ու ամրապնդում է ազգին հատուկ, բնատուր գծերը»[3]:

Նա միաժամանակ նշում է, որ Հայրենիքի պատմության դժվարին պահերին ուղղափառ կրոնը հանդես է եկել ոչ միայն որպես նեցուկ ու վահան, այլեւ ազգային ձեռնարկումների եւ շարժումների կենսական աղբյուր[4]:

Հենվելով շարադրվածի վրա՝ Կովալեվսկին եզրակացնում է.

«Ուղղափառությունը պետք է ունենա տիրապետող կրոնի բոլոր արտոնությունները ոչ միայն այն պատճառով, որ նա կայսերական ռուս ազգի կրոնն է, այլ այն, որ ուղղափառությունը ազգային կրոն է, ռուս ազգի էության կրոնն է: Եվ քանի որ ուղղափառությունը ազգային կրոն է, նա էլ պետք է հանդիսանա պետականության կրոն, կայսերական կրոն»[5]:

գ) Միասնական տերություն կամ ռուսական հողի անբաժանելիություն-ահա այսպես է ձեւակերպել երրորդ հիմնադրույթը Կովալեւսկին:

Այս հիմնադրույթի էությունը կայանում է հետեւյալում. ռուսական հողը չի կարող ոչ բաժանվել, ոչ փոքրացվել եւ ոչ էլ մասնատվել բաղկացուցիչ մասերի: Նա կարող է միայն ծավալով մեծանալ, իսկ փոքրանալը անթույլատրելի է եւ աներեւակայելի: Ռուսաստանը անբաժանելի եւ

1. П. И. Ковалевский. Основы русского национализма. Санкт-Петербург, 1912, стр.26-27.

2. Նույն տեղում, էջ 28-29:

3. Նույն տեղում, էջ 234:

4. Նույն տեղում, էջ 236:

5. Նույն տեղում, էջ 239:

անխախտելի ամբողջություն է: Ռուսաստանի ներկա տարածքը ռուսները ստացել են իրենց նախնիներից: Այդ տարածքի եւ ժողովուրդների նվաճման համար Ռուսաստանը իր նվիրյալ որդիների ծով արյունն է թափել: Միլիարդների գումար է ծախսվել այն պատերազմների վրա, որոնցով ռուսական պետությունն է ստեղծվել: Ավելի քան հազար տարի ռուս ժողովուրդը արարում էր Ռուսաստանը՝ հպատակեցնելով հարեւան ժողովուրդներին եւ նրանց մտցնելով իր պետության կազմի մեջ: Ռուսաստանը ոչ միայն նվաճում էր, այլեւ ձուլում այդ ժողովուրդներին: Ռուս ժողովուրդն է «հողահավաքի» քաղաքականության իրագործողը, Ռուսաստանի ստեղծողը[1]:

«Այդ պետության տիրապետման իրավունքը ԱՐՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆ է՝ թափված մեր նախնիների կողմից, ՈՒՆԵՑՎԱԾՔԱՅԻՆ, ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆ է՝ բխող մեր նախնիների ծախսերից, որոնց տոկոսները մենք հարկադրված ենք վճարել եւ ներկայումս, ՀԱՅՐԵՆԻՔԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՃԱԿԱՏԱԳՐԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ, որը մեզ պարտավորեցնում է նախնիների նվաճածը պահպանել ամբողջությամբ եւ անվնաս»,- ամփոփում է իր միտքը Կովալեւսկին[2]:

Հասկանալի է, որ շարադրված տեսակետը լիովին ելնում էր ռուսաց ազգային գաղափարախոսության հողահավաքի քաղաքականությունից: Այսպես էր ստեղծվում Ռուսական կայսրությունը:

Ռուսաց ազգային գաղափարախոսությունն իր հիմնախնդիրներով չի տարբերվում մյուս ժողովուրդների գաղափարախոսություններից: Սակայն, յուրաքանչյուր ժողովրդի ազգային գաղափարախոսություն, ինչպես ասել ենք, ունի նաեւ իր առանձնահատկությունները:

Ռուսաց ազգային գաղափարախոսության հիմնական առանձնահատկություններից մեկը՝ նրանում «հողահավաքի» գործոնի առկայությունն է՝ որպես ելակետային հիմնադրույթ: Ռուս ժողովուրդը դարեր շարունակ պատերազմել է, հսկայածավալ նվաճումներ կատարել ռուսական կայսրություն, Մեծ Ռուսաստան ստեղծելու համար: Ընդ որում, Ռուսաստանի տարածքային նվաճումներն ընթանում էին բոլոր ուղղություններով: Ռուսաստանի պատմության, ռուսաց ազգային գաղափարախոսության մեջ տարածքային նվաճումները բնութագրվում են որպես «հողահավաք»: Այդ քաղաքականության շնորհիվ դարերի ընթացքում Ռուսաստանը վերածվում է հսկայածավալ կայսրության: Հարեւան ժողովուրդների հայրենիքների նվաճումը համարվում է պատմական անհրաժեշտություն, ռուսաց ազգային գաղափարախոսության բաղկացուցիչ մաս, առանցքային հիմնադրույթ:

1. Նույն տեղում, էջ 240-241:

2. Նույն տեղում, էջ 30-31:

Ռուսաստանի «հողահավաքի» քաղաքականությունը ռուս գիտնականը բնութագրում է հետեւյալ ձեւով. «Յուրաքանչյուր համակարգ, քանի դեռ նա երիտասարդ է, ակտիվ, գործուն, ձգտում է ընդարձակվել: Տիպիկ օրինակ. պետությունների եւ ժողովուրդների պատմությունը: Ե՛վ մոնղոլները, եւ՛ թուրքերը, եւ՛ դանիացիները, եւ՛ շվեդները, եւ՛ անգլիացիները, եւ ֆրանսիացիները, եւ գերմանացիները, եւ՛ ամերիկացիները շատ են ցանկացել ընդարձակել իրենց տիրապետությունները, մեծացնել իրենց ազդեցությունը, բայց բոլորից ավելի հաջողության հասան ռուսները, որոնց հաջողվեց ստեղծել ամենամեծ պետությունը աշխարհում»[1]:

Ռուսաստանի նվաճողական կարեւորագույն ծրագրերից մեկը Սեւ եւ Կասպից ծովերի գրավումն էր, դեպի Միջերկրական ծով ճանապարհի բացումը: Այդ ծրագրի իրականացման համար պետք է նվաճվեր նաեւ Անդրկովկասը: Ուրեմն, Մեծ Ռուսաստան ստեղծելու ռազմավարական ծրագրում տեղ էր գտել նաեւ Հայաստանի նվաճումը: Սակայն, հարավային ուղղությամբ Ռուսաստանն ուներ լուրջ մրցակից՝ հանձին Օսմանյան կայսրության:

Ռուսական եւ թուրքական կայսրությունները ունեին մեկ ընդհանրություն՝ երկուսի ազգային գաղափարախոսության հիմքում էլ առանցքային տեղ էր գրավում տարածքային նվաճումների՝ «հողահավաքի» քաղաքականությունը, հզոր կայսրության ստեղծումը: Հայաստանը գտնվում էր այդ երկու կայսրությունների նվաճողական ռազմավարական ծրագրերի ընդհարման սահմանագծում:

Այսպիսով, հայ ազգային-քաղաքական միտքը հայոց ազգային գաղափարախոսության նոր շրջանի գործընթացները, մարտավարական եւ ռազմավարական ծրագրերը մշակելիս պետք է անհրաժեշտորեն նկատի ունենար ռուսական գործոնը, որը աննահանջ հյուսիսից շարժվում էր դեպի Հայաստան:

Ռուսաց ազգային գաղափարախոսության բովանդակությունից բխող «հողահավաքի» քաղաքականությունը, բնականաբար, չէր կարող իր կնիքը չդնել պատմության նոր շրջանում հայոց ազգային գաղափարախոսության զարգացման պրոցեսի վրա: Պատմական այսպիսի դժվարագույն պայմաններում հայոց ազգային գաղափարախոսները պետք է ուղիներ գտնեին երկու կողմից սպառնացող վտանգին դիմակայելու համար: Մի բան անվիճելի էր, որ հայ ժողովրդի պատմական ճակատագիրը, հայոց ազգային գաղափարախոսության հետագա ընթացքը սերտորեն առնչված են լինելու այդ երկու գործոնների հետ, այդ երկու կայսրությունների տարածքային նվաճումների համար մղվող ան-

1. Игорь Чубайс, От русской идеи-к идее Новой России, М. 1996, стр.22.

գիջում պայքարի ընթացքից:

Ընդ որում, անկասկած էր նաեւ այն իրողությունը, որ ռուսական տիրապետությունը հայերին բերում էր գաղութացում, իսկ թուրքականը՝ ֆիզիկական ոչնչացում:

Երկրորդ փուլ. 1917-1991 թվականներ՝ Հոկտեմբերյան հեղափոխությունից մինչեւ ԽՍՀՄ փլուզումը:

1917 թ. հոկտեմբերին Ռուսաստանում իշխանության գլուխ են գալիս բոլշեւիկները: Ռուսաստանում հռչակվում է պրոլետարիատի դիկտատուրա՝ մարքս-լենինյան գաղափարախոսությամբ: Խորհրդային Միության գոյության տարիներին ռուսաց ազգային գաղափարախոսության գոյության հիմնախնդրի եւ պաշտոնական կարգավիճակի հարցը գիտնականների կողմից միանշանակ չի գնահատվում: Գիտնականների մի մասը գտնում է, որ մարքս-լենինյան գաղափարախոսությունը հիմնովին մերժել եւ կատաղի պայքար է մղել ռուսաց ազգային գաղափարախոսության դեմ, այսինքն՝ ազգային գաղափարախոսությունը խորհրդային իշխանության տարիներին գտնվել է ընդհատակում եւ հանդես է եկել որպես այլախոհություն:

Սակայն, գիտնականների հիմնական մասը մերժում է այդ տեսակետը, գտնելով որ. «Սկզբից հենվելով ուղղափառության, իսկ խորհրդային շրջանում արդեն մարքսիստական պատկերացումների վրա՝ մարդկային կեցության կազմակերպման հիմնական սկզբունքների մասին, որը Ռուսաստանում ընդունել էր ազգային բնույթով պայմանավորված իր առանձնահատկությունները, ռուսական գաղափարը փոխակերպվել է Ռուսաստանի պատմական զարգացմանը զուգընթաց, անցնելով ճանապարհ՝ հին ռուսական պատկերացումներից Ռուսաստանի ապագայի մասին, որպես Երրորդ Հռոմի, այնուհետեւ՝ «ուղղափառություն-ինքնակալություն-ժողովուրդ» Ուվարովյան կարգախոսից մինչեւ նոր ուտոպիական «լուսավոր ապագան»՝ կոմունիզմը՝ սկզբից աշխարհի մեկ վեցերորդ մասում, իսկ հետո՝ մնացած ամբողջ աշխարհում»[1]:

Հիշյալ տեսակետը արդի հեղինակներից շատ ավելի վաղ, դեռեւս 1937թ. առաջ է քաշել Ն. Բերդյաեւը իր՝ «Ռուսական կոմունիզմի ակունքները եւ բնույթը» խորագրով աշխատության մեջ, որում խնդրո առարկա հիմնախնդրի մասին գրել է. «Ռուս ժողովուրդը չի իրականացրել իր առաքելական գաղափարը Մոսկվայի մասին՝ որպես Երրորդ Հռոմի:

17-րդ դարի կրոնական պառակտումը բացահայտեց, որ Մոսկովյան թագավորությունը Երրորդ Հռոմ չէ, ավելի քիչ պետերբուրգյան իմպե-

1. Х. Х. Боков, С. В. Алексеев. Российская идея и национальная идеология народов России, М.1996, стр.38.

րիան է եղել Երրորդ Հռոմի գաղափարի իրականացում...

Բայց ահա ռուս ժողովրդի ճակատագրում տեղի ունեցավ զարմանալի իրադարձություն: Երրորդ Հռոմի փոխարեն Ռուսաստանում հաջողվեց իրականացնել Երրորդ Ինտերնացիոնալը եւ Երրորդ Ինտերնացիոնալին անցան Երրորդ Հռոմի շատ գծեր: Երրորդ Ինտերնացիոնալը եւս սրբազան կայսրություն է եւ նա եւս հիմնված է ուղղափառ հավատքի վրա: ԱՐԵՎՄՈՒՏՔՈՒՄ ՇԱՏ ՎԱՏ ԵՆ ՀԱՍԿԱՆՈՒՄ, ՈՐ ԵՐՐՈՐԴ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԸ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼ ՉԷ, ԱՅԼ ՌՈՒՍԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐ: Դա ռուսական առաքելականության կերպարանափոխումն է: Երրորդ ինտերնացիոնալին հարող արեւմտյան կոմունիստները նվաստացուցիչ դեր են կատարում, նրանք չեն հասկանում, որ միանալով Երրորդ Ինտերնացիոնալին՝ միանում են ռուս ժողովրդին եւ կենսագործում են նրա առաքելական կոչումը»[1]:

«Ռուսական կոմունիզմը՝ նրա բնավորության երկակիության պատճառով դժվար է հասկանալ: Մի կողմից, նա համաշխարհային, ինտերնացիոնալ երեւույթ է, մյուս կողմից, ռուսական եւ ազգային երեւույթ է»,- գրում է Բերդյաեւը[2]:

Եվ իրոք, մարքսիզմը Ռուսաստանում հարմարվեց ռուսական պայմաններին, բովանդակությամբ փոխակերպվեց եւ պահպանելով ձեւը՝ հանդես էր գալիս որպես ռուսաց ազգային գաղափարախոսության կրող: Ռուսաստանի պայմաններում, համաձայն Բերդյաեւի, տեղի է ունեցել մարքսիզմի «ռուսականացում»[3]:

«Տեղի է ունեցել մարքսիզմի զարմանալի ձեւափոխություն. այդքան ոչ ռուսական ծագմամբ եւ ոչ ռուսական բնավորությամբ, ձեռք է բերում ռուսական ոճ, արեւելյան ոճ, որը գրեթե մոտենում է սլավյանոֆիլությանը»[4]:

Բոլշեւիզմը ավելի ավանդապաշտ է, քան ընդունված է մտածել նրա մասին, նա համաձայն է ռուսական պատմական զարգացման պրոցեսի առանձնահատկություններին»[5]:

Դրանով է բացատրվում այն հանգամանքը, որ բոլշեւիկները Ռուսաստանում ստեղծում են «բռնապետական եւ բյուրոկրատական պետություն՝ կյանքի կոչված տիրապետելու ժողովրդի ամբողջ կյանքին, ոչ միայն մարմնին, այլեւ հոգուն, համաձայն Իվան Ահեղի եւ ցարական իշխանությունների ավանդույթների»[6]:

1. Н.А. Бердяев. Истоки и смысл русского коммунизма, М. 1990, стр.117-118.
2. Նույն տեղում. էջ 7.
3. Նույն տեղում. էջ 89:
4. Նույն տեղում. էջ 116:
5. Նույն տեղում. էջ 89:
6. Նույն տեղում. էջ 116:

Բոլշեւիզմը, գրում է Բերդյաեւը, ռուսական կյանք մտավ որպես բարձրագույն մակարդակով ռազմականացված ուժ, բայց հին ռուսական պետությունը եւս միշտ ռազմականացված է եղել[1]:

Ստալինին Բերդյաեւը համարում է արեւելյան, ասիական տիպի պետական գործիչ, որը հանդես էր գալիս որպես Պետրոս Մեծի գործի շարունակող[2]:

Ստալինիզմը աստիճանաբար, աննկատ վերասերվում է «յուրահատուկ ռուսական ֆաշիզմի: Նրան հատուկ էին ֆաշիզմի բոլոր առանձնահատկությունները[3]:

Այսպիսով, կոմունիզմը ռուս իրականության մեջ գալիս է շարունակելու ցարիզմի ազգային գաղափարախոսության քաղաքականությունը՝ հատկապես հողահավաքի բնագավառում: Նա ամբողջությամբ ընդունում է ռուսաց ազգային գաղափարախոսությունը, բացառությամբ ուղղափառ եկեղեցու հիմնադրույթի: Կոմունիզմը անգիջում ու անողոք պայքար է սկսում կրոնի դեմ, որովհետեւ ինքն է հավակնում ռուսական կայսրությունում հանդես գալ որպես նոր կրոն:

Բերդյաեւը գրում է. «Կոմունիստները դավանում են մարտնչող աթեիզմ, եւ նրանք պարտավոր են վարել հակակրոնական քարոզչություն: Կոմունիզմը ոչ որպես սոցիալական համակարգ, այլ որպես կրոն մոլեռանդորեն թշնամի է ամեն մի կրոնի, առավել եւս՝ քրիստոնեությանը: Նա ինքն է ցանկանում լինել քրիստոնեությանը փոխարինելու եկած կրոն, նա հավակնություն ունի բավարարելու մարդկային հոգու կրոնական պետքերը, կյանքին իմաստ տալ»[4]:

Բոլշեւիկները հասկանում էին, որ հին հավատքը կործանելու համար անհրաժեշտ է նրան հակադրել նոր հավատք: Այդպիսին նրանք ցանկանում էին դարձնել մարքսիզմը:

Այդ առումով միանգամայն ճիշտ էր Լե Բոնը, որը գրում էր. «Հավատքը չունի ուրիշ ոչ մի լուրջ թշնամի, քան հավատքը»[5]:

Ն. Բերդյաեւը անդրադառնում է նաեւ այն կարեւոր հիմնախնդրին, թե Խորհրդային Միությունում ինչպիսին է եղել Հայրենիքի գաղափարի էությունը, ինչ բովանդակություն ուներ «խորհրդային հայրենիք» հասկացությունը: Այդ մասին նա գրել է.«Խորհրդային Ռուսաստանում այժմ խոսում են խորհրդային հայրենիքի մասին եւ այն ցանկանում են պաշտպանել, հանուն նրա պատրաստ են զոհաբերել կյանքը: Բայց

1. Նույն տեղում, էջ 99:
2. Նույն տեղում, էջ 120:
3. Նույն տեղում:
4. Նույն տեղում, էջ 129:
5. Լե Բոն, նշվ. աշխատությունը. էջ 110:

հայրենիքը հենց նույն Ռուսաստանն է, եւ Ռուսաստանում թերեւս առաջին անգամ ծագում է ժողովրդական հայրենասիրություն»[1]: Իսկ խորհրդային հայրենասիրությունը Բերդյաեւը բնութագրում է՝ «պարզապես ռուսական հայրենասիրություն»[2]:

Այսպիսով, հիշյալ տեսակետի կողմնակիցները գտնում են.

1. Մոսկվան՝ որպես Երրորդ Հռոմ դոկտրինը դարձել է գաղափարական բազա Մոսկվայի թագավորության կազմավորման համար»[3]:

2. Ուվարովյան «ուղղափառություն-ինքնակալություն-ժողովուրդ» կարգախոսը ավելի ուշ հիմք է հանդիսացել ռուսական հզոր կայսրության ստեղծման համար:

3. Համաձայն Բերդյաեւի, ոչ առաջին եւ ոչ էլ երկրորդ փուլում ռուս ժողովրդին չի հաջողվել իրականացնել իր առաքելական գաղափարը Մոսկվայի մասին՝ որպես Երրորդ Հռոմի:

Այդ հիմնախնդիրը լուծել են Խորհրդային Միությունը եւ Երրորդ Ինտերնացիոնալը:

Պրոբլեմի բազմակողմանի ուսումնասիրությունը կասկած չի թողնում Բերդյաեւի եւ ընդհանրապես այդ տեսակետի բոլոր կողմնակիցների ճշտության մեջ: Համոզվելու համար այդ թեզի ճշտության մեջ, քննարկենք այն մոտեցումները, որոնք ցուցաբերում էր խորհրդային իշխանությունը եւ Երրորդ Ինտերնացիոնալը՝ ռուսաց ազգային գաղափարախոսության հիմնախնդիրների նկատմամբ:

Ռուսաստանի բոլշեւիկյան կուսակցությունը նպատակասլաց կենսագործում էր այնպիսի ազգային քաղաքականություն, որը անշեղորեն տանում էր դեպի ԽՍՀՄ բոլոր ժողովուրդների ձուլմանը ռուս ժողովրդի մեջ: Տեսականորեն այդ քաղաքականության իրականացումը պետք է հանգեցներ մարդկանց նոր պատմական հանրության՝ Խորհրդային ժողովրդի ստեղծմանը[4]: Մարդկանց այդ նոր պատմական հանրությունը՝ Խորհրդային ժողովուրդը, բնականաբար, պետք է խոսեր ռուսերեն եւ ոչ այլ ինչ էր, եթե ոչ՝ ԽՍՀՄ բոլոր ժողովուրդներին իր մեջ ձուլած ռուս ժողովուրդը: Այսինքն, շարունակվում էր նվաճված ժողովուրդների ձուլման՝ կայսերական Ռուսաստանի ավանդական քաղաքականությունը:

ԽՍՀՄ-ում շարունակվում էր նվաճված ժողովուրդների ձուլման պրոցեսը:

ԽՍՀՄ-ը ռուսական պետություն էր, ռուս ժողովրդի պետություն: Բոլշեւիկները պարզապես միջազգային հասարակայնության համար պահ-

1. Н. А. Бердяев. Истоки и смысл русского коммунизма, М. 1990, стр.118.
2. Նույն տեղում, էջ 120:
3. Նույն տեղում. էջ 9:
4. Ю. В. Бромлей. Очерки теории этноса, М. 1983, стр. 370-375.

պանում էին ֆասադը՝ անկախ սոցիալիստական միութենական հանրապետությունների դիմակով: Բոլշեւիկյան սոցիալիզմը ֆաշիզմի տարատեսակն էր, որը մերժում էր ժողովրդավարությունը եւ ոչ մի ընդհանուր բան չուներ ավանդական սոցիալիզմի հետ: Ոտնակոխ էին արվել մարդու տարրական իրավունքները, գնդակահարվել եւ աքսորվել էին միլիոնավոր մարդիկ: Երկիրը պատվել էր համակենտրոնացման ճամբարներով:

Բոլշեւիկները երբեք չեն թաքցրել, որ իրենց նպատակը ազգերի մերձեցումը եւ ձուլումն է, մարդկանց նոր պատմական հանրության ստեղծումը: Սոցիալիզմի բազայի վրա, գրում էր Վ. Ի. Լենինը, տեղի կունենա «ազգերի արագացած մերձեցումը եւ ձուլումը»[1]: Ելնելով ազգերի մերձեցման եւ ձուլման լենինյան դրույթներից, բոլշեւիկները գործադրում էին բոլոր միջոցները՝ ռուսական էթնոսի կողմից այլազգիներին կլանելու անհրաժեշտ պայմանները ստեղծելու համար: Ռուսների մեջ այլազգիների ձուլման պրոցեսը համարվում էր դրական երեւույթ: Այդ գործընթացը տեղի էր ունենում խորհրդային ժողովուրդների «ինտեգրացման» կարգախոսով: Յու. Բրոմլեյը՝ վերլուծելով ԽՍՀՄ-ում լեզվական փոխառնչությունների պրոբլեմը, գրում է. 1979 թ. մարդահամարը ցույց տվեց, որ «Ռուսերենին ազատ տիրապետողների կամ այն իր մայրենին համարողների թիվը ԽՍՀՄ-ում կազմում է 214,8 միլիոն մարդ, (1970թ.՝ 183 միլիոն մարդ), կամ ամբողջ բնակչության 81,9 տոկոսը (1970թ.՝ 76,0 տոկոսը): ԸՆԴ ՈՐՈՒՄ, ՈՌՈՒՍԵՐԵՆԸ ՄԱՅՐԵՆԻ է ՀԱՆԴԻՍԱՑԵԼ 137,2 ՄԻԼԻՈՆ ՌՈՒՍՆԵՐԻ ՀԱՄԱՐ (1970 թ. 128,8 ՄԻԼԻՈՆԻ ՀԱՄԱՐ) ԵՎ 16,3 ՄԻԼԻՈՆ՝ ԱՅԼԱԶԳԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ (1970 թ.՝ 13 ՄԻԼԻՈՆ), ԵՐԿՐՈՐԴ ԼԵԶՈՒ՝ 61,3 ՄԻԼԻՈՆ ՄԱՐԴՈՒ ՀԱՄԱՐ (1970թ.՝ 41,9 ՄԻԼԻՈՆ ՄԱՐԴ)[2]:

Բերված թվերը ցույց են տալիս, թե ինչպիսի արագությամբ էր ընթանում ԽՍՀՄ ժողովուրդների ձուլման պրոցեսը, ռուսականացումը:

Այսպիսով, բոլշեւիկյան կուսակցությունը՝

ա) Ստեղծեց ռուս ժողովրդի պատմության մեջ ամենահզոր, տարածքային առումով ամենալայնածավալ կայսրությունը: Ռուսաստանի փաստական տիրապետության տակ էր գտնվում նաեւ սոցիալիստական երկրների մի մեծ խումբ:

Ռուսաստանը դարձավ մոլորակի երկու գերհզոր պետություններից մեկը: Իրականացվեց Ռուսաստանի՝ որպես Երրորդ Հռոմի դոկտրինան, իրականացվեց նաեւ ուվարովյան «ուղղափառություն-ինքնակալություն-ժողովուրդ» կարգախոսը: Եթե առաջին համաշխարհային պատերազմի տարիներին ռուսական կայսրության զինվորը մարտի էր գնում «հանուն կայսրի, հանուն Հայրենիքի» կոչով, ապա երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին խորհրդային կայսրության զինվորը մարտի էր գնում «Հանուն Հայրենիքի, Հանուն Ստալինի» կոչով: Ե՛վ առաջին, եւ երկրորդ դեպքում պայքար էր գնում ռուսաց Հայրենիքի անկախության համար, որովհետեւ Ռուսաստանի մյուս ժողովուրդները հայրենիքի անկախություն, պետական անկախություն չունեին: Բոլշեւիկյան կուսակցությունը ռուսաց ազգային գաղափարախոսության «հողահավաքի» քաղաքականությունը հատկապես երկրորդ համաշխարհային պատերազմում տարած հաղթանակի շնորհիվ իրագործեց հսկայածավալ սահմաններով:

բ) Ռուս ժողովուրդը խորհրդային իշխանության տարիներին իր ազգային կյանքի բոլոր բնագավառներում, ներքին եւ արտաքին քաղաքականության բոլոր ոլորտներում ձեռք բերեց արմատական, աննախադեպ նվաճումներ եւ դարձավ աշխարհի հզորագույն ժողովուրդներից մեկը: Այդ հզորության առաջին աղբյուրները նվաճված տարածքներն էին՝ Ռուսաստանի կազմում գտնվող այլազգիների Հայրենիքները, երկրորդը՝ նվաճված ժողովուրդների ձուլումը, որը արագորեն իրագործվում էր՝ կյանքի կոչելով ռուսալեզու Խորհրդային ժողովուրդը:

Այսինքն՝ ձուլվում, անհետանում էին Ռուսաստանի կազմում գտնվող այլազգի ժողովուրդները: Պատմական արենայում մնում էր միայն հզորացած, քանակով անչափ աճած ռուս ժողովուրդը՝ Խորհրդային ժողովուրդ անվամբ:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, լենինյան-ստալինյան կոմունիստական կուսակցությունը խորհրդային իշխանության տարիներին ղեկավարվել է ռուսաց ազգային գաղափարախոսությամբ եւ փայլուն կերպով լուծել այդ գաղափարախոսության գրեթե բոլոր հիմնախնդիրները:

Այդ առումով, եթե ելնենք ռուսաց ազգային գաղափարախոսության հիմնախնդիրների իրականացման շահերից, ապա ռուս ժողովրդին բոլշեւիզմը ավելի էր ձեռնտու, քան ցարիզմը:

Պատմության փորձից հայտնի է, սակայն, որ բոլոր կայսրությունները դատապարտված են կործանման: Այդ անվիճելի թեզը հատկապես վերաբերում է խորհրդային կայսրությանը, որի տնտեսակարգը շատ շուտով բացահայտեց իր սնանկությունը՝ չդիմանալով Արեւմուտքի մրցակցությանը: Դեռ ավելին, բազմազգ ԽՍՀՄ-ում բոլշեւիկները չկարողացան լուծել ազգային հարցը: Հենց այս երկու չլուծված հիմնախնդիրներն էլ վճռեցին խորհրդային կայսրության ճակատագիրը: Կայսրությունը դատապարտված էր կործանման: Կոմունիստական կուսակցության ազգային քաղաքականությունը առաջացնում էր նվաճված

1. Ленин В. И. Полн. собр. соч., т. 30, стр.22, т. 27, стр. 68, 256, 457 и др.

2. Ю. В. Бромлей. Очерки теории этноса. М. 1983, стр.362.

ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարը, որի ձեւերը բազմազան էին: Նվաճված ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարի բոլոր ձեւերն էլ բոլշեւիկների կողմից բնութագրվում էին որպես բուրժուական նացիոնալիզմի եւ սեպարատիզմի արտահայտություն: Բոլշեւիզմը նվաճված ժողովուրդների ազատագրական պայքարը, ազգային գաղափարախոսությունը եւ ազգայնականությունը համարում էր իր հիմնական թշնամին եւ կատաղի պայքար էր մղում նրա դեմ:

Պարզ էր, որ երկրի անբուժելի տնտեսական ճգնաժամը եւ ծավալվող ազգային ազատագրական պայքարը ի վերջո հանգեցնելու էին կայսրության կործանմանը, որը եւ տեղի ունեցավ 1991 թվականին:

Երրորդ փուլ. 1991 թվականից հետո:

Փլուզվում է ԽՍՀՄ անունը կրող ռուսական կայսրությունը: Ստեղծվում է միակենտրոն քաղաքական աշխարհ, որը ղեկավարվում է ԱՄՆ-ի կողմից: Ռուսական տերությունը թեւակոխում է մասնատման եւ թուլացման շրջան, որն իր մեջ ընդգրկում է երկու փուլ: Առաջին փուլը նշանավորվեց միութենական հանրապետությունների՝ Ռուսաստանի կազմից դուրս գալով եւ անկախության հռչակումով: Երկրորդ փուլը դրսեւորվում է Ռուսաստանի կազմում սկսված մուսուլմանական ժողովուրդների ազգային շարժումներով, որոնք նպատակ են հետապնդում դուրս գալ կայսրության կազմից եւ եւս հռչակել իրենց անկախությունը: Ռուսաստանի կազմում գտնվող մուսուլմանական ժողովուրդների ազատագրական պայքարը, կամ ինչպես ռուսներն են գրում՝ «անջատողական ձգտումները», ամենացայտուն կերպով արտահայտվեց Չեչնիայում, որը զինված պայքարի է դուրս եկել անկախություն ձեռք բերելու, անկախ պետություն ստեղծելու համար:

Լուրջ վտանգ է սպառնում Մեծ Ռուսաստանի, կայսերական Ռուսաստանի գոյությանը: Ռուսական տերությունը, որը դարեր շարունակ զբաղված է եղել հարեւան ժողովուրդների հայրենիքների նվաճմամբ՝ «հողահավաքի» քաղաքականության իրականացմամբ, այժմ թեւակոխել է մի ժամանակաշրջան, որը կարող է ավարտվել կայսրության լիակատար մասնատմամբ եւ կործանումով: Եթե ռուսական կայսրության մասնատման պրոցեսի առաջին փուլում վճռական դեր կատարեց Արեւմուտքը՝ ԱՄՆ-ի ղեկավարությամբ, ապա երկրորդ փուլում այդ պրոցեսի արագացման դրոշակակրի դերը ստանձնել է Թուրքիան՝ թիկունք ունենալով Արեւմուտքին՝ ԱՄՆ-ի ղեկավարությամբ:

Ռուսաց ազգային-քաղաքական միտքը տեսնում եւ հասկանում է, թե ինչպիսի վտանգ է սպառնում ռուսական կայսրության տարածքային ամբողջականությանը:

«Հոգեւոր ժառանգություն» պետական-հայրենասիրական միավորման ծրագրում այդ վտանգի մասին ասվում է. «Ռուսաստանի տարածքային ամբողջականության մասնատման խնդիրը իրականացվում է «մուսուլմանական հանրապետություններում» եւ անկլավներում: Այդ ճանապարհով է գնում Չեչնիան...«Իսլամական սեպարատիզմի» վտանգը Ռուսաստանի ամբողջականության համար շատ մեծ է»[1]:

Այդ նույն փաստաթղթում թուրքական վտանգի մասին ասվում է. «Տարածաշրջանային տերության հավակնություն ունեցող Թուրքիան բազմիցս հայտարարել է այդ շրջանում մուսուլմանական շարժմանը իր աջակցության մասին, մասնավորապես իր պատրաստակամության մասին՝ ակտիվորեն մասնակցելու Լեռնային Ղարաբաղի կոնֆլիկտի կարգավորմանը՝ նույն թվում նաեւ ռազմական միջոցներով: Նման դիրքորոշումը մինչեւ այժմ էլ չի հանդիպել ՆԱՏՕ-ի աջակցությանը, բայց բացառված չէ հետագայում այդ դիրքորոշման սրբագրումը... Կովկասում Ռուսաստանի դերի երկարատեւ թուլացումը կարող է հանգեցնել այդ դերի անցմանը Թուրքիային»[2]:

«Մանիֆեստ՝ Ռուսաստանի վերածնության» խորագիրը կրող ծրագրային փաստաթղթում, որը կազմվել է «Ռուսաստանի վերածնության միություն» եւ «Ռուսական համայնքների կոնգրես» կազմակերպությունների նախաձեռնությամբ, այդ մասին ասվում է. «Ասիական քաղաքակրթությունների զարգացումը օրինաչափորեն նրանց բերում է ռուսական քաղաքակրթության ոչնչացման ձգտմանը... Միջին Ասիայի եւ Անդրկովկասի թուրքական ժողովուրդները, հենվելով Թուրքիայի եւ Իրանի աջակցության վրա, կարող են լիովին իրականացնել Մեծ Թուրանի գաղափարը՝ միջինասիական պետությունների բլոկը՝ ուղղված Ռուսաստանի դեմ»[3]:

Ռուսաց ազգային, հասարակական-քաղաքական միտքը ուղիներ է որոնում ստեղծված ճգնաժամային իրավիճակից դուրս գալու համար: Ելքը տեսնվում է ռուսաց ազգային գաղափարախոսության նոր մոդելի՝ նոր աշխարհաքաղաքական դոկտրինի, ազգային անվտանգության նոր կոնցեպցիայի մշակման մեջ:

Ահա թե ինչու խորհրդային կայսրության փլուզումից հետո ռուս ազգային, հասարակական-քաղաքական միտքը բուռն հետաքրքրություն է հանդես բերում ռուսաց ազգային գաղափարախոսության նկատմամբ: Ինչպիսի՞ն պետք է լինի ռուսաց ազգային գաղափարախոսությունը ետխորհրդային, դեմոկրատական ժամանակաշրջանում: Այս հարցադրումը դարձել է առանցքային: Հիմնախնդրի մշակման կապակցությամբ տեղի են ունենում թեժ բանավեճեր ու քննարկումներ, կազմակերպվում

1. *Современная русская идея и государство, М. 1995, стр.80.*
2. *Նույն տեղում, էջ 129-130:*
3. *Дмитрий Рогозин, Русский ответ. М. 1996, стр.198.*

են գիտաժողովներ եւ «կլոր սեղաններ», առաջարկվում են տարբեր մոդելներ:

Ելնելով հիմնախնդրի կարեւորությունից, Ռուսաստանի իշխանությունները մրցույթ են հայտարարել ռուսաց ազգային գաղափարախոսության նոր մոդելի մշակման համար:

ԽՍՀՄ փլուզումից հետո, անցած տարիներին լույս են տեսել հարյուրավոր գրքեր, գրքույկներ եւ հոդվածներ, որոնցից առավել հետաքրքիրները անհրաժեշտ ենք համարում ներկայացնել ընթերցողի ուշադրությանը[1]:

Արդի փուլում ռուսաց ազգային գաղափարախոսության նոր մոդելի մշակման ուղղությամբ ուշագրավ աշխատանքներ են կատարել՝ «Հոգեւոր ժառանգություն» պետական-հայրենասիրական միավորումը, «Ռեալիստներ» հասարակական-քաղաքական ակումբը, «Ռեֆորմ»

1. 1 Николай Бердяев. Судьба России. М. 1990.
2. Н. А. Бердяев. Истоки и смысл русского коммунизма. М. 1990.
3. Игорь Шафаревич. Есть ли у России будущее?. М.1991.
4. Иванов В. И.. Русская идея. М.1992.
5. Киреевский И. В., Русская идея. М. 1992.
6. Евг. Трубецкой. Русская идея. М.1992.
7. Русская идея и современность. М.1992.
8. Троицкий Е. С.. Возрождение русской идеи. М.1993.
9. Троицкий Е. С.. О русской идее. Очерк теории возрождения нации. М.1994.
10. Виктор Корчагин. Русская идея. М.1994.
11. Национальная доктрина России. Проблемы и приоритеты. М.1994.
12. Русская идея и евреи. роковой спор. (Сборник статей). М.1994.
13. Александр Янов. Русская идея и 2000-й год. Нью Йорк. 1988.
14. Современная русская идея и государство. М.1995.
15. Русская цивилизация и соборность. М.1994.
16. Журавлев В. В.. Быть или не быть российской национальной идее?, М.1995.
17. Ильин В. В., Панарин А. С.. Рябов А. В. Опыт национально-государственной идеологии. М.1994.
18. Батыгин А., Национальная идея и идеал нации, Российская газета 1994. 20 сентября.
19. Аксючиц В.. Бог и Отечество-формула русской идеи. Москва. 1993. №1.
20. Абалкин Л.. Российская идея. газета Деловой мир. 1994. 5-11 сентября.
21. Уледов А.. Русская идея как феномен национального самосознания. Вестник высшей школы. 1992. №7-9
22. П. И. Ковалевский. Русский национализм и национальное воспитание в России. М.1996.
23. Дмитрий Рогозин. Русский ответ. Санкт-Петербург. Москва. 1996.
24. Игорь Чубайс. От русской идеи-к идее Новой России. М.1996.
25. Х. Х. Боков. С. В. Алексеев. Российская идея и национальная идеология народов России. М. 1996.
26. Владимир Болов. Кавказская доктрина и Российская идея. М.1966.
27. Государственная идеология и общенациональная идея. М.1997.

ֆոնդը, «Ռուսաստանի Վերածնության Միությունը» եւ «Ռուսական համայնքների կոնգրեսը»: Զգալի աշխատանք են կատարել շատ գիտնականներ, որոնք ընդգրկված չեն ազգային կամ հասարակական-քաղաքական կազմակերպություններում: Հիմնախնդրի բազմակողմանի մշակմանը օժանդակել են նաեւ ավելի քիչ հայտնի ազգային եւ հասարակական-քաղաքական կազմակերպություններ:

Ռուսաց ազգային գաղափարախոսության նոր մոդելի մշակման ուղղությամբ որոնումները շարունակվում են: Առաջարկները բազմաթիվ են եւ բազմաբնույթ, երբեմն՝ իրարամերժ:

Սակայն, այդ բոլորով հանդերձ, տիրապետող է այն տեսակետը, որ ռուսաց ազգային գաղափարախոսության նոր մոդելը անպայման պետք է պարունակի ավանդական գաղափարախոսության հիմնադրույթները, հարմարեցված արդի պատմական էպոխայի պայմաններին եւ պահանջներին՝ խնդիր ունենալով Ռուսական Մեծ տերության՝ ռուսական կայսրության վերածնունդը: Գրեթե բոլոր մասնագետները շեշտում են, որ ռուսաց ազգային գաղափարախոսության մեջ «կայսերական մտածողությունը պետք է հենակետ լինի ռուսների ֆասսայական ազգային ինքնագիտակցության համար»[1]: Ընդգծվում է նաեւ, որ ռուսական «Մեծ տերության վերածնունդի անկյունաքարը ազգի հոգեւոր կերտվածքի ձեւավորումն է: Համազգային դոկտրինան պետք է հենվի ազգային գաղափարախոսության վրա, որը իր հերթին կարեւորագույն պայմանն է բոլոր վերափոխումների»[2]:

Ռուսաց ազգային գաղափարախոսության գործնական կողմը համարվում է Ռուսական հարցը[3]:

Ռուս ազգային գաղափարախոսները մտահոգված են: Նրանք լավ են հասկանում, որ «պատմության բեկումնային փուլերում անհետացել են ոչ միայն էթնոսներ, այլեւ ամբողջական քաղաքակրթություններ»[4]: Երկրի փրկությունը նրանք տեսնում են համազգային միասնության հաստատման մեջ, որի հիմքը կարող է դառնալ միայն Մեծ Ռուսաստանի վերածննդի գաղափարախոսությունը[5], այսինքն՝ ազգային գաղափարախոսությունը:

«Մանիֆեստ՝ Ռուսաստանի վերածնության» փաստաթղթում եւս, որպես առաջնահերթ ազգային խնդիր, առաջ է քաշվում միասնության գաղափարը, հայտարարելով, որ «ՄԵՆՔ ԵՂԵԼ ԵՆՔ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԱԶԳ ԵՎ

1. *Современная русская идея и государство, стр.38.*
2. *Նույն տեղում, էջ 39:*
3. *Նույն տեղում, էջ 41:*
4. *Նույն տեղում:*
5. *Նույն տեղում, էջ 42:*

ԿՅԱՍՆԵՆՔ ԱԶԳԱՅԻՆ ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ»[1]:

Սույն Մանիֆեստի հեղինակները, որպես եզրակացություն, տալիս են հետեւյալ ձեւակերպումը. «Մեր ծավալը համապատասխանում է նրա խնդիրների մասշտաբին: ՌՈՒՍԱՍՏԱՆԸ ԿԱՐՈՂ է ԼԻՆԵԼ ՄԻԱՅՆ ՄԵԾ ՏԵՐՈՒԹՅՈՒՆ: Այդպես է ձեւավորվել ռուս ժողովրդի հազարամյա ինքնագիտակցությունը»[2]: Ելնելով այն ճշմարտությունից, որ ռուսաց գաղափարախոսությունը ռուս ազգի եւ ռուսական պետականության գոյության հիմնական առանցքն է[3], փաստաթղթում ասվում է, որ ռուսական ժողովրդական շարժման նպատակը ռուսաց ազգային գաղափարախոսությունը մոռացության մթությունից հանելը եւ Ռուսաստանին վերադարձնելն է[4]:

Սակայն, Ռուսական Մեծ տերության պահպանման համար պետք է պահպանել ռուսական կայսրության տարածքային ամբողջականությունը: Մինչդեռ Ռուսաստանի կազմից դուրս են եկել ԽՍՀՄ նախկին Միութենական հանրապետությունները, իսկ այժմ էլ աստիճանաբար այդ ճանապարհն են բռնել ՌԴ կազմում գտնվող մյուս ժողովուրդները: Այդ պրոցեսը չկանգնեցնելու դեպքում Ռուսաստանի Դաշնությունը կմասնատվի, եւ Ռուսաստանը կդառնա երկրորդական պետություն: Հենց այս վտանգն էլ նկատի ունենալով ռուս արդի ազգային-քաղաքական միտքը որպես առաջնային խնդիր առաջ է քաշում Ռուսաստանի տարածքային ամբողջականության պահպանման հարցը:

«Հոգեւոր ժառանգություն» միավորման ծրագրում այդ մասին ասվում է.

«Ազգամիջյան հարաբերություններում ժխտվում է «Ազգ-պետություն» կոնցեպցիան, որը տանում է դեպի արյունահեղ կոնֆլիկտներ: Ստեղծվում է միացյալ եւ անբաժանելի Ռուսական պետություն, որտեղ բոլոր ժողովուրդները հավասար վիճակում են»[5]:

Որպես այդ հիմնախնդրի լուծման բանալի առաջ է քաշվում Ռուսաստանի Դաշնությունը՝ արդի ռուսական կայսրությունը իսկական ֆեդերատիվ պետություն դարձնելու խնդիրը: Ռուսաց ազգային, հասարակական-քաղաքական միտքը շատ լավ է հասկանում, որ պատմության ներկա փուլում Ռուսական կայսրությունը չի կարող գոյատեւել անցած հազարամյակում իրագործված ազգային գաղափարախոսության հիմքի վրա: ԽՍՀՄ փլուզումից հետո վերջանում է ռուս ժողովրդի հողահա-

1. Д. Рогозин, նշված աշխ. էջ 177:
2. Նույն տեղում:
3. Նույն տեղում, էջ 201:
4. Современная русская идея..., էջ 169:
5. Նույն տեղում, էջ 169:

վաքի քաղաքականության ժամանակաշրջանը: Արդի փուլում ռուս ժողովուրդը պետք է սահմանափակվի դարերի ընթացքում նվաճածը պահելով եւ նոր աշխարհաքաղաքական բլոկ ստեղծելու խնդրով:

Այդ կարեւորագույն խնդիրը իրականացնելու համար պետք է ստեղծվի Ռուսաստանի Դաշնության մեջ մտնող բոլոր ժողովուրդների ազգային շահերն արտահայտող համառուսաստանյան ազգային գաղափարախոսություն: Հակառակ դեպքում, Ռուսական կայսրության կազմի մեջ մտնող ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարը կշարունակվի մինչեւ նրանց Ռուսաստանից անջատվելը եւ անկախ ազգային պետությունների ստեղծումը:

Նման իրավիճակից ելնելով, Ռուսաստանի արդի հասարակական-քաղաքական շարժման մեջ արդեն զգալի տեղ է գրավում այն տեսակետը, որի համաձայն, ռուսաց ազգային գաղափարախոսությունը պետք է դառնա հիմք համառուսական ազգային գաղափարախոսության ձեւավորման համար[1]: Համառուսական ազգային գաղափարախոսության կողմնակիցները ընդգծում են նաեւ, որ այդ գաղափարախոսությունը «պետք է լինի ռուսաց ազգային գաղափարախոսության օրգանական շարունակությունը»[2]:

Համառուսական ազգային գաղափարախոսություն ստեղծելու, Ռուսաստանի բոլոր ժողովուրդներին մի պետության մեջ պահելու ծրագիրը, սակայն, ունի մի մահացու թշնամի՝ Պանթուրքիզմը, որը ձգտում է բոլոր թուրքական ժողովուրդներին համախմբել մի ազգային-պետական միավորման մեջ:

Ահա թե ինչու երկու կայսրությունների՝ Ռուսաստանի եւ Թուրքիայի կենսական շահերը շոշափող հիշյալ ռազմավարական խնդիրը կարող է լուծվել միայն կենաց ու մահու բնույթ կրող ճակատագրական գոտեմարտով:

Երկրորդ կարեւորագույն խնդիրը, որը պետք է լուծի ռուսական կայսրությունը, դա ԽՍՀՄ նախկին Միութենական հանրապետությունների եւ Ռուսաստանի Դաշնության ինտեգրացման հարցն է: Պարզ է այսօր, որ ԱՊՀ-ն այդ խնդիրը չի կարող լուծել: Եթե առաջին հիմնախնդրի լուծումը կապվում է ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆԸ ԻՍԿԱԿԱՆ ՖԵԴԵՐԱՏԻՎ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԴԱՐՁՆԵԼՈՒ ՀԵՏ, ապա երկրորդը դեռեւս իր լուծման միանշանակ, հստակ պատասխանը չունի:

Երկարատեւ ազգային հալածանքներից փրկված միութենական հանրապետությունների ժողովուրդները՝ հռչակելով իրենց պետական ան-

1. Х. Х. Боков, С. В. Алексеев, Российская идея и национальная идеология народов России. Игорь Чубайс, От Русской идеи к идее Новой России.
2. Նույն տեղում, էջ 57:

կախությունը, արդի փուլում ընդունելով Ռուսաստանի հետ ինտեգրացման անհրաժեշտությունը, ցանկանում են, սակայն, լինել ոչ թե այդ երկրի կազմում, այլ կողքին, ոչ թե ռուսների հետ ֆեդերատիվ կամ կոնֆեդերատիվ մի պետության մեջ, այլ Եվրոմիության նման միավորման մեջ:

Այսպիսին է հզոր Ռուսաստանի վերականգնման, ԱՄՆ-ի կողմից ղեկավարվող միակենտրոն երկիր մոլորակը երկկենտրոն դարձնելու՝ նախկին խորհրդային բլոկի ժողովուրդների ճնշող մեծամասնության կողմից ընդունելի միակ ճշմարիտ ուղին:

Այդ կարևոր խնդիրները իրականացնելու, ռուսական հզոր կայսրությունը վերակենդանացնելու համար Ռուսաստանին անհրաժեշտ է «ուժեղ ձեռք»: Ռուսական գործոնը կարող է նախկին հզորության հասնել եւ աշխարհի ճակատագրում վճռորոշ դեր կատարել միայն այդ ճանապարհով: Իսկ ռուսական գործոնի հզորացման անհրաժեշտությունը ելնում է նաեւ հայ ժողովրդի ազգային շահերից, հայ ժողովրդի ազգային գաղափարախոսությունից:

ՔՐԴԱԿԱՆ ԳՈՐԾՈՆ

Թուրքերը Արեւմտյան Հայաստանը հայերից մաքրելու համար սկսեցին իրականացնել քրդերին հայոց հայրենիքում բնակեցնելու քաղաքականությունը: Այսպես կյանքի կոչվեց քրդական գործոնը, որը դարձավ իսկական աղետ հայ ժողովրդի համար: Նիկողայոս Ադոնցը գրում է. «Հայաստան քրդերի գաղթի սկիզբը գնում է Սելիմ 1-ի ժամանակները, երբ Չալդրանի ճակատամարտից հետո, 1514 թվականին, սուլթանը նվաճեց Հայաստանի մեծ մասը եւ նրա կառավարիչներ նշանակեց քրդերի, որոնք ֆեոդալական իրավունքներ ձեռք բերեցին զավթած, մասամբ էլ՝ սուլթանի կողմից շնորհված հողերի վրա: 16-րդ դարի սկիզբը ականատես եղավ քրդական ցեղերի Հայաստան գաղթի խիստ մեծացմանը՝ թուրքական կառավարության աջակցությամբ: Ուժեղացնելով քրդական տարրը Հայաստանում, արաբականը՝ Սիրիայում եւ թուրքականը՝ Անատոլիայում, թուրքական կառավարությունը գիտակցաբար հետամուտ էր քրիստոնյայի վրա մուսուլմանական տիրապետությունը հաստատելու սկզբունքին»[1]:

Թուրքական քաղաքագետները դարեր շարունակ ջանում էին Հայաստանը լցնել քրդերով եւ Հայաստանը փոխել Քրդստանի[2]: Քրդերը Հայաստան էին շարժվում երեք տարբեր կետերից՝ Դիարբեքիրի ուղղությամբ, Մոսուլի ուղղությամբ՝ Հաքյարիի վրայով, եւ Պարսկաստանից, Սուջբուլաղի հարեւան վայրերից[3]:

Հեռանալով Քրդստանից, որը գրավում է «Զագրոսի երկար լեռնազանգվածի բարձրավանդակները, Ուրմիա լճից եւ Բոհտան գետից մոտավորապես մինչեւ Լուրիստանի տափարակները եւ արեւմուտքից՝ Տիգրիսի եւ արեւելքից Դիզֆուլի հարակից հովիտները»[4], քրդական ցեղերը թուրքերի աջակցությամբ աստիճանաբար բնակություն են հաստատում հայոց պատմական Հայրենիքում՝ Արեւմտյան Հայաստանում: 16-րդ դարի սկզբներից սկսելով ներթափանցել Արեւմտյան Հայաստան, արդեն 19-րդ դարի վերջերին քրդերը փոխեցին երկրի ժողովրդագրական պատկերը:

Թուրքերը հասան իրենց նպատակին: Եթե 17-րդ դարում հայերը կազմում էին Արեւմտյան Հայաստանի բնակչության 98 տոկոսը, ապա 20-րդ դարի սկզբներին այդ տոկոսը իջավ 39-ի: Կրոնական առումով

1. Նիկողայոս Ադոնց. Հայկական հարցի լուծման շուրջ. Երեւան. 1989. էջ 65
2. Նույն տեղում, էջ 93:
3. Նույն տեղում, էջ 109:
4. Նույն տեղում, էջ 92:

դարասկզբին Արեւմտյան Հայաստանի բնակչության 45,2 տոկոսը կազմում էին քրիստոնյաները, 45,1 տոկոսը՝ մահմեդականները: Մահմեդականների 25,4 տոկոսը կազմում էին թուրքերը, 16,3 տոկոսը՝ քրդերը[1]:

Թուրքերի կողմից նման պայմաններում էր իրականացվում Հայաստանը հայաթափելու քաղաքականությունը: Հայերից ազատված տարածքները բնակեցվում էին թուրքերով եւ քրդերով:

Թուրքերը, սակայն, գերագնահատեցին մահմեդականության դերը: Նրանք չհասկացան, որ, ի վերջո, վերջին խոսքը պատկանելու է ոչ թե կրոնական, այլ ազգային գործոնին, որ Արեւմտյան Հայաստանում բնակություն հաստատած քրդերը դարեր հետո հանդես են գալու որպես պահանջատեր՝ այդ տարածքը հայտարարելով սեփական հայրենիք: Անցումը պանիսլամիզմից պանթուրքիզմին հաստատեց այդ ճշմարտությունը:

Թուրքերը եւ քրդերը հայերի դեմ գործում էին ձեռք-ձեռքի տված: Դեռ ավելին, եթե հայերի կոտորածներն ու ցեղասպանությունը ծրագրավորվում էին թուրքերի կողմից, ապա դրանք հիմնականում իրականացնում էին քրդերը:

Հայոց պատմագրությունը տասնամյակներ շարունակ պաշտպանել է այն թեզը, որ 19-րդ դարի վերջին եւ 20-րդ դարի սկզբին հայ-քրդական դաշինքը չի կայացել, որովհետեւ քրդերը դեռեւս չէին հասունացել եւ չէին հասել օսմանյան կայսրության ընդդիմադիր ուժերի միացյալ ճակատի ստեղծման գաղափարին: Մինչդեռ հայ-քրդական դաշինքի չկայացման պատճառները բոլորովին այլ էին: Հարցն այն է, որ քրդերը ավելի հեռու էին նայում, քան հայերը: Հայ-քրդական դաշինքի դեպքում կազատագրվեր Արեւմտյան Հայաստանը եւ այդ տարածքում կստեղծվեր ոչ թե քրդական, այլ հայկական պետություն: Քրդերը այդ լավ գիտեին: Իսկ քրդերը մի քանի հարյուր տարի ապրելով Արեւմտյան Հայաստանում՝ այն արդեն դիտում էին որպես սեփական հայրենիք: Եթե 19-րդ դարի վերջերին Արեւմտյան Հայաստանը ուներ երեք պահանջատեր՝ հայը, թուրքը եւ քուրդը, ապա հայոց ցեղասպանության իրականացումից հետո Թուրքիայում մնացին երկուսը:

Օսմանյան կայսրության փլուզման դեպքում քրդերի պահանջները Արեւմտյան Հայաստանի նկատմամբ ավելի իրական կդառնային, եթե արեւմտահայությունը ոչնչացված լիներ: Սեւրի պայմանագիրը հետագայում եկավ հաստատելու այդ ճշմարտությունը: Համաձայն այդ պայմանագրի, քրդական պետությունը պետք է ստեղծվեր Արեւմտյան Հայաստանի տարածքում:

1. Ա. Պիպերեան. Օսմանեան պետություն, Կ. Պոլիս, 1913. էջ 25-32:

Քրդերը ոչ միայն 19-րդ դարի վերջերին եւ 20-րդ դարի սկզբներին, այլեւ Մեծ Եղեռնից հետո մինչեւ մեր օրերը փաստորեն չփորձեցին լրջորեն հայերի հետ բանակցությունների սեղանի շուրջը նստել, որովհետեւ նրանց պահանջած Քրդստանը ընդգրկում է ամբողջ Արեւմտյան Հայաստանը, իսկ որոշ քրդական շրջաններ պահանջում են անգամ Հայաստանի Հանրապետության քրդաբնակ շրջանները: Չպետք է մոռանալ այն հանգամանքը, որ Ղարաբաղյան շարժման տարիներին եւս Ադրբեջանի քրդերը չմիացան հայերի ազատագրական պայքարին, որի անհրաժեշտությունը թելադրվում էր նրանց ազգային շահերով: Ինչ վերաբերվում է Հայաստանի Հանրապետության տարածքում բնակվող քրդերին, ապա նրանք բավարարվեցին հիմնականում հայամետ կոչերով ու հայտարարություններով, որոնք ոչ մի գործնական նշանակություն չունեին:

Ազգային հարաբերություններում կրոնական գործոնը ոչ վճռական, բայց որոշակի դեր խաղում է: Այս հանգամանքը ազգային գաղափարախոսության մարտավարությունը մշակելիս չի կարելի աչքաթող անել:

Բայց եթե մենք քննարկվող պրոբլեմին մոտենում ենք այս կամ այն ժողովրդի Հայրենիքի պաշտպանության կամ էլ հողային պահանջների տեսանկյունից, ապա անկասկած նման դեպքում անվիճելիորեն առաջնային նշանակություն է ստանում ոչ թե կրոնական, այլ ազգային գործոնը. հակամարտ կողմերը իրենց բոլոր հիմնահարցերը լուծում են՝ ելնելով միայն ազգային շահերից:

Վերը շարադրվածը ցույց է տալիս, որ քրդական գործոնը կարեւորագույն ազդեցություն է ունեցել եւ ունի հայոց ազգային գաղափարախոսության ձեւավորման եւ հիմնախնդիրների լուծման պրոցեսում:

Սակայն, քրդական գործոնը հայերի համար կարեւոր նշանակություն ունի ոչ միայն այսօր, այլեւ ունենալու է ապագայում, քանի դեռ չի լուծվել հայկական հարցը: Հայկական եւ քրդական հարցերը առնչված են լինելու մշտապես:

Քրդական հարցը չի կարող լուծվել ի հաշիվ Հայաստանի: Այդ պատճառով էլ հայերը եւ քրդերը պարտավոր են բանակցությունների սեղանի շուրջ նստել՝ ազատագրական պայքարի միասնական ծրագիր մշակելու, Արեւմտյան Հայաստանը եւ Քրդստանը ազատագրելու համար:

Հակաթուրքական ճակատի առանցքը պետք է կազմեն հայերը, քրդերը եւ հույները:

Այդ է թելադրում պատմության տրամաբանությունը:

ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՆ

Ադրբեջանական գործոնը ինչ-որ չափով թուրքական գործոնի բաղկացուցիչ մասն է:

Ադրբեջանական ազգ գոյություն չունի: Ադրբեջանցիները թուրքեր են, նրանք Օղուզ թուրքմենական ցեղին են պատկանում: Մինչեւ 1918 թվականը ադրբեջանցիներին անվանում էին կովկասյան թաթարներ:

Պանթուրքիստները հենց այս իրողությունն են հիմք ընդունել օղուզական պետության ստեղծման համար, որի մեջ պետք է մտնեին թուրքմենական ցեղերով բնակեցված Թուրքիան, Ադրբեջանը, Թուրքմենիան եւ Իրանը:

Նվաճված լինելով Ռուսական կայսրության կողմից, բնականաբար, ադրբեջանցիները չէին կարող ինքնուրույն քաղաքականություն վարել: Բայց նրանց հասարակական, քաղաքական եւ ազգային զարգացման միտումները մշտապես եղել են Թուրքիայի հասարակական, քաղաքական կյանքի անբաժան մասը:

Դեռ 1905-1906 թվականներին, ոգեւորված Աբդուլ Համիդի հայկական կոտորածների քաղաքականությամբ եւ ղեկավարվելով պանթուրքիզմի գաղափարախոսությամբ, ադրբեջանցիները հայկական կոտորածներ են կազմակերպում նաեւ Անդրկովկասում: Սակայն, ադրբեջանցիների հակահայկական ծրագրերը չեն իրականանում: Հայ քաղաքական ուժերը կարողանում են կազմակերպել արեւելահայության ինքնապաշտպանությունը: Կռիվները վերածվում են հայ-թաթարական կոտորածների: Արեւելահայությունը փրկվում է զանգվածային կոտորածներից:

Դրությունը արմատապես փոխվում է այն բանից հետո, երբ 1918 թ. մայիսի 27-ին հռչակվում է Ադրբեջանի անկախ հանրապետությունը:

Թուրքիան մի կողմից, Ադրբեջանը՝ մյուս, սերտ ռազմա-քաղաքական համագործակցությամբ 1918-1921 թվականներին գործադրում են բոլոր միջոցները՝ Հայաստանի Հանրապետությունը ոչնչացնելու, հայ ժողովրդի ցեղասպանությունը ավարտին հասցնելու համար:

1918 թ. սեպտեմբերին թուրքական եւ ադրբեջանական զորքերը գրավում են Բաքուն, որտեղ կազմակերպվում են հայերի զանգվածային կոտորածներ:

1920 թ. մարտին կոտորածներ են կազմակերպվում Լեռնային Ղարաբաղում:

Ադրբեջանի տարածքում հայերի կոտորածները դարձել էին սովորական երեւույթ:

Ռուսաստանի եւ Թուրքիայի օգնությամբ 1921 թ. Մոսկվայի մարտի

16-ի պայմանագրով Ադրբեջանը կարողանում է Հայաստանից կտրել Լեռնային Ղարաբաղը, Նախիջեւանը եւ Շարուրը:

Այնուհետեւ խորհրդային իշխանության տարիներին ինչպես բուն Ադրբեջանի, այնպես էլ նվաճված հայկական տարածքներում տեղի է ունենում հայ բնակչության ծրագրավորված սպիտակ ջարդ: ԽՍՀՄ փլուզման նախօրյակին Նախիջեւանի հայությունը, որի թվաքանակը 1917 թ. կազմել է 53,9 հազար, արդեն գոյություն չուներ: Նույն ճակատագիրն էր սպառնում նաեւ Ղարաբաղի հայ բնակչությանը, որի թվաքանակը արագորեն պակասում էր:

ԽՍՀՄ փլուզումից հետո Ադրբեջանը բացահայտորեն վերսկսեց պանթուրքիզմի քաղաքականության կենսագործումը: Սերտ ռազմաքաղաքական հարաբերություններ հաստատվեցին Ադրբեջանի եւ Թուրքիայի միջեւ: Նորից Ադրբեջանը ձեռնամուխ եղավ հայկական կոտորածների կազմակերպմանը: Սումգայիթում, Բաքվում եւ Ադրբեջանի այլ վայրերում կազմակերպվեցին հայության կոտորածներ:

Ադրբեջանի եւ Թուրքիայի միացյալ ջանքերով Հայաստանը շրջափակվեց: Նրանք ձգտում էին սովի ճիրաններում ոչնչացնել հայ ժողովրդին: Այդ քաղաքականությունը մինչեւ այսօր շարունակվում է: Պանթուրքիզմը պայքարում է իր ծրագրերի իրականացման համար:

Նավթի պաշարների առկայությունը մեծացնում է Ադրբեջանական գործոնի դերը եւ դարձնում չափազանց վտանգավոր Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի վերջնական լուծման գործում:

Զ. Բժեզինսկին գրում է. «Չնայած սահմանափակ տարածքին եւ աննշան բնակչությանը, Ադրբեջանը իր հսկայական էներգետիկ ռեսուրսներով, ինչպես նաեւ աշխարհաքաղաքական առումով վճռական նշանակություն ունի»[1]:

Սակայն, Ադրբեջանի նշանակությունը միայն էներգետիկ ռեսուրսներով չի սահմանափակվում: ԱՄՆ-ի կողմից Ադրբեջանը դիտվում է որպես միջանցք՝ Կասպից ծովի ավազան եւ Միջին Ասիա մուտք գործելու համար[2]:

Ամփոփելով իր տեսակետները՝ Բժեզինսկին եզրակացնում է. «Ամերիկայի կողմից հզոր աշխարհաքաղաքական աջակցության են արժանի Ադրբեջանը, Ուզբեկստանը եւ (տվյալ ռեգիոնից դուրս) Ուկրաինան: Երեքն էլ աշխարհաքաղաքական կենտրոններ են»[3]:

Ահա թե ինչու հայոց ազգային գաղափարախոսության հիմնախնդիրները մշակելիս մշտապես պետք է ուշադրության կենտրոնում ունենալ նաեւ ադրբեջանական գործոնը:

1. *Збигнев Бжезинский. Великая шахматная доска. М.1999, стр. 62.*
2. *Նույն տեղում էջ 146:*
3. *Նույն տեղում. էջ 179:*

ԿՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՆ

Օսմանյան Թուրքիայի թե՛ աշխարհիկ եւ թե՛ հոգեւոր իշխանությունները հետապնդել են մի նպատակ՝ ոչնչացնել նվաճված քրիստոնյա ժողովուրդներին եւ նրանց հայրենիքները դարձնել թուրքերի հայրենիք: Այդ խնդիրը իրագործելուց, կայսրության ժողովուրդներին ոչնչացնելուց հետո Թուրքիայի աշխարհիկ եւ հոգեւոր իշխանությունները մինչեւ այժմ էլ շարունակում են նախկին քաղաքականությունը՝ ատելություն քարոզելով քրիստոնեական ժողովուրդների նկատմամբ, դրանում տեսնելով թուրքական ժողովուրդների համախմբման, պանթուրքիզմի իրականացման հիմնական երաշխիքներից մեկը:

Հայաստանը քրիստոնեության ավանգարդն է, սահմանաբաժան գիծը, որից այն կողմ սկիզբ է առնում անծայրածիր մահմեդական աշխարհը: Պանթուրքիզմի իրականացման ճանապարհը փակում է Հայաստանը: Իսկ Մեծ Թուրանի գաղափարը ունի ոչ միայն ազգային, այլեւ կրոնական բնույթ: Աշխարհի բոլոր մահմեդական թուրքերի միավորումը մի պետության մեջ առաջին հերթին ազգային գաղափար էր, երկրորդ հերթին՝ կրոնական:

Իսլամը Օսմանյան Թուրքիայի կառավարողների ձեռքում գործիք է եղել՝ իրենց քաղաքական եւ ազգային ծրագրերը իրականացնելու համար մղվող պայքարում:

Դարերի ընթացքում մահմեդականների եւ քրիստոնյաների թշնամությունն այնպիսի բնույթ ընդունեց, որ, ի վերջո, Օսմանյան Թուրքիայում պետական իշխանությունների եւ իսլամի քաղաքականությունը՝ քրիստոնյա ժողովուրդներին ոչնչացնելու, Թուրքիան թուրքացնելու եւ Մեծ Թուրանի պետությունն ստեղծելու գործում նույնացան:

Այդ հիմնախնդիրը իր աշխատություններում խոր եւ բազմակողմանիորեն ուսումնասիրել է Հայկական հարցի հմուտ գիտակ Նիկողայոս Ադոնցը[1]:

Օսմանյան Թուրքիայի նվաճված ժողովուրդների եւ նվաճողների հարաբերությունները, բնականաբար, չէին կարող բարեկամական լինել:

Ի վերջո, նվաճողի եւ նվաճվողի հարաբերությունները միշտ էլ լինում են խիստ թշնամական: Նվաճողը՝ հայրենիքի անկախությունը կորցրած ժողովրդի կողմից միշտ էլ դիտվում է որպես ազգային թշնամի:

Օսմանյան կայսրությունում մահմեդականների եւ քրիստոնյաների

1. Նիկողայոս Ադոնց. Հայկական հարցի լուծման շուրջ. Երեւան, 1989:

միջեւ գոյություն ունեցող հարաբերությունների մասին Ն. Ադոնցը գրել է. «Կրոնական տարբերությունների սկզբունքի վրա հիմնված քաղաքականությունը երկիրը բաժանեց մահմեդականների եւ ոչմահմեդականների, երկու թշնամական ճամբարների: Նրանց փոխադարձ թշնամությունը արհեստականորեն բորբոքվեց եւ վերածվեց բոցի:

... Թուրքական կառավարողները իրենց բարեկեցությունը փնտրեցին բնակչության այս երկու գործոնների հակամարտության մեջ: Նրանց օտարոտի էին կառավարման այն տարրական սկզբունքները, որոնք մատնանշում էին նրանց երբեմն-երբեմն առավել լուսավորյալ թուրքերը: «Մեր քաղաքական իմաստուններին, ասում է Ահմեդ Ռեսիմ էֆենդին, Ալլահը ոչ խելք է շնորհել, ոչ էլ փորձառություն: Պատմության ուսումնասիրությունը նրանց գործը չէ: Նրանց համար որոշակի է, որ մահմեդականի առաջնահերթ եւ ամենասրբազան պարտականությունն է բոլոր անհավատների վերացումը երկրի երեսից»:

Քրիստոնյա հպատակների հալածանքը՝ վերջիններիս ստրկական դրությամբ հրահրված բոլոր հետեւանքներով, կարելի է դիտել Թուրքիայի ամբողջ պատմության ընթացքում, որպես թուրքական կառավարության բացահայտ կամ գաղտնի նպատակ...

Կառավարական իշխանությունը խրախուսում էր կրոնական հակամարտությունը եւ օգտագործում էր այն որպես միջոց ահաբեկելու եւ հնազանդեցնելու այն տարրերին, որոնք հրաժարվում էին հավատուրաց լինել, որոնց դիմադրությունը իսլամին դիտվում էր որպես վտանգ թեոկրատական կառուցվածքին: Երկու ընդդիմադիր կրոնական աշխարհների միջեւ ժառանգական թշնամության մեջ կառավարությունը խաղում էր ոչ թե խաղաղեցնողի, այլ գլխավոր հրահրողի դեր: Հետեւաբար, երկու ընդդիմադիր ճամբարները դարեր շարունակ կանգնած էին դեմ առ դեմ որպես թշնամիներ՝ հավատացյալներ եւ գյաուրներ, կառավարողներ եւ կառավարվողներ, զինվածներ եւ անզեններ, տերեր եւ ստրուկներ, շահագործողներ եւ շահագործվողներ, ավերիչներ եւ կերտողներ, նրանք, ովքեր վայելում են կյանքը առանց աշխատելու, եւ նրանք, ովքեր աշխատում են առանց վայելելու: Առաջինները համարվում էին հայրենիքի ճշմարիտ զավակներ, մինչդեռ վերջինները միայն խորթ զավակներ էին: Մահմեդականները կոչված են սուր բռնելու հանուն իսլամի, իսկ քրիստոնյաները բեռնակիր անասուններ են եւ աշխատում են իսլամի փառքի համար, «փափուկ կարպետ» են փադիշահի պատվանդանի համար»[1]:

Ահա այսպիսին էին մահմեդականների եւ քրիստոնյաների հարաբերությունները Օսմանյան Թուրքիայում:

1. Նիկողայոս Ադոնց. նույն տեղում. էջ 56-58:

Այս պրոբլեմը քննարկելիս հարց է առաջանում՝ իսկ Օսմանյան Թուրքիայում մահմեդականության տեղի եւ դերի մասին շարադրվածը ընդհանու՞ր է նաեւ ամբողջ աշխարհի իսլամական երկրների համար, թե՞ դա պարզապես Թուրքիայի առանձնահատուկ զարգացման արդյունքն է:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ իսլամը Օսմանյան Թուրքիայի պատմության մեջ հատուկ դեր է խաղացել՝ կապված այդ երկրի զարգացման առանձնահատկությունների հետ: Քրիստոնյաների նկատմամբ ունեցած ֆանատիկ ատելության դրսեւորումները ուժեղ են միայն Թուրքիայում եւ Ադրբեջանում: Այդ երեւույթը ինչ-որ չափով արտահայտվում է նաեւ Թուրքիայի ազդեցության ոլորտներում գտնվող մահմեդական երկրներում: Ինչքան հեռանում ենք Թուրքիայի ազդեցության ոլորտներից՝ այդ հակահայկական, հակաքրիստոնեական երեւույթների դրսեւորումները ավելի ու ավելի թուլանում են:

Մահմեդականություն ընդունած աշխարհի մյուս բոլոր ժողովուրդների հայրենիքներում այդ հակաքրիստոնեական մոլուցքը, բիոլոգիական ատելությունը կամ բոլորովին գոյություն չունի, կամ արտահայտվում է թույլ:

ՎՐԱՍՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՆ

Հայաստանը եւ Վրաստանը բնական դաշնակիցներ են՝ թելադրված պատմական ճակատագրով:

Հայաստանի միակ քրիստոնյա հարեւանը Վրաստանն է: Հայաստանն ու Վրաստանը քրիստոնեական աշխարհի ավանգարդն են, դրոշակակիրները: Երկու ժողովուրդներն էլ նույն արտաքին թշնամիներից տուժել են դաժանորեն: Այս երկու երկրների աշխարհագրական դիրքը, ստրատեգիական խնդիրները պատմության ընթացքում հարկադրել են ստեղծել միասնական ճակատ՝ արտաքին թշնամիներին դիմակայելու համար: Մանավանդ որ, մեկի պարտությունը շատ հաճախ հանգեցնում էր մյուսի պարտությանը:

Սակայն, այս հիմնախնդիրը քննարկելիս չպետք է մոռացության տալ այն անվիճելի թեզը, որ պատմության պրոցեսում յուրաքանչյուր ժողովուրդ ունի իր ազգային շահերը, իր խնդիրները: Ոչ մի ժողովուրդ, որպես կանոն, պատերազմի մեջ չի մտնում երբեք, եթե դա չի բխում իր ազգային շահերից:

Այսպիսին է պատմության զարգացման տրամաբանությունը:

Օսմանյան կայսրության ստեղծումից, Անդրկովկասի համար թուրք-պարսկական մրցակցության ժամանակաշրջանում, Վրաստանը դարեր շարունակ վարել է մի քաղաքականություն, որի հիմքում դրվել էին վրաց ժողովրդի ազգային գաղափարախոսությունից բխող հետեւյալ սկզբունքները.

1. Հայաստանի հետ, որպես բնական դաշնակցի, մշտապես պահպանել բարիդրացիական հարաբերություններ: Ռազմական վտանգի պահին Հայաստանի հետ դաշինքի գնալ միայն այն դեպքում, եթե առկա է հաղթանակի հնարավորությունը:
2. Եթե Վրաստանին անմիջական վտանգ չի սպառնում, պահպանել չեզոքություն: Պաշտոնապես վարվում էր այն քաղաքականությունը, որ դժվարին պայմաններում յուրաքանչյուր ժողովուրդ պարտավոր է փրկել իրեն եւ ոչ թե կործանվել կործանվող հարեւանի հետ միասին:
3. Հայաստանի պատմության դժվարին պահերին, օգտվելով ստեղծված իրավիճակից, օգուտներ քաղել հայ ժողովրդի թշնամիներից:
4. Եղել են նաեւ ժամանակներ, երբ օգտագործելով Հայաստանի համար ստեղծված ծանր իրավիճակը՝ անկախության կորուստը, վրացիները նվաճել են հայկական տարածքները եւ մտցրել վրա-

ցական թագավորության կազմի մեջ: Իսկ ավելի ուշ՝ Վրաստանը գրավել է Ջավախքը եւ Լոռին: Այսօր Լոռին ազատագրված է, իսկ Ջավախքը դեռեւս շարունակում է մնալ Վրաստանի կազմում:

Ահա այս սկզբունքների վրա են զարգացել հայ-վրացական պատմական հարաբերությունները:

Հայ-վրացական դաշինքի եւ հարաբերությունների պրոբլեմները քննարկելիս չպետք է աչքաթող անել այն կարեւոր հանգամանքը, որ Օսմանյան կայսրությունը նվաճել էր հայկական լեռնաշխարհը եւ այն էր ցանկանում դարձնել սեփական հայրենիք եւ ոչ թե Վրաստանի տարածքը: Ճիշտ է, թուրքերը նպատակ ունեին Վրաստանից եւս տարածքներ գրավել, սակայն, այնուամենայնիվ, թուրք-վրացական հարաբերությունները չունեին այն բախտորոշ, ճակատագրական բնույթը, ինչպիսին էին հայ-թուրքական հարաբերությունները: Վրացիների վերոհիշյալ քաղաքական գիծը ավելի որոշակիորեն ընդգծվեց հատկապես թուրքիզմի եւ պանթուրքիզմի գաղափարախոսությունների ստեղծումից հետո, երբ դրվել էր հայ ժողովրդի լինել-չլինելու հարցը:

Վրացիները թուրք-հայկական հակամարտությունների հարցում մշտապես չափազանց զգույշ քաղաքականություն էին վարում:

Մեր ասածը հաստատելու համար բերենք մի բնորոշ օրինակ: 1918 թվականի հունվարի վերջերին թուրքերը հարձակվում են Անդրկովկասի վրա: Նրանք գրավում են Արեւմտյան Հայաստանը եւ ներխուժում Անդրկովկաս: Մուսավաթը՝ բացարձակորեն պաշտպանում էր թուրքերին: Վտանգի տակ էր Հայաստանի եւ Վրաստանի գոյության հարցը: Նախնական բանակցությունները արդյունք չտվին: Անդրկովկասյան Սեյմը պատերազմ է հայտարարում Թուրքիային: Ադրբեջանցիները բոյկոտում են այդ որոշումը: Պատերազմի ծանրությունն ընկնում է հայերի եւ վրացիների վրա: Հայկական եւ վրացական զորքերը չեն կարողանում դիմակայել թուրքական զորքերին, որոնք անարգել առաջ էին շարժվում:

Վրացիները ստեղծված ծանր իրավիճակում լեզու են գտնում Գերմանիայի հետ, ձեռք են բերում նրանց պաշտպանությունը, դուրս են գալիս Սեյմից եւ մայիսի 26-ին հռչակում Վրաստանի անկախությունը, Հայաստանին մեն-մենակ թողնելով Թուրքիայի դեմ մղվող պատերազմի մեջ:

Մայիսի 25-ին, այսինքն՝ անկախություն հայտարարելուց մեկ օր առաջ, Ն. Ժորդանիան ժամանում է Բաքում, որտեղ բանակցություններ էին գնում թուրքական պատվիրակության հետ:

Ալ. Խատիսյանը պատմում է . «Տեղեկանալով Ժորդանիայի գալու նպատակի մասին, ես գացի անոր մոտ անմիջապես: Անոր հետ էր պրոֆ. Ավալովը, նույնպես վրացի: Ժորդանիան պատմեց Թիֆլիսի մեջ իշխող տրամադրությունների մասին, հաղորդեց, որ հայերը կը շարունակեն պատերազմել թուրքերու հետ, որ թուրքերը սանձարձակորեն կը շարունակեն իրենց առաջխաղացքը, եւ հայտնեց, թե այդպիսի պայմաններու մեջ վրացիներուն ուրիշ բան չի մնար, բայց եթե հայտարարել Վրաստանի անկախությունը:

- Ինչպե՞ս, բացականչեցի ես. չէ՞ որ մենք եւ դուք միասին պատերազմի մեջ ենք, ընդհանուր պատերազմի մեջ ընդհանուր թշնամու դեմ: Ինչպե՞ս կրնաք լքել մեզ, երբ մենք դեռ արյուն կը թափենք: Մի՞թե ազնիվ բան է այս:

- Ազնիվ բան է այն, ինչ որ օգտակար է ժողովրդին,- պատասխանեց Ժորդանիան:

- Այո, ըսի ես, իսկ մե՞նք:

- Մենք չենք կրնար խեղդուիլ ձեզի հետ միասին,- պատասխանեց Ժորդանիան: - Մեր ժողովուրդը կուզե փրկել այն, ինչ որ կրնայ: Դուք ալ պարտավոր եք համաձայնության լեզու մը գտնել թուրքերուն հետ: Ուրիշ ելք չունիք»[1]:

Նոյ Ժորդանիայի քաղաքականությունը լիովին ելնում էր վրացիների ազգային գաղափարախոսությունից, վրացիների ազգային շահերից:

Հայ ազգային-քաղաքական միտքը հայոց ազգային գաղափարախոսության ռազմավարական եւ մարտավարական ծրագրերը մշակելիս վրացական գործոնի այս չափազանց կարեւոր հանգամանքը պետք է անպայման նկատի ունենար:

Այդուհանդերձ, Հայաստանը Վրաստանի հետ ունի պատմական ճակատագրի, ռազմավարական շահերի ընդհանրություն, այդ պատճառով էլ հայ ժողովուրդը վրաց ժողովրդի հետ մշտապես պետք է պահպանի բարիդրացիական, բարեկամական հարաբերություններ: Վեճերը հարեւանների միջեւ սովորական երեւույթ են, որոնք, որպես կանոն, ժամանակի ընթացքում հարթվում են:

1. Ալ. Խատիսյան. Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը. Բեյրութ. 1968. էջ 81-82:

ՊԱՐՍԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՆ

Պարսկական գործոնը Հայաստանի պատմական ճակատագրում դարեր շարունակ բախտորոշ դեր է կատարել: Հայաստանը անկախությունը կորցնելուց հետո երկար ժամանակ կռվախնձոր է եղել Պարսկաստանի եւ Թուրքիայի միջեւ: Իվերջո, 1639 թվականի պայմանագրով Արեւելյան Հայաստանը անցնում է Պարսկաստանին, իսկ Արեւմտյանը՝ Թուրքիային:

Սակայն, շուտով այս տարածաշրջանում իր նվաճողական ծրագրերով հայտնվում է մի նոր հզոր ուժ՝ ցարական Ռուսաստանը, որը պայքարում էր ամբողջ Հայաստանը նվաճելու համար: 1828 թ. Ռուսաստանը նվաճում է Արեւելյան Հայաստանը: Պարսկաստանի տիրապետության տակ շարունակում է մնալ հայկական տարածքների մի մասը, որը պատմության մեջ մնացել է Պարսկահայաստան անվանումով: Որոշ անհաջող փորձերից հետո Պարսկաստանը հաշտվեց Արեւելյան Հայաստանի կորստի հետ:

Հայ ժողովրդի պատմության նորագույն շրջանը, որի սկիզբն է համարվում Հայաստանի Առաջին Հանրապետության անկախության հռչակումը, նշանավորվել է հայ-պարսկական ջերմ հարաբերություններով, որոնք շարունակվում են մինչեւ մեր օրերը:

Հայ-պարսկական բարեկամական հարաբերությունների ստեղծման գործում վճռական նշանակություն են ունեցել երկու հարեւան ժողովուրդների ազգային շահերի ընդհանրությունը, թուրք-պարսկական, ադրբեջանա-պարսկական եւ հայ-թուրքական տարածքային հիմնախնդիրները:

Պանթուրքիզմը սպառնում է անդամահատելու ոչ միայն ռուսական կայսրությունը, այլեւ պարսկական պետությունը՝ նպատակ ունենալով նրանից անջատել պարսկական Ադրբեջանը, որը պետք է կազմի Օղուզական պետության մի մասը եւ մտնի Մեծ Թուրանի պետության մեջ: Պարսկաստանը չի կարող բարեկամական հարաբերություններ ստեղծել նաեւ Ադրբեջանի հետ, որը հավակնություն ունի պարսկական Ադրբեջանի նկատմամբ:

Հայ-պարսկական հարաբերությունները արդի շրջանում որակական նոր փուլի մեջ են մտնում: Երկրագնդի քաղաքական աշխարհը դարձել է միակենտրոն, որը ղեկավարվում է ԱՄՆ-ի կողմից: ԱՄՆ-ը փաստորեն աշխարհը վերածեւում է իր հայեցողությամբ, կոնֆլիկտները լուծում է՝ ելնելով իր պետական շահերից:

ԱՄՆ-ը կարողացավ քայքայել ԽՍՀՄ-ը եւ Ռուսաստանը վերածել երկրորդական պետության:

Ստեղծված իրավիճակում Թուրքիան, ունենալով ԱՄՆ-ի աջակցությունը, լայն պայքար է սկսել պանթուրքիզմի ծրագրերի իրականացման համար:

Իսկ պանթուրքիզմը առաջին հերթին սպառնալիք է Ռուսաստանի, Իրանի եւ Հայաստանի տարածքային ամբողջականությանը:

Պանթուրքիզմի հաղթանակի դեպքում արդեն ուրվագծվում է միավորված թուրքական ժողովուրդների կենտրոնի ստեղծումը, որը հավակնություն կունենա գրավելու Վարշավայի պակտի տեղը՝ աշխարհը նորից դարձնելու երկկենտրոն: Եթե դա իրականություն դառնա, աշխարհը կկանգնի մեծ աղետի առաջ:

Հետեւաբար, բոլոր այն պետություններն ու ժողովուրդները, որոնց սպառնում է պանթուրքիզմի վտանգը, իրենք պետք է մտածեն իրենց գոյատեւման, իրենց սպառնացող վտանգին դիմակայելու մասին:

Աշխարհաքաղաքական նման իրավիճակը թելադրում է անհապաղ ստեղծել հակապանթուրքիստական ժողովուրդների միասնական ճակատ, որի հիմքը պետք է լինի Ռուսաստան-Հայաստան-Իրան առանցքը: Այս ճակատում պատմության ճակատագրով պետք է համախմբվեն Հունաստանը. Սերբիան, Բուլղարիան, Սիրիան, Իրաքը, քրդերը, ասորիները եւ այլք:

Հակապանթուրքական ժողովուրդների միավորումը դարձել է հրամայական:

Չիրականացնել այդ պատմական խնդիրը՝ նշանակում է գնալ ընդդեմ ազգային շահերի, ընդդեմ ազգային գաղափարախոսության պահանջների, որը, անկասկած, հանգեցնելու է պանթուրքիզմի հաղթանակին:

Պանթուրքիզմի առաջխաղացումը առաջին հերթին պետք է կանգնեցվի Ռուսաստան-Հայաստան-Իրան առանցքի կողմից, որովհետեւ պանթուրքիզմի հաղթանակը առաջին հերթին եւ ամենակենսական ձեւով հարվածելու է այդ ժողովուրդների շահերին, այդ պետությունների տարածքային ամբողջականությանը: Ռուսաստանը զրկվելու է թուրքական ժողովուրդներով բնակեցված տարածքներից, Հայաստանը՝ Զանգեզուրից եւ մի շարք այլ շրջաններից, իսկ Պարսկաստանը՝ Պարսկական Ադրբեջանից:

Պանթուրքիզմի իրական վտանգի պայմաններում հակաթուրքական ճակատի ժողովուրդները պետք է մի կողմ թողնեն գոյություն ունեցող մարտավարական բնույթի տարաձայնությունները եւ անհապաղ համախմբվեն, քանզի հապաղումը կարող է կործանարար լինել:

Հակաթուրքական ժողովուրդների միասնական ճակատի հաղթանա-

կի դեպքում, աշխարհի թուրքական կենտրոնի փոխարեն կստեղծվի վերը թվարկված պետությունների մի նոր կենտրոն, որը լիովին ի վիճակի կլինի դիմակայել ԱՄՆ-ի՝ ներկա փուլում իրագործվող անսանձ քաղաքականությանը: Եթե Եվրոմիությունը վերածվի ռազմաքաղաքական միասնական կենտրոնի, որի հավանականությունը շատ ավելի մեծ է, ապա աշխարհը կդառնա եռակենտրոն, որի պայմաններում ինչպես մեծ տերությունների շահադիտական ծրագրերը, այնպես էլ պանթուրքիզմի գաղափարախոսությունը կդառնան անիրականանալի:

Այսպիսով, Հայաստանը եւ Իրանը ունեն ռազմավարական եւ մարտավարական շահերի ընդհանրություն, որը ստեղծում է ամուր հիմք՝ հայ-պարսկական հարաբերությունները բարեկամական հունով տանելու համար:

Ահա թե ինչու հայ-պարսկական հարաբերությունների ապագան անխաթարելի է եւ հեռանկարային:

ԱՐԵՎՄՏՅԱՆ ԳՈՐԾՈՆ

Արեւմտյան տերությունները, որոնք օսմանյան կայսրության հզորության շրջանում լարել էին բոլոր ուժերը՝ եվրոպական քաղաքակրթությունը թուրքերից փրկելու համար, այդ վտանգը անցնելուց, Արեւելյան հարցի առաջխաղացումից հետո, լայն գործունեություն ծավալեցին Թուրքիան մասնատելու, «հիվանդ մարդու» ժառանգությանը տիրանալու համար: Արեւելյան հարցը մեծ տերությունների կողմից օգտագործվել է Թուրքիայի ներքին գործերին խառնվելու, նրանից տարածքներ գրավելու համար: Ընդ որում, մեծ տերությունները Թուրքիայի ժառանգությունից մաս ստանալու համար տարբեր քաղաքականություն էին վարում: Շատ հաճախ արեւմտյան մի տերություն Թուրքիայից զիջումներ ստանալու նպատակով խոստանում էր նրան պաշտպանել մյուս պետության նվաճողական քայլերից: Եվ նման քաղաքականությունը, որպես կանոն, դրական արդյունք էր տալիս:

Մեծ տերությունների հակասությունները թուրքերին հնարավորություն էին տալիս երկար ժամանակ փոքր կորուստների, զիջումների գնով պահպանել օսմանյան կայսրությունը:

Ներքին տարածայնություններով ու հակասություններով հանդերձ, Արեւելյան եւ նրա բաղկացուցիչ մասը հանդիսացող Հայկական հարցում մեծ տերությունները բաժանված էին երկու խմբի՝ մի կողմում արեւմտյան տերություններն էին, մյուս կողմում՝ Ռուսաստանը: Հասկանալի է, որ այս երկու հակամարտ կողմերի նվաճողական քաղաքականության եւ իրարամերժ շահերի ոլորտներում ինչպես ամբողջ Արեւելյան, այնպես էլ Հայկական հարցը դժվարին ճանապարհ ուներ անցնելու:

Ավելի ուշ, 20-րդ դարի սկզբներին ԱՄՆ-ը դարձավ արեւմտյան տերությունների դրոշակակիրը եւ մեզ հետաքրքրող ռեգիոնում ստանձնեց բոլոր հանգուցային պրոբլեմների լուծման իրավասությունը: Իսկ դա նշանակում էր, որ հանգուցալուծումներում պետք է ընդհարվեին ԱՄՆ-ի եւ Ռուսաստանի շահերը: Առաջացող տարաձայնությունների ու հակամետ շահերի ոլորտներում մյուս տերությունների դերերը վճռորոշ չէին: Թուրքիան դառնում է ԱՄՆ-ի հենարանը եւ դաշնակիցը, իսկ անկախ հռչակվելուց հետո Հայաստանը դառնում է Ռուսաստանի ստրատեգիական բազան եւ պարտնյորը:

Պատմության արդի փուլում աշխարհը դարձել է միակենտրոն, ԽՍՀՄ-ը փլուզվել է, ԱՄՆ-ը ստանձնել է միջազգային ժանդարմի դերը:

Համաշխարհային հիմնախնդիրները լուծում է ոչ թե ՄԱԿ-ը, այլ ՆԱՏՕ-ն: ԱՄՆ-ը թելադրում է իր կամքը, Եվրոպան առայժմ հանդես է գալիս ԱՄՆ-ի կամակատարի դերում: Ռուսաստանը ընդդիմադիր է, բայց՝ թույլ:

«Ամերիկան երբեք,- գրում է Բժեզինսկին,- նպատակ չի ունեցել աշխարհում իշխանությունը կիսել Ռուսաստանի հետ, եթե անգամ ցանկանար, չէր էլ կարողանա»[1]:

Այդ չի նշանակում, իհարկե, թե Ռուսաստանը հաշտվել է իր վիճակի հետ: Նա իր վճռական դերն ունի խաղալու աշխարհաքաղաքական հիմնախնդիրների լուծման գործում: Ռուսաստանը դադարելով լինել մոլորակի երկրորդ բեւեռը, բայց չի դադարել աշխարհի ուժեղագույն պետություններից մեկը լինել:

Մոլորակի աշխարհաքաղաքական զարգացումները տանում են դեպի երկբեւեռ ղեկավարության վերականգնումը՝ Ռուսաստանի մասնակցությամբ:

Իսկ մինչ այդ Հայաստանի Հանրապետությունը պետք է նկատի ունենա, որ ստեղծված իրավիճակում Թուրքիան եւ Ադրբեջանը հանդիսանում են ԱՄՆ-ի ստրատեգիական դաշնակիցները:

Հետեւաբար, Հայկական հարցի լուծումը ստրատեգիական առումով առնչվում է միայն Ռուսաստանի հետ:

Ելնելով վերոհիշյալից, եվրոպական տերությունները հայ ժողովրդի ընթացիկ հարցերում կարող են միայն «բարերարի» դեր կատարել, սակայն, պատմական հիմնախնդիրների հարցերում, ելնելով սեփական ազգային շահերից, Հայաստանի կողքին կարող է լինել միայն Ռուսաստանը:

Այսպիսին է արեւմտյան գործոնի դերը հայոց ազգային գաղափարախոսության մեջ:

1. *Збигнев Бжезинский. Великая шахматная доска, М.1999, стр.123.*

«ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՐՑԻ» ԳՈՐԾՈՆԸ. ՍԵՎՐ ԵՎ ԼՈՋԱՆ

1683 թվականին Վիեննայի անհաջող պաշարումով ավարտվում է Օսմանյան կայսրության վերելքի ժամանակաշրջանը եւ սկսվում՝ Թուրքիայի ռազմական հզորության մայրամուտը:

Օսմանյան կայսրության նվաճած ժողովուրդները ազգային-ազատագրական պայքարի դուրս եկան թուրքական լծից ազատագրվելու, իրենց հայրենիքներում ազգային անկախ պետականության վերականգնման համար:

Մեկը մյուսի ետեւից պարտություն կրող եւ արագորեն թուլացող Օսմանյան կայսրությունը միջազգային դիվանագիտության մեջ ստացավ «հիվանդ մարդ» անվանումը:

Առաջացավ Արեւելյան հարցը՝ որպես Օսմանյան կայսրության նվաճած ժողովուրդների ազատագրության հարց: Հենց այդ պատճառով էլ Հայկական հարցը համարվում է Արեւելյան հարցի բաղկացուցիչ մասը:

Արեւմտյան տերությունները եւ Ռուսաստանը ակտիվ գործունեություն ծավալեցին Արեւելյան հարցի լուծման գործում, «հիվանդ մարդու»՝ Օսմանյան կայսրության ժառանգությունը մասնատելու, բաժանբաժան անելու եւ ինչքան կարելի է շատ բան կորզելու համար: Թուրքիայի նվաճած ժողովուրդների ազատագրական պայքարը, մեծ տերությունների հակասությունները կայսրության տարածքների բաժանման հարցում առաջացրին ռազմական, դիվանագիտական, քաղաքական ու տնտեսական հիմնահարցերի մի ամբողջ համակարգ, որը դարձավ 17-րդ դարի վերջի եւ 18-19-րդ դարերի գրեթե բոլոր հիմնական իրադարձությունների առանցքը:

Սան-Ստեֆանոյում եւ Բեռլինի կոնգրեսում Հայկական հարցը միջազգայնացվեց: Հայկական հարցի միջազգայնացումը ուներ եւ դրական, եւ բացասական կողմեր: Եթե մի կողմից դրական պետք է դիտել Հայկական հարցի միջազգայնացումը, որով նա դադարում էր Թուրքիայի ներքին հարց լինելուց, ապա մյուս կողմից էլ խիստ բացասական էր այն հանգամանքը, որ Հայկական հարցը խճճվեց մեծ տերությունների տարածայնությունների ու շահերի բախման բազմաթալ ոլորտներում:

Արեւելյան հարցը, համաձայն արեւմտյան պատմագրության, լուծվել է 1923 թվականին՝ Լոզանի կոնֆերանսով եւ Թուրքիայի Հանրապետության հռչակմամբ:

Այդ տեսակետը, սակայն, գիտական առումով չի կարելի ճիշտ համա-

րել: Արեւելյան հարցը լուծված են համարում իրար հետ լեզու գտած Մեծ տերությունները եւ Թուրքիան: Բայց չէ՞ որ 1920 թ. օգոստոսին հենց այդ նույն Մեծ տերությունները Արեւելյան հարցի լուծում էին համարում Սեւրի պայմանագիրը: Իսկ Սեւրը մնաց թղթի վրա: Հետեւաբար, չլուծվեց նաեւ Արեւելյան հարցը:

Ի վերջո, եթե չեն լուծվել հայկական, հունական եւ քրդական հարցերը, ինչպե՞ս կարելի է Արեւելյան հարցը լուծված համարել:

Ն. Բերդյաեւը Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին գրում էր.

«Եթե այս անօրինակ պատերազմը չլուծի Արեւելյան հարցը, ապա մարդկությանը կսպառնան նոր, սարսափելի պատերազմներ: Հաճախ Status quo-ի պահպանումը նշանակում է պահպանել հրաբուխը, որը վաղ թե ուշ լավա է ժայթքելու»[1]:

Հայկական, հունական եւ քրդական հարցերը ցնցել են, ցնցում են եւ դեռ կցնցեն համայն աշխարհը՝ հիշեցնելով մարդկությանը, որ Արեւելյան հարցը լուծված չէ: Գնալով ավելի ու ավելի մեծ ծավալ է ստանում թուրք-քրդական պատերազմը: Թուրք-հունական պատերազմը հասունացած է եւ կարող է պայթել ցանկացած պահի: Լեռնային Ղարաբաղի պատերազմը Ադրբեջանի դեմ դեռեւս ավարտված չէ: Ադրբեջանին աջակցում է Թուրքիան: Շուրջ 10 տարի աշխարհը ցնցվում էր հայկական ահաբեկչությունից: Այս բոլոր իրադարձությունների ակունքները սկիզբ են առնում Արեւելյան հարցից:

Ահա թե ինչու հակաթուրքական ժողովուրդների դաշինքի հարցը գտնվում է օրակարգում եւ զարգացման մեծ հեռանկարներ ունի: Իսկ այդ դաշինքը, բնականաբար, սերտորեն առնչվում է մեծ տերությունների քաղաքականության, բլոկների եւ կողմնորոշումների հետ:

Ահա պրոբլեմների մի համակարգ, որը կարեւորագույն խնդիրներ է դնում հայերի, հույների եւ քրդերի առաջ: Այդ ժողովուրդների ապագան, ճակատագիրը հիմնականում կախված է այն բանից, թե նրանք ինչպե՞ս են լուծելու պատմության կողմից ժառանգություն ստացած այդ բախտորոշ հիմնախնդիրները:

Այսպիսով, Արեւելյան հարցը լուծված չէ, նրանից մնացած հիմնախնդիրները գտնվում են պատմության օրակարգում եւ չեն կարող իրենց լուծումը չգտնել:

Վերոհիշյալ հիմնախնդիրները մեծ ազդեցություն են թողել եւ դեռ կթողնեն հայոց ազգային գաղափարախոսության մարտավարության ձեւավորման եւ զարգացման ընթացքի վրա:

1. Николай Бердяев. Судьба России. Опыты по психологии войны и национальности. М.1990. стр.201.

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ՝ ԵՐԿՐՈՐԴ ԳԼԽԻ

Հայոց ազգային գաղափարախոսության ձեւավորման աշխարհաքաղաքական գործոնների եւ հատկապես թուրքերի ազգային գաղափարախոսության՝ պանթուրքիզմի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Հայկական լեռնաշխարհը նվաճելուց հետո թուրքերը վարել են հայ ժողովրդին ոչնչացնելու, հայոց հայրենիքը սեփականացնելու քաղաքականություն:

Հայ ժողովուրդը կամ պետք է ոչնչացվեր, կամ պետք է հեռանար սեփական երկրից, կամ էլ զենքը ձեռքին պայքարեր թուրքական տիրապետությունից ազատագրվելու համար: Հայ ժողովուրդը ազատագրական պայքարի դուրս եկավ թուրքական նվաճողների դեմ: Թուրքերը հայ ժողովրդին այլընտրանք չէին թողել:

Աշխատանքում քննարկված մյուս աշխարհաքաղաքական գործոնները հայերի համար բարենպաստ չեն եղել, բացառությամբ ռուսական գործոնի: Համաձայն հայոց ազգային գաղափարախոսության, հայերի բոլոր ռազմավարական ծրագրերի իրականացումը սերտորեն առնչված է Ռուսաց ազգային գաղափարախոսության հիմնախնդիրների իրականացման հետ: Այդ պատճառով էլ հայ ժողովուրդը իր ճակատագիրը պետք է կապի Ռուսաստանի հետ, անկախ այն բանից, թե ինչ գույն ու ռեժիմ ունի այդ երկիրը:

Ահա այս գաղափարախոսությունների ու գործոնների ազդեցության պայմաններում էլ ձեւավորվել ու զարգացել է հայոց ազգային գաղափարախոսությունը:

ԵՐՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՄԱՐՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՈՒՂԻՆԵՐՈՒՄ

Առաջին փուլ. ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆՈՒՄԻՑ ՄԻՆՉԵՎ ԲԵՌԼԻՆԻ ԿՈՆԳՐԵՍԸ: ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՄԱՐՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐԻ ՈՐՈՆՈՒՄՆԵՐԸ. ՌՈՒՍԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ԵՎ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՋԻՆՎԱԾ ՊԱՅՔԱՐԻ ԿԱՐԳԱԽՈՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ: ՉԱՐՅԱՅ ՓՈՔՐԱԳՈՒՅՆԻ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹԸ:

Եվ այսպես. պատմությունը Օրակարգ մտցրեց հայ ժողովրդի լինել-չլինելու հարցը:

Ստեղծվել էր հզոր Օսմանյան կայսրությունը: Հայոց Հայրենիքը նվաճված էր թուրքերի կողմից: Հայոց Հայրենիքը հռչակվել էր թուրքերի հայրենիք: Ձեւավորվում էր Փոքր Ասիան եւ Հայկական լեռնաշխարհը նվաճած եւ այնտեղ նստակյաց կյանքի անցած թուրքական ցեղերի ազգային գաղափարախոսությունը, որի հիմնական նպատակը նվաճված տարածքներում թուրքական հայրենիքի ստեղծումն էր: Թուրքերի ազգային գաղափարախոսության իրականացման համար պետք է ոչնչացվեր այդ նվաճված հայրենիքի տերը՝ հայ ժողովուրդը, որը կամ պետք է ձուլվեր, կամ արտագաղթեր, կամ էլ ֆիզիկապես ոչնչացվեր:

Այսպիսով, հանուն թուրք ժողովրդի նոր հայրենիքի ձեռքբերման, հանուն այդ տարածքում թուրքական ազգային պետականության ստեղծման, հանուն Մեծ Թուրանի համաթուրքական պետության ստեղծման պետք է ոչնչացվեր ամբողջ հայ ժողովուրդը եւ Հայաստանը:

Պատմությունը խաչաձեւեց թուրքերի եւ հայերի ազգային շահերը: Հայոց պատմական հայրենիքում կամ թուրքերը պետք է կառուցեն իրենց ազգային պետականությունը, կամ էլ հայերը պետք է վերականգ-

նեին իրենց կորցրած պետականությունը: Պատմությունը հարցը դրել էր անողոք. հայոց պատմական Հայրենիքում պետք է ապրեր մեկը՝ կամ հայը, կամ թուրքը: Երրորդ ուղին թուրքերը բացառեցին:

Ստեղծված պատմական դաժան պայմաններում միամտություն էր խոսել թուրքերի հետ լեզու գտնելու, հայ ժողովրդի առջեւ ծառացած խնդիրները՝ հայոց Հայրենիքի ազատագրության, հայ պետականության վերականգնման հիմնահարցերը Օսմանյան կայսրության հետ խաղաղ լուծելու հնարավորության մասին:

Թուրքերի եւ հայերի միջեւ հաշտության եզրեր չկային: Հայ ժողովուրդը կամ պետք է կռվեր Հայրենիքի համար, կամ էլ հեռանար օտար երկրներ, որտեղ նա դատապարտված էր սպիտակ եղեռնի:

Պատմական նման ծանր ու պատասխանատու պայմաններում հայ ժողովրդի ազգային-քաղաքական միտքը պետք է մշակեր ազգային գաղափարախոսության նոր սկզբունքներ, անկախության համար մղվող պայքարի նոր մարտավարություն՝ ազգային նոր ծրագիր:

Ազգային գաղափարախոսության նոր մարտավարության մշակման ճանապարհին եղան եւ սխալներ, եւ վրիպումներ, բայց ի վերջո հաղթանակեց ժողովրդի պատմական իմաստությունը: Հայ ժողովուրդը ընտրեց իր Հայրենիքի ազատագրման պայքարի ուղին:

Սույն ուսումնասիրության մեջ մենք նպատակ ենք դնում վերլուծելու հայոց ազգային գաղափարախոսության միայն արդի փուլի մարտավարությունը, որը սկսել է ձեւավորվել Օսմանյան կայսրության ստեղծումից: Տեսնենք, թե որո՞նք են Հայոց ազգային գաղափարախոսության նոր մարտավարության սկզբունքները:

Նախ նշենք, որ հայոց ազգային գաղափարախոսության պատմությունը բաժանվում է մի քանի հիմնական փուլերի: Ընդ որում, ազգային գաղափարախոսության ռազմավարությունը պատմության բոլոր փուլերում էլ ունեցել է նույն բովանդակությունը՝ իր հիմքում ունենալով ազգի, հայրենիքի եւ պետականության գաղափարները:

Առնչված Հայաստանի ներքին եւ արտաքին մշտապես փոփոխվող գործոնների հետ՝ հայոց ազգային գաղափարախոսությունը հայ ժողովրդի պատմության տարբեր փուլերում իրականացրել է տարբեր մարտավարություններ:

Հայոց ազգային գաղափարախոսության նոր մարտավարության առանցքային հիմնախնդիրը հայոց Հայրենիքի ազատագրումն էր, անկախ պետականության վերականգնումը՝ ազգային-ազատագրական պայքարի միջոցով:

Հայոց պատմության մեջ ազգի գոյապահպանման, Հայրենիքի ազատագրության եւ անկախ պետականության վերականգնման համար մղած դարավոր պայքարը մտել է Հայկական հարց, Հայ Դատ եւ Պա-

հանջատիրություն անուններով: Կորցրած հայրենիքի ամեն մի մասի ազատագրման համար մղվող պայքարը Հայկական հարցի պատմության բաղկացուցիչ մասն է կազմում:

Եթե ազգի, Հայրենիքի, պետության եւ մշակույթի գաղափարները ազգային գաղափարախոսության հիմնադրույթներն են, ապա դա նշանակում է, որ Հայոց ազգային գաղափարախոսությունը եւ Հայկական հարցը գրեթե նույն բովանդակությունն ունեն:

Հետեւաբար, Հայկական հարցը Հայոց ազգային գաղափարախոսության հիմքն է ու բովանդակությունը:

Ազատագրական պայքարի նոր մարտավարությունը պետք է պատասխան տար նաեւ հետեւյալ հարցերին՝ ինչպե՞ս պետք է կազմակերպել տարբեր պետությունների տիրապետության տակ գտնվող մասնատված Հայաստանի տարածքների ազատագրումը, ազգային պայքարը ինչպիսի՞ բնույթ պետք է ունենա՝ զինվա՞ծ, թե՞ խաղաղ, Հայաստանը մենա՞կ պետք է պայքարի թուրքական լծից ազատագրվելու համար, թե՞ պետք է ձեռք բերի դաշնակիցներ, եթե հայկական հարցը պետք է լուծվեր դաշնակիցների օգնությամբ, ապա պետք է որոշվեր, թե ով է լինելու հայ ժողովրդի դաշնակիցը, ինչպիսի օրիենտացիա պետք է ունենա հայ ժողովուրդը:

Հիմնահարցերի այս խումբը, բնականաբար, միանգամից չլուծվեց: Հայ ազատագրական միտքը երկար ժամանակ գտնվում էր որոնումների մեջ:

Հայ ազատագրական շարժման դրոշակակիրները սկզբնական շրջանում հույս ունեին սեփական ուժերի եւ արեւմտյան երկրների դիվանագիտության կամ էլ զինուժի օգնությամբ ազատագրել Հայաստանը: Սակայն, երկարատեւ, անարդյունք փորձերից հետո հուսախաբվելով Արեւմտյան Եվրոպայից, նրանք ի վերջո հանգեցին ռուսական կողմնորոշման: Այդ քաղաքականության հիմքը դրել է Իսրայել Օրին:

Այսպիսով, հայոց ազգային գաղափարախոսության հիմնադրույթներից մեկը՝ հայ ժողովրդի ռուսական կողմնորոշման քաղաքականությունը, սկսել է կյանքի կոչվել 1701 թվականից: Հայոց ազգային գաղափարախոսության այդ հիմնադրույթը ելնում էր ինչպես ռուս, այնպես էլ հայ ժողովրդի ռազմավարական շահերից:

Ազատագրական պայքարի դժվարին պրոցեսում մշակվեց «Չարյաց փոքրագույնի» կոնցեպցիան, որի համաձայն, հայոց անկախությունը պետք է ձեռք բերվեր սեփական ուժերի եւ Ռուսաստանի աջակցությամբ: Անկախության համար բարենպաստ պայմանների բացակայության դեպքում, նոր մարտավարության համաձայն, անհրաժեշտ էր համարվում պայքարել Ռուսաստանի տիրապետության տակ գտնվելու, քան թե Թուրքիայի, քանզի եթե առաջինը նշանակում էր լոկ պետակա-

նության կորուստ, ապա երկրորդը հանգեցնում էր հայ ժողովրդի ոչնչացմանը: Ընդ որում, հայ քաղաքական մտքի ղեկավարները այս կարեւորագույն հիմնահարցը լուծելիս լիովին պատկերացնում էին Ռուսաստանի գաղութային, նվաճողական ծրագրերը՝ Հայաստանի համար իր բոլոր բացասական հետեւանքներով:

«Կողմնորոշում» բառը չի արտահայտում այն քաղաքականությունը, որ վարում էր հայոց ազատագրական պայքարի ղեկավարությունը: Կողմնորոշումը այն դեպքերում է միայն որպես այդպիսին բնութագրվում, եթե միանգամայն ազատ պայմաններում որեւէ փոքրաթիվ ժողովուրդ, ելնելով իր ազգային շահերից, որոշում է քաղաքական եւ տնտեսական դաշնակցային կապերի մեջ մտնել այս կամ այն մեծ տերության հետ: Սակայն, հայ ժողովրդի պատմական իրավիճակը բոլորովին այլ էր: Նա ազատ չէր բարեկամներ կամ դաշնակիցներ ընտրելու գործում: Ժողովուրդները երբեք աբստրակտ կողմնորոշումներ չեն ունենում: Կողմնորոշումների հիմքում, որպես կանոն, ընկած են լինում ազգային շահերը: Իսկ ազգային շահերը տարբեր էպոխաներում կարող են առնչվել տարբեր պետությունների հետ: Հայ ժողովուրդը եւս իր պատմության տարբեր շրջաններում տարբեր կողմնորոշումներ է ունեցել: Պատմության մեջ ոչ մի պետություն առանց շահի արյուն չի թափել մի այլ ժողովրդի ազատագրելու համար: Սա է ճշմարտությունը: Կողմնորոշման հիմքում ընկած է լինում երկու ժողովուրդների կամ պետությունների շահերի ընդհանրությունը:

Տվյալ ժամանակաշրջանում Ռուսաստանի եւ հայ ժողովրդի միջեւ գոյություն ուներ ազգային, պետական շահերի ընդհանրություն: Ցարական կայսրությունը՝ հայ քրիստոնյա ժողովրդին ազատագրելու տակտիկական կարգախոսով իրագործում էր նոր տարածքներ նվաճելու՝ իր ստրատեգիական ծրագրերը: Իսկ հայ ժողովուրդը ֆիզիկական ոչնչացման վտանգից ազատվելու տակտիկական խնդրից ելնելով, համաձայն էր ժամանակավորապես լինելու Ռուսաստանի տիրապետության տակ՝ ավելի բարենպաստ պայմաններում անկախ եւ միացյալ Հայաստանի ստրատեգիական կարգախոսի իրականացման համար պայքար ծավալելու նպատակով: Աշխարհում փոքր պետությունների համար բացարձակ անկախություն չկա, անկախությունը միշտ էլ հարաբերական բնույթ է կրել: Այս տարրական ճշմարտությունը չպետք է շփոթել այն անառարկելի թեզի հետ, որ յուրաքանչյուր փոքրաթիվ ժողովուրդ իր փրկության հույսը առաջին հերթին պետք է կապի սեփական ուժերի հետ:

«Չարյաց փոքրագույնի» կոնցեպցիան, ինչպես ցույց տվեցին հետագա իրադարձությունները, իրատեսական բնույթ ուներ, ելնում էր հայ ժողովրդի ազգային շահերից եւ արդյունք էր հայ ազատագրական

մտքի հեռատես քաղաքականության:

Ավելի ուշ, երբ հրապարակ եկավ պանթուրքիզմի գաղափարախոսությունը, Ռուսական եւ Օսմանյան կայսրությունները դարձան անհաշտելի թշնամիներ: Հզոր Ռուսական կայսրության գոյությունը խանգարելու էր Մեծ Թուրանի պանթուրքական ծրագրի իրականացմանը, քանզի թուրանական պետության ստեղծումով անդամահատվում էր Ռուսական կայսրությունը: Ահա թե ինչու Ռուսաստանը եւ Թուրքիան ստրատեգիական առումով հավերժ թշնամիներ են՝ իրարամերժ ազգային գաղափարախոսություններով, ահա թե ինչու հայ ժողովուրդը իր քաղաքական կողմնորոշումը միշտ պետք է կապած ունենա Ռուսաստանի հետ, անկախ այն բանից, թե ինչ գույն ու ռեժիմ կունենա այդ երկիրը:

Ծանրանանք մի չափազանց կարեւոր երեւույթի վրա եւս: Հայկական պետության եւ մամուլի զանգվածային միջոցների բացակայության պայմաններում ազգային գաղափարախոսության նոր մարտավարության սկզբունքները չէին կարող լայնորեն պրոպագանդվել ամբողջ Հայաստանում՝ հասնելով նրա յուրաքանչյուր զավակին: Սակայն, հայոց ազգային գաղափարախոսության նոր մարտավարության հիմնական յուրահատկությունն այն էր, որ նա արտահայտում էր ոչ միայն գաղափարախոսների, այլեւ ամբողջ ժողովրդի կարծիքը:

Դրանով է բացատրվում այն հանգամանքը, որ հայ ժողովուրդը մասնակցել է ռուս-թուրքական բոլոր պատերազմներին, աջակցել ռուսական զորքի հաղթանակին: Ռուսական զորքի հաղթանակի մեջ հայ ժողովուրդը տեսնում էր թուրքերից փրկվելու միակ երաշխիքը:

Հայոց ազատամարտի հիմնահարցերը քննարկելիս անհրաժեշտ է ծանրանալ մի կարեւոր հարցի վրա եւս: Հայոց ազգային գաղափարախոսության նոր մարտավարական ծրագրում ինչպե՞ս էր դրված Հայաստանի ազատագրության հարցը: Հայաստանը պետք է ազատագրվեր միանգամի՞ց, ամբողջությա՞մբ, թե՞ մաս-մաս:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ եթե հայոց ազգային գաղափարախոսության ռազմավարական ծրագրում դրված էր ամբողջ Հայաստանի ազատագրության հարցը, ապա մարտավարական ծրագրում այդ հիմնախնդիրը երկար ժամանակ հստակ չի եղել եւ գտնվել է որոնումների ոլորտում: Հայոց ազգային գաղափարախոսների ծրագրերում մենք տեսնում ենք թե՛ ամբողջ Հայաստանի եւ թե՛ առանձին-առանձին Արեւմտյան ու Արեւելյան Հայաստանի ազատագրության հարցերը: Նման իրավիճակը շարունակվեց մինչեւ 1828 թվականը, երբ ցարական Ռուսաստանը նվաճեց Արեւելյան Հայաստանը:

Ռուսաստանի կողմից Արեւելյան Հայաստանը նվաճվելուց հետո, երբ արեւելյահայության ֆիզիկական գոյությանը այլեւս վտանգ չէր սպառնում, հայ ազատամարտի ղեկավարները եկան այն եզրակացության, որ հիմնական ուշադրությունը պետք է դարձնել Արեւմտյան Հայաստանի ազատագրությանը, որտեղ հայկական բնակչության ծրագրավորված ոչնչացում էր տեղի ունենում:

Քննարկվող պրոբլեմը թույլ է տալիս հանգել հետեւյալ եզրահանգումներին.

1. Հայոց ազգային գաղափարախոսության առանցքը, ազատագրական պայքարի նպատակը եղել է ամբողջ Հայաստանի ազատագրումը, անկախ պետականության վերականգնումը:
2. Մարտավարական ծրագրի առանցքը երկար որոնումներից հետո դարձավ այն դրույթը, որ ազգային-ազատագրական պայքարում հայ ժողովուրդը պետք է ունենա ռուսական օրիենտացիա, դաշնակցի Ռուսաստանի հետ:
3. Հայ ժողովրդի ազատագրական պայքարը մինչեւ Բեռլինի կոնգրեսը քաղաքական-դիվանագիտական բնույթ է կրել: Հայ պետականության վերականգնման հույսը հիմնականում կապվել է դրսի ուժի հետ:
4. Սակայն, Դավիթ Բեկի ապստամբությունը Արցախում եւ Սյունիքում, Զեյթունի 1862 թվականի ապստամբությունը ցույց տվեցին, որ հայ ժողովուրդը միասնական կարծիք չունի Հայաստանի ազատագրության ուղիների հարցում: Փաստորեն, նույն ժամանակահատվածում մենք տեսնում ենք ազատագրական պայքարի ուղիների երկու տարբերակ՝ խաղաղ եւ զինված:
5. 1878 թվականի Բեռլինի կոնգրեսից հետո, որտեղ Հայկական հարցը միջազգայնացվեց, հայ ազատագրական պայքարի ծրագրում տեղի ունեցավ արմատական փոփոխություն: Հայոց ազատամարտի ղեկավարները հայ ժողովրդին կոչ էին անում զինված պայքարով, զինված ապստամբությամբ իրականացնել Հայաստանի ազատագրության գործը:

Հայոց ազգային գաղափարախոսության մարտավարական ծրագրում կատարվեց լուրջ փոփոխություն: Օրակարգի մեջ մտավ զինված պայքարի միջոցով Հայաստանի ազատագրության խնդիրը:

Այսպիսով, հայոց ազգային գաղափարախոսության մարտավարական ծրագիրը քննարկվող ժամանակաշրջանում Հայաստանի ազատագրության ուղիների երեք փուլ է ունեցել.

ա) Ազատագրվել արեւմտյան տերությունների աջակցությամբ:

բ) Ազատագրվել Ռուսաստանի աջակցությամբ:

գ) Ազատագրվել սեփական ուժերով, զինված պայքարով, չբացառելով արտաքին օգնությունը:

Ամփոփենք քննարկվող նյութը: Ինչպես տեսնում ենք, ուսումնասիրվող ժամանակահատվածում հայոց ազատամարտի ղեկավարները՝

հայոց մեծերը, դժվարին պայմաններում մշակեցին եւ գործունեության մեջ մտցրին ազգային գաղափարախոսության նոր մարտավարական ծրագիր: Այդ ծրագիրը ելնում էր հայ ժողովրդի շահերից, գիտականորեն խորապես հիմնավորված էր եւ հենված էր աշխարհաքաղաքական բոլոր գործոնների բազմակողմանի ուսումնասիրության վրա:

Խոսքը վերաբերվում է, իհարկե, նոր մարտավարության հիմնադրույթներին: Պարզ է նաեւ, որ նոր մարտավարության առանձին դրույթներ, գործոններ, գործնական մոտեցումներ՝ դեպքերի զարգացմանը զուգընթաց կարիք ունեին հետագա ճշգրտման եւ հստակեցման:

Երկրորդ փուլ. ԲԵՌԼԻՆԻ ԿՈՆԳՐԵՍ- ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Ազգային գաղափարախոսությունը եւ հայ ազգային կուսակցությունները: Ազգային գաղափարախոսության նոր մարտավարության հիմնախնդիրները հայ ազգային կուսակցությունների ծրագրերում եւ գործունեության մեջ:

Ազգային գաղափարախոսության նոր մարտավարական ծրագրի ձեւավորումը: Ազգային գաղափարախոսությունը՝ ամբողջ հայ ժողովրդի պաշտոնական գաղափարախոսություն: Ազգային գաղափարախոսությունը՝ պետական գաղափարախոսություն:

Հայոց ազատամարտի ղեկավարները, ազգային գաղափարախոսները առանձին-առանձին մշակելով ազգային գաղափարախոսության նոր մարտավարական ծրագրի հիմնադրույթները, չկարողացան, սակայն, ստեղծել համազգային ազատագրական շարժման միասնական ղեկավարություն, ազատագրական շարժման մեկ միասնական՝ բոլորի կողմից ընդունելություն գտած ազգային գաղափարախոսության մարտավարական ծրագիր: Այդ խնդիրը ժամանակի ծանր պայմաններում հնարավոր չեղավ իրականացնել: Նման խնդիր իրականացնելու համար նոր տիպի կազմակերպություններ էին պետք:

Ազգային գաղափարախոսության դրոշը վերցնելու, հայկական հարցի լուծման համար մղվող պայքարը ղեկավարելու համար կյանքի են կոչվում հայ ազգային-քաղաքական կուսակցությունները:

1885 թ. ստեղծվել է Արմենական կուսակցությունը, 1887 թ.՝ Ս. Դ. Հնչակյան կուսակցությունը, իսկ 1890 թ.՝ Հ.Հ. Դաշնակցությունը:

Պետություն չունեցող ժողովուրդների ազգային գաղափարախոսության դրոշը որպես կանոն տանում են եկեղեցին, ազգային կազմակերպությունները կամ էլ ազգային կուսակցությունները:

Հայ ազգային կուսակցությունները կյանքի էին կոչվել Ազգային գաղափարախոսության հրամայականով: Եվ պատահական չէ, որ հայոց ազգային գաղափարախոսությունը դարձավ այդ կուսակցությունների պաշտոնական գաղափարախոսությունը: Հայ ազգային կուսակցութ-

յունները իրենց նվիրեցին ազգային գաղափարախոսության հիմնադրույթների հստակեցման եւ իրականացման համար մղվող պայքարին: Հայ ազգային կուսակցությունների ծրագրերում ազգային գաղափարախոսության հիմնադրույթները առանձնահատուկ տեղ են գրավում եւ փաստորեն դրանց առանցքն են կազմում:

Երեք կուսակցություններն էլ իրենց հիմնական նպատակն էին համարում հայոց հայրենիքի ազատագրումը եւ անկախ պետականության վերականգնումը:

Թվում էր, թե ելակետային հիմնական խնդիրների շուրջը միասնական կարծիքի առկայությունը պետք է հիմք հանդիսանար ազգային գաղափարախոսության մարտավարական նոր ծրագիրը ավելի կուռ եւ հստակ դարձնելու, ազգային ազատագրական պայքարի միասնական ղեկավարություն ստեղծելու համար:

Վիճելի չէ այն թեզը, որ ոչ մի ազատագրական պայքար, հեղափոխություն թե ապստամբություն, երբեք չի կարող հաղթանակել, եթե նա չունի միասնական ղեկավարություն եւ մարտավարական ծրագիր:

Դեպքերի ընթացքը ցույց տվեց, սակայն, որ հայ քաղաքական կուսակցությունների պատկերացումները եւ մոտեցումները ազատագրական պայքարի հարցերին շատ բաներով տարբերվում են: Նկատի ունենանք նաեւ, որ Հնչակը սոցիալ-դեմոկրատական կուսակցություն էր, իսկ Արմենականները եւ Դաշնակցությունը՝ առանց սոցիալական դավանանքի ազգային կուսակցություններ: Դաշնակցությունը ավելի ուշ ընդունում է սոցիալիզմի դավանանքը: Այնուհետեւ, Դաշնակցությունը եւ Հնչակը համահայկական կուսակցություններ էին, իսկ Արմենականները՝ արեւմտահայ:

Անհրաժեշտ էր հաղթահարել օբյեկտիվ եւ սուբյեկտիվ բնույթի տարաձայնությունները՝ ազատագրական պայքարի միասնական ճակատ, միասնական ղեկավարություն եւ մարտավարական ծրագիր ստեղծելու համար:

Այժմ տեսնենք, թե յուրաքանչյուր կուսակցություն ինչպիսի մարտավարական ծրագիր էր մշակել եւ ինչպես էր ցանկանում լուծել Ազգային գաղափարախոսության հիմնախնդիրը:

ԱՐՄԵՆԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ

Արմենական կուսակցությունը հանդես եկավ միանգամայն ուրույն ծրագրով, որը արմատապես տարբերվում էր մյուս երկու կուսակցությունների ծրագրերից:

Արմենական կուսակցության նպատակն էր «Հեղափոխությամբ Թուրքիայի հայ ժողովրդի համար իրավունք ձեռք բերել ինքզինք ազատորեն կառավարելու»[1]: Արմենական կուսակցությունն իր խնդիրն էր համարում հեղափոխության միջոցով Արեւմտյան Հայաստանի ազատագրումը:

Արեւմտյան Հայաստանի ազատագրման մարտավարական ծրագրի կարեւորագույն հիմնախնդիրներից մեկն այն էր, թե ինչպիսի վերաբերմունք պետք է ցույց տալ Օսմանյան Թուրքիայի նվաճած ժողովուրդների հետ ազատագրական պայքարի միասնական ճակատ կազմելու հարցին: Այլ խոսքով, պետք է պատասխան տրվեր այն հարցին, թե կարո՞ղ է արդյոք արեւմտահայությունը ազատագրվել թուրքական լծից միայն իր ուժերով, թե՞ պետք է ստեղծվի թուրքերի կողմից նվաճված ժողովուրդների միասնական ճակատ:

Արմենական կուսակցությունը մերժեց այլացեղ ժողովուրդների հետ դաշինքի ստեղծման հնարավորությունը, իր ծրագրում ամրագրելով հետեւյալ դրույթը, որ «Իր ջանքերը կամփոփե հայ ազգի այլեւայլ մասերի մեջ, առանց դավանանքի խտրության. իր ուժերը չի ցրուեր դրացի ազգերի մեջ հեղափոխական շարժումներ առաջ բերելու, նկատելով, որ հայ ազգի եւ մյուս ցեղերի մեջ զգացման, աշխարհայեցողության, պահանջների եւ զարգացման մեծ տարբերություններ կան, որով հայ ազգի հեղափոխական շարժումը կարող է դանդաղել եւ կնճռոտել»[2]:

Արմենականները մերժեցին նաեւ թուրքական ընդդիմադիր ուժերի հետ դաշնակցելու գաղափարը:

Եվ այսպես, հայ անդրանիկ քաղաքական կուսակցությունը մերժեց նվաճված ժողովուրդների միասնական ճակատի ստեղծման անհրաժեշտությունը եւ թուրքական ընդդիմադիր ուժերի հետ դաշնակցելու գաղափարը:

Արմենականների մարտավարության հարցերը քննարկելիս անհրաժեշտ է ուշադրություն դարձնել մի կարեւոր հանգամանքի վրա եւս, որը չի կարող ազդեցություն չթողնել ազատագրական պայքարի ընթացքի վրա:

Հեղափոխության համար Արմենականները անհրաժեշտ են համարում.

ա) ժողովրդին գիտակրթության եւ կարգապահության վարժեցնել, զենք եւ դրամ հայթայթել, գինվորական խմբեր պատրաստել, բ) ժողովրդին հեղափոխական գրականությամբ դաստիարակել, արթնացնել, գ) ժողովրդին «ընդհանուր շարժման պատրաստել, երբ մանավանդ արտաքին հանգամանքներ ալ - օտար պետությունների եւ շրջա-

1. Ծրագիր Արմենական կուսակցության, տես Հուշեր Արմենակ Եկարյանի, Պեյրութ. 1985, էջ. 248:
2. Նույն տեղում, էջ 248:

կա ցեղերի տրամադրությունները - մեզ նպաստավոր համարուին»[1]:

Արմենականները միաժամանակ իրենց ծրագրում նշում են, որ մինչեւ հեղափոխության, ընդհանուր շարժման պատրաստ լինելը «Սասնակի եւ տկար շարժումները, ցույց (բացառիկ հանգամանքներե դուրս) ինչպես եւ անժամանակ ոգեւորությունը միջոց չեն համարուիր, ընդհակառակն վնասակար կը նկատուին, որովհետեւ մեկ կողմանե հեղափոխական ուժերը կը վատնեն եւ մյուս կողմանե հոռետեսություն կը ծավալեն ժողովրդի մեջ»[2]:

Այս թեզով Արմենականները հայտարարում էին, որ իրենք ազատագրական պայքարին մասնակցելու են միայն այն ժամանակ, երբ համոզված կլինեն, որ հեղափոխությունը արդեն հասունացել է, եւ ժողովուրդը պատրաստ է զենքը ձեռքին դուրս գալ ռազմի դաշտ: Իսկ դա գործնականում նշանակում էր, որ Հնչակ եւ Դաշնակցություն կուսակցությունները, որոնք անմիջապես պայքարի դրոշ պարզեցին, մենակ են գործելու:

ՀՆՉԱԿՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ

Հնչակը հայ իրականության առաջին ազգային սոցիալ-դեմոկրատական մարքսիստական կուսակցությունն է:

Ազգային գաղափարախոսությունը դարձավ Հնչակյան կուսակցության պաշտոնական գաղափարախոսությունը: Ազգային գաղափարախոսության հիմնադրույթները ընկան Հնչակյան կուսակցության ծրագրի հիմքում:

Հնչակյան կուսակցության ծրագիրը ուներ հեռավոր եւ մոտակա նպատակներ: Կուսակցության հեռավոր նպատակն էր՝ «սոցիալիստական հասարակական կազմակերպության իրագործումը հայության մեջ»[3]:

Մոտակա նպատակը՝ «Կռիվ մղել միապետական կարգերը տապալելու համար եւ նրանք փոխարինելու հանրային ռամկավարական սահմանադրական կարգերով»[4]:

Համաձայն Հնչակյան կուսակցության ծրագրի, պետք է ազատագրվեր հայոց ամբողջ հայրենիքը, ստեղծվեր հայկական անկախ եւ միացյալ հանրապետություն, որի մեջ պետք է մտնեին Թուրքահայաստանը, Ռուսահայաստանը եւ Պարսկահայաստանը:

1. Նույն տեղում, էջ 248-249:
2. Նույն տեղում, էջ 249:
3. Ծրագիր Հնչակեան կուսակցության, տես Յիսնամեակ-1887-1937-Սոցիալ. Դեմոկրատ Հնչակեան կուսակցության, Փրովիդենս, 1938, էջ 37:
4. Նույն տեղում, էջ 37:

Հայկական հարցի լուծումը կազմում էր Հնչակյան կուսակցության ծրագրի առանցքը:

Սակայն, մինչեւ համահայկական պետության ստեղծումը, ելնելով ստեղծված ծանր իրավիճակից, Հնչակյան կուսակցությունն անհրաժեշտ էր համարում առաջին հերթին ազատագրել Արեւմտյան Հայաստանը թուրքական տիրապետությունից:

Հնչակյան կուսակցության ծրագրում այդ մասին ասվում է. «Նկատելով, որ հայության ամենաստվար մեծամասնությունը կազմում են թուրքահայերը, եւ նրանց բնակավայրերը մեր հայրենի հողի ամենամեծ տարածությունն է.

Նկատելով, որ հայության այդ մեծամասնության Դատը, Բեռլինի Դաշնագրության 61-րդ հոդվածի զորությամբ, որպես եւ այլ միջազգային պայմանագրերի զորությամբ, արդեն մտած է միջազգային իրավունքի դրական շրջանը եւ ճանաչված եվրոպական մեծ պետությունների կողմից.

Նկատելով, մյուս կողմից, որ թուրք տերության միապետական կարգերը քաղաքական, հասարակական ու տնտեսական անտանելի ճնշման են ենթարկում հայ ժողովրդին.

Նկատելով, որ ամեն տեսակետից այդ դրությունն անպայման կերպով անհնարին է դարձնում հայ ժողովրդի հասարակական-տնտեսական ու քաղաքական որեւէ առաջադիմություն, որպես նաեւ մշտական սպառնալիք ու զենք է նրա ազգային ու մարդկային գոյության դեմ....

Այդ բոլոր նկատառումների հիման վրա պատմական առաջնակարգ անհրաժեշտություն է.

1) որ հայ հեղափոխական գործունեությունն այսօր բացառապես նվիրվի թուրքահայ ժողովրդային դատի պաշտպանության ու լուծման՝ համաձայն մոտակա նպատակի.
2) որ, ուրեմն, հեղափոխական գործունեության ասպարեզն է Թուրքահայաստանը.
3) որ Հայ ժողովրդի ու Հայաստանի ճակատագիրը միանգամից ընդմիշտ պետք է զատվի թուրքական կայսրության ճակատագրից, ըստ որում, պատմական պահանջ ու անհրաժեշտություն է ներկայացնում- Հայ ազգային անկախությունը, որն էլ այդպիսով կազմում է մոտակա նպատակի մի հիմնական մասն ու առաջին պայմանը»[1]:

Հնչակյան կուսակցությունը խնդիր էր դնում Հայաստանն ազատագրել հեղափոխության, ժողովրդական ընդհանուր ապստամբության

1. Նույն տեղում, էջ 38:

միջոցով: Այդ մասին Հնչակյան կուսակցության ծրագրում ասվում է.

«Մոտակա նպատակին հասնելու միակ միջոցն է հեղափոխությունը, այսինքն՝ պետք է բռնի կերպով կերպարանափոխել, հեղաշրջել ներկա հասարակական կազմակերպությունը թուրքաց Հայաստանում. կռիվ մղելով թուրք տերության դեմ՝ ժողովրդական ընդհանուր ապստամբության միջոցով»[1]:

Այդ խնդիրը կատարելու համար Հնչակյան կուսակցությունը առաջ է քաշում գործունեության հետեւյալ միջոցները.

1) Հնչակյան գաղափարների պրոպագանդա եւ ագիտացիա: Հեղափոխական կազմակերպությունների եւ ապստամբական գնդերի ստեղծում:
2) Տեռորիստական գործունեություն, որը պետք է լինի հեղափոխական կազմակերպությունների ինքնապաշտպանության միջոց եւ հասարակությանը բռնավորներից պաշտպանելու զենք:
3) Ասպատակային գնդերի կազմակերպում՝ իբրեւ մշտական պատրաստի մարտական ուժ: Ընդհանուր ապստամբության միջոցին այդ գնդերը կարող են կատարել «առաջավոր գնդերի դեր»:
4) Ապստամբական զորագնդերի ստեղծում:
5) «Ընդհանուր ապստամբության ժամանակը- Որեւէ պատերազմ մղած այս կամ այն տերության կողմից Թուրքիայի դեմ, պետք է համարել հարմար որպէ՝ մոտակա նպատակի իրագործման համար»[2]:

Ուրեմն, համաձայն Հնչակյան կուսակցության ծրագրի, արեւմտահայությունը պետք է պատրաստվեր ընդհանուր համաժողովրդական զինված ապստամբության, մինչ այդ զինված պայքարի մեջ չմտնելով թուրքական իշխանությունների հետ: Բացառություն էր արվում միայն ահաբեկչական գործողությունների համար, մի քաղաքականություն, որը Հնչակյան կուսակցությունը ժառանգություն էր ստացել ռուս նարոդնիկներից:

Հնչակյան կուսակցությունն անդրադառնում է նաեւ Օսմանյան կայսրության լծի տակ հեծող այլ ժողովուրդների հետ համատեղ պայքարի ընդհանուր ճակատ ստեղծելու հարցերին: Կուսակցությունն անհրաժեշտ էր գտնում վաստակել հայ ժողովրդին վիճակակից Հայաստանի այլ բնակիչների՝ քրդերի եւ ասորիների համակրությունն ու աջակցությունը, համերաշխ գործակցություն հաստատել Օսմանյան կայսրության կողմից նվաճված քրիստոնյա ազգերի հեղափոխական մարմինների հետ, եթե հանգամանքները ներեն, միատեղ ապստամբել թուրք կա-

1. Նույն տեղում:
2. Նույն տեղում, էջ 39:

ռավարության դեմ:

Ընդհանուր գծերով այսպիսին էր Հնչակյան կուսակցության ծրագիրը, որը լիովին ելնում էր հայոց ազգային գաղափարախոսության հիմնադրույթներից:

Հնչակյանների ծրագիրը քննարկելիս պետք է հատուկ ուշադրություն դարձնել մի կարեւոր հիմնախնդրի եւս: Ինչպես տեսանք, Հայաստանի ազատագրության հարցում Հնչակյանների եւ Արմենականների միջեւ սկզբունքային տարբերություններ չկային: Երկու կուսակցություններն էլ այն կարծիքին էին, որ պետք է ժողովրդին պատրաստել ընդհանուր զինված ապստամբության եւ երբ առկա կլիներ հեղափոխական իրադրությունը, նոր միայն մարտահրավեր նետել թուրքական իշխանություններին:

Սակայն, հարցն այն է, որ դեռեւս չիրագործած վերը նշված միջոցառումները, ժողովրդին չպատրաստած զինված ապստամբության, Հնչակյան կուսակցությունը ժամանակից շուտ կռիվ է հայտարարում թուրքական կառավարությանը:

Ընդհանուր ժողովրդական ապստամբության ծրագրային թեզը Հնչակյան կուսակցությունը փոխարինում է լոկալ ապստամբությունների գաղափարով: Եթե առաջինի դեպքում ազատագրական պայքարը, մեր կարծիքով, կարող էր հաղթանակով ավարտվել, ապա երկրորդի դեպքում այն դատապարտված էր եւ, իրոք, հաջողությամբ չավարտվեց:

Ազատագրական պայքարի ընդհանուր հարցերը մենք կքննարկենք Դաշնակցության ծրագիրը ներկայացնելուց հետո, հայ երեք ազգային կուսակցությունների ծրագրային հիմնադրույթների համեմատության հիման վրա:

ՀԱՅ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ

1892 թվականին Դաշնակցության առաջին համագումարը ընդունում է կուսակցության առաջին ծրագիրը: Դաշնակցության առաջին ծրագրի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ կուսակցությունը պատմական ասպարեզ է մտնում որպես ազատագրական կուսակցություն, որը կյանքի էր կոչվել Հայկական հարցի լուծման համար մղվող պայքարը ղեկավարելու, Հայկական հարցը լուծելու համար: Դաշնակցությունը ազգային կուսակցություն էր, նրա ծրագրի հիմքում դրված էին ազգային գաղափարախոսության հիմնադրույթները:

Ազգային-ազատագրական պայքարի ամբողջ ժամանակաշրջանում Դաշնակցությունը պայքարել է ազգային գաղափարախոսության դրոշով:

Դաշնակցությունը սկսելով իր գործունեությունը՝ չհարեց որեւէ սոցիալական վարդապետության, չփորձեց հայ կյանքի մեջ որեւէ սոցիա-

լիսական դավանանք մտցնել, այլ պարզ ու որոշակի հայտարարեց, որ իր հիմնական նպատակը Հայկական հարցի լուծումն է:

Եվ այնուհետեւ հայոց պատմության մեջ Դաշնակցությունը մշտապես հանդես է գալիս որպես հայոց ազգային գաղափարախոսության կրող եւ դրոշակակիր:

Դաշնակցության ծրագրի «Նպատակ» բաժնում ասվում է. «Հայ Հեղափոխական Դաշնակցության նպատակն է ապստամբության միջոցով Տաճկահայաստանում ձեռք բերել քաղաքական եւ տնտեսական ազատություն»[1]:

Ընդ որում, Դաշնակցությունը գտնում էր, որ արեւմտահայությանը թուրքական լծից ազատել «հնարավոր է միայն հեղափոխությամբ»[2]:

Ծրագրի «Նպատակ» բաժինը ցույց է տալիս ,որ՝

ա) Դաշնակցությունը առաջին հերթին խնդիր էր դրել ազատագրել Արեւմտյան Հայաստանը:

բ) Ազատագրության հասկացության տակ Դաշնակցությունը նկատի ունի ոչ թե անկախ պետականություն, այլ ներքին ինքնավարություն:

Դաշնակցությունը փորձում էր դեպի հայոց անկախ պետականության վերականգնումը գնալ աստիճանաբար, փուլ առ փուլ:

Դաշնակցության նպատակի իրագործման միջոցների մասին ծրագրում ասվում է. «Հ.Յ. Դաշնակցությունն ապստամբության միջոցով իր նպատակին հասնելու համար՝ կազմակերպում է հեղափոխական խմբեր, որոնք կառավարության դեմ անընդհատ եւ զորեղ կռիվ կը մղեն, եւ այն ընդհանուր պայմանների դեմ, որոնցից նեղված են միաժամանակ հայ եւ օտար ազգերը (ասորիները, եզդիները, քրդերի մի մասը, խաղաղ տաճիկները եւ այլն): Այս ուղղությունը, բացի իր ընդհանուր նշանակությունից, կարող է, եթե ոչ միացնել, գոնե չեզոքացնել օտար տարրերի ընդդիմադրական ուժը»[3]:

Հեղափոխական խմբերը, համաձայն ծրագրի, գործադրելու էին հետեւյալ միջոցները.

1. Դաշնակցության գլխավոր սկզբունքների քարոզչություն:
2. Կազմակերպել մարտական խմբեր:
3. Ամեն միջոց գործ դնել բարձրացնելու ժողովրդի հեղափոխական գործն ու ոգին:
4. Ամեն միջոց գործ դնել ժողովրդին զինելու:

1. Ծրագիր Հ.Յ. Դաշնակցութեան, տես Հ.Յ.Դ. Վաթսունամեակ (1890-1950), Պուրքն. 1950, էջ 105:
2. Նույն տեղում, էջ 104:
3. Նույն տեղում, էջ 106:

5. Կազմակերպել հեղափոխական կոմիտեներ:
6. Ուսումնասիրել երկիրը եւ նյութ մատակարարել Դաշնակցության օրգանին:
7. Կազմակերպել դրամական շրջաններ:
8. Կռիվ մղել եւ տեռորի ենթարկել կառավարչական մարդկանց, մատնիչներին, դավաճաններին, վաշխառուներին եւ ամեն տեսակի հարստահարիչներին:
9. Պաշտպանել խաղաղ ժողովրդին ավազակների հարձակումներից:
10. Ճանապարհներ հաստատել մարդիկ եւ զենք տեղափոխելու համար:
11. Կառավարության հիմնարկությունները ենթարկել ավերումների եւ կողոպուտների[1]:

Սիա այսպիսին են Դաշնակցություն կուսակցության ծրագրային մարտավարական հիմնադրույթները: Անհրաժեշտ է, սակայն, ծրագրային հիմնադրույթների հետ առնչված կանգ առնել մի քանի հարցերի վրա եւս:

Նախ, նկատենք, որ ֆիդայական պատերազմը, որը արեւմտյան հասկացությամբ նշանակում է պարտիզանական պատերազմ, որպես ազատագրական պայքարի ձեւ, կուսակցության ծրագրի մեջ տեղ չի գտել: Մինչդեռ, Դաշնակցությունը ազատագրական պայքարի հիմնական ձեւը համարում էր ֆիդայական կռիվը:

Այդ մասին «Դրօշակի» 1891 թ. 2-րդ համարի խմբագրական հոդվածում ասվում է. «Հայ ժողովրդի կռիվը պետք է պարտիզանական կռիվ լինի. մենք մեր այժմյան դրության մեջ ուրիշ կերպ կռվել չենք կարող. կանոնավոր պատերազմ, իսկական ճակատամարտեր անհնար են մեզ համար: Այդ է թելադրում մեզ առողջ դատողությունը եւ այդ է սովորեցնում մեզ նույնիսկ ուրիշ ազգերի՝ բուլղարների, իտալացիների, հույների պատմական օրինակը: Այդպես պետք է կռվենք եւ մենք՝ գոնե մինչեւ այն ժամանակ, երբ պարտիզանական կռվի ջոկ-ջոկ ալիքները միախառնվելով կը կազմեն ժողովրդական ապստամբության հորդահոս հեղեղը, որ կսրբի կտանի իր հետ Հայաստանի երեսից ստրկության, աղքատության, անարդարության դարավոր կնիքը»:

Երկրորդ. մինչեւ ծրագրի ընդունումը, Դաշնակցությունը հրատարակել էր երկու չափազանց կարեւոր թռուցիկ, որոնցով մարտահրավեր էր նետում թուրքական կառավարությանը: Առաջին թռուցիկը հրատարակվել է 1890 թվականին եւ վերնագրված է՝ «Մանիֆեստ՝ Հ.Յ. Դաշնակցության»: Երկրորդ թռուցիկը հրատարակվել է 1891 թվականի մայիսին

1. Նույն տեղում, էջ 106-107:

եւ վերնագրված է՝ «Կռիվը սկսված է...»: Այս երկու թռուցիկներով Դաշնակցությունը հայտարարում էր, որ «Հայ ժողովուրդը սկսել է մի մեծ սուրբ կռիվ», որ «այսօր հայոց հարցը նոր շրջանի մեջ է մտնում»[1]:

Այսպիսով, Դաշնակցությունը՝

ա) կռիվ է հայտարարում թուրքական կառավարությանը,

բ) մարտավարության հիմնական ձեւը համարում է պարտիզանական կռիվը,

գ) ամբողջ Արեւմտյան Հայաստանը պարտիզանական պատերազմի մեջ ընդգրկելուց հետո միայն պետք է դիմեր ընդհանուր զինված ապստամբության:

Ինչպես տեսնում ենք, Բեռլինի կոնգրեսից հետո աստիճանաբար ձեւավորվում է ազատագրական զինված պայքարի տակտիկան, որն իր ամբողջական արտացոլումն է գտնում Հնչակ եւ Դաշնակցություն կուսակցությունների ծրագրերում:

Սակայն, զինված պայքարի այս դժվարին փուլում հայ ազգային կուսակցությունները չկարողացան մշակել միասնական մարտավարական ծրագիր եւ ստեղծել շարժման ընդհանուր ղեկավարություն: Դրա հետ մեկտեղ, պայքարի այս փուլը ուներ նաեւ հետեւյալ ընդհանուր գծերը:

1. Ազատագրական պայքարի հիմնական ձեւերն էին՝ հայդուկային կռիվը, աստամբությունները, ինքնապաշտպանական կռիվները, արշավանքները, ասպատակությունները, ահաբեկչությունները եւ այլն:
2. Պայքարի այդ ձեւերը պետք է վերածեին ընդհանուր զինված ապստամբության:
3. Ժողովուրդը իր ուժերով պետք է ազատագրվեր թուրքական լծից:
4. Մեծ տերությունների օգնության հետ հույս չէր կապվում: Այդ ժամանակ բավականին մեծ տարածում էր գտել այն մտայնությունը, որ հեղափոխական իրադրությունը Արեւմտյան Հայաստանում հասունացած է: Անհրաժեշտ է մի փոքր կայծ, որից եւ կբռնկվի համահայկական ապստամբության բոցը:

Հետագա իրադարձությունները եկան հերքելու այդ մտայնությունը: Ոչ 1894 թ. Սասունի ապստամբությունը եւ ոչ էլ 1895-1896 թթ. Զեյթունի ապստամբությունը չհաջողվեց դարձնել համաժողովրդական ապըստամբության սկիզբ: Պարզ դարձավ, որ արեւմտահայությունը դեռ պատրաստ չէ ընդհանուր ժողովրդական զինված ապստամբության:

Դաշնակցության եւ Հնչակյանների մարտավարությունը քննություն չբռնեց: Անհրաժեշտություն առաջացավ փոփոխություններ մտցնել ա-

1. Դրոշակ «Հայ Յեղափոխական Դաշնակցության Օրգան» 1890-1897 (վերահրատարակություն առանձին հատորով):

զատագրական պայքարի մարտավարության մեջ:

Դաշնակցությունը այդ փոփոխությունները կատարեց 1898 թ. 2-րդ ընդհանուր ժողովում: Դաշնակցությունն ընդունեց երկու կարեւոր որոշում. ա) առանց եվրոպական միջամտության անկարող ենք մեր ժողովրդի ազատության գործը գլուխ բերել, բ) հրաժարվել պարտիզանական կռվի տակտիկայից եւ անցնել Երկրում ուժեր պատրաստելուն՝ ընդհանուր ապստամբության համար[1]:

Պայքարի նման մարտավարություն են ընտրում նաեւ Հնչակյան եւ Վերակազմյալ Հնչակյան կուսակցությունները:

Չնայած ընդունված որոշումներին, այնուամենայնիվ, մինչեւ 1904 թվականը հին մարտավարությունը օրակարգից չի հանվում:

Միաժամանակ փորձեր են արվում միասնական հակահամիդյան ճակատ ստեղծելու՝ Թուրքիայի ընդդիմադիր ուժերի հետ: 1902 թ. Փարիզում տեղի է ունենում Թուրքիայի ընդդիմադիր ուժերի առաջին կոնգրեսը, որը, սակայն, ավարտվում է անհաջողությամբ: 1907 թ. Փարիզում Դաշնակցության առաջարկով տեղի է ունենում Օսմանյան կայսրության ընդդիմադիր ուժերի երկրորդ կոնգրեսը: Այդ կոնգրեսում հաջողվում է ստեղծել Օսմանյան կայսրության ընդդիմադիր ուժերի միասնական ճակատ:

1908 թ. Թուրքիայում իշխանության գլուխ են գալիս երիտթուրքերը: Հայ քաղաքական կուսակցությունները փոփոխություններ են մտցնում իրենց ծրագրերի մեջ՝ ճանաչելով Թուրքիայի տարածքային ամբողջականությունը: Հայերը գնացին զիջումների: Ստեղծվեց այն պատմական շանսը, որը երկու ժողովուրդների քաղաքական ուժերին հնարավորություն էր տալիս փոխզիջումների գնով հաշտության եզրեր գտնել եւ ընդունել պատմության այդ փուլի համար Արեւմտյան Հայաստանի ընդունելի կարգավիճակ:

Նման պատմական պայմաններում, բնականաբար, դադարեցվեց ազգային-ազատագրական պայքարը, օրակարգից հանվեց արեւմտահայությանը ընդհանուր զինված ապստամբության պատրաստելու հարցը:

Վճռական խոսքը պատկանում էր թուրքերին: Սակայն, թուրքերի հետ լեզու գտնելու քաղաքականությունն արդյունք չտվեց: Երիտթուրքերը Թուրքիայի ընդդիմադիր ուժերին ցանկանում էին օգտագործել իշխանության գլուխ գալու համար: Իշխանությունը գրավելուց հետո երիտթուրքերը շարունակեցին Աբդուլ Համիդի հայոց ցեղասպանության քաղաքականությունը: Այդ առումով չափազանց բնորոշ է Ադանայի հայ բնակչության 1909 թվականի կոտորածը, որին զոհ գնացին շուրջ 30 հազար հոգի:

1. Նյութեր Հ.Յ. Դաշնակցության պատմության համար, Բ հատոր. էջ 56, 58-59:

1910-1911 թ. երիտթուրքերը Սալոնիկի իրենց տարեկան ժողովներում պաշտոնապես հրաժարվեցին օսմանիզմից եւ ընդունեցին պանթուրքիզմի գաղափարախոսությունը: Պանթուրքիզմը դարձավ Թուրքիայի պետական քաղաքականություն: Սալոնիկի 1910 եւ 1911 թվականների համաժողովների որոշումները՝ կայսրությունը օսմանացնելու եւ մահմեդականացնելու մասին, նշանակում էր ամբողջ հայ ժողովրդի ցեղասպանության պետական ծրագրի ընդունում, որը գործնականում իրագործվում էր դեռեւս 90-ական թվականների սկզբներից:

Ուրեմն, թուրքերը չընդունեցին հայերի առաջարկը՝ Թուրքիայի տարածքային ամբողջականությունը պահպանելու պայմանով կանոնավորել հայ-թուրքական հարաբերությունները, որը տվյալ պատմական պայմաններում կարող էր նշանակել միայն Արեւմտյան Հայաստանի տարածքային ինքնավարություն: Թուրքերի նման վարքագծի մեջ անբացատրելի ոչինչ չկա: Թուրքերը, ինչպես ասել ենք, ցանկանում էին սեփականացնել հայերի հայրենիքը: Նրանք Արեւմտյան Հայաստանը ցանկանում էին ունենալ առանց այդ երկրի իսկական տերերի՝ արեւմտահայության: Թուրքերը շարունակում էին իրենց հին եւ ավանդական քաղաքականությունը՝ Հայրենիքը պետք է պատկանի մի ժողովրդի՝ տվյալ դեպքում՝ միայն իրենց: Արեւմտահայության ճակատագիրը որոշված էր: Արեւմտյան Հայաստանը թուրքերի հայրենիք դարձնելու համար արեւմտահայությունը պետք է ոչնչացվեր:

Թուրքերը հետեւողականորեն իրականացնում էին իրենց ազգային գաղափարախոսությունը:

Թուրքիզմի եւ պանթուրքիզմի ծրագրերը իրականացնելու համար թուրքերը սպասում էին հարմար պահի, որպիսին կարող էր լինել Առաջին համաշխարհային պատերազմը, որը սկսվեց 1914 թ. օգոստոսի 1-ին:

Թուրքիան, բնականաբար, միանում է գերմանական բլոկին: Անտանտի պետությունները եւ առաջին հերթին Ռուսաստանը ունեին իրենց նվաճողական ծրագրերը ինչպես Թուրքիայի, այնպես էլ նրան հետաքրքրող տարածքների նկատմամբ եւ հասկանալի պատճառներով թույլ չէին տա ստեղծել Մեծ Թուրանի պետությունը: Օգոստոսի 6-ին Թուրքիան եւ Գերմանիան համաձայնագիր են կնքում, որի 5-րդ հոդվածում ասվում է. «Գերմանիան կօգնի Օսմանյան կայսրության արեւելյան սահմանները շտկել այնպես, որ Թուրքիայի համար ապահովվի անմիջական շփում Ռուսաստանում բնակվող մահմեդական ազգաբնակչության հետ»[1]:

1. *Ключников Ю. В., Сабанин А. В. Международная политика новейшего времени в договорах,нотах и декларациях, ч. 2, М., 1926.*

Պատերազմի մեջ մտնելու կապակցությամբ երիտթուրքերի կուսակցությունը հրապարակում է մի շրջաբերական, որում ասվում էր.

«Չմոռանանք, որ համաշխարհային պատերազմին մեր մասնակցության նպատակը մեզ սոսկ վերահաս, սպառնացող կորուստե փրկել չէ, այլ մենք կը հետապնդենք ավելի անմիջական նպատակ մը - մեր ազգային իդեալի իրականացումը: Մեր ժողովուրդին եւ հայրենիքին ազգային իդեալը մեզի մեկ կողմե կը մղե խորտակելու Մոսկովյան թշնամին, ատով հասնելու մեր կայսրության համար բնական սահմանի մը, որուն մեջ կը պարփակուին ու կը միանան մեր բոլոր ազգակից եղբայրները»:

Փաստաթուղթն ավարտվում է հետեւյալ տողերով.

«Հիմա մենք գիտենք, թե ինչու կը կռուինք: Մենք գիտենք մեր նպատակը եւ ոգեւորությամբ կը մտնենք կռուին մեջ: Մենք կը կռուինք մեր ազգին, մեր կրոնին եւ մեր ազգային իդեալի համար»[1]:

Թուրքական ժողովուրդների ազգային գաղափարախոսությունը իրականացնելու համար պետք է ոչնչացվեր Հայաստանը եւ հայ ժողովուրդը:

Պանթուրքիզմի գաղափարախոսները թուրքական ժողովուրդներին կոչ էին անում զենքով ու արյունով, քրիստոնեական ժողովուրդների ոչնչացման գնով իրականացնել Մեծ Թուրանի գաղափարը:

Թուրքական կառավարության կողմից Մեծ եղեռնի կազմակերպման մասին տարբեր լեզուներով հրատարակվել են հազարավոր փաստաթղթեր: Գիրքը չծանրաբեռնելու նկատառումով, նպատակահարմար ենք գտնում ընթերցողի ուշադրությանը ներկայացնել երկու փաստաթուղթ:

Առաջին փաստաթուղթ. Թուրքիայի տեղական իշխանություններին է ուղարկված երկրի կառավարության ներքին գործերի նախարարության կողմից:

> «Դարեր ի վեր պետության ամուր հիմքը քանդելու բաղձացող եւ կառավարության համար կարեւոր փորձանքի մը երեւոյթը առած հայ տարրին ջնջումը թեեւ նախապես մտադրված էր, բայց ժամանակին ստիպումները այս սրբազան մտադրությունը իրականացնելու կարելիությունը չէին ընծայեր: Հիմայ, բոլոր արգելքները վերացած եւ հայրենիքը այս վնասակար տարրեն փրկելու ժամանակը հասած նկատելով, կարեւորությամբ կը հանձնարարվի, որ անոնց արգահատելի վիճակին հանդեպ գութի զգացումներու չհանձնուիք, եւ անոնց ընդհանուրին գոյության վերջ տալով, Թուրքիոյ մեջ հայ անունին չմնալուն ոգի ի բռին

1. *Զարեվանդ. Միացեալ. անկախ Թուրանիա, Արենք, 1988, էջ 107:*

աշխատիք: Ուշադրություն ընեք, որ այս նպատակը իրականացնելու կոչուելիք պաշտոնյաները հայրենասեր եւ վստահելի մարդիկ ըլլան»[1]:

Երկրորդ փաստաթուղթ. Թուրքիայի Հալեպի կուսակալին է ուղարկված երկրի կառավարության ներքին գործերի նախարարության կողմից, նախարար Թալեաթի ստորագրությամբ:

«Հայերու համար Թուրքիոյ հողին մեջ ապրելու, աշխատելու պես իրավունքներ ամբողջովին ջնջուած են եւ այս մասին կառավարությունը, բովանդակ պատասխանատուությունը ստանձնելով, հրամայած է նոյն իսկ օրորոցի մանուկները չթողուլ: Քանի մը նահանգներու մեջ այս հրամանին գործադրության արդյունքները տեսնուած են: Այսպես ըլլալով հանդերձ, մեզի անհայտ պատճառներով, կարգ մը մարդոց մասին բացառիկ գործողություններ կըլլան եւ այդ մարդիկը ուղղակի տարագրության վայրերը չղրկուելով Հալեպ կը թողուին, որով կառավարությունը երկրորդ դժվարության մը կը մատնուի: Առանց անոնց պատճառաբանությունները ընդունելու կին, թե մանուկ, ինչ որ ալ ըլլան, նոյն իսկ շարժելու անկարող եղողները հանեցեք հոնկե եւ տեղի մի տաք, որ զանոնք պաշտպանե ժողովուրդը, որ տգիտությանը բերմունքով նյութական շահերը իր հայրենասիրական զգացումներեն բարձր կը դասե եւ չի կրնար կառավարության այս մասին հետապնդած մեծ քաղաքականությունը գնահատել: Որովհետեւ ուրիշ տեղեր անուղղակի կերպով կատարուող բնաջնջման գործողությունները - խստություն, արագություն (տարագրության ընթացքին), ճամբու նեղություններ, թշուառություն, - հոդ ուղղակի կերպով կրնան ապահովուիլ, հետեւաբար՝ առանց ժամանակ կորսնցնելու, ոգի ի բռին աշխատեցեք: Պատերազմական նախարարութենեն բանակի հրամանատարություններուն ընդհանուր կերպով հաղորդուած է, որ զինվորական կայաններու հրամանատարները գաղթականներու առաքման գործին պետք չէ միջամտեն: Այս մասին հատկացուելիք պաշտոնեաներուն հաղորդեցեք, որ պատասխանատուութենե չվախենալով պետք է աշխատին իսկական նպատակը իրականացնելու: Հաճեցեք Ձեր գործունեության արդյունքները ամեն շաբթու ծածկագրով հաղորդելու»[2]:

1915-1916 թվականներին իրականացվեց արեւմտահայության ցե-

1. Արամ Անդոնյան. Մեծ ոգիրը, Երեւան, 1990, էջ 26:
2. Նույն տեղում, էջ 35-37:

ղասպանության պանթուրքական ծրագիրը: Ոչնչացվեց մեկուկես միլիոն հայ: Եղեռնից փրկվածները ցրվեցին աշխարհով մեկ: Արեւմտյան Հայաստանը հայաթափվեց:

Իրականացվեց թուրքերի ազգային գաղափարախոսության առաջին փուլը: Թուրքիան մահմեդականացվեց: Հայոց հայրենիքը զրկվեց իր իսկական տերերից եւ հայտարարվեց թուրքական հայրենիքի բաղկացուցիչ մաս:

Այսպիսով, թուրքերի եւ հայերի ազգային գաղափարախոսությունների պայքարի ուսումնասիրվող փուլում հաղթանակ է տանում թուրքերի ազգային գաղափարախոսությունը: Թուրքերը կարողանում են իրականացնել պանթուրքիզմի առաջին փուլը՝ թուրքիզմը, Թուրքիան թուրքանում է, մահմեդականանում:

Բնականաբար, հարց է առաջանում, որո՞նք էին պատճառները, ինչո՞ւ թուրքերը կարողացան իրականացնել իրենց ազգային գաղափարախոսության առաջին աստիճանը, ինչո՞ւ պարտվեցին հայերը:

Հայերի պարտությունը բացատրվում է նրանով, որ թուրքերը ունեին պետականություն եւ ձեւավորված ազգային գաղափարախոսություն: Թուրքիայում ազգային գաղափարախոսությունը պետական գաղափարախոսություն էր: Թուրքերը ճշգրտորեն հաշվի էին առել թուրքիզմի հաղթանակի բոլոր աշխարհաքաղաքական գործոնները: Թուրքական իշխանությունները՝ ղեկավարվելով ազգային գաղափարախոսության հիմնադրույթներով, պետական բոլոր լծակները օգտագործեցին թուրքիզմի գաղափարախոսությունը իրականացնելու համար:

Այժմ անդրադառնանք հայերի պարտության պատճառներին:

Հայոց Ազգային գաղափարախոսության ռազմավարական ծրագիրը կազմված է ժողովրդի պատմության բոլոր օբյեկտիվ եւ սուբյեկտիվ գործոնների հաշվառմամբ: Հայոց պատմության վերջին 300 տարվա պատմությունը ապացուցեց հայոց մեծերի քաղաքականության ճշմարտացիությունը:

Եթե հայոց ազգային գաղափարախոսության ռազմավարական ծրագիրը ճիշտ էր, ապա ինչու՞ հայ ժողովուրդը չհասավ իր ազգային իդեալների կատարմանը:

Ազգային գաղափարախոսության հիմնադրույթների չիրականացման պատճառները բացատրվում են մարտավարական ծրագրի անկատարությամբ:

Կանգ առնենք մի քանի կարեւորագույն հիմնախնդիրների վրա:

Հաշվի չէին առնվել մի քանի կարեւոր գործոններ, որոնք հետագայում բախտորոշ դեր պետք է խաղային հայոց ճակատագրում:

1. Ամեն մի ժողովուրդ օտարի տիրապետության դեմ մղվող պայքարում առաջին հերթին պետք է հասած լինի ազգային համերաշ-

խության: Հայոց ազգային հեղափոխության հաղթանակի համար խիստ անհրաժեշտ այս գործոնը բացակայում էր:

2. Հայոց ազգային հեղափոխության վճռական պահին՝ 19-րդ դարի վերջերին պարզ դարձավ՝
Տարբեր պետությունների կազմում գտնվող, պետական սահմաններով մասնատված հայ ժողովուրդը զրկված էր թուրքերի տիրապետության դեմ համերաշխ, միասնական ճակատով հանդես գալու հնարավորությունից: Արեւմտահայությունը վճռական գոտեմարտի պահին մնաց թուրքերի դեմ պայքարում մեն-մենակ: Արեւելահայությունը, չնայած թափած ջանքերին, չկարողացավ արեւմտահայաստանում ծավալված ազատագրական պայքարին էական օգնություն ցույց տալ:
Այդ պատճառով էլ 19-րդ դարի վերջին հայոց ազգային հեղափոխությունը պատմության մեջ է մտել ոչ թե որպես ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ազգային-ազատագրական պայքար, այլ ԱՐԵՎՄՏԱՀԱՅ:

3. Արեւմտահայությունը զանգվածորեն չմտավ ազգային-ազատագրական պայքարի մեջ: Կուսակցությունների կողմից նախատեսված համընդհանուր զինված ապստամբությունը հնարավոր չեղավ կազմակերպել: Մեզ հետաքրքրող շրջանում մենք տեսնում ենք միայն Սասունի եւ Զեյթունի հերոսական ապստամբությունները, որոնք չվերածվեցին համընդհանուր զինված ապստամբության:

4. Ամեն մի ապստամբություն, հեղափոխություն կամ ազգային-ազատագրական պայքար, որպես հաղթանակի անհրաժեշտ երաշխիք, պետք է ունենա ընդհանուր ղեկավարություն եւ ընդհանուր մարտավարական ծրագիր: Առանց այդ պայմանների ոչ մի շարժում չի կարող հաղթանակել:
Հնչակյան եւ Դաշնակցություն կուսակցությունների մարտավարական ծրագրերը կուսակցության փաստաթղթեր էին, որոնք չստացան ազգային գաղափարախոսության ծրագրի կարգավիճակ:
Հայոց ազգային-ազատագրական պայքարը 19-րդ դարի վերջին եւ 20-րդ դարի սկզբին չուներ ոչ ընդհանուր ղեկավարություն եւ ոչ էլ ընդհանուր մարտավարական ծրագիր:

5. Օրիենտացիայի հարցում կուսակցությունները նահանջ կատարեցին իրենց նախորդներից: Հայ ազգային կուսակցությունների ծրագրերում ռուսական օրիենտացիան տեղ չէր գտել:

6. Դաշնակցության ազգային-ազատագրական պայքարի հիմնական ձեւը ֆիդայական կռիվն էր, որը Թուրքիայի պայմաններում սպասված արդյունքը չտվեց: Կուսակցությունը հարկադրված

հրաժարվեց պայքարի այդ ձեւից:

7. Խնդիր դնելով պատրաստվել համընդհանուր զինված ապստամբության, կուսակցությունները առանց լրջորեն պատրաստվելու մտան կռվի մեջ՝ մարտահրավեր նետելով թուրքական կառավարությանը:

8. Ենթադրվում էր, որ քրդերը թուրքերի դեմ մղվող կռվում կլինեն հայերի դաշնակիցը կամ էլ, ծայրահեղ դեպքում, չեզոք դիրք կգրավեն: Սակայն, իրականում քրդերը կռվեցին հայերի դեմ՝ թուրքերի հետ ճակատ կազմած:

Հասկանալի է, որ նման գործոնների առկայության պայմաններում ազատագրական պայքարը չէր կարող հաղթանակել:

Վերոշարադրյալը արդյոք խոսու՞մ է այն մասին, որ հայոց ազատագրական պայքարը վաղաժամ է սկսվել: Մենք, ելնելով իրավիճակի մանրակրկիտ ուսումնասիրությունից, գտնում ենք, որ՝ ոչ:

Թուրքերի՝ հայոց ցեղասպանության ծրագիրը արդեն պատրաստ էր, իսկ Առաջին համաշխարհային պատերազմը չափազանց բարենպաստ էր նման ոճրագործություն անաղմուկ իրականացնելու համար: Ուրեմն, հայերը սպասելու ու պատրաստվելու ժամանակ չունեին:

Շահան Նաթալին գրում է. «Ըսել ու խրատ կարդալ, թե սպասէինք ուրեմն, մինչեւ որ բանակ, թնդանոթ ու հրամանատար ունենանք, պիտի նշանակէ տգիտօրեն ուրանալ այն փաստը, թե թուրքը չէր սպասեր. անոր համար սպասել պիտի նշանակեր կորսնցնել Հայն ու Հայաստանն ալ, եւ այս բանը թուրքը շատ լավ գիտեր»[1]:

Թուրքերն ունեին հայ ժողովրդի ֆիզիկական ոչնչացման հստակ ծրագիր եւ տասնամյակներ շարունակ հետեւողականորեն իրականացնում էին այն: Շ. Նաթալին գրում է. «Առեք վերջին կես դարու ընթացքին հայ եւ օտար թերթերը եւ դուք պիտի կարդաք մեկ բան, ավաղ, միայն մեկ բան, թե թուրք կառավարությունը կկոտորե, կոտորեց հայ խաղաղ գյուղացին, հայ մանուկն ու ծերը, այսինքն՝ ժողովուրդը:

Քառասուն տարի տեսանք այս փաստը եւ ողբալի պատմություններով լեցուցինք աշխարհը, մինչեւ որ հայ անունը նույնացավ կոտորվող աշխարհի, վախկոտ նապաստակի եւ լավագույն պարագային՝ հայ մուրացող որբերի հետ:

Քառասուն տարի տեսանք թուրքին կոտորածները, անցանք անոնց մեջեն, բայց չթափանցեցինք թուրքին լոգունգին:

Ահա ահավոր աղետը հայ սխալին, որուն մեջ օտարը մեղք չունի կամ շատ քիչ ունի, որովհետեւ ամենեն առաջ մենք էինք, որ պետք էր տես-

1. Շահան Նաթալի. Թուրքերը եւ մենք, Երեւան, 1992 թ., էջ 194:

նեինք մեր թշնամիին գիտությունը այս կռվին մեջ»[1]:

Նաթալին գտնում է, որ ազատագրական պայքարում հայերի մարտավարական կարգախոսը սխալ է եղել:

«Մահ հայության»:

Ահա թուրքին դրոշը հայ-թուրք կռիվներուն մեջ:

«Մահ սուլթանին, փաշային, կուսակալին եւ ռեժիմին»:

Ահա հայի դրոշը, գրում է Շ. Նաթալին[2]:

Այսինքն, թուրքը ոչնչացնում էր հայ ժողովրդին, իսկ հայը պայքարում էր ռեժիմի դեմ:

«Մեր սխալը, աղետավոր սխալը,- ամփոփում է իր միտքը Շահան Նաթալին,- այս փաստերը չտեսնելն էր, իսկ թուրքին դեմ իր զենքով չկռուիլը ոճիր մը եղավ, որ մենք ամենեն առաջ եւ բոլորեն առաջ գործեցինք մեր ազգի ֆիզիկական գոյության դեմ:

Ու մենք ճակատագրուած էինք, անկախ արտաքին բոլոր դավերեն, պարտուիլ ազգովին ու քաղաքականապես: Որովհետեւ հայ ազգին ուղղված հարուածին մենք պատասխանեցինք՝ թուրք անհատին ուղղելով մեր հարուածը»[3]:

Հայ ժողովուրդը ստեղծված իրավիճակում այլընտրանք չուներ, նա ազատագրական պայքարում պետք է ղեկավարվեր այն կարգախոսով, որով ղեկավարվում էր թուրքը: Այդպիսին է կյանքի տրամաբանությունը:

«Եթե ճամբան,- գրում է Նաթալին,- ոճիրներով իսկ լեցուն է, այդ մեր մեղքը չէ, պատմությանն է՝ու օրենքինը: Բոլորը քալեր են այդ ճամբայեն, բոլորը կընթանան այդ օրենքով, մենք չէ որ պիտի փոխենք զայն:

ՈՐՈՎՀԵՏԵՎ ՎՃԻՌԸ ՏՐՎԱԾ Է՝ ԿԱՄ ՊԻՏԻ ԱՊՐԻՆՔ, ԿԱՄ ՊԻՏԻ ՄԵՌՆԻՆՔ:

Ապրելու համար պիտի քալենք ապրողներուն հետ եւ անոնց պես, այլապես անխուսափելի է մահը մեզի համար»[4]:

Իսկ բնության առաջին ու հիմնական օրենքը, ինչպես նշել ենք սույն աշխատության առաջին գլխում, թելադրում է՝ անհրաժեշտ է ամենուրեք, որտեղ դա հնարավոր է, ձգտել խաղաղության, եթե խաղաղության հասնել հնարավոր չէ, պետք է միջոցներ որոնել պատերազմ վարելու համար, որ յուրաքանչյուրը ինքնապահպանման իրավունքով, իրավունք ունի նաեւ «օգտվել բոլոր միջոցներից եւ կատարել բոլոր գործողությունները, առանց որոնց չի կարող ապահովել իր ինքնապաշտպանությունը»:

1. Նույն տեղում, էջ 194-195:
2. Նույն տեղում, էջ 195
3. Նույն տեղում:
4. Նույն տեղում, էջ 202:

Ինքնապահպանման բնազդը այդ վճռական պահին դավաճանեց հայ ժողովրդին:

Փոխանակ համախմբվելու եւ ազգովի հանդես գալու թուրքերի դեմ, որը փրկության հիմնական երաշխիքն էր, պառակտված հայ ժողովրդի տարբեր խավերի կողմից մեղադրանքներ էին հնչում հեղափոխականների դեմ եւ տեսակետներ հորինվում՝ հայ-թուրքական բարեկամության հնարավորության եւ անհրաժեշտության մասին:

Շահան Նաթալին այդ մասին գրում է. «ՀԱՎԱՏԱԼ, ԹԷ ԹՈՒՐՔԻՆ ՀԵՏ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՄԲ ԿԱՐԵԼԻ Է ՓՐԿՈՒԻԼ, ՅԱՎԱԿՆԻԼ ԹՈՒՐՔ-ՀԱՅ ԲԱՐԵԿԱՄԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ԽԱԲԵԼ ԹՈՒՐՔԸ, ԱՆՈՐԱԿԵԼԻ ՄԵԿ ՆՈՐ ՈՃԻՐ Է, ՈՐ ՊԻՏԻ ՔԱՎԵՆՔ ԱՋԳԻ ՄԱՀՈՎ... ԹՈՒՐՔ-ՀԱՅ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ՄԸ ՄԵՋ ՅՈՅՍ ՏԵՍՆՈՂՆԵՐԸ ԳԻՏԱԿՑՈՐԵՆ ՈՒ ԱՆԳԻՏԱԿՑՈՐԵՆ ԹՇՆԱՄԻ ԵՆ ՀԱՅՈՒԹՅԱՆ: ԵՎ ՎԱՂԸ ԱՅՍՊԻՍԻ ՔԱՅԼԵ ՄԸ ԱՌԱՋ ԳԱԼԻՔ ՆՈՐ ԱՐՅՈՒՆՆԵՐՈՒ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ, ԱՆԿԱԽ ԱՐՏԱՔԻՆ ԴԱՎԵՐԵՆ, ԱՄԵՆԵՆ ԱՌԱՋ ԿԻՅՆԱՅ ՀԱՅՈՒՆ ՎՐԱ»[1]:

Այս խոսքերը լիովին վերաբերվում են հայ-թուրքական բարեկամության արդի շրջանի ջատագովներին:

Սակայն, այս բավականին բարդ ու հակասական երեւույթները ունեն իրենց պատմական հիմքը եւ պատճառները:

Ամփոփելով ազգային գաղափարախոսության նոր մարտավարության՝ քննարկվող փուլի հիմնախնդիրները, մենք անհրաժեշտ ենք համարում համառոտակի ծանրանալ երկու կարեւոր խնդրի վրա եւս:

1. ԹԵՐԱՐԺԵՔՈՒԹՅԱՆ ԲԱՐԴՈՒՅԹԻ ԴԵՐԸ:

Հայ քաղաքական կուսակցությունները հաշվի չառան այն հանգամանքը, որ դարեր շարունակ օտարի տիրապետության տակ գտնվող հայ ժողովուրդը ձեռք է բերել թերարժեքության բարդույթ, զոհի բարդույթ, որ խաթարվել են նրա ավանդական բնավորության գծերից շատերը, որ ինչ-որ չափով փոխվել է ազգային բնավորությունը: Այդ բոլորը չէին կարող իրենց բացասական ազդեցությունը չթողնել ազգային-ազատագրական պայքարի զարգացման ընթացքի վրա:

Քաղաքական կուսակցությունները, ինչպես ցույց են տալիս փաստաթղթերը, խորապես համոզված էին, որ բավական է ՍԿՍԵԼ ՊԱՅՔԱՐԸ, եւ դարերով տառապած արեւմտահայությունը զանգվածորեն դուրս կգա զինված ապստամբության: Սակայն, իրադարձությունները չարդարացրին կուսակցությունների հույսերը: Զեյթունի ապստամբությունից հետո պարզ դարձավ, որ արեւմտահայությունը պատրաստ չէ համաժողովրդական ապստամբության:

1. Նույն տեղում, էջ 218-219:

Դեռ ավելին, պարտվողականների կողմից մեղադրանքներ հնչեցին կուսակցությունների դեմ՝ անժամանակ եւ անպատրաստ կռվի մեջ մտնելու համար:

Հ.Հ. Դաշնակցության երկրորդ ընդհանուր ժողովում, 1898 թվականին, քննարկվեց այդ հիմնախնդիրը, որտեղ այդ հարցի կապակցությամբ վերլուծական զեկուցումով հանդես եկավ Քրիստափոր Միքայելյանը: Քրիստափորի զեկուցման հիմնադրույթները հետագայում երկու հոդվածաշարով հրապարակվեցին Դրօշակում՝ «Պատմական չարիք» եւ «Ամբոխային տրամաբանություն» խորագրերով[1]:

Քրիստափոր Միքայելյանը, ելնելով հայ ժողովրդի մոտ թերարժեքության բարդույթի՝ պատմական չարիքի առկայությունից, պարտվողականներին պատասխանում է. «Եթե մեր պատմությունը զգալի չափերով զուրկ է եղել բարոյական առողջ բնազդներ կրթելու, անձնական դիտումների առաջ կանգ չառնելու, միաբանությամբ ընդհանուր պետքերին հետեւելու, կռվից չվախենալու, զենքը գնահատելու վարժություններից, շատ բնական է, որ հեղափոխական շարժումը չէր կարող ոչ ըստ քանակի եւ ոչ էլ ըստ որակի այնպիսի հող գտնել մեր մեջ, որպիսին կարող էր լինել մի ուրիշ ժողովրդի մեջ, որի պատմությունը - մյուս հավասար պայմաններում - այդպիսի վարժությունների համար նրան ասպարեզ է տվել: Ահա թե ինչու հիշյալ դեպքերի ամենամեծ մասում կարելի է տեսնել ինչ ուզում եք, բայց ոչ որեւէ ապացույց հեղափոխական միջոցների աննպատակահարմարության»[2]:

Դարերի ստրկական վիճակը հատկապես փոքր ժողովուրդների մոտ ստեղծում է ստրուկի հոգեբանություն, եւ հայերը բացառություն չէին կազմում:

Քրիստափոր Միքայելյանը մեջբերումներ է կատարում հայ եւ օտարազգի տարբեր հեղինակների գրքերից ու հոդվածներից, որոնցում խոսվում է հայերի ավանդական առաքինությունների մասին եւ միաժամանակ ընդգծվում են նրանց բնավորության մեջ տեղ գտած արատավոր գծերը: Ֆրանսիացի հեղինակ Կիմոնը գրում է. «Այսօր՝ երկար շրջանի այն ճնշումներից հետո, որոնց ենթակա են եղել հայերը, այն ծանր ստրկական տանջանքներից հետո, որոնց նրանք բռնադատված են եղել, - հայերի հին հատկություններից մի քանիսը կորչել, ոչնչացնել. անհետացել են: Օրինակ, նրանց համար օտար են՝ ռազմական զգացում, պատերազմական հակումներ, մարտական ոգի, զինավարժության սովորություն, հարձակման բնազդ, հաղթության բերկրանք: Նրանք կորցրել են, ինչ-որ շատ վտանգավոր է, նույնիսկ ինքնապաշտպանության զգացմունքը»[1]: Բավարարվենք այս մեկ օրինակով, որովհետեւ հայ թե օտարազգի բոլոր հեղինակները, որոնցից մեջբերումներ է կատարում Քրիստափոր Միքայելյանը, մի քիչ ավելի խիստ կամ մեղմ, բայց ընդհանուր առմամբ նույն բնութագիրն են տալիս հայ ժողովրդի բնավորության մեջ կատարված փոփոխություններին:

1. *Քրիստափոր Միքայելյան. Ամբոխային տրամաբանություն. Դրօշակ. ՀՀ Դաշնակցության օրգան. 1899 թ., հ.հ. 5,6,8: 1900 թ. ՀՀ 2,3,4: Պատմական չարիք, 1900. ՀՀ 6,9 եւ 1901 թ. Հ. 3:*
2. *Քրիստափոր Միքայելյան, Պատմական չարիք. Դրօշակ. 1901, համ. 3:*

19-րդ դարի վերջերին թուրքերը կոտորեցին շուրջ 300 հազար հոգու, 100 հազար հոգի մահմեդականացվեց, 100 հազար հոգի էլ արտագաղթեց: 1915-1916 թվականներին Մեծ Եղեռնի զոհ դարձան մեկ եւ կես միլիոն հայեր: Եթե թուրքական ցեղասպանության զոհ գնացած երկու միլիոն հայերի մարտունակ մասը դուրս գար պայքարի, ապա անկասկած Հայկական հարցը վաղուց լուծված կլիներ:

Թերեւս հենց այս թերարժեքության բարդույթից՝ պատմական չարիքից էլ ծնունդ է առնում սեփական ճակատագրի հիմնախնդիրները՝ Հայկական հարցը արտաքին ուժերով լուծելու քաղաքականությունը, որը ի սկզբանե դատապարտված էր անհաջողության, քանզի ոչ մի ժողովուրդ մի այլ ժողովրդի ազատագրության համար արյուն չի թափում առանց շահի:

Չբացառելով արտաքին օգնությունը, հիմնական ուշադրությունը պետք է դարձվեր սեփական ուժերի կազմակերպմանը: Սակայն, դրա հնարավորություններն այնքան քիչ էին, որ հայոց ազատագրական պայքարի դրոշակակիրները հարկադրված էին սկզբից դեմքերը դարձնել դեպի Արեւմուտք, իսկ ավելի ուշ՝ Ռուսաստան:

Մինչդեռ հենց սկզբից անհրաժեշտ էր գործուն միջոցներ ձեռք առնել ժողովրդի թերարժեքության բարդույթը վերացնելու համար, որովհետեւ պատմության փորձով է ապացուցված, որ ոչ մի ժողովուրդ արտաքին օգնությամբ, առանց արյունի, առանց զոհի անկախություն ձեռք չի բերում:

Պատմության պարադոքսն է, սակայն, որ երկրի համար չպայքարող պարտվողականը, որպես կանոն, միշտ էլ հանդես է գալիս ազգային հպարտության դրոշով, խոչընդոտում թերարժեքության բարդույթի դեմ մղվող պայքարը եւ դրանով իսկ փորձում, եւ ոչ առանց հաջողության, վաստակել հայրենասերների համբավ: Սովորաբար, պատմության մեջ շատ է լինում՝ հերոսը մեռնում է Հայրենիքի համար մղվող կռվում. իսկ հայրենասերի դեր է ստանձնում պարտվողականը, որն իր դերը շատ հաճախ արդարացնում է՝ քննադատելով իսկական հայրենասերներին:

Բայց, հարց է տալիս Քրիստափոր Միքայելյանը, «Ե՞րբ պիտի քաղաքացիական համարձակություն ունենանք մի փոքր էլ մեզ վրա անդրա-

1. *Նույն տեղում, 1900 թ., համ. 6:*

դառնալու եւ մեր բարոյական պակասություններին, մեր վատառողջ բնազդներին. մեր ազգային ախտերին՝ «պատմական այդ չարիքին» եւս՝ որոշ տեղ տալու մեր կրած տառապանքներում ու մեր ներկա կացության մեջ»[1]:

Ուրեմն, անհրաժեշտ էր չդադարեցնել ազատագրական պայքարը եւ այդ պայքարի պրոցեսում, պայքարի օրինակով աստիճանաբար արմատախիլ անել պատմական չարիքը՝ թերարժեքության բարդույթը:

Ահա թե ինչու Քրիստափոր Միքայելյանը «Ամբոխային տրամաբանություն» հոդվածը ավարտում է հետեւյալ խոսքերով. «Հարատեւ կռիվ, հաճախ եւ երկար ժամանակ գուցե անհաջող՝ չնայելով երբեմն նույնսիկ իր լայն ծավալին,- ահա ուր է մեր փրկության բանալին: Պահպանենք, շարունակենք կռիվը, որպեսզի նա լայնանա, ընդարձակվի եւ ընդարձակվելով՝ հարատեւի - ահա դեպի մեր նպատակը տանող միակ ճանապարհը»[2]:

Այս խոսքերը գրելիս Քրիստափոր Միքայելյանը չէր կարող իմանալ, որ «հարատեւ կռվին» ճակատագրի կողմից տրված է ընդամենը շուրջ 15 տարի:

Բայց պետք է ընդգծել նաեւ, որ Քրիստափոր Միքայելյանի կարգախոսը հարատեւ կռվի մասին վերաբերվում էր ոչ միայն Արեւմտյան Հայաստանին եւ արեւմտահայությանը, այլեւ հայ ժողովրդի Մեծ գաղափարին՝ Հայկական հարցին:

Այդ բոլորով հանդերձ՝ անվիճելի է այն թեզը, որ առանց թերարժեքության բարդույթի վերացման, ոչ մի ժողովուրդ չի հաղթանակում, ոչ մի ազգային իդեալ չի իրագործվում: Հետեւաբար, թերարժեքության բարդույթի վերացումը հանդիսանում էր հայ ազատագրական մտքի հիմնական խնդիրներից մեկը: Անվիճելի է նաեւ այն թեզը, որ թերարժեքության բարդույթը ավելի արագ կարելի է վերացնել ազատագրական պայքարի պրոցեսում, քան թե «խաղաղ ժամանակ», օտարի տիրապետության պայմաններում:

Ինչեւէ, հայ քաղաքական կուսակցությունները Զեյթունի ապստամբությունից հետո, ելնելով ժողովրդի դրսեւորած թերարժեքության բարդույթի առկայությունից, հարկադրված էին շտկումներ կատարել ազատագրական պայքարի մարտավարության մեջ՝ օրակարգ մցնելով «Հարատեւ կռվի» գաղափարը, համաժողովրդական զինված ապըստամբության պատրաստվելու գաղափարը, որը ազգային դաստիարակության դպրոց կհանդիսանար միաժամանակ:

1. *Քրիստափոր Միքայելյան, Պատմական չարիք. Դրօշակ, 1900 թ., հատ. 9:*
2. *Քրիստափոր Միքայելյան, Ամբոխային տրամաբանություն, Դրօշակ. 1900 թ., հատ. 4:*

2. 19-րդ դարի վերջի եւ 20-րդ դարի սկզբի ազգային-ազատագրական պայքարի գնահատության հարցը:

Հայոց ազգային գաղափարախոսության տեսանկյունից չափազանց կարեւոր եւ սկզբունքային հիմնախնդիր է:

Հարցի էությունը կայանում է հետեւյալում. 19-րդ դարի վերջերին հայ քաղաքական կուսակցությունները մարտահրավեր նետեցին Օսմանյան կայսրությանը եւ ժողովրդին զինված պայքարի տարան թուրքական տիրապետությունից ազատագրվելու համար: Սկսվեց դաժան եւ արյունալից իրադարձություններով լի հերոսական պայքարի մի ժամանակաշրջան: Հայ ժողովուրդը մտավ իր պատմության որակական նոր բնույթ կրող մի փուլ՝ զինված պայքարով երկրի ազատագրման շրջանը:

Գիտական եւ ոչ գիտական շրջաններում տիրապետում է այն միանշանակ տեսակետը, որ ազգային կուսակցությունների կողմից ղեկավարվող ազգային-ազատագրական զինված պայքարը դաժան պարտություն է կրել: Սակայն, այդ տեսակետը իրականությանը չի համապատասխանում: Չնայած մեծ կորուստներին, այնուամենայնիվ, ազգային-ազատագրական պայքարը պարտություն չի կրել:

Ընդհակառակը, Զեյթունի ապստամբությունից հետո տեղի ունեցող իրադարձությունները ցույց տվեցին, որ հայոց ազատագրական պայքարը դարձել է Օսմանյան կայսրության ներքին կյանքի խոշորագույն գործոններից մեկը, որը իրենց քաղաքականության մեջ չէին կարող շրջանցել ոչ իշխանությունները եւ ոչ էլ ընդդիմությունը:

Դեռ 1895 թվականից Օսմանյան կայսրության ընդդիմադիր ուժերը բանակցություն են սկսում հայ քաղաքական կուսակցությունների հետ՝ նպատակ ունենալով հակահամիդյան ընդհանուր ճակատի ստեղծումը: Իսկ 1896 թվականին արդեն Աբդուլ Համիդն է բանակցություններ սկսում հայ քաղաքական կուսակցությունների հետ, նպատակ ունենալով՝ դադարեցնել հայերի զինված պայքարը, պարտավորվելով բարելավել հայության վիճակը: Հնչակյան կուսակցությունը մերժեց այդ առաջարկը, իսկ Դաշնակցությունը համաձայնվեց: Բանակցությունները Աբդուլ Համիդի ներկայացուցիչների հետ տեւեցին մինչեւ 1898 թվականի վերջերը եւ վերջացան անհաջողությամբ: Աբդուլ Համիդի երաշխիքները ռեալ չէին, խոստումներն անընդունելի էին, որի պատճառով Դաշնակցությունը դադարեցրեց բանակցությունները: Իսկ Օսմանյան կայսրության ընդդիմադիր ուժերի հետ բանակցությունները շարունակվեցին եւ իրենց դրական ավարտին հասան 1907 թվականի դեկտեմբերին՝ դաշնակցության նախաձեռնությամբ հրավիրված Թուրքիայի ընդդիմադիր ուժերի փարիզյան կոնգրեսում[1]:

1. *Sh'u. Мери Кочар, Армяно-Турецкие общественно-политические отношения и Армянский вопрос, Ер., 1988.*

1907 թ. դեկտեմբերին Փարիզի կոնգրեսը ընդունեց Հայտարարագիր, որում ասվում էր.

«Մինչեւ այժմ իրաց այս վիճակեն առաջ եկած յեղափոխական շարժումները անջատ էին, այսօր շատ մը տեղեր մուսուլմաններու եւ քրիստոնյաներու համագործակցությունը ցույց տվավ, որ կայսրության բոլոր ժողովուրդները վերջապես հոգնած են տառապելե եւ կըմբռնեն, որ երկրին պետը զիրենք անդունդը կառաջնորդե: Այսօր ամեն ոք, որ ընդունակ է մտածելու, պարզ կը հասկնայ, թե թուրք կառավարության մեջ անմիջական փոփոխություն մը միայն կրնայ արգիլել կայսրության վերջնական մեծաղետը եւ քայքայումը. պետք է ուրեմն անյապաղ ու բոլոր հնարավոր միջոցներով տապալել ռեժիմ մը՝ որ այնքան աղետներու պատճառ եղավ:

Հետեւաբար կը պահանջենք.

1) Գահընկեցություն Սուլթան Համիտի:

2) Արմատական փոփոխություն ներկայ ռեժիմին:

3) Հաստատում ներկայացուցչական ռեժիմին (Խորհրդարան)»[1]:

Այս նպատակը իրականացնելու համար ստեղծվեց Օսմանյան կայսրության ընդդիմադիր ուժերի միասնական ճակատ, որի առանցքը երկու կուսակցություններ էին՝ Երիտթուրքերը եւ Դաշնակցությունը:

Հայտարարագրում ասվում է.

«Մենք կը միանանք ընդհանուր պայքարի մը համար, հարգելով միանգամայն յուրաքանչյուր կազմակերպության ինքնավարությունը. կը միանանք անկեղծորեն, եղբայրորեն եւ նախքան կռիվ սկսելը՝ խոստում կուտանք չի թուլանալ, ու կը հայտարարենք սուլթանին՝ թե մեր զենքերը վար չենք դներ, մինչեւ որ Թուրքիոյ համար նոր դարագլուխ մը չի բանանք»[2]:

Կոնգրեսը կոչ է անում կայսրության բոլոր ընդդիմադիր ուժերին՝ դիմել հեղափոխական միջոցների, «որոնք քաջալերական արդյունք տված են, ինչպես ցույց կտա հեղափոխական գործունեությունը ընդհանրապես եւ թուրք-հայ խառն խմբերու նորագույն գործունեությունը»[3]:

Հայտարարագիրը ավարտվում է՝

«Կեցցե համերաշխությունը ցարդ անմիաբան ազգերուն:

Կեցցե միությունը հեղափոխական ուժերուն» կարգախոսներով[4]:

Այսպիսով, Օսմանյան կայսրության ընդդիմադիր ուժերի միասնա-

1. *Յայտարարագիր Օսմանյան կայսրության ընդդիմադիր տարրերու կոնգրեսին, գումարված Եվրոպայի մեջ (27-29 դեկտեմբերի), Ժընեվ, 1907, էջ 7:*
2. *Նույն տեղում, էջ 8:*
3. *Նույն տեղում, էջ 9:*
4. *Նույն տեղում, էջ 11:*

կան ճակատը ստեղծված էր: Հայ ժողովրդի՝ այդ ժամանակ արդեն միակ դեկավար կուսակցությունը՝ Դաշնակցությունը այդ ճակատի առանցքային ուժերից էր: Եվ ինչպես ասվում է Հայտարարագրում՝ հակահամիդյան պայքարին արդեն մասնակցում էին թուրք-հայկական խառը խմբեր:

Օսմանյան կայսրության ընդդիմադիր ուժերի միասնական ճակատի ստեղծմամբ արեւմտահայերը դադարեցնում են ազգային-ազատագրական պայքարը: Փոխվում է հայերի մարտավարությունը: Դաշնակցությունը Երիտթուրքերի հետ միասին պայքարի է դուրս գալիս համիդյան ռեժիմը տապալելու համար: 1908 թ. ընդդիմությունը հաղթում է, Երիտթուրքերը գալիս են իշխանության գլուխ, դաշնակցությունը դառնում է խորհրդարանական կուսակցություն: Ընդդիմության հաղթանակի առաջին շրջանը դիտվում էր որպես հայ-թուրքական բարեկամության շքահանդես: Նույնիսկ 1909 թ. Ադանայի ջարդերը չփոխեցին դաշնակցության քաղաքականությունը: Հարաբերությունները, իհարկե, գնալով վատանում էին, սակայն, մինչեւ Առաջին համաշխարհային պատերազմը դաշնակցությունը արեւմտահայությանը կոչ չարեց դուրս գալ ազգային-ազատագրական պայքարի: Դաշնակցությունը 1912-1913 թթ. խզեց կապերը Երիտթուրքերի հետ, դարձավ ընդդիմադիր կուսակցություն, բայց դրանով հանդերձ իր 7-րդ ընդհանուր ժողովում՝ 1913 թ. օգոստոսին որոշում է, որ եթե պատերազմը անխուսափելի դառնա, «ամեն քաղաքացի կը կատարե իր քաղաքացիական պարտականությունը իր պետության հանդեպ»[1]: 1914 թ. հուլիսին տեղի ունեցած Դաշնակցության 8-րդ ընդհանուր ժողովը որոշում է. «Մնալ անհողդողդ ընդդիմադիրի եւ անաչառ քննադատի դերին մեջ հանդեպ Իթթիհատի, պայքարելով անոր ազգայնական վնասակար եւ հակապետական քաղաքականության դեմ»: Անփոփոխ է պահպանվում նախորդ ընդհանուր ժողովի որոշումը այն մասին, որ «պատերազմի պարագային յուրաքանչյուր պետության քաղաքացի պետք է կատարի իր պարտականությունները՝ իր պետության հանդեպ»[2]:

Ուրեմն, ինչպես տեսնում ենք, 1907 թվականի դեկտեմբերից մինչեւ Առաջին աշխարհամարտը ընկած ժամանակահատվածում Արեւմտյան Հայաստանում ազգային-ազատագրական պայքար չի եղել:

Հետեւաբար, անհիմն ու հակագիտական է խոսել այդ շրջանում ազգային-ազատագրական պայքարի մասին: Յոթ տարի Արեւմտյան Հա-

1. *Հրաչ Տասնապետյան, Հ.Յ. Դաշնակցությունը իր կազմութենեն մինչեւ Ժ. ընդ. ժողով (1890-1924). Աթենք, 1988, էջ 105:*
2. *Նույն տեղում, էջ 108:*

յաստանում ազատագրական պայքար չի եղել, իսկ 1915 թվականին արեւմտահայությունը զոհ է գնացել թուրքական ցեղասպանությանը, որը պատմական այլ կատեգորիա է՝ իրագործված պանթուրքիզմի կողմից Թուրքիան թուրքացնելու նպատակով:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին թուրքերը իրականացնում են արեւմտահայության ոչնչացման պանթուրքական ծրագիրը: Թուրքիան թուրքանում է: Սակայն, ռուսական բանակն էլ այդ տարիներին նվաճում է գրեթե ամբողջ Արեւմտյան Հայաստանը:

1918 թ. աշնանից ռուսական զորքերը սկսում են հեռանալ Կովկասյան ճակատից: 1918 թ. հունվարի 30-ին, ռուսական զորքերի հեռանալուց հետո, թուրքական բանակը հարձակում է սկսում՝ նպատակ ունենալով վերջնականապես իրականացնել պանթուրքիզմի ծրագրային դրույթները: Պանթուրքիստները ձեռնամուխ եղան իրենց երկրորդ ծրագրային խնդրի իրականացմանը՝ Արեւելյան Հայաստանի գրավմանը, արեւելահայության ոչնչացմանը, որի նպատակը Օղուզական պետության ստեղծումն էր: Գրաված վայրերում թուրքական բանակը իրականացնում էր հայ ժողովրդի ցեղասպանության պանթուրքական ծրագիրը: Թուրքիան գործադրում էր բոլոր միջոցները՝ հայկական սեպը վերացնելու համար, որը Մեծ Թուրանի պետության ստեղծման նախապայմանն էր:

Թուրքիայի նպատակների մասին Վեհիբ փաշան Բաքումի բանակցությունների ժամանակ Ա. Խատիսյանին ասել է.

«Դուք կը տեսնեք, որ ճակատագիրը կըքաշե Թուրքիան արեւմուտքեն արեւելք:

Մենք հեռացանք Բալկաններից, կհեռանանք նաեւ Աֆրիկայից, բայց մենք պետք է տարածվենք դեպի արեւելք, հոն է մեր արյունը, մեր կրոնը եւ լեզուն: Եվ ասիկա տարերային ձգողություն ունի, մեր եղբայրները Բաքու, Դաղստան, Թուրքեստան եւ Ադրբեջան են: Մենք պետք է ճամբա ունենանք դեպի հոն: Եվ դուք՝ հայերդ կանգնած եք մեր այդ ճամբուն վրա: Պահանջելով Վանը՝ դուք կը փակեք մեր ճամբան դեպի Պարսկաստան: Պահանջելով Նախիջեւանն ու Զանգեզուրը՝ դուք արգելք կը դառնաք մեզի իջնելու Քուրի հովիտը եւ երթալու Բաքու: Կարսն ու Ախալքալաքը կը փակեն մեր ճամբան դեպի Ղազախ եւ Գանձակ: Դուք պետք է մեկ կողմ քաշուիք եւ մեզի ճամբա տաք: Ահա թե ուր է մեր հիմնական վեճը: Մեզի պետք են երկու լայն ճամբաներ, որոնք հնարավորություն տան մեր բանակներուն առաջ շարժվելու եւ պաշտպանուելու: Մեր ճամբան՝ Կարս-Ախալքալաք-Բորչալու-Ղազախն է, որ կը տանի դեպի Գանձակ, մյուսը՝ կերթայ Շարուր-Նախիջեւան-Զանգեզուրով Քուրի հովիտը:

Դուք կարող եք մնալ անոնց մեջտեղը, այսինքն՝ Նոր-Բայազետի եւ

էջմիածնի շուրջը»[1]:

Վեհիբ փաշան, ինչպես տեսնում ենք, մանրամասն շարադրում է թուրքերի ազգային գաղափարախոսության մարտավարական ծրագիրը: Թուրքերը շատ լավ էին պատկերացնում իրենց ազգային խնդիրները: Հենց այդ խնդիրներն էր փորձում իրականացնել Հայաստանում թուրքական բանակը 1918 թվականի առաջին կեսին:

Օրակարգում դրված էր հայ ժողովրդի լինել-չլինելու հարցը:

Հայ ժողովրդի պատմության այդ ճակատագրական պահին ամբողջ ժողովուրդը ոտքի ելավ թուրքական զավթիչներից պաշտպանելու իր կյանքն ու Հայրենիքը: Սարդարապատում, Բաշ Ապարանում եւ Ղարաքիլիսայում տեղի ունեցան կենաց ու մահվան ճակատամարտեր: Մայիսյան հերոսամարտերն ավարտվեցին թուրքական՝ բանակի պարտությամբ:

Այդ պատմական ճակատամարտերի օրերին քայքայվեց Անդրկովկասի սեյմը, որի ավերակների վրա ստեղծվեցին Վրաստանի, Ադրբեջանի եւ Հայաստանի անկախ հանրապետությունները:

1918 թ. մայիսի 28-ին հռչակվեց Հայաստանի անկախ հանրապետությունը: Հայ ժողովուրդը վերականգնեց շուրջ 600 տարի առաջ կորցրած պետականությունը:

Հայերը պատմական հաղթանակ տարան: Աշխատեց հայոց ազգային գաղափարախոսության մեխանիզմը, հայ ժողովրդի գոյապահպանման բնազդը:

Պանթուրքիզմը՝ չնայած իր ձեռք բերած խոշոր հաջողություններին՝ Արեւմտյան Հայաստանի նվաճմանը, արեւմտահայության ցեղասպանությանը, այնուամենայնիվ, չհասավ իր երկրորդ ծրագրային խնդրի՝ հայկական սեպի վերացմանը, արեւելահայության ոչնչացմանը եւ Օղուզական պետության ստեղծմանը: Դեռ ավելին. Հայոց Հայրենիքի մի փոքրիկ տարածքում վերաստեղծվեց հայկական պետականությունը:

1918 թ. հունիսի 4-ին Բաքումում Թուրքիայի հետ կնքված պայմանագրով Հայաստանի Հանրապետության տարածքը կազմում էր 12 հազար քառ. կմ.:

1918 թ. հոկտեմբերի 30-ին Դաշնակիցների եւ Թուրքիայի միջեւ Մուդրոսում կնքված զինադադարով թուրքերը պարտավորվեցին ազատել Անդրկովկասում նվաճած տարածքները: Շուտով թուրքական զորքերը հեռացան Անդրկովկասից: 1919 թ. գարնանը թուրքերից ազատված հայկական տարածքները միացվեցին Հայաստանի Հանրապետությանը: Հայաստանի Հանրապետության տարածքը հասավ 71 հա-

1. Ալ. Խաչիկեան. Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Բեյրութ, 1968, էջ 86:

զար քառակուսի կիլոմետրի:

Հայ ժողովուրդը այդ ժամանակ մեծ հույսեր ուներ ապագայի նկատմամբ: Միջազգային հարաբերությունների օրակարգում էր գտնվում նաեւ Արեւմտյան Հայաստանի հարցը: Հայկական հարցը նորից ակտիվորեն քննարկվում էր մեծ տերությունների հարաբերություններում: Հայկական հարցը պետք է քննարկվեր ինչպես Փարիզի կոնֆերանսում, այնպես էլ Սեւրում:

Հայոց նորաստեղծ պետականությունը պետք է իր վճռական խոսքն ասեր հայոց ազգային գաղափարախոսության կապակցությամբ, ո՞րն է լինելու նրա բովանդակությունը, դառնալու՞ է արդյոք պետական գաղափարախոսություն, թե՞ ոչ:

Հայկական հարցը միջազգային վեհաժողովներում ներկայացնելու համար ստեղծվում է երկու հայկական պատվիրակություն՝ արեւմտահայության ազգային պատվիրակությունը՝ Պողոս Նուբարի ղեկավարությամբ, եւ Հայաստանի Հանրապետության պետական պատվիրակությունը՝ Ավետիս Ահարոնյանի ղեկավարությամբ:

Հայ ազգային պատվիրակությունը 1918 թ. նոյեմբերի 30-ին Փարիզում Հայոց հայրենիքի ապագա սահմանների մասին հանդես է գալիս հետեւյալ հայտարարությամբ:

«Հայկական ազգային պատվիրակությունը, պատասխանելու համար հայ ազգին միակամ իղձին, որուն մեկ մասը արդեն իսկ իբրեւ անկախ հանրապետություն կազմուած է, կը հայտարարե ամբողջական Հայաստանի անկախությունը, Կիլիկիայով միասին, Համաձայնական պետություններու եւ Միացյալ Նահանգներու հովանավորության տակ, կամ ազգերու Դաշնակցության՝ երբ այն կազմուի»[1]:

Ուրեմն, արեւմտահայությունը ի դեմս ազգային պատվիրակության, պաշտպանում էր Միացյալ Հայաստանի անկախության գաղափարը:

Հայկական երկու պատվիրակությունները այդ հարցի շուրջը ունենում են բուռն նիստերի մի շարք: Ի Վերջո, գալով ընդհանուր համաձայնության, 1919 թ. փետրվարի 12-ին Փարիզի վեհաժողովին են ներկայացնում մի ընդարձակ հուշագիր, որը վերնագրված էր՝ «Հայկական հարցը հաշտության վեհաժողովին առջեւ»[2]:

Հուշագրում հայկական ազգային պահանջները ձեւակերպվել էին հետեւյալ կերպ.

1. Ճանաչումը Հայկական անկախ պետության մը, կազմուած յոթը նահանգներու եւ Կիլիկիոյ միացումովը Կովկասի Հայկական Հանրապետության հետ...

1. Միացյալ եւ անկախ Հայաստան. պատմական քայլը, Կ. Պոլիս, 1919, էջ 59:
2. Նույն տեղում, էջ 62-64:

2. Որ այսպիսով կազմված Հայկական պետությունը հավաքական երաշխավորությանը տակ դրվի Դաշնակից պետությանց եւ Միացյալ Նահանգներու կամ Ազգերու ընկերակցության, որուն ինքն ալ կը պահանջե մաս կազմել:

Որ Խաղաղության Համաժողովին կողմե մասնավոր մանդատ մը տրվի պետություններեն մեկուն, որ իր օժանդակությունը պիտի ընծայե Հայաստանի՝ փոխանցման ժամանակաշրջանի մը միջոցին: Այդ պաշտոնը ստանձնող Պետության ընտրությունը պիտի ըլլայ խորհրդածությամբը ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԻՆ, ՈՐ ԱՅԺՄ ԳՈՒՄԱՐՎԱԾ Է ՓԱՐԻԶԻ ՄԵՋ ԵՎ ՈՐ ԿԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵ ԱՄԲՈՂՋ ՀԱՅ ԱԶԳԸ: Մանդատի տեւողությունը պիտի ըլլայ առ առավելն քսան տարի»:

Միացյալ անկախ հայկական պետության մեջ պետք է մտնեին Վանի, Բաղեշի, Տիգրանակերտի, Խարբերդի, Սեբաստիայի, Կարինի եւ Տրապիզոնի վիլայեթները, Կիլիկիան, Անդրկովկասի Հայկական Հանրապետությունը՝ 1919 թ. ընդարձակված տարածաշրջանով:

Հուշագիրը մտորագրել էին Ա. Ահարոնյանը եւ Պողոս Նուբարը:

Երեւանում 1919 թ. փետրվարի 6-13-ը տեղի է ունենում Արեւմտահայ երկրորդ համագումարը, որը ընդունում է հետեւյալ քաղաքական բանաձեւը.

«Արեւմտահայ Բ Համագումարը՝ քննելով հայ ժողովրդի ներկա կացությունը.

1. Կը հայտարարե իր վճռական որոշումն ու կամքը՝ ունենալ քաղաքական եւ պետական մեկ միություն՝ համազգային հատվածներու եւ երկրամասերու միավորությամբ:
2. Կը պարտադրե ընտրված Գործադիր մարմինը նախարարական դահլիճին հետ անմիջապես հարաբերության մեջ մտնել՝ իրականացնելու եւ գործնականացնելու քաղաքական եւ պետական այն բոլոր աշխատանքները, որոնք հարկավոր են Ազատ Միացյալ Հայաստանի պետական գոյությունը հիմնավորելու համար:
3. Միաժամանակ կը պարտադրե ընտրուած «Գործադիր մարմնին». գործնական քայլեր առնել Արարատյան Հանրապետության նախարարության եւ խորհրդարանի հետ Միացյալ Ազատ Հայաստանի անկախությունը հայտարարելու եւ իր մասնակցությունը բերելու գոյություն ունեցող պետական եւ օրենսդրական հաստատություններու մեջ՝ համազգային միությունը իրականացնելու համար»[1]:

Սույն որոշումը ընդունելուց հետո, Արեւմտահայ համագումարը ուղերձներ է հղում Հայաստանի կառավարությանը եւ խորհրդարանին:

1. Նույն տեղում, էջ 67:

Արարատյան Հանրապետության վարչապետին ուղղված դիմումում ասվում էր. «Արեւմտահայ Բ Համագումարը՝ ողջունելով հայության մի հատվածի կառավարությունը, լիահույս է, որ այն եւս կը միացնե իր ձայնը Արեւմտահայ համագումարի վճռին- ունենալ մեկ հայրենիք եւ մեկ Միացյալ Ազատ Հայաստանի պետական կազմակերպություն:

Համագումարը՝ գտնելով սույն խնդիրը հայության համար պատմական մեկ կարեւոր խնդիր, հավատացած է, որ Արարատյան Հանրապետության կառավարությունը կը փութա օր առաջ հայտարարել Միացյալ Ազատ Հայաստանի անկախությունը եւ գործնական քայլեր առնել՝ միացումը իրականացնելու համար կյանքի մեջ»[1]:

Արարատյան Հանրապետության խորհրդարանին ուղղված դիմումում բարձրացվում էր նույն խնդիրը.

«Արեւմտահայ Բ Համագումարը՝ ողջունելով հանրապետության անդրանիկ խորհրդարանը, վստահ է, որ այն եւս իր հեղինակավոր ձայնը պիտի միացնե հայության ամենեն տանջված եւ զոհաբերած հատվածի ձայնին - ունենալ մեկ Հայրենիք՝ Միացյալ, Անկախ Հայաստան, մեկ պետական կազմակերպությամբ:

Համագումարը հավատացած է, որ Խորհրդարանը չուշանար իր որոշումը տալու հայության համար խիստ կարեւոր այս խնդրի մասին»[2]:

Փետրվարի 25-ին Հայաստանի կառավարությունը քննության առավ Արեւմտահայ երկրորդ համագումարի դիմումը եւ, համաձայնելով առաջարկին, հանձնարարեց հարցը պատրաստել ու մտցնել Հայաստանի խորհուրդ:

1919 թ. մայիսի 28-ին Ալ. Խատիսյանը Հայաստանի Հանրապետության խորհրդարանի հանդիսավոր նիստում կարդաց «Միացյալ Հայաստանի Անկախության Հայտարարագիրը», որի տեքստը տալիս ենք ամբողջությամբ:

«Հայաստանի ամբողջությունը վերականգնելու եւ ժողովրդի լիակատար ազատությունն ու բարգավաճումը ապահովելու համար, Հայաստանի կառավարությունը, համաձայն բովանդակ հայ ժողովրդի միահամուռ կամքի ու ցանկության, հայտարարում է, որ այսօրվանից Հայաստանի բաժան-բաժան մասերը մշտնջենապես միացած են իբր անկախ պետական միություն:

Ուղիղ մի տարի առաջ ռուսահայերի համագումարից ընտրված Հայոց Ազգային խորհուրդը հայտարարեց իրեն անդրկովկասյան հայկական գավառների բարձրագույն իշխանություն: Ազգային խորհրդի կազմած կառավարությունն այդ քաղաքական ակտի մասին պաշտոնապես

1. Նույն տեղում. էջ 68:
2. Նույն տեղում:

պետությանց ներկայացուցիչներին հայտնելուց հետո՝ այս մի տարվա մեջ փաստորեն հաստատել է իր իշխանությունն Անդրկովկասի հայկական գավառներում:

1919 թ. փետրվար ամսին Երեւան քաղաքում կայացած Արեւմտահայ երկրորդ համագումարը հանդիսավոր կերպով հայտարարեց, որ նա Հայաստանը միացյալ եւ անկախ է ճանաչում:

Այժմ, Անդրկովկասում եւ Օսմանյան կայսրության սահմաններում գտնված պապենական հայկական երկրների միացման եւ անկախության այս ակտը կատարելով՝ Հայաստանի կառավարությունը հայտարարում է, որ Միացյալ Հայաստանի պետական ձեւն է Ռամկավար Հանրապետություն եւ որ ինքը հանդիսանում է Միացյալ Հանրապետության կառավարությունը:

Այսպիսով, ներկայումս Հայաստանի ժողովուրդն է իր ամբողջական հայրենիքի գերագույն տերն ու տնօրենը, եւ Հայաստանի պառլամենտն ու կառավարությունը հանդիսանում են Միացյալ Հայաստանի ազատ ժողովուրդը շաղկապող բարձրագույն օրենսդիր եւ գործադիր իշխանությունը:

Հայաստանի կառավարությունը սույն ակտը հրատարակում է 1919թ. ապրիլի 27-ին պառլամենտի որոշմամբ կառավարությանը տրված հատուկ լիազորության հիման վրա»[1]:

Փաստաթուղթն ստորագրել էին Հայաստանի Հանրապետության վարչապետը եւ նախարարները:

Հայաստանի Հանրապետության խորհրդարանի հանդիսավոր նիստում կարդացվեց Արեւմտահայ գործադիր մարմնի հետեւյալ հայտարարությունը.

«Կանգնած մնալով Արեւմտահայ Բ համագումարի ընդունած քաղաքական բանաձեւի տեսակետի վրա, Արեւմտահայ գործադիր մարմինն իբրեւ Հայկական Հանրապետության սահմաններու մեջ ապրող արեւմտահայերու ներկայացուցչական օրգան, լսելով կառավարության հայտարարությունը Հայաստանի միացման եւ անկախության մասին, սրտագին կողջունե կառավարության կատարած ակտը եւ իր լիակատար պատրաստակամությունը կը հայտնե՝ Հայաստանի Խորհրդարանի եւ կառավարության մեջ իր գործոն մասնակցությունը բերել, իրագործելու Միացյալ Հայաստանի գաղափարը եւ ամրապնդելու հայ ժողովրդի ազատությունն ու բարգավաճումը»[2]:

Միացյալ եւ անկախ Հայաստանի հայտարարագրի հրատարակման կապակցությամբ «Հայտարարությամբ» հանդես եկավ նաեւ իշխա-

1. Նույն տեղում, էջ 86-87:
2. Նույն տեղում. էջ 92:

նության ղեկի մոտ գտնվող Հ.Հ. Դաշնակցության Բյուրոն.

«Հ.Հ. Դաշնակցության Բյուրոն՝ պատմական վայրկյանի խոր գիտակցությամբ, ջերմապես ողջունում է Հայաստանի միացման եւ անկախության ակտի պաշտոնական հրատարակությունը:

Այն վսեմագույն գաղափարը, որի համար հայ ժողովրդի լավագույն, ազնիվ ու անձնվեր խավերը, արհամարհելով բոլոր դժվարություններն ու հաճույքները, հերոսաբար ընկան ազատագրական արյունոտ պայքարների ընթացքում - այսօր իրականություն է, դրված մեր առաջ - իր մեծությամբ ու վեհությամբ:

Մեր նորագույն պատմության, մանավանդ վերջին երեսնամյակի ընթացքում, հայ կյանքի մեջ գերմարդկային զոհողություններով առաջացած ժողովրդական ըմբոստացումների եւ գիտակցության հաղթանակի տոնն է այսօր մեզ համար, որին ձգտել են բազմաթիվ սերունդներ, իրենց կրծքի տակ փայփայելով անկախ ու բոլոր ցեղերի համերաշխ համագործակցության վրա հիմնված Միացյալ եւ Ազատ Հայաստանի գաղափարը:

Հ.Հ.Դ. Բյուրոն հայտարարում է այսօր հանդիսավորապես, որ այսուհետեւ չկան այլեւս «բռնավորների ձեռքով գծված սահմանները», հայկական տարբեր հատվածներ եւ տարբեր հայրենիքներ, այլ կա եւ պիտի մնա առհավետ մեկ Անբաժան ու Միացյալ Հայաստան ու մեկ եւ ամբողջացած հայ ժողովուրդ:

Հ.Հ. Դաշնակցությունը, այսօր պատմական ակտով իրականացած տեսնելով իր քաղաքական իդեալի՝ ռամկավար հանրապետության իրականացումը, հավատարիմ իր հիմնական դավանանքներին, պիտի մղե մեր պետական նավը հետեւողական եւ վճռական ընկերային բարենորոգումների հունով՝ այն դեպի սոցիալական արդարության նավահանգիստը, դիմում է բոլոր ազգերի աշխատավորությանը եւ որից՝ Հայաստանի բոլոր աշխատավորությունն էլ, առանց ազգի ու կրոնի խտրության, պիտի գտնի իր համամարդկային իդեալների իրականացումը»[1]:

Այսպիսով, 1919 թվականի առաջին կեսին հայոց ազգային գաղափարախոսությունը.

ա) պաշտոնապես ընդունվում է որպես հայ ժողովրդի ազգային գաղափարախոսություն,

բ) պետականորեն հռչակվում է որպես Միացյալ եւ անկախ Հայաստանի պետական գաղափարախոսություն:

Հայ ժողովուրդը կատարեց պատմական քայլ, ընդունեց պատմական ակտ:

1. Նույն տեղում, էջ 88-89:

Հայոց ազգային գաղափարախոսությունը վերջնականապես ձեւավորված էր եւ ընդունված ամբողջ հայ ժողովրդի եւ նրա նորաստեղծ պետության կողմից:

Հայոց անկախ պետականության վերականգնումը եւ հայոց ազգային գաղափարախոսությունը համազգային ու պետական գաղափարախոսություն հռչակելը հայ ժողովրդի ազգային-ազատագրական հերոսական պայքարի արդյունքն էր:

Բայց հայ ժողովուրդը դեռ պայքարի ուղի ուներ անցնելու: Ամբողջ 1919 թվականին եւ 1920 թվականի առաջին կեսին Հայկական հարցը գտնվում էր քննարկումների եւ ուսումնասիրությունների շրջանում (Փարիզի վեհաժողով, Լոնդոնի խորհրդաժողով, Սան-Ռեմոյի խորհրդաժողով, Հարբորդի առաքելություն եւ այլն) վերջնական վճիռ կայացնելու համար:

Հայկական երկու պատվիրակությունների կողմից ներկայացված հուշագրի պահանջները մեծ տերությունների կողմից ընդունելություն չգտան:

1920 թ. ապրիլի 24-ին Սան-Ռեմոյում՝ ապագա հայկական պետության սահմանների մասին ընդունվում է Լլոյդ Ջորջի նախագիծը, որը ուղարկվեց Վիլսոնին: Այդ նախագծում ասվում էր.

ա) Դիմել պրեզիդենտ Վիլսոնին, որպեսզի Ամերիկայի Միացյալ Նահանգները ընդունեն Հայաստանի մանդատը այն սահմաններում, որոնք տրված են Թուրքիայի հետ հաշտության պայմանագրի նախագծի առաջին տարբերակում:

բ) Եթե Ամերիկայի Միացյալ Նահանգները չկամենան ընդունել մանդատը, Միացյալ Նահանգների պրեզիդենտին խնդրվում է հանդես գալ իբրեւ միջնորդ՝ Հայաստանի սահմանների հարցում, ինչպես ասված է բերվող նախագծային հոդվածում:

գ) Հետեւյալ իմաստով հոդված պետք է մտցվի հաշտության պայմանագրում՝ Հայաստանի վերաբերյալ:

Թուրքիան, Հայաստանը եւ մյուս բարձր պայմանավորվող կողմերը համաձայն են դիմել Ամերիկայի Միացյալ Նահանգների պրեզիդենտի միջնորդությանը՝ Թուրքիայի եւ Հայաստանի սահմանների հարցում՝ Էրզրումի, Տրապիզոնի, Վանի եւ Բիթլիսի վիլայեթներում, եւ ընդունել այդ առիթով նրա որոշումը, ինչպես նաեւ որեւէ պայման, որ նա կառաջարկի դեպի ծով Հայաստանի անկախ պետության ելքի մասին»[1]:

Մեծ տերություններն, ինչպես տեսնում ենք, մերժում են հայ պատվիրակության ներկայացրած՝ ամբողջ Հայաստանում հայկական պետա-

1. Հայաստանը միջազգային դիվանագիտության եւ սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), Երեւան, 1972, էջ 669:

կանություն ստեղծելու առաջարկը եւ կանգ են առնում ավելի փոքր հայկական պետություն ստեղծելու գաղափարի վրա, որը պետք է ընդգրկեր Վանի, Բիթլիսի, Կարինի եւ Տրապիզոնի վիլայեթները՝ ոչ լրիվ տարածքով:

Սան-Ռեմոյի կոնֆերանսում մշակված՝ Թուրքիայի հետ կնքվելիք պայմանագրի նախագիծը 1920 թ. օգոստոսի 10-ին ստորագրվեց Սեւրում: Այդ պայմանագրի 3-րդ մասի 6-րդ բաժինը (88-93 հոդվածներ) ամբողջովին վերաբերվում էր Հայաստանին:

Պայմանագրի 89-րդ հոդվածում ասվում էր. «Թուրքիան եւ Հայաստանը, ինչպես եւ Բարձր պայմանավորվող կողմերը, համաձայնվում են Էրզրումի, Տրապիզոնի, Վանի եւ Բիթլիսի վիլայեթներում Թուրքիայի եւ Հայաստանի սահմանազատումը թողնել Ամերիկայի Միացյալ Նահանգների որոշմանը եւ ընդունել ինչպես նրա որոշումը, նույնպես եւ այն բոլոր միջոցառումները, որոնք նա կարող է առաջարկել՝ Հայաստանին դեպի ծով ելք տալու եւ հիշյալ սահմանագծին հարող Օսմանյան բոլոր տարածքների ապառազմականացման վերաբերյալ»[1]:

Սեւրի պայմանագրի համաձայն, ԱՄՆ–ի պրեզիդենտ Վիլսոնը 1920 թ. նոյեմբերի 22-ին հայտնում է իր «իրավարարական վճիռը»՝ Էրզրումի, Տրապիզոնի, Վանի եւ Բիթլիսի վիլայեթներում Թուրքիայի եւ Հայաստանի սահմանագծման մասին: Վիլսոնի վճռով Արեւմտյան Հայաստանի տարածքը պետք է կազմեր 90 հազ. քառ. կիլոմետր: 1920թ. Արարատյան Հանրապետության տարածքը կազմում էր 71.330 քառ. կիլոմետր:

Այսպիսով, Միացյալ Հայաստանի ընդհանուր տարածքը պետք է կազմեր 161.330 քառ. կիլոմետր[2]:

Սեւրի պայմանագրով Արեւմուտքը պաշտոնապես ճանաչեց հայ ժողովրդի պատմական իրավունքը Արեւմտյան Հայաստանում: Եթե դրան ավելացնենք, որ 1917 թ. վերջին Թուրքահայաստանի մասին դեկրետով, Խորհրդային Ռուսաստանը եւս ճանաչել էր այդ տարածքը որպես հայոց հայրենիք, ապա պարզ կդառնա, որ հայ ժողովրդի թափած արյունը, բազմադարյան հերոսական պայքարը վերջապես տվեց իր արդյունքը. աշխարհը պաշտոնապես ճանաչեց հայ ժողովրդի պատմական իրավունքը: Հենց դրա մեջ է այդ փաստաթղթերի պատմական նշանակությունը:

Հայ ժողովրդի պատմության ուսումնասիրվող փուլում հայոց ազգային գաղափարախոսությունը խոշոր հաղթանակ է տանում:

ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՄԱՐՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ

1. Նույն տեղում, էջ 676:
2. Գաբրիել Լազյան, Հայաստանը եւ Հայ Դատը, Գահիրե, 1957, էջ 213-224:

ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼԻ՝ ԶԻՆՎԱԾ ՊԱՅՔԱՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ:

Այս փուլում ազգային գաղափարախոսությունն իր նոր մարտավարությամբ խոշոր հաղթանակ տարավ:

Հայոց ազգային գաղափարախոսության զինված պայքարի մարտավարության փառապսակը դարձան 1918 թ. Մայիսյան հերոսամարտերը եւ Հայաստանի առաջին Հանրապետության հռչակումը:

Մայիսյան հերոսամարտերին մասնակցում էին Արեւմտյան Հայաստանում ազատագրական պայքարի մեծ դպրոց անցած հերոս-ֆիդայիներ, որոնք դժոխքի տանջանքներ էին ճաշակել, Հայրենիք ու հարազատների գերեզմաններ էին թողել, վրեժխնդրության կրակով էին այրվում: Արեւելահայերն էլ ռուսական կանոնավոր բանակում էին ծառայել, զենքի բոլոր տեսակների հետ վարվել գիտեին, սպաներ ու գեներալներ ունեին, առաջին աշխարհամարտին էին մասնակցել: Հայ ժողովրդի երկու հատվածների աննկուն հերոսների գերմարդկային ջանքերով միայն ձեռք բերվեցին Մայիսյան պատմական հաղթանակները, որոնց շնորհիվ կյանքի կոչվեց 600 տարի առաջ կործանված հայոց պետականությունը:

ԴԱ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ ԷՐ: Թուրքական զորքերը Արեւելյան Հայաստան էին ներխուժել ամբողջ հայությանը ոչնչացնելու նպատակով, եւ հայ ժողովուրդն էլ կռվի ելավ ամբողջությամբ՝ մեծից մինչեւ փոքրը, իր բոլոր կուսակցություններով եւ դասակարգերով: Հաղթահարվեց կուսակցական, դասակարգային, քաղաքական, հատվածային պառակտվածությունը, որը նախորդ շրջաններում մեծ վնասներ էր հասցրել ազատագրական պայքարին: Այն, ինչ չհաջողվեց իրագործել Արեւմտյան Հայաստանում, իրագործվեց Արեւելյան Հայաստանում:

1918 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻՆ ՀԱՂԹԵՑ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԸ, ՀԱՂԹԵՑ ԺՈՂՈՎՐԴԻ ԳՈՅԱՊԱՀՊԱՆՄԱՆ ԳՈՐԾՈՆԸ՝ ԻՆՔՆԱՊԱՀՊԱՆՄԱՆ ԲՆԱԶՌԸ:

1918 թվականին Մայիսյան հերոսամարտերը ցույց տվեցին նաեւ, որ մեծ հաջողություններ են ձեռք բերվել հայ ժողովրդի թերարժեքության բարդույթի վերացման գործում: Հայ ժողովրդի մեջ վերազարթնեց իր նախնիների քաջարի ոգին, նա հավատաց իր ուժերին, իր հաղթանակին, իր ապագային, չնայած այդ ուղղությամբ դեռ շատ անելիքներ կային, շատ խնդիրներ պետք է լուծվեին:

Հայաստանի առաջին Հանրապետությունը անցած շուրջ քառասուն տարվա ազատագրական զինված պայքարի արդյունքն էր:

Հայաստանի առաջին Հանրապետությունը հիմք հանդիսացավ Խորհրդային Միության կազմում՝ Հայաստանի՝ որպես Միութենական հանրապետության, գոյության համար: Խորհրդային Հայաստան-Միութենական հանրապետությունում հետագա տասնամյակներում բարե-

նպաստ պայմաններ ստեղծվեցին հայության ածի, կոնսոլիդացիայի եւ ժողովրդական տնտեսության, մշակույթի, գիտության, կրթական համակարգի թռիչքաձեւ զարգացման համար, առանց որի բացառվում էր 1991 թվականին Հայաստանի անկախ Հանրապետության հռչակումը:

ԽՍՀՄ փլուզումից հետո անկախություն ստացան միայն Միութենական հանրապետությունները: Չլիներ Հայաստանը Միութենական հանրապետություն, անկախություն չէր ստանա:

1921 թ. հուլիսի 2-3-ը Թիֆլիսում տեղի է ունեցել ՌԿԿ Կովկասյան Բյուրոյի պլենումը՝ Ստալինի մասնակցությամբ, որը քննարկել է այն հարցը, թե ինչ իմաստով պետք է հասկանալ անդրկովկասյան հանրապետությունների անկախության կարգավիճակը: Ստալինը պլենումում հայտնել է, որ ազգությունների համար նախատեսվում է ավտոնոմիաների չորս աստիճան.

ա) վարչական ավտոնոմիա,

բ) ավտոնոմ հանրապետություններ,

գ) պայմանագրային հանրապետություններ,

դ) լրիվ անկախ հանրապետություններ:

Ի տարբերություն մյուս ինքնավարությունների, ասել է Ստալինը, Անդրկովկասի երեք հանրապետությունները՝ Վրաստանը, Հայաստանը եւ Ադրբեջանը պետք է պետական անկախության լրիվ կարգավիճակ ունենան:

Այդ հանգամանքը Ստալինը բացատրել է հետեւյալ կերպ. «Այդ երեք հանրապետությունները մնացածներից տարբերվում են նրանով, որ ազգային կառավարությունների երեքամյա գոյությունը դրել է իր որոշակի կնիքը, դաստիարակության հետքերը մնացել են եւ խորհրդայնացմամբ հնարավոր չէ դրանք միանգամից վերացնել, այդ պատճառով էլ հարկադրված ենք գնալ զարտուղի ճանապարհներով: Դրանով նրանք արմատապես տարբերվում են մնացած հանրապետություններից»:

Այս որոշումը ընդունելիս բոլշեւիկյան Ռուսաստանի ղեկավարությունը հիմք էր ընդունել հետեւյալ երկու նկատառումները.

ա) Անկախ հանրապետությունների շուրջ երեքամյա գոյությունից հետո Անդրկովկասի երեք հանրապետությունների ժողովուրդների համար անհասկանալի կլիներ անկախ պետականությունից զրկվելը:

բ) Ուժեղ նացիոնալիզմի առկայությունը, որը կարող էր անցանկալի հակաբոլշեւիկյան շարժումներ առաջացնել Անդրկովկասի հանրապետություններում[1]:

1. *Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Կենտրոնական կուսակցական Արխիվ, Ֆոնդ 64, ցուցակ 2, գործ 146, էջ 1-5:*

ԱՅՍՊԻՍՈՎ, ՉԼԻՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԽՍՀՄ ԿԱԶՄՈՒՄ ՉԷՐ ԼԻՆԻ ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ: ՉԼԻՆԵԼՈՎ ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ՀԱՅԱՍՏԱՆԸ ԽՍՀՄ ՓԼՈՒԶՈՒՄԻՑ ՀԵՏՈ ՉԷՐ ԿԱՐՈՂ ՀՈՉԱԿՎԵԼ ԱՆԿԱԽ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԴՈՒՐՍ ԳԱԼ ՌՈՒՍԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԻՑ, ԻՆՉՊԵՍ ՑՈՒՅՑ ՏՎԵՑԻՆ ՉԵՉԵՆԱԿԱՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ:

ԱՄՓՈՓԵՆՔ. ԱՌԱՆՑ ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՄԱՐՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՁԻՆՎԱԾ ՊԱՅՔԱՐԻ ԿԱՐԳԱԽՈՍԻ ՈՉ 1918 Թ. ՄԱՅԻՍՅԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԵՐԸ ԿԼԻՆԵԻՆ ԵՎ ՈՉ ԷԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ:

Ահա թե ինչպիսի տեղ է գրավում ազգային գաղափարախոսությունը հայ ժողովրդի պատմական ճակատագրում:

Երրորդ փուլ. ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԱՅՐԷՋՔԻ ԵՎ ՎԵՐԵԼՔԻ ՏԱՄՆԱՄՅԱԿՆԵՐ. ՊԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՓԱՌԱՎՈՐ ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐ

Հայաստանի Առաջին Հանրապետության անկում - Հայաստանի Երկրորդ անկախ Հանրապետության հռչակում. 1991 թ. սեպտեմբեր

Հայաստանի առաջին Հանրապետության կործանումը: Հայկական հարցի թաղումը Լոզանի կոնֆերանսում:

Սփյուռքը՝ ազգային գաղափարախոսության դրոշակակիր: Ցեղասպանության միջազգային ճանաչման համար մղվող պայքարը՝ որպես Հայկական հարցի առաջին փուլ: Հայկական հարցի քարոզչությունը: Զինված պայքարը՝ Հայկական հարցի միջազգային ճանաչման միջոց: Հայկական հարցի վերածնունդը:

Ղարաբաղյան շարժումը: Հայաստանը եւ Լեռնային Ղարաբաղը՝ ազգային գաղափարախոսության դրոշակակիրներ: Հայաստանի անկախ Հանրապետության հռչակումը: Լեռնային Ղարաբաղի անկախ Հանրապետության հռչակումը:

Ցեղասպանության միջազգային ճանաչումը՝ պետական քաղաքականություն:

Փոքր ժողովուրդների պատմական իղձերը դժվարությամբ են իրականանում: 1920 թ. երկրորդ կեսից միջազգային իրադարձությունների զարգացումը հօգուտ հայերի չէր: Հրապարակ եկան կարեւոր միջազգային գործոններ, որոնք պետք է ճակատագրական դեր կատարեին հայ ժողովրդի կյանքում:

1. Թուրքիայում 1919 թ. սկսել էր ծավալվել քեմալական շարժումը, որը շուտով դարձավ ռազմաքաղաքական հզոր գործոն:

2. Ռուսաստանը եւ Թուրքիան ռազմական դաշինքի մեջ մտան: Ռուսաստանը զենքով, զինամթերքով, ռազմական հանդերձանքով, ոսկով օժանդակում էր Թուրքիային՝ միջազգային իմպերիալիզմի դեմ պայքարելու համար: Այդ բոլորը Թուրքիան օգտագործում էր Հայաստանի դեմ:

3. 1920 թ. սեպտեմբերի վերջերին Ռուսաստանի թույլտվությամբ Թուրքիան հարձակվեց Հայաստանի վրա: Նոյեմբերի վերջերին Հայաստան մտան նաեւ ռուսական զորքերը: Հայկական բանակը պարտվեց:

Թուրքիան իրականացնում էր Ազգային Մեծ ժողովի կողմից ընդունված Ազգային ուխտը, որը թուրքերի ազգային ծրագիրն էր: Բոլշեւիկյան Ռուսաստանն էլ իր հերթին պայքարում էր ցարական Ռուսաստանի սահմանների վերականգնման համար. դա էլ ռուսների ազգային ծրագիրն էր:

ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԿՅԱՆՔՈՒՄ ԼԻՆՈՒՄ ԵՆ. ՊԱՏՄԱԿԱՆ ՊԱՀԵՐ, ԵՐԲ ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԵՆՍՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՈՇՎՈՒՄ Է ՈՉ ԹԵ ՏԱՐԱԾ ՀԱՂԹԱՆԱԿՈՎ, ԱՅԼ ՍՏԵՂԾՎԱԾ ԲԱՐԴ ԻՐԱՎԻՃԱԿՈՒՄ ԿՈՐԾԱՆՈՒՄԻՑ ՓՐԿՎԵԼՈՒ ԵԼՔԸ ԳՏՆԵԼՈՎ:

Հայաստանի Հանրապետության ղեկավարությունը ստեղծված պայմաններում, ելնելով ազգային գաղափարախոսության մարտավարական ծրագրի «Զարյաց փոքրագույնի» հիմնադրույթից, 1920 թ. դեկտեմբերի 2-ի համաձայնագրով իշխանությունը հանձնեց բոլշեւիկներին: Հայաստանը խորհրդայնացավ: Սակայն, դեկտեմբերի 2-ի համաձայնագրով Հայաստանի Հանրապետության ղեկավարությունը իշխանությունը բոլշեւիկներին էր հանձնում որոշակի պայմաններով, որոնց մեջ կարեւորագույն նշանակություն ունեին տարածքային հարցերը:

Համաձայնագրի երրորդ կետում ասվում էր.

«Ռուսաստանի Խորհրդային կառավարությունը ընդունում է, որ Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության հողերի մեջ անվիճելի կերպով մտնում են՝ Երեւանի նահանգը իր բոլոր գավառներով, Կարսի նահանգի մի մասը, որ զինվորական տեսակետից կապահովի երկաթուղու տիրապետությունը՝ Ջաջուռ կայարանից Արաքս կայարանը, Գանձակ նահանգի Զանգեզուր գավառը եւ Ղազախ գավառի մի մասը՝ օգոստոսի 10-ի համաձայնության սահմաններում, եւ Թիֆլիսի նահանգի այն մասերը, որոնք Հայաստանի տիրապետության տակ էին գտնվում մինչեւ 1920 թ. սեպտեմբերի 28-ը»[1]:

Հայ ժողովուրդը կորցրեց անկախությունը եւ Ռուսաստանի կազմում մնաց որպես Միութենական Հանրապետություն: Բոլշեւիկները Հայաստանում իշխանության գլուխ գալուց հետո դեկտեմբերի 2-ի համաձայնագիրը չեղյալ հայտարարեցին:

4. Մոսկվայի 1921 թ. մարտի 16-ի ռուս-թուրքական պայմանագրով չեղյալ հայտարարվեց Սեւրի պայմանագիրը, Արեւմտյան Հայաստանը, Կարսի մարզը եւ Սուրմալուի գավառը հանձնվեցին Թուրքիային, իսկ Նախիջեւանը եւ Շարուրը՝ Ադրբեջանին:

5. 1923 թ. Լոզանում Մեծ տերությունները չեղյալ հայտարարեցին Սեւրի պայմանագիրը: Հայկական հարցը միջազգային հարաբերու-

1. Ս. Վրացյան. Հայաստանի Հանրապետություն. Բեյրութ, 1958, էջ 502:

թյունների օրակարգից հանվեց:

Հետագա տասնամյակների ընթացքում հայ ժողովուրդը հետեւողականորեն շարունակեց պայքարը ազգային գաղափարախոսության իրագործման համար:

Ստեղծված նոր, անբարենպաստ իրավիճակում հայ ազգային-քաղաքական միտքը պետք է լրամշակեր ազգային գաղափարախոսության մարտավարությունը:

Հայոց պատմության այս ծանր շրջանում ազգային գաղափարախոսության դրոշը իր ձեռքն է վերցնում Սփյուռքը:

Խորհրդային կառավարությունը պաշտոնապես հայտարարեց, որ ԽՍՀՄ-ը Թուրքիայից տարածքային պահանջներ չունի: Խորհրդային Հայաստանի հարկադրական լռության, հայոց հայրենիքից հրաժարվելու պայմաններում ազգային-ազատագրական պայքարի դրոշը, Հայկական հարցի լուծման համար մղվող պայքարի ղեկավարությունը մնում է Հայկական Սփյուռքին:

Սփյուռքում գործող հայ ազգային կուսակցությունները, կազմակերպությունները, Հայ Դատի հանձնախմբերը լայն գործունեություն ծավալեցին Հայկական հարցի քարոզչության ուղղությամբ՝ ձգտելով այն դարձնել միջազգային հարաբերությունների օրակարգի հարց:

Սփյուռքահայ քաղաքական միտքը պայքարի առաջին պլան է մղում հայոց ցեղասպանության ճանաչման հարցը՝ արդարացիորեն գտնելով, որ եղեռնի ընդունումն ու դատապարտումը հանգեցնելու է Հայկական հարցի լուծման անհրաժեշտությանը:

Հայկական հարցի համար մղվող պայքարը ընթանում էր երկու ուղղությամբ:

Առաջինը, որոշ փոփոխություններով հանդերձ, ավանդական ուղին էր: Հայկական եւ ոչ հայկական մամուլում հրապարակվում են բազմաթիվ հոդվածներ, գրվում են գրքեր ու գրքույկներ՝ նվիրված Հայկական հարցին եւ ցեղասպանությանը: Դիմումներ են հղվում ՄԱԿ-ին, Եվրոպառլամենտին, միջազգային բոլոր կազմակերպություններին, բազմաթիվ երկրների նախագահներին, խորհրդարաններին եւ կառավարություններին՝ Հայկական հարցը եւ հայոց ցեղասպանությունը ճանաչելու առաջարկով: Տարբեր երկրներում լայն գործունեություն է ծավալում հայկական լոբբին:

Երկրորդը ահաբեկչությունն էր: Նախորդ փուլում Հայկական հարցի համար մղվող պայքարը հաջողությամբ չէր ավարտվել: Այդ պատճառով էլ սփյուռքահայ երիտասարդության մեջ ծնունդ է առնում այն տեսակետը, որ Հայկական հարցը լուծելու համար դիվանագիտական, քաղաքական միջոցներն անբավարար են: Որպես Հայկական հարցի լուծման գործնական ձեւ՝ առաջ է քաշվում աշխարհի տարբեր երկրներում Թուր-

քիայի դիվանագիտական աշխատողների ահաբեկչությունը: Նոր պայմաններում ահաբեկչությունը դառնում է ազգային-ազատագրական պայքարի այն ձեւը, որը պետք է Հայկական հարցը հաներ փակուղուց եւ նորից դարձներ միջազգային հարաբերությունների օրակարգի հարց:

Հայ ժողովրդի պատմության նորագույն շրջանում, երբ թվում էր, թե Հայկական հարցը մոռացվել է, երբ շատերն արդեն խոսում էին Սփյուռքի վերացման մասին, հայ ժողովուրդը վերսկսեց Հայկական հարցի համար մղվող զինված պայքարը:

Հայ ժողովուրդը մեկ անգամ եւս ցույց տվեց, որ ազգային գաղափարախոսությունը ազգի արյան մեջ է, քանի գոյություն ունի ազգը՝ գոյություն կունենա նաեւ ազգային գաղափարախոսությունը: Սփյուռքահայ երիտասարդները, որոնցից շատերը չէին տիրապետում կամ շատ վատ էին տիրապետում մայրենի լեզվին, ղեկավարվելով արյան կանչով, նախնիների կանչով, մահն աչքի տակ առած, պայքարի դուրս եկան Արեւմտյան Հայաստանը ազատագրելու համար:

Սփյուռքահայ երիտասարդության անձնազոհ ահաբեկչական պայքարի շնորհիվ Հայկական հարցը դուրս եկավ մոռացության շրջանից:

Հայկական հարցի եւ հայոց ցեղասպանության ճանաչման ուղղությամբ ձեռք բերվեցին զգալի հաջողություններ, որոնք շատ ավելի մեծ կարող էին լինել, եթե Սփյուռքը միասնական լիներ եւ Խորհրդային Հայաստանն էլ հանդես գար որպես պահանջատեր:

Ազգային գաղափարախոսության նոր մարտավարության շնորհիվ Հայկական հարցը սկսեց լայնորեն քննարկվել մամուլում, տարբեր պետությունների խորհրդարաններում եւ կառավարություններում: Դեռ ավելին. Հայկական հարցով, հայոց ցեղասպանությամբ սկսեցին զբաղվել նաեւ միջազգային կազմակերպությունները:

Այսպիսով, մոռացության տրված Հայկական հարցը նորից է հրապարակ գալիս, նորից է դառնում միջազգային ատյանների եւ մեծ տերությունների քննարկումների հարց:

Ազգային գաղափարախոսության համար մղվող պայքարը չափազանց ծանր պայմաններում ընթանում էր նաեւ Խորհրդային Հայաստանում: Լինելով Խորհրդային Միության բաղկացուցիչ մասը, Հայաստանը լիովին գտնվում էր այդ երկրի հասարակական-քաղաքական կյանքի ոլորտներում եւ հավասարապես տանում էր բոլշեւիկյան դիկտատուրայի դաժանությունները: 20-30-ական թվականներին Հայաստանում հիմնականում գնդակահարվեցին, բանտարկվեցին եւ աքսորվեցին ազգային գաղափարախոսության կրողները: Ամենածանր մեղադրանքը նացիոնալիզմն էր: Այդ տարիներին ամեն ինչ արվում էր հայ ժողովրդի պատմական հիշողությունը ոչնչացնելու համար: Հայկական հարցը,

զեղասպանությունը կամ ազգային կուսակցությունները հիշատակվում էին միայն նացիոնալիստներին քաղաքական մեղադրանքներ տալու կապակցությամբ:

Այդպիսի դժնդակ քաղաքական պայմաններում հայ մտավորականությունը, ամբողջ հայ ժողովուրդը՝ վտանգելով իր կյանքը, ձեւեր էր գտնում պատմական հիշողությունը, ազգային գաղափարախոսությունը թարմ պահելու համար:

Այդ ժամանակահատվածում ազգային գաղափարախոսության համար մղվող պայքարը պաշտպանողական բնույթ էր կրում:

Միայն Ստալինի մահից եւ ԽՄԿԿ 20-րդ համագումարից հետո երկրի քաղաքական կյանքը սկսեց համեմատաբար ազատականանալ:

ԽՄԿԿ 20-րդ համագումարից հետո ազգային գաղափարախոսության համար մղվող պայքարը սկսեց հարձակողական բնույթ կրել: Նոր պայմաններում մշակվեց ազգի, հայրենիքի եւ մշակույթի համար մղվող պայքարի նոր մարտավարություն:

Հայ մտավորականության մի ստվար բանակ, հատկապես գրողներ, պատմաբաններ, հրապարակախոսներ եւ այլ բնագավառների պատկանող գործիչներ, վտանգելով իրենց կյանքը, հրապարակայնորեն հանդես էին գալիս ազգային գաղափարախոսության հաղթանակի համար:

Երկրում տեղի էր ունենում խաղաղ հեղափոխություն: Հայ մտավորականությունը հայրենասիրության հրաշքներ էր ցույց տալիս: Ավանգարդում, ինչպես միշտ, ընթանում էին Գրողների միությունը, Համալսարանը եւ Ակադեմիան:

Այդ պայքարը ուժեղացավ եւ լայն ծավալ ընդունեց հատկապես ցեղասպանության 50-ամյակից հետ: Բազմահազարանոց միտինգները, երթերը դարձան սովորական երեւույթ, հայ ժողովրդի կյանքի անբաժան մաս: Հայ մտավորականությունը հմտորեն օգտագործում էր տարբեր բնույթի ժողովները:

«Հողերը, հողերը» կարգախոսը դարձել էր օրվա հիմնական նշանաբանը: Հայրենիքի գաղափարը, կորցրած հայրենիքի կարոտը ժողովրդին պայքարի էր կոչում:

Ժամանակակիցները շատ լավ են հիշում, թե ինչպես էին ձեռքից-ձեռք անցնում հայ մտավորականների՝ ազգային գաղափարախոսության տարբեր հիմնախնդիրներին նվիրված գրքերը, գրքույկները, հոդվածները եւ վերջապես տարբեր ժողովներում կարդացած զեկուցումների ու ելույթների տեքստերը:

Առաջացան ընդհատակյա ազգային կազմակերպություններ, որոնք արդեն փորձում էին խոսքից անցնել գործի:

Ազգային գաղափարախոսությունը Հայաստանում վերածնունդ էր

ապրում: Ձեռքբերումները հսկայական էին: Երկրի կոմունիստական ղեկավարությունն անհանգստացած էր: Սկսվեցին առանձին մարդկանց եւ կազմակերպությունների ձերբակալություններ ու դատավարություններ, կոմկուսի անդամները հեռացվում էին կուսակցությունից, շատերը հեռացվում էին աշխատանքից: Եռանդուն աշխատում էր գրաքննությունը: Ուժեղացվեց պայքարը ազգային մտավորականության դեմ: Ամենուրեք նացիոնալիզմ էր որոնվում:

Սակայն, արգելակել ազգային զարթոնքը, ազգային գաղափարախոսության հաղթարշավը այլեւս հնարավոր չէր:

Խորհրդային Հայաստանում տեղի էր ունենում ազգային գաղափարախոսության հաղթարշավ, ազգային գաղափարների վերածնունդ:

Ստալինի մահից մինչեւ ղարաբաղյան շարժման սկիզբը 35 տարի է: Այդ տարիները նոր փուլ են հայոց պատմության մեջ, որի ընթացքում վերածնվեց հայոց ազգային գաղափարախոսությունը, մշակվեց հայոց ազգային ծրագիրը:

Հայ ժողովրդի պատմության այդ ժամանակահատվածը սպասում է իր պատմաբանին:

Իսկ մինչ այդ, մենք մերժելի ենք համարում արդեն նկատվող հետեւյալ միտումները.

ա) չնկատել կամ նսեմացնել այն հերոսական պայքարը, որը մղվել է խորհրդային իշխանության տարիներին, հատկապես Ստալինի մահից հետո:

բ) ազգային շարժումը ունեցել է իր լիդերները եւ լիդեր-կազմակերպությունները, սակայն, պայքարը եղել է զանգվածային, որում յուրաքանչյուր մասնակից ունեցել է իր տեղը: Դա եղել է զանգվածային հերոսության ժամանակաշրջան:

գ) 1988 թ. փետրվարին պոռթկած ղարաբաղյան շարժումը, որը միաժամանակ անկախության համար մղվող պայքար էր, նախապատրաստված էր նախորդ երեք եւ կես տասնամյակների պատմությամբ:

Ինչպես տեսնում ենք, Լոզանի կոնֆերանսից հետո եւ Սփյուռքում, եւ Խորհրդային Հայաստանում Ազգային գաղափարախոսության հաղթանակի համար մղվող պայքարը աստիճանաբար լայն ծավալ է ընդունում, ընդգրկելով գրեթե ամբողջ հայությունը:

Այդ պայքարում հայ ժողովուրդը ձեռք բերեց խոշոր պատմական հաջողություններ:

Այդ հաղթանակներից ամենակարեւորներն են.

Առաջին. Հայաստանի անկախ հանրապետության հռչակումը: Սույն ակտով իրականացավ հայոց ազգային գաղափարախոսության կարեւորագույն հիմնադրույթի՝ Հայրենիքի գաղափարի առաջին աստիճանը՝

Միացյալ Հայաստանի ստեղծման հիմքը:

Հայաստանի անկախ հանրապետության ստեղծումը Հայոց ազգային գաղափարախոսության խոշորագույն հաղթանակն էր: Հայաստանի անկախ Հանրապետության հռչակման իրողությունը ապացուցեց ազգային գաղափարախոսության նոր մարտավարության պատմական հիմնավորվածությունը:

Երկրորդ. Լեռնային Ղարաբաղի անկախ Հանրապետության հռչակումը: Այսօր արդեն անկասկած է, որ տարբեր պետությունների կողմից նվաճված հայկական տարածքների վերամիավորումը Միացյալ Հայաստանի պետության մեջ կատարվելու է փուլ առ փուլ: Դա լինելու է դժվարին պրոցես: Այդ է ցույց տալիս Լեռնային Ղարաբաղի ազատագրման համար մղվող պայքարի փորձը, Լեռնային Ղարաբաղի անկախ Հանրապետության հռչակումը, մի պրոբլեմ, որի վերջնական լուծումը դեռ շատ ջանքեր է պահանջելու:

Երրորդ. Եվրոպական պառլամենտի 1987 թվականի հունիսի 18-ի բանաձևը՝ Հայկական հարցի քաղաքական լուծման անհրաժեշտության մասին:

Չորրորդ. ՌԴ Պետական Դումայի 1995 թվականի ապրիլի 14-ի Հայտարարությունը՝ 1915-1922 թթ. հայոց ցեղասպանությունը դատապարտելու մասին: Ընդ որում, Պետական Դումայի Հայտարարության համաձայն, հայոց ցեղասպանությունը տեղի է ունեցել հայերի պատմական հայրենիք Արևմտյան Հայաստանում:

Այդ նշանակում է, որ բոլշևիկյան Ռուսաստանին փոխարինելու եկած դեմոկրատական Ռուսաստանը ճանաչում է հայ ժողովրդի պատմական իրավունքները:

Այսպիսով, շարադրվածը ցույց է տալիս, որ Հայոց ազգային գաղափարախոսությունը բռնել է պատմության քննությունը եւ նրանից շեղվելը կործանարար կլինի հայ ժողովրդի համար:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ՝ ԵՐՐՈՐԴ ԳԼԽԻ

Հայոց ազգային գաղափարախոսության նոր մարտավարության ձեւավորման գործընթացի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այն որոնումների ծանր ու երկարատեւ ուղի է անցել: Այդ դժվարին ճանապարհին ձեռք են բերվել պատմական հաջողություններ, թույլ են տրվել սխալներ ու վրիպումներ, եղել են վեճեր ու տարաձայնություններ:

Հայոց ազգային գաղափարախոսության նոր մարտավարությունը վերջնականապես ձեւավորվել է Հայաստանի առաջին Հանրապետության տարիներին:

Հայաստանի առաջին Հանրապետության հռչակումը հայոց ազգային գաղափարախոսության եւ նրա նոր մարտավարության խոշորագույն հաղթանակն էր: Հայաստանի առաջին Հանրապետությունը հայոց ազգային գաղափարախոսությունն ընդունել է որպես պետական գաղափարախոսություն, պետականորեն տեր է կանգնել Հայկական հարցին:

Հայաստանի առաջին Հանրապետության անկումից հետո, ղեկավարվելով ազգային գաղափարախոսության հիմնադրույթներով, հայ ժողովուրդը կարողացավ ձեռք բերել նոր պատմական հաջողություններ.

ա) 1991 թ. սեպտեմբերին հռչակվել է Հայաստանի անկախ Հանրապետությունը,

բ) հռչակվել է Լեռնային Ղարաբաղի անկախ Հանրապետությունը:

Շարադրվածը ցույց է տալիս, որ հայոց ազգային գաղափարախոսությունը բռնել է պատմության քննությունը եւ նրանից հրաժարվելը կամ շեղվելը կործանարար կլինի հայ ժողովրդի եւ Հայաստանի համար:

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ

1. ԱԿՈՒՆՔՆԵՐԸ, ԷՈՒԹՅՈՒՆԸ, ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՆԵՐԸ

Հայոց ազգային գաղափարախոսությունը հին է այնքան, որքան հայ ժողովուրդը: Նա կյանքի է կոչվել առաջին հայ ցեղախմբերի ձեւավորման հետ՝ որպես հայ էթնոսի ինքնապահպանման բնազդ, ազգային ինքնագիտակցության նախասկիզբ:

Դարերի ընթացքում հայոց ազգային գաղափարախոսությունը աշխարհաքաղաքական գործոնների փոփոխմանը զուգընթաց լրամշակվել է եւ դարձել մի ամբողջական գիտական համակարգ:

Հայոց ազգային գաղափարախոսության ամբողջական համակարգի ստեղծման գործում, մեր կարծիքով, առանցքային դեր են կատարել երեք խոշոր ազգային գործիչներ:

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻ: Հայոց ազգային գաղափարախոսությունը, որպես ամբողջական համակարգ, առաջին անգամ իր արտահայտությունն է գտել Մովսես Խորենացու «Հայոց պատմություն» գրքում[1]: Պատմահոր «Հայոց պատմությունը» հայոց ազգային գաղափարախոսության առաջին ձեռնարկն է, իսկ Մովսես Խորենացին՝ հայոց առաջին ազգային գաղափարախոսը: Մովսես Խորենացուն նման գնահատական առաջին անգամ տվել է Նիկողայոս Ադոնցը, գրելով. «Նա հայ ազգային առաջին գաղափարախոսն էր»[2]:

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԴՈՆՑ: Հետագա դարերում հայ ազգային-քաղաքական գործիչները,ելնելով փոփոխվող պատմական պայմաններից, հայոց ազգային գաղափարախոսության մարտավարական ծրագիրը հարստացրել են նոր դրույթներով:

Այդ դժվարին ճանապարհին որպես ազգային գաղափարախոսու-

1. *Մովսես Խորենացի. Հայոց պատմություն. Երեւան. 1981:*
2. *Ն. Ադոնց, Հեռավոր հայ անցյալի մեծագույն դեմքը. Համազգայինի Բեյրութի գրական պահոց. Ն. Ադոնցի ֆոնդ. պահարան 1. գգրոց Բ. թղթածրար Ա 8:*

թյան երկրորդ խոշոր տեսաբան ու գաղափարախոս հանդես է գալիս Նիկողայոս Ադոնցը՝ Հայկական հարցին նվիրված իր արժեքավոր ուսումնասիրություններով[1]:

Հայկական հարցը՝ որպես անկախ Հայրենիքի եւ պետականության հիմնադրույթ, հանդիսանում է Ազգային գաղափարախոսության առանցքը:

Հայկական հարցի եւ նրա հետ առնչվող հիմնախնդիրների՝ որպես ամբողջական համակարգի գիտական հայեցակարգը մշակել է Ն. Ադոնցը: Հայկական հարցի ադոնցյան հայեցակարգը քաղաքական հայագիտության բարձրակետն է, որը հակաճառություններ չի ընդունում: Անհրաժեշտության դեպքում որպես Հայկական հարցի հիմնավորում միջազգային ատյաններին պետք է ներկայացնել Ն. Ադոնցի հայեցակարգը:

ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀ: Հայ երրորդ ազգային գաղափարախոսը Գարեգին Նժդեհն է, որը իր ուսումնասիրություններում տվել է հայոց ազգային գաղափարախոսության գրեթե բոլոր հիմնադրույթների ամբողջական շարադրանքը[2]: Ընդ որում, նա հայոց ազգային գաղափարախոսության հիմնադրույթների շարադրանքը տվել է՝ քաջատեղյակ լինելով արեւմտյան տեսական գրականությանը:

Հայոց ազգային գաղափարախոսության հիմքում ընկած են ազգի, ամբողջական Հայրենիքի, անկախ պետականության, ազգային մշակույթի եւ ազգային կրոնի հիմնադրույթները, որոնք ընդհանուր են բոլոր ազգերի համար:

Սակայն, յուրաքանչյուր ժողովուրդ՝ ազգային գաղափարախոսության նշված առանցքային հիմնադրույթներով հանդերձ, ունի նաեւ իր՝ պատմական զարգացման, աշխարհաքաղաքական գործոններով պայմանավորված, գաղափարախոսության առանձնահատկությունները:

Ավարտելով ազգային գաղափարախոսության ծագման, ձեւավորման եւ զարգացման հիմնադրույթների ուսումնասիրությունը, այժմ քննարկենք այն հարցը, թե արդի փուլում ինչպիսի՞ն է հայոց ազգային գաղափարախոսության բովանդակությունը, որո՞նք են նրա հիմնադրույթները եւ պատմությունից բխող առանձնահատկությունները:

1. *Նիկողայոս Ադոնց. Հայկական հարց. Երեւան, 1996:*
2. *Ավո, Նժդեհ. կյանքն ու գործունեությունը. նշիարներ. վկայություններ. Բեյրութ. 1968: Նժդեհ. Բանալային գրառումներ (հոդվածներ). Երեւան. 1993: Գարեգին Նժդեհ. Երեւան, 1995: Նժդեհ. Էջեր իմ օրագրեն. Բաց նամակներ հայ մտավորականության. Որդիների պայքարը հայրերի դեմ. Երեւան. 1998: Մուշեղ Լալայան. Ցեղակրոն եւ փարոնական շարժումները Սփյուռքում 20-րդ դարի 30-ական թվականներին (Պատմություն եւ գաղափարախոսություն), Երեւան. 1997 եւ այլն:*

2. ԱԶԳԻ ԵՎ ՀԱՅՐԵՆԻՔԻ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԸ

Հայոց ազգային գաղափարախոսության նպատակը հայ ժողովրդի գոյապահպանումն է ու բնականոն զարգացումը: Ազգի գոյապահպանման առաջին հիմնապայմանը անկախ, ամբողջական Հայրենիքի առկայությունն է: Երկրորդ հիմնապայմանը անկախ պետականության առկայությունն է: Երրորդ հիմնապայմանը՝ ազգային մշակույթի համակարգի առկայությունն է, ազգային մշակույթի՝ ազգային դաստիարակության հիմնական լծակ լինելը:

Առանց ազգի Հայրենիք չկա, առանց Հայրենիքի՝ ազգ: Հայրենիքի բովանդակությունը հողն է, ձեւը՝ ազգային մշակույթը: Առանց ազգային մշակույթի ազգային Հայրենիք չկա: Հողը ազգերի Հայրենիք է դառնում ազգային մշակույթով: Հայ ժողովուրդը դարերի ընթացքում է ձեռք բերել իր ինքնությունը, ազգային դիմագիծը, բնավորությունը, մշակույթը, որոնք պայմանավորված են Հայաստանի բնակլիմայական եւ աշխարհաքաղաքական պայմաններով ու առանձնահատկություններով:

«Ազգաբնակչության համար,- գրում է Ն. Ադոնցը,- Հայրենիքը սոսկական հողային տարածություն չէ: Ժողովրդի գիտակցության մեջ երկիրը բարձրանում է Հայրենիքի հասկացության շնորհիվ այն ամենի, ինչ կապում է, հոգեպես հարազատացնում է ժողովրդին նրա հետ: Որոշակի տեղավայրի պայմաններում եւ նրա՝ բնության հետ հաղորդակցությամբ կազմավորվում են ժողովրդական ասքերը, հեքիաթները, սովորույթները, բարքերը, լեզվական առանձնահատկությունները, ներաշխարհի բոլոր դրսեւորումները»[1]:

Հայոց Հայրենիքը պատմաէթնիկական հասկացություն է, այն ձեւավորվել է դարերի ընթացքում եւ իր մեջ ընդգրկում է հայ էթնոսի ամբողջական պատմական ապրելատարածքը: Հայոց Հայրենիքը շնորհիվ հայկական մշակույթի ունի հայկական դիմագիծ, որի գոյությունը հավերժական է:

Թուրքիան պատմության արդի փուլում փորձում է մշակութային ցեղասպանության միջոցով Արեւմտյան Հայաստանի հայկական դիմագիծը ոչնչացնել եւ դարձնել թուրքերի հայրենիք:

Նիկողայոս Ադոնցը գրում է.

> «Քաղաքական աշխարհում կշիռ ունեցող երկիրը չի կազմված միայն լեռներից, հովիտներից եւ հոսող ջրերից: Յուրաքանչյուր երկիր, իր ֆիզիկական մակերեւույթից զատ, ունի նաեւ հոգեւոր

1. Նիկողայոս Ադոնց. Հայկական հարց. Երեւան. 1996. էջ 120:

> կերպար, որն առանձնացնում է նրան մյուս երկրներից: Ինչը իսկապես նշանակություն ունի՝ կույր բնության նստվածքները չեն, այլ մարդկային հանճարի հավերժ կենդանի ստեղծագործությունները, որոնցով ծածկված է երկիրը: Բանական աշխատանքի այդ կերտվածքներն էլ ստեղծում են երկրի մշակութային ոգին: Ու՞մ է պատկանում այդ ոգին, կամ դադարու՞մ է նա երբեւէ պատկանել նրան, ով ստեղծել է այն, ում ստացվածքն է այն: Հայաստանը՝ իբրեւ մարդկային աշխատանքի փորձակայան, եղել է եւ մնացել է հայկական: Այն վերածվել է մարդու կացարանի հայկական ձեռքերով: Մնացյալ բոլորի համար այն եղել է հյուրատուն, բոլորն օգտվել են նրա օթեւանից, մսխել շռայլորեն նրա մշակութային գանձերը, ոմանք՝ իբրեւ ժամանակավոր հյուրեր, ուրիշները՝ իբր բախտից հալածված ճամփորդներ, մինչդեռ ոմանք էլ անսանձ կերպով տնօրինել են այն, ավերել ու քանդել: Նրանցից ոչ ոք հոգեւոր ժառանգություն, մշակույթի որեւէ հիշողություն չի թողել, թուրքմենի կամ քրդի ձեռքը ոչ մի աղյուս չի դրել երկրի շինարարական արվեստի գանձարանում: Ճարտարապետության վաղեմի կոթողները՝ պալատները, ամրոցները, եկեղեցիներն ու վանքերը՝ վեհապանծորեն բազմած լեռնագահերին, մշակութային զգեստավորմամբ, այժմ փոշուն հավասարեցված, բայց նրանց մեջ դեռ ապրում է ոգին, նրա ավերակների մեջ դեռ դեգերում են անցյալի ստվերները, ստվերներ, որոնք պատրաստ են մարմնավորվելու նոր կյանքի համար...
>
> Հայաստանը, ինչպես ամեն մի պատմամշակութային երկիր, յուրատեսակ մարմին է, նրանում ավելի ուժեղ բաբախում է հայկական զարկերակը, նրանում ավելի խոր հայկական շունչն է: Իբրեւ կենդանի մարմին, Հայաստանը չի կարող հրաժարվել ո՛չ իր անցյալից, ո՛չ իր ապագայից: Թեկուզ նա վիրավոր է, արյունաքամ է լինում, բայց նա մեռած չէ»[1]:

Ժողովուրդների պայքարը հայրենիքի անկախության համար հավերժական պրոցես է: Այն ժողովուրդները, որոնք դադարեցնում են պայքարը, նրանք կորցնում են հայրենիքը եւ կործանվում:

Ժողովրդի պատմական ապրելատարածքի յուրաքանչյուր անկյուն չի կարող Հայրենիք անվանվել: Ամեն ժողովուրդ ունի մեկ Հայրենիք: Միանգամայն ճիշտ էր Գարեգին Նժդեհը, երբ ընդունելով Խորհրդային Հայաստանի՝ հայոց պետականության կորիզ լինելու անհրաժեշտությունը, այնուամենայնիվ, ավելացնում էր. «Ներկա Հայաստանը կազմում է հազիվ մեկ-տասներկուերորդը մեր պատմական Հայրենիքի: Դա

1. Նիկողայոս Ադոնց. Նշվ. աշխ.. էջ 113-114:

Հայրենիք չէ, այլ հայրենի անկյուն»[1]:

Այսօր Արեւելյան Հայաստանը անկախ հանրապետություն է, Լեռնային Ղարաբաղը անկախ հանրապետություն է, Արեւմտյան Հայաստանը գտնվում է Թուրքիայի տիրապետության տակ, Նախիջեւանը՝ Ադրբեջանի, Ջավախքը՝ Վրաստանի եւ այլն, սակայն, դա չի նշանակում, թե հայ ժողովուրդը մի քանի հայրենիք ունի:

Հայ ժողովուրդը ունի մեկ Հայրենիք՝ Հայկական լեռնաշխարհը, որի տարբեր մասերը բռնագավթված են այլ պետությունների կողմից:

Հետեւաբար, հայոց ազգային գաղափարախոսության հիմնական նպատակը պատմական հայրենիքի կորցրած տարածքների ազատագրումն է:

Հայ ժողովուրդը, եթե կամենում է գոյատեւել, պարտավոր է Ազգի, Հայրենիքի, մշակույթի եւ անկախ պետականության գաղափարները դարձնել ազգային դաստիարակության առանցք: Հրաժարումը այդ գաղափարների քարոզչությունից համազոր է ինքնասպանության: Ժողովուրդը պետք է նույնանա իր հայրենիքի հետ: Անկախ Հայրենիքը եւ պետականությունը պետք է լինեն յուրաքանչյուր հայի բարձրագույն գաղափարը: Հայը հայրենիքից կտրվելը պետք է տանի որպես ողբերգություն: Ապրում եւ գոյատեւում են այն ժողովուրդները, որոնք անձնազոհաբար պայքարում են իրենց Հայրենիքի անկախության համար: Կռվելով՝ ժողովուրդը Հայրենիք է պահում, փախչելով՝ կյանքն է պահպանում, բայց կորցնում է Հայրենիքը, որը դնում է իր եւ իր ժառանգների՝ որպես հայի կործանման սկիզբը:

Արտագաղթը ոչ մի պատճառաբանությամբ չի արդարացվում: Ժողովրդի ֆիզիկական գոյությանը սպառնացող վտանգը, առավել եւս՝ ազգային ճնշումները, տնտեսական թշվառ վիճակը հիմք չեն Հայրենիքը լքելու համար:

Հայրենիքը հավերժ ազգային-պատմական կատեգորիա է: Սերունդների պայքարով է ապահովվում ազգի եւ Հայրենիքի հավերժությունը: Հայրենասիրության մարումը անխուսափելիորեն հանգեցնում է Հայրենիքի եւ ազգի ոչնչացմանը:

Հայրենիքը առանց արյան եւ զոհաբերության չի պահվում: Հայրենիքը դարերի ընթացքում ժողովրդի թափած արյունով է սրբագործվում, հողը հերոսների արյունով է դառնում Հայրենիք:

Ահա թե Հայրենիքի պաշտպանությունը դարերի ընթացքում ինչպես է պատկերում հայոց ազգային բանաստեղծը.

«Ու երբ եկել են, որ խլեն ինձնից լեռնաշխարհն այս լուրթ,
Խոցվել եմ հաճախ ես ոսոխների նետ ու նիզակից,

1. Գարեգին Նժդեհ. Բաց նամակներ հայ մտավորականության, Պեյրութ, 1929, էջ 8-9:

Արյունս կաթ-կաթ ծծվել է հողում, եւ այս հողը սուրբ
Դարձել է այդպես ինձ արյունակից:
Այս հողին եմ ես դարեդար խառնել արցունք ու կարոտ,
Խառնել տառապանք, հրաշք եմ խառնել ու խառնել ոգի,
Որ երբեք, երբեք չթողնեմ կյանքում երկիրն այս քարոտ
Ու երբեք, երբեք չտամ ոչ ոքի...»[1]:

Այսպիսին է ազգային գաղափարախոսության հրամայականը, դարերի փորձություններում այսպես են պահում Հայրենիքը:

Հայրենիքից արտագաղթած զանգվածները արտերկրի պայմաններում աստիճանաբար օտարանում են սեփական Հայրենիքից, իսկ նրանց սերունդների մոտ առաջանում է երկրորդ հայրենիքի գաղափարը: Արտերկրում հայերը դարերի ընթացքում կորցրել են Հայրենիքի գաղափարը եւ ձուլվել տեղական ժողովուրդների մեջ: Այդ է վկայում հայ գաղթօջախների պատմությունը: Այդ նույն ճակատագիրն է սպասում նաեւ սփյուռքահայությանը:

Ժողովուրդը եւ պետությունը մշտապես պետք է բարձր մակարդակով վարեն Ազգի եւ Հայրենիքի գաղափարների քարոզչությունը, մշտապես թարմ պահեն ժողովրդի պատմական հիշողությունը:

Ազգի եւ Հայրենիքի գաղափարների քարոզչության գործում խոշոր դեր կարող են խաղալ Գարեգին Նժդեհի մոտեցումները Ազգային գաղափարախոսության հիմնադրույթներին, որոնցից կարեւորները անհրաժեշտ ենք համարում ներկայացնել ընթերցողներին.

1. «Ժողովուրդն է մեր ժամանակների աստվածությունը»[2]:
2. «Հայ էությունը մշակելու գործում ազդեցության առյուծի բաժինը ընկել է հայոց լեռներին: Մասիսն է դայակը հայ հոգու»[3]:
3. «Հայ ժողովուրդը - դա Անթեյն է առասպելական: Պարտվում է նա, հենց որ կտրվեց հողից: Իսկ այդ վերջինը - հայրենի հողը- խորհրդանշում է կուլտուր-ազգային բոլոր արժեքներն ու սրբությունները, որ ստեղծել է ինքը՝ ժողովուրդը»[4]:
4. «Նա (Հայրենիքը - Լ. Խ.) ծնվեց մարդու առաջին մտածումի հետ՝ թե սուրբ է հայրենի հողը: Նա ստեղծվեց այն օրը, երբ մարդը առաջին անգամ լինելով՝ գիտակցորեն ու ժպտադեմ մեռավ հայրենի հողի համար: Հայրենիք չէ սոսկ երկիրը, դա Հայրենիք է դառնում այն հոգեւոր արժեքներով, որոնցով նրան օժտում է ժողովուրդը:
Երկիրը - դա Հայրենիքի աշխարհագրական զրահն է: Հայրենիքը -

1. Վահագն Դավթյան, Լույս առավոտի, բանաստեղծություններ, Եր. 1984, էջ 51:
2. Նժդեհ, Բանաստեղծական գրառումներ (Խորհրդածություններ), Եր. 1993, էջ 28:
3. Նույն տեղում:
4. Նույն տեղում, էջ 30:

այդ երկիրը մշակող ժողովրդի ոգին է, նրա մշակույթը»[1]:

5. «Ժողովրդի հոգեւոր ստեղծագործությունը՝ ահա Հայրենիքը՝ իր սկիզբն առած նրա բանարվեստի, ծեռագիր գրքերի, սուրբի, լուսակիրի, հերոսի, նրա առաջին ավանդությունների հետ»[2]:

6. «Իբրեւ հասկացողություն՝ Հայրենիքն ընդգրկում է ոչ միայն անցյալն ու ներկան, այլեւ՝ գալիքը: Դա ժողովրդի պատմական առաքելությունն է ըստ իր վախճանական նպատակի՝ զարգացող մի հավերժություն է Հայրենիքը: Դա եկող ու անցնող սերունդների անմահությունն է, որն իբրեւ գաղափար եւ գործ ժողովուրդը դրոշմում է նյութի վրա, խոսքի մեջ եւ այն ապրեցնում իբրեւ անմեռ հուշ, իբրեւ պատմություն»[3]:

7. «Մարդկային գործերի մեջ Հայրենիքի պաշտպանությունն է ամենասրբազանը»[4]:

8. «Հայրենիքը չի տրվում այնպես, ինչպես ժառանգվում է հայրենական հարստությունը. դա ձեռք է բերվում ամեն մի սերունդի եւ նրա առանձին անդամի կողմից-ձեռք է բերվում հայրենաճանաչումով, հայրենապաշտությամբ, նրան արժանի դառնալու ձգտումով: Կարելի է հայրենիքում լինել, բայց հայրենիքից չլինել, կարելի է հայրենիքում ապրել, բայց եւ այնպես հոգեհաղորդ չլինել նրան:

Կարելի է, վերջապես, իրավապես հայրենատեր լինել, իսկ հոգեպես՝ անհայրենիք:

Արժանի չես Հայրենիքիդ, եթե այն չես դավանում իբրեւ գերագույն նպատակ, իսկ անձդ՝ իբրեւ միջոց»[5]:

9. «Ի մի բան՝ Հայրենիք ստեղծել՝ նշանակում է հարազատել երկիրը եւ հարազատանալ նրան: Այսպիսով ահա նույնանում են ժողովրդի ոգին ու Հայրենիքը: Սրանց դարավոր փոխներգործության արգասիք է Հայրենիքը»[6]:

10. «Զատեցեք նախահայրերի աճյունը հայրենի հողից, եւ դուք կունենաք երկիր մշակելի, բնակելի, բայց ոչ Հայրենիք»[7]:

11. Նժդեհի՝ իր կողմից գրված տապանագրում, որպես կտակ, կոչ ապագա սերունդներին ասվում է.

«Հանգիստ են ուզում մեռելներն անթաղ, անգերեզման...

1. Նույն տեղում, էջ 31:
2. Նույն տեղում:
3. Նույն տեղում:
4. Նույն տեղում, էջ 32:
5. Նույն տեղում:
6. Նույն տեղում, էջ 33:
7. Նույն տեղում, էջ 34:

Եվ պիտի հանգչեն... Այնժամ պիտի հանգչեմ եւ ես, երբ հայոց աշխարհի երեք հսկաները - Մասիս, Նեմրութ եւ Սիփան իրար ձայն տան՝ կանչեն ցնծագին՝ «Հե՜յ, հե՜յ, էլի հայուն ենք, էլի հայ, էլի Հայաստան... »[1]:

12. Ելնելով ազգային գաղափարախոսության հիմնադրույթներից եւ մասնավորապես վերը շարադրված դրույթներից, Գարեգին Նժդեհը հանգում է հետեւյալ չափազանց կարեւոր եզրակացությանը. «ԱՄԵՆ ԺՈՂՈՎՈՒՐԴ ԻՐ ՈՒՍԵՐԻ ՎՐԱ է ԿՐՈՒՄ ԻՐ ՊԱՏՄԱԿԱՆ ԲԱԽՏԻ ԲԵՌԸ»[2]:

Այս թեզից հետեւում է. բոլոր ժողովուրդները, որպես կանոն, ապրում եւ պայքարում են ազգային գաղափարախոսության չլուծված հիմնախնդիրների իրականացման համար: Յուրաքանչյուր ժողովուրդ իր ուսերին է տանում «իր պատմական բախտի բեռը»:

Ոչ մի ժողովուրդ կամովին չի հրաժարվում իր պատմական իրավունքներից: Այդպիսին է ժողովուրդների պատմական ճակատագիրը, այդպիսին է ազգային գաղափարախոսության հրամայականը: Պատմական իրավունքներից հրաժարվող ժողովուրդները չեն դիմանում պատմության քննությանը, նրանք կործանվում են:

Պատմության բեռից հրաժարվում են ապազգային ուժերը եւ պարտվողականները:

Ազգային գաղափարախոսության առանցքը Ազգի եւ Հայրենիքի հիմնադրութերն են:

Միքայել Վարանդյանը Ազգի եւ Հայրենիքի մասին գրում է.

«Ազգ կա ամեն տեղ, ուր, ինչպես ասում է Ռենան, կա դարավոր մի անցյալ, հյուսված ճիգերից ու զոհողություններից, ուր կա մի անցյալ՝ փայլուն, հերոսական սխրագործությունների, ուր կան պատմական ավանդություններ... Այն կռիվները, որ դարերի ընթացքում մղել է մի համայնք ընդհանուր թշնամու դեմ, այն ուրախությունները, որ նա ունեցել է հաղթություններից, այն երգերը, որ նա հյուսել է հաղթանակների ու պարտությունների առթիվ,- ահա այդ վսեմ ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹՅԱՆ անունն է ԱԶԳ: Մենք այն կոչում ենք նաեւ ՀԱՅՐԵՆԻՔ:

Նա այնքան կենդանի է, այդ համերաշխությունը, մարդկանց սրտերում, որ դեռ հնադարյան, հոմերական ժամանակներում բարձրաձայն հռչակվում էր կռիվը հանուն հայրենիքի, եւ հունական հանճարը բացականչում էր Հոմերոսի բերանով. «Մեռե՛ք ու մի զղջացեք, որովհետեւ պանծալի բան է՝ մեռնել հայրենիքի համար» ... »[3]:

1. Նույն տեղում, էջ 94:
2. Նույն տեղում, էջ 27:
3. Միքայել Վարանդյան. Հայրենիքի գաղափարը. Բեյրութ. 1985. էջ 30-31:

19-րդ դարի վերջերին եւ 20-րդ դարի սկզբներին ծավալված հայոց ազգային-ազատագրական պայքարի՝ «Մահ կամ Ազատություն» կարգախոսը ելնում էր Հայրենիքի համար զոհվելու պատրաստակամության հիմնադրույթից:

Այն ժողովուրդները, որոնք չեն հանգել այս սուրբ իմաստությանը, պատրաստ չեն եղել իրենց կյանքը զոհաբերելու Հայրենիքի ազատագրությանն ու անկախությանը, նրանք պատմության քառուղիներում կործանվել են:

Հայրենիքի գաղափարը հայոց ազգային գաղափարախոսության մեջ բաժանվում է երկու հիմնադրույթի.

ա) Անկախ եւ Միացյալ Հայաստանի հիմնադրույթ,

բ) Հայաստանի անկախ Հանրապետության հիմնադրույթ:

3. ԱԶԱՏ, ԱՆԿԱԽ ԵՎ ՄԻԱՑՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԱՂԱՓԱՐԸ

«Ես բոլոր սրտով Հայոց Դաւրի համակրող ու պաշտպան եմ. եւ Հայոց Դաւր ասելով ես հասկանում եմ ոչ միայն լոկ նրանց պաշտպանությունը թուրքական ու քրդական կուրորածների դեմ, այլեւ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ ՆՐԱՆՑ ԱԶԳԱՅԻՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ »:

ԿԱՐԼ ԿԱՈՒՅԿԻ

Հայոց Հայրենիքը Հայկական բարձրավանդակն է՝ ավելի քան 300 հազար քառ. կմ տարածքով:

Հայոց Ազգային գաղափարախոսության հիմնական նպատակը պատմական Հայաստանի ազատագրումն է, Ազատ, Անկախ եւ Միացյալ Հայաստանի ստեղծումը*:

Հայոց պատմական Հայրենիքի մասին Ն. Ադոնցը գրել է. «Հայկական բարձրավանդակը որոշակի մեծություն է, որը ոչ մի տարածայնություն թույլ չի տալիս: Ըստ Լինչի պատկերավոր արտահայտության, դա լեռնային տանիք է, որը հյուսիսում թեքվում է դեպի Սեւ ծովի ափերը, հարավում՝ Տիգրիսի երկու վտակների հովիտները, իսկ արեւմուտքում հատվում է Եփրատի ջրերով:

Այդ սահմաններում Հայկական լեռնաշխարհը ներկայացնում է մի ինչ-որ ամբողջություն՝ աշխարհագրական, մշակութա-պատմական, հավասարապես եւ տնտեսական ու ընդհանուր առմամբ՝ ազգագրական առումով:

Այստեղ կազմավորվող պետությունը չի կարող համարվել կայուն, եթե այն չի գրավում այդ լեռնային տանիքը ամբողջությամբ՝ իր բնական թեքվածքներով»[1]:

Ամբողջ Հայաստանի անկախության մասին հայ ժողովուրդը իր պաշտոնական կարծիքը ներկայացրել է 1919 թ. Փարիզի վեհաժողովին՝ հայկական երկու պատվիրակությունների կողմից ստորագրված հուշագրում: Այդ փաստաթղթի համաձայն, Ամբողջական Հայաստանը պետք է ընդգրկեր Վանի, Բիթլիսի, Տիգրանակերտի, Խարբերդի, Սեբաստիայի, Կարինի, Տրապիզոնի վիլայեթները, Կիլիկիան եւ արեւելյան Հայաստանում ստեղծված Հայաստանի Հանրապետության տա-

* *Հիմնախնդրի շարադրանքը ամբողջական դարձնելու նպատակով սույն հնթագլխում օգտագործել ենք նաեւ 3-րդ գլխի որոշ նյութեր:*

1. Ն. Ադոնց, նշվ. աշխ. էջ 124:

րածքը[1]:

Սակայն, հայկական երկու պատվիրակությունների կողմից ներկայացված հուշագրի պահանջները դաշնակիցների կողմից ընդունելություն չգտան:

Դաշնակիցները մերժեցին հայ պատվիրակության ներկայացրած Մեծ Հայաստան ստեղծելու ծրագիրը եւ կանգ առան ավելի փոքր հայկական պետություն ստեղծելու վրա, որը պետք է ընդգրկեր Վանի, Բիթլիսի, Կարինի եւ Տրապիզոնի վիլայեթները, այն էլ՝ ոչ լրիվ տարածքով:

Սան-Ռեմոյում ընդունված այդ որոշումը ամրագրվում է 1920 թ. օգոստոսի 10-ին կնքված Սեւրի պայմանագրում, որի 6-րդ բաժինը նվիրված էր Հայաստանին:

Սեւրի պայմանագրում ասվում է.

«Հոդված 88. Թուրքիան հայտարարում է, որ ճանաչում է Հայաստանը, ինչպես այդ բանն արել են Դաշնակից տերությունները, որպես ազատ եւ անկախ պետություն:

Հոդված 89. Թուրքիան եւ Հայաստանը, ինչպես եւ Բարձր պայմանավորվող կողմերը, համաձայնվում են էրզրումի, Տրապիզոնի, Վանի եւ Բիթլիսի վիլայեթներում Թուրքիայի եւ Հայաստանի միջեւ սահմանատումը թողնել Ամերիկայի Միացյալ Նահանգների որոշմանը եւ ընդունել ինչպես նրա որոշումը, նույնպես եւ այն բոլոր միջոցառումները, որոնք նա կարող է առաջարկել՝ Հայաստանին դեպի ծով ելք տալու եւ հիշյալ սահմանագծին հարող Օսմանյան բոլոր տերիտորիաների ապառազմականացման վերաբերյալ»[2]:

Սան-Ռեմոյի կոնֆերանսի որոշման եւ Սեւրի պայմանագրի համաձայն, ԱՄՆ-ի պրեզիդենտ Վիլսոնը 1920 թ. նոյեմբերի 22-ին հայտնում է իր «իրավարարական վճիռը»՝ Կարինի, Տրապիզոնի, Վանի եւ Բիթլիսի վիլայեթներում Թուրքիայի եւ Հայաստանի սահմանագծման մասին: Վիլսոնի վճռով Արեւմտյան Հայաստանի տարածքը պետք է կազմեր 90 հազար քառ. կիլոմետր: Չորս վիլայեթների տարածքների բաժանումը կատարվեց հետեւյալ կերպ. 1. Վանի ամբողջ տարածություն 39.300 քառ. կմ, Հայաստանի մասը՝ 20 հազար, 2. էրզրումի ամբողջ տարածություն 49. 700 քառ. կմ, Հայաստանի մասը՝ 40 հազար, 3. Բաղեշի (Բիթլիս) ամբողջ տարածությունը 27. 100 քառ. կմ, Հայաստանի մասը՝ 15 հազար, 4. Տրապիզոնի ամբողջ տարածությունը 32. 700 քառ. կմ, Հայաստանի մասը՝ 15 հազար:

1920 թ. Արեւելյան Հայաստանում Հայաստանի Հանրապետության տարածքը կազմում էր 71 հազար 330 քառ. կմ:

1. Միացյալ եւ անկախ Հայաստան պատմական քայլը. Կ. Պոլիս. 1919, էջ 61:

2. Հայաստանը միջազգային դիվանագիտության եւ սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923). Եր. 1972, էջ 676:

Այսպիսով, Հայաստանի միացյալ պետության ընդհանուր տարածքը կազմելու էր 161 հազար 330 քառ. կմ[1]:

Եթե իրադարձությունները բարեհաջող ընթացք ունենային, ապա հայ ժողովուրդը կարող կլիներ հայտարարելու, որ ինքը լուծեց նախնիների թողած ծանր բեռը՝ Հայկական հարցը:

Սեւրի պայմանագրով արեւմուտքը պաշտոնապես ճանաչեց հայ ժողովրդի պատմական իրավունքը Արեւմտյան Հայաստանում: Եթե դրան ավելացնենք, որ 1917 թ. դեկտեմբերի 31-ին «Թուրքահայաստանի մասին» դեկրետով Խորհրդային Ռուսաստանը եւս ճանաչել էր այդ տարածքի նկատմամբ հայ ժողովրդի պատմական իրավունքը, ապա պարզ կդառնա, որ հայ ժողովրդի թափած արյունը, բազմաթիվ սերունդների հերոսական, անձնազոհ պայքարը վերջապես տվեց իր արդյունքը. աշխարհը պաշտոնապես ընդունեց հայ ժողովրդի պատմական իրավունքը Արեւմտյան Հայաստանում եւ այդ տարածքում հայկական անկախ պետության ստեղծման անհրաժեշտությունը: Հենց դրանում է այդ փաստաթղթերի պատմական նշանակությունը: Բայց հետագայում դեպքերն այլ ընթացք ընդունեցին: Հայաստանը բաժանվեց Թուրքիայի եւ Ռուսաստանի միջեւ, իսկ Սեւրի պայմանագիրը չեղյալ հայտարարվեց:

Սակայն, 1991 թ. ԽՍՀՄ փլուզումից հետո Հայաստանն անկախություն ստացավ՝ հռչակվեց Հայաստանի Հանրապետության անկախ պետություն: Բայց Հայաստանի մեծ մասը՝ Արեւմտյան Հայաստանը, Կարսի մարզը, Սուրմալուն, Նախիջեւանը, Շարուրը եւ Զավախքը դեռեւս շարունակում են մնալ այլ պետությունների տիրապետության տակ:

Դարեր շարունակ հայ ժողովուրդը պայքարել է Միացյալ Հայաստանի համար, որը պատմության մեջ է մտել Հայկական հարց, Պահանջատիրություն եւ Հայ Դատ անուններով:

Պայքարը Ազատ, Անկախ եւ Միացյալ Հայաստանի համար մղվելու է այնքան ժամանակ, քանի դեռ Հայկական հարցը չի լուծվել:

Հայաստանի ազատագրումը լինելու է փուլ առ փուլ: Անկախություն է ձեռք բերել Արեւելյան Հայաստանը, անկախություն է ձեռք բերել Արցախը: Պետք է շարունակվի պայքարը տարբեր պետությունների կողմից նվաճված մյուս տարածքները ազատագրելու համար:

Միացյալ Հայաստանի կյանքի կոչման առաջին փուլը Հայաստանի Հանրապետության ստեղծումն էր, երկրորդ փուլը՝ Արցախի ազատագրումը, հաջորդ փուլերի բովանդակությունը կթելադրվի մոլորակի հետագա աշխարհաքաղաքական իրավիճակից:

Պատմության թելադրանքով հողահավաքը դարձել է հայոց ազգա-

1. Գաբրիել Լազյան, Հայաստան եւ Հայ Դատը. Գահիրե. 1957. էջ 213-214:

յին գաղափարախոսության հիմնախնդիր:

Արդի դարաշրջանում Անկախ եւ Միացյալ Հայաստանի ստեղծումը կարող է երազ թվալ: Սակայն, դա այդպես չէ: Ժողովրդի ներքին ուժերը անսպառ են, հակասություններով լի, միջազգային հարաբերությունների զարգացման ընթացքը՝ ընդհանուր առմամբ կանխատեսելի: Յուրաքանչյուր ժողովուրդ պետք է վստահ լինի իր ուժերի նկատմամբ եւ հավատա ապագային: Հաղթում է այն ժողովուրդը, որը հավատում է ապագային:

Ո՞վ կարող էր ժամանակին հավատալ, որ 1917 թվականին ռուսական հզոր կայսրությունը կփլուզվի եւ նրա կողմից նվաճված ժողովուրդների մեծ մասը անկախություն կստանա:

Ո՞վ կարող էր հավատալ, որ ցեղասպանության զոհ դարձած, արյունաքամ հայ ժողովուրդը 1918 թվականի Մայիսյան հերոսամարտերում ի վիճակի կլինի պարտության մատնել թուրքական զորքերին եւ հռչակել Հայաստանի անկախությունը:

Ո՞վ կարող էր հավատալ, որ հզոր Խորհրդային կայսրությունը 1991 թվականին կփլուզվի եւ փլատակների վրա կհռչակվեն անկախ ազգային հանրապետություններ:

Ամենահեռատեսներն անգամ նման հրաշքի չէին հավատում: Սակայն, հրաշքը իրականություն դարձավ: Եթե հետեւենք հոռետեսներին, պարտվողականներին եւ թերարժեքության բարդույթ ունեցողներին, ապա ոչ 1918-1920 թվականներին եւ ոչ էլ այժմ հայ ժողովուրդը անկախ պետականություն չէր ունենա: Չէին լինի նաեւ 1918 թ. մայիսին թուրքական զորքերի դեմ տարած պատմական հաղթանակները:

Անդրադառնանք մի ոչ հայկական պատմական իրադարձության եւս, որը լիովին հերքում է հայ պարտվողականների բոլոր անհիմն փաստարկները:

Շուրջ 2000 տարի առաջ հրեա ժողովուրդը արտաքսվում է իր Հայրենիքից եւ սփռվում աշխարհի բոլոր երկրներում: Հրեա ժողովուրդը այդ ամբողջ ժամանակաշրջանում պահպանեց իր ազգային ինքնությունը եւ պայքարեց կորցրած հայրենիքի ազատագրության, հրեական անկախ պետության ստեղծման համար: Հրեաների հայրենիքը բնակեցված էր այլազգիներով եւ շրջապատված թշնամի ժողովուրդներով:

Ո՞վ կարող էր հավատալ, որ հնարավոր կլինի նման ծանր իրավիճակում, 2000 տարի հետո վերականգնել հրեական պետությունը: Հրեական պետության ստեղծումը համազոր կլիներ հրաշքի, իսկ հրաշքներ չեն լինում:

Բայց հարցն այն է, որ հրեական պետության ստեղծմանը, Իսրայելի ազատագրմանը հավատում էր հրեա ժողովուրդը, հավատում էին այդ ժողովրդի ազգային գաղափարախոսները: Եվ հրեաները ստեղծեցին ի-

րենց ազգային գաղափարախոսությունը: Այդ ազգային գաղափարախոսությունն աստիճանաբար լրամշակվելով ամբողջականացվեց եւ ավելի ուշ ստացավ Սիոնիզմ անվանումը, որի նպատակը հրեաների հայրենիքի ազատագրումն էր, հրեական անկախ պետության ստեղծումը Պաղեստինում:

Սիոնիզմի տեսաբանները հրեա ժողովրդի անցած ուղու եւ ապագայի խնդիրների մասին դեռ դարասկզբին գրում էին. «Սիոնիզմը որպես կազմակերպված շարժում գոյություն ունի ոչ վաղուց, բայց որպես ժողովրդի գիտակցության արտահայտություն, իր թիկունքում ունի 18 դար, այսինքն՝ հրեաների սեփական անկախությունը կորցնելուց հետո ընկած ամբողջ ժամանակաշրջանը:

Սիոնիզմի պատմական աղբյուրը առաքելականությունն է, որը հրեաներին երկար դարերի ընթացքում փրկել է սոցիալական մահից:

Առաքելականության էությունը՝ հավատը չէ հրաշքի նկատմամբ, այլ հավատը հրեաների վերածննդին սեփական հողում՝ Պաղեստինում:

Առաքելական շարժումը հրեաների ամբողջ պատմության բովանդակությունն է կազմում՝ մինչեւ 17-րդ դարի վերջը»[1]:

Արդեն 19-րդ դարի կեսերին ձեւավորվում է հրեաների ազգային գաղափարախոսությունը՝ Սիոնիզմը, որի հիմնադրույթը հետեւյալն էր. «Հրեաները ազգ են, որոնք պետք է եւ կարող են վերածնվել միայն Պաղեստինում»[2]:

Սիոնիստների ազատագրական պայքարը ընթանում էր դժվարին պատմական պայմաններում: Եթե բոլոր ժողովուրդները ազգային- ազատագրական պայքար են մղել օտարի կողմից նվաճված սեփական հայրենիքում, ապա հրեաները իրենց ազատագրական պայքարը կազմակերպում էին դիասպորայի պայմաններում: Հրեաները լավ էին հասկանում, որ Սիոնիզմի իրականացումը երկար ժամանակ է պահանջելու եւ այդ պատճառով էլ Իսրայելի ազատագրման կոնկրետ ժամկետ չէին նշում[3]: Նրանք մշակել էին հայրենիքի ազատագրման որոշակի ծրագիր եւ հետեւողականորեն պայքարում էին իրենց ազգային գաղափարախոսության իրականացման համար:

Այդ դժվարին ճանապարհին հրեաները ունեցան եւ՛ պարտություններ, եւ՛ անհաջողություններ: Կազմակերպությունում, շարժման մեջ եղան լուրջ, սկզբունքային տարաձայնություններ եւ վեճեր, որոնցում ընդդիմախոսի դեր էին կատարում պարտվողականները, ապազգային ուժերը, թերարժեքության բարդույթ ունեցողները: Սիոնիզմի հակառա-

1. *Формы национального движения, Санкт-Петербург, 1910, стр. 706.*
2. *Նույն տեղում. էջ 707:*
3. *Նույն տեղում. էջ 721:*

կորդները գտնում էին, որ հրեաների ճակատագիրը լուծված է, նրանք որպես ազգ ոչ մի ապագա չունեն եւ վերջնականապես ձուլվելու են այլ ազգերի մեջ:

Բայց հրեա ժողովուրդը եւ նրա ազգային գաղափարախոսները գտնվեցին իրենց բարձրության վրա: Պարտվողականներին եւ ապազգայիններին ոչ մի զիջում չարվեց: Հայրենիքի համար մղվող պայքարը շարունակվեց: 1947 թվականին հրեա ժողովուրդը հաղթանակեց՝ հռչակվեց Իսրայելի անկախ պետության ստեղծումը, իրականացվեց հրեաների ազգային գաղափարախոսությունը:

Իսկ եթե հրեա ժողովուրդը հաստատակամություն հանդես չբերեր, զիջեր պարտվողականներին, դադարեցներ Հայրենիքի համար մղվող պայքարը, ապա, բնականաբար, այսօր հրեական անկախ պետություն գոյություն չէր ունենա, եւ հրեաները դատապարտված կլինեին անխուսափելի ոչնչացման:

Կարելի է բազմաթիվ օրինակներ բերել ինչպես հայ, այնպես էլ համաշխարհային պատմությունից, որոնք արմատապես հերքում են հայ պարտվողականների մոտեցումները՝Հայկական հարցը մերժելու, Անկախ եւ Միացյալ Հայաստան ստեղծելու մասին:

Չմոռանանք, որ հայ ժողովրդի ազգային թշնամու՝ թուրքերի կողմից Մեծ Թուրանի պետության ստեղծումը շատ ավելի դժվար խնդիր է, քան Ազատ,Անկախ եւ Միացյալ Հայաստանի գաղափարի իրականացումը: Թուրքիան Մեծ Թուրանի պետությունը ստեղծելու, պանթուրքիզմի գաղափարախոսությունը իրականացնելու համար պետք է ծնկի բերի Ռուսաստանին, Պարսկաստանին, Հունաստանին, Հայաստանին եւ քրդերին: Ընդ որում, Թուրքիան բացի թուրքական ժողովուրդներից, որոնցից ոչ բոլորն են շահագրգռված Մեծ Թուրանի գաղափարի իրականացմամբ, այլ դաշնակիցներ չունի, իսկ Հայաստանը բավականին բնական դաշնակիցներ ունի:

Պատահական չէ, որ պանթուրքիզմի խոշորագույն գաղափարախոս Զիա Գեոկալպը «Թուրքիզմի հիմունքները» խորագրով գրքում դեռ 1923 թ. թերահավատությամբ գրում էր. «Ով գիտե, թերեւս, ապագայում կարելի լինի Թուրան գաղափարի իրականացում»[1]: Բայց դրանով հանդերձ, նա լավ գիտեր, որ պանթուրքիզմի գաղափարախոսության քարոզչությունը ամրապնդում է Հայրենիքի, պետականության, անկախության եւ ազգային միասնության գաղափարները, այսինքն՝ ազգային գաղափարախոսության հիմունքները, որոնք ուղի են հարթում հետագայում ազգային իղձերի կատարման համար:

Այսպիսին է պատմությունը, այսպիսին են պատմության դասերը:

1. Զիա Գեոկալպ. Թուրքիզմի հիմունքները. Ստամբուլ, 1961. էջ 19:

Հայ ժողովուրդը երբեք չպետք է կորցնի Ազատ, Անկախ եւ Միացյալ Հայաստանի ստեղծման հույսը: Գոյություն ունեն մի շարք պատմական կարեւոր գործոններ, որոնք հիմք են հանդիսանալու միջազգային հարաբերություններում Հայկական հարցի օրակարգ մտնելու եւ լուծման համար:

ԱՌԱՋԻՆ ԳՈՐԾՈՆ. ՔՐԴԱԿԱՆ ՀԱՐՑԸ:

Քրդական պրոբլեմը դանդաղ գործող ատոմային ռումբ է թուրքական պետության հիմքում:

Քրդական հարցը միջազգային խոշոր գործոն է, որը չի կարող իր լուծումը չգտնել: Քրդական ազգային պետության ստեղծումը ժամանակի հարց է: Իսկ որ Քրդական հարցի լուծմանը համընթաց օրակարգի մեջ են մտնելու նաեւ Հայկական եւ Հունական հարցերը, դա անկասկած է: Պատմական արդարությունը պետք է հաղթանակի, թուրքերը իրենց նվաճած տարածքները պետք է վերադարձնեն հայերին, հույներին եւ քրդերին:

Այդ պատճառով էլ հայերը եւ քրդերը պետք է բանակցությունների սեղանի շուրջ նստեն՝ հարաբերությունները ճշտելու, հակաթուրքական ճակատ ստեղծելու համար: Հակաթուրքական ճակատի մեջ պետք է մտնեն նաեւ հույները եւ թուրքերի հետ պատմական տարածայնություններ ունեցող մյուս ժողովուրդները: Քրդերի մարտավարությունը՝ ի հաշիվ Հայաստանի լուծելու քրդական պետություն ստեղծելու հարցը, դատապարտված է անհաջողության: Քրդական հարցը ի հաշիվ Հայկական հարցի լուծվել չի կարող:Չի կարող լուծվել նաեւ առանձին, առանց Հայկական հարցի լուծման: Այդ երկու հիմնախնդիրները Սեւրի պայմանագրով անարդարացիորեն խառնվել են: Սեւրի պայմանագրով փաստորեն Քրդստանը տեղադրվել էր Արեւմտյան Հայաստանում: Մինչդեռ, ինչպես գրում է Ն. Ադոնցը, Քրդստանը « ընդգրկում է Զագրոսի երկար լեռնաշղթայի լայնածավալ բարձրավանդակը՝ Ուրմիա լճից եւ Բոհտան գետից համարյա մինչեւ Լուրիստանի տափարակները եւ երկու կողմից նրան հարող՝ արեւմուտքից Տիգրիսի եւ արեւելքից Դիզֆուլի գետահովիտները»[1]:

Քրդական հարցի արմատական լուծումը, քրդական պետության ստեղծումը կարող է իրականացվել միայն Քրդստանում:

Հայկական, քրդական եւ հունական հարցերը կարող են լուծվել միայն Թուրքիայի կողմից նվաճված տարածքները ազատագրելուց հե-

1. Նիկողայոս Ադոնց. Հայկական հարց, էջ 103:

տո: Հակաթուրքական պայքարի մարտավարության հարցերը, տարաձայնությունները ժամանակի թելադրանքով կլուծվեն: Իսկ մինչ այդ, անկախ այդ բոլորից՝ քրդերի, հայերի եւ հույների պայքարը կորցրած ազգային տարածքները ազատագրելու համար տարբեր ձեւերով շարունակվում է: Քննարկվող գործոնը Թուրքիայի գերեզմանափորի դերն է կատարում:

Նկատի ունենալով քրդական գործոնը եւ հատկապես այն հանգամանքը, որ ազգային անկախության համար պայքարող քրդերը կազմում են Թուրքիայի բնակչության 20 տոկոսը, Զ. Բժեզինսկին գրում է. «ԹՈՒՐՔԻԱՆ ԿԱՐՈՂ Է ԴԱՌՆԱԼ, ԾԱՅՐԱՀԵՂ ԴԵՊՔՈՒՄ՝ ԳՈՆԵ ՄԱՍԱՄԲ, ՌԵԳԻՈՆԱԼ ԷԹՆԻԿԱԿԱՆ ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐԻ ՁՈՒՅ»[1]:

ԵՐԿՐՈՐԴ ԳՈՐԾՈՆ. ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ:

Պատմական անլուծելի հակասություն գոյություն ունի ռուսական կայսրության տարածքային ամբողջականության պահպանման եւ պանթուրքիզմի՝ Մեծ Թուրանի թուրքական պետության ստեղծման ծրագրերի միջեւ: Պատմական արենայում ընդհարվում են ռուսների եւ թուրքերի ազգային գաղափարախոսությունները: Ռուսները՝ ղեկավարվելով սեփական ազգային գաղափարախոսության հիմնադրույթներով, դարերի ընթացքում նվաճել են հսկայածավալ տարածքներ եւ ստեղծել հզոր բազմազգ կայսրություն, որի մեջ են գտնվում նաեւ թուրքալեզու մեծ թվով ժողովուրդներ: Թուրքիան ձգտում է իրականացնել պանթուրքիզմի ծրագրերը՝ Մեծ Թուրանի պետության ստեղծումը, որը կհանգեցնի ռուսական կայսրության մասնատմանը, թուրքալեզու ժողովուրդներով բնակեցված տարածքների անջատմանը Ռուսաստանից: Ռուս-թուրքական հակամարտությունը դարերի պատմություն ունի, որը շատ հաճախ վերաճել է ռուս-թուրքական պատերազմների: Այդ պայքարը շարունակվում է նաեւ արդի շրջանում եւ այն ի վերջո պետք է ավարտվի կողմերից մեկի հաղթանակով: Ռուս-թուրքական դարավոր պայքարում փոխզիջումային տարբերակներ կողմերը չեն ընդունում: Մեր աչքերի առաջ ծավալվում է ռուսների եւ թուրքերի ազգային գաղափարախոսությունների անզիջում պայքարը՝ խաղաղ եւ ոչ խաղաղ ձեւերով: Դարեր շարունակ Հողահավաքի քաղաքականությամբ ղեկավարվող Ռուսաստանի եւ Թուրքիայի մեծ գոտեմատը անխուսափելի է: Մեր ռեգիոնում պատմական հեռանկարում կլինի մեկ խոշոր կայսրություն՝ ռուսականը կամ թուրքականը: Այս երկու պետությունների պատմական

1. Збигнев Бжезинский. Великая шахматная доска, М. 1999; ст. 162.

գոտեմարտում, որում Թուրքիայի պարտությունն անխուսափելի է, իր տեղն ու դերը ունի նաեւ հայ ժողովուրդը, որովհետեւ նաեւ դրա ելքի հետ է առնչվում Հայկական հարցի ճակատագիրը: Հայ ժողովրդի շահերը սերտորեն առնչվում են Ռուսաստանի շահերի հետ: Ահա թե ինչու ռուս-թուրքական պայքարում հայ ժողովուրդը չի կարող չեզոք դիրք գրավել. նա պետք է ունենա իր եւ մարտավարական, եւ ռազմավարական ծրագրերը, որոնց հիմքում կարող է դրված լինել միայն հայ-ռուսական դաշինքի անհրաժեշտությունը:

Եթե ելնենք անցյալի փորձից եւ պատմության տրամաբանությամբ կանխորոշենք ապագան, ապա համոզվածորեն կարող ենք պնդել, որ ռուս-թուրքական հակամարտությունը կարող է ունենալ մեկ հնարավոր ելք՝ Թուրքիայի պարտությունը, որի հետեւանքները այդ երկրի համար կործանարար կլինեն:

ԵՐՐՈՐԴ ԳՈՐԾՈՆ. ԹՈՒՐՔԻԱՅԻ ՄԵԿՈՒՍԱՑՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ. ԹՇՆԱՄԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՐԵՎԱՆ ԳՐԵԹԵ ԲՈԼՈՐ ԵՐԿՐՆԵՐԻ ՀԵՏ:

Արդի փուլում Թուրքիան մեկուսացված է, նա թշնամական հարաբերությունների մեջ է գրեթե բոլոր հարեւան երկրների հետ: Ռուսաստանը, Հայաստանը, Հունաստանը, Սիրիան, Իրաքը եւ Իրանը, անկախ Թուրքիայի հետ ունեցած դիվանագիտական հարաբերությունների բնույթից, այդ երկրի բացարձակ թշնամիներն են: Եթե թվարկված երկրներին միացնենք քրդերին, սերբերին եւ բուլղարներին, ապա պատկերը լիովին պարզ կդառնա: Այդ բոլորը արդյունք են ցեղասպան եւ գիշատիչ թուրքական պետության դարավոր քաղաքականության: Եվրոպական տերությունները եւս համակրանք չունեն Թուրքիայի նկատմամբ, որի վկայությունը Եվրոմիության մեջ այդ երկրի մուտքի արգելակումն է:

Զ. Բժեզինսկին իրատեսորեն վերլուծում է Ռուսաստանի եւ Թուրքիայի աշխարհաքաղաքական պատմական հակասություններն ու տարաձայնությունները, որոնք անլուծելի են[1]:

Հակասություններն այնքան են սրված, որ ժամանակի ընթացքում այդ երկրները՝ առանձին-առանձին, փոքր խմբերով կամ ընդհանուր ճակատով կարող է հարկադրված լինեն պատերազմել Թուրքիայի դեմ:

Թուրքիան այսօր արդեն չհայտարարված պատերազմական վիճակի մեջ է Հունաստանի եւ Սիրիայի հետ եւ պատերազմում է քրդերի դեմ: Այս երեք ուժերը փաստորեն հակաթուրքական ռազմա-քաղաքական դաշինքի մեջ են: Թուրքիան հարկադրված է 270 հազար զորք պահել

1. Збигнев Бжезинский. Великая шахматная доска , М. 1999; ст. 164-165.

երկրի հարավ-արեւելյան շրջաններում՝ քրդերի դեմ ռազմական գործողություններ վարելու համար, իսկ 30 հազար զորք էլ պահում է Կիպրոսում:

Ելնելով այս իրավիճակից՝ թուրք քաղաքագետ, դիվանագետ Շյուքրու էլեքդաղը առաջ է քաշել «Երկուսուկես պատերազմի» ռազմավարության հիմնադրույթը: Նա այդ հիմնադրույթը բացատրում է հետեւյալ կերպ. «Հունաստանը եւ Սիրիան, որոնք հավակնություններ ունեն Թուրքիայի կենսաշահերի եւ տարածքի նկատմամբ, Թուրքիայի դեմ միավորված են ընդհանուր շահով: Այս երկրները ամեն հնարավոր օգնություն են ցույց տվել PKK-ին, նպատակ ունենալով ծնկի բերել Թուրքիային: Երկու երկրների միջեւ գոյություն ունի անխոս դաշինք Թուրքիայի դեմ: Թուրքիան այս երկրներից իր պաշտպանության ռազմավարությունը պետք է կառուցի այն հիմնադրույթի վրա, որ ինքը ստիպված է լինելու միաժամանակ պատերազմել նրանց երկուսի դեմ՝ երկու առանձին ռազմաճակատով...

Այս ամենը սատարում է «երկուսուկես պատերազմի» ռազմավարության հիմնադրույթը, այսինքն Թուրքիան պետք է պատրաստ լինի իրականացնելու երկու լայնածավալ, միաժամանակյա ռազմական գործողություններ, ընդ որում միաժամանակ պատրաստ լինելով երկրի ներսում վարել «կես պատերազմ»:

Թուրքիայի համար պատերազմը սեփական անվտանգությունն ապահովելու վերջին հանգրվանն է»[1]:

Քննարկելով այն հարցը, թե արդյոք Ռուսաստանը հանդիսանու՞մ է առաջնային վտանգ Թուրքիայի համար, վերլուծելով այդ երկրի ներկա կացությունը, դրական եւ բացասական միտումները, նույն հեղինակը անում է հետեւյալ եզրահանգումը. «Այսուհանդերձ, Թուրքիան Ռուսաստանի դաշնությունը պետք է ընդգրկի իրեն սպառնացող վտանգների ցանկում»[2]:

Իսկ եթե Թուրքիան մտնի պատերազմի մեջ, ո՞ր երկրների օգնությունը կարող է ակնկալել հարցին՝ Շյուքրու էլեքդաղը պատասխանում է. «Թուրքիան, որ շահում էր ՆԱՏՕ-ի խմբային պաշտպանությունից, հետայսու չի կարող ապավինել դրան: Սրանից հետո Թուրքիան ստիպված է լինելու միայնակ, միայն իր ազգային կարողություններով կռվելու իր գոյատեւմանը եւ անվտանգությանը սպառնացող ցանկացած վտանգի դեմ»[3]: Նախկինում ՆԱՏՕ-ի աջակցությունը Թուրքիային

1. Շյուքրու Էլեքդաղ. Երկուսուկես պատերազմի ռազմավարություն. «Perceptions», Թուրքիայի արտաքին գործերի հարաբերության հանդես, Մարտ-մայիս, 1996 թթ.,-33-57:
2. Նույն տեղում:
3. Նույն տեղում:

թուրք դիվանագետը բացատրում է Վարշավայի դաշինքին դիմակայելու ընդհանուր ռազմավարությունից: Արդի շրջանում քանի որ Վարշավայի պակտը գոյություն չունի, հետեւաբար, չի լինելու նաեւ ՆԱՏՕ-ի աջակցությունը:

Թուրք քաղաքագետի հիշյալ թեզը արժանի է լուրջ ուշադրության եւ քննարկման: Համենայնդեպս, մի բան անվիճելի է, որ պատերազմ սկսվելու դեպքում ՆԱՏՕ-ի օգնությունը Թուրքիային չի կարելի որպես ճշմարտություն ընդունել: Հավանականն այն է, որ, իրոք, ՆԱՏՕ-ն կփորձի պրոբլեմը լուծել խաղաղ միջոցներով, բայց պատերազմական գործողություններին չի մասնակցի, որովհետեւ դա կարող է սկիզբ դառնալ երրորդ համաշխարհային պատերազմի:

Ինչեւէ, այսօր Թուրքիան եւ Սիրիան գտնվում են պատերազմի եզրին, մի բան, որը հաստատում է մեր կողմից քննարկվող թեզի ճշմարտացիությունը, անկախ այն հանգամանքից, թե ներկայումս ինչպիսի լուծում կստանա թուրք-սիրիական պրոբլեմը: Թուրք-սիրիական հակամարտությունը ռազմավարական բնույթ ունի եւ ի վերջո պետք է գտնի իր լուծումը, որը մեր կարծիքով կարող է իրականացվել միայն պատերազմի միջոցով, նկատի ունենալով այն հանգամանքը, որ կողմերից մեկը՝ Թուրքիան երբեք չի համաձայնվի պրոբլեմի փոխզիջումային տարբերակի ընդունմանը:

Թվարկված երեք գործոնները պատրանքային չեն: Նրանք իրական են եւ հենց արդի շրջանում միջազգային զարգացման հիմնախնդիրների վրա խոշոր ազդեցություն են թողնում: Ոտնակոխ անել պատմության օրենքները, շրջանցել այդ գործոնները, նշանակում է հայ ժողովրդին զրկել իր ազգային գաղափարախոսությունից, ազգային գաղափարներից ու իդեալներից եւ դատապարտել կործանման:

Հայոց ազգային գաղափարախոսության՝ Ազատ, Անկախ եւ Միացյալ Հայաստանի հիմնադրույթը, ինչպես ցույց են տալիս վերը քննարկված գործոնները, հայ ժողովրդի եւ նրա քաղաքական, պետական ուժերի հետեւողական պայքարի դեպքում անպայման կիրականացվի:

4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԴԵՐԻ ԳԱՂԱՓԱՐԸ

Հայոց ազգային գաղափարախոսության առանցքային հիմնադրույթներից է՝ Հայաստանի անկախ Հանրապետության ստեղծումը, ամրապնդումը ու հզորացումը՝ որպես Անկախ եւ Միացյալ Հայաստանի իրականացման նախապայման, որպես հայ ժողովրդի գոյապահպանման եւ զարգացման երաշխիք: Հայ ժողովուրդը թեւակոխել է Մեծ Գաղափարի իրականացման առաջին փուլը՝ հռչակված է Հայաստանի անկախ Հանրապետությունը:

Հայաստանի Հանրապետությունը թե՛ ներքին եւ թե՛ արտաքին քաղաքականության բնագավառներում պետք է ղեկավարվի ազգային գաղափարախոսության հիմնադրույթներով: Ազգը եւ ազգային պետությունը կարող են գոյատեւել միայն այն դեպքում, եթե նրանք ղեկավարվում են ազգային գաղափարախոսությամբ:

Հայաստանի Հանրապետությունը պետք է ունենա ազգային գաղափարախոսությունից բխող ռազմավարական եւ մարտավարական ծրագրեր՝ Ազգային ծրագիր կամ՝ ինչպես շատ երկրներում ընդունված է ասել՝ Ազգային անվտանգության կոնցեպցիա: Եթե մարտավարական ծրագիրը կարող է ինչ-որ չափով պրագմատիկ լինել, իրադարձությունների զարգացմանը եւ փոփոխություններին համընթաց լրամշակվել, փոխզիջումների տարբերակներ ունենալ՝ տակտիկական հարցերում, ապա ռազմավարական ծրագիրը՝ Անկախ եւ Միացյալ Հայաստանի ստեղծումը փոփոխության ենթակա չէ:

Հայոց պետականությունը պետք է ունենա ազգային հզոր էկոնոմիկա՝ պայմանավորված Հայաստանի աշխարհաքաղաքական վիճակով եւ պատմական խնդիրներով: Հայաստանի աշխարհաքաղաքական պայմաններում հատուկ նշանակություն է ստանում խոր եւ բազմակողմանի մշակված ռազմական դոկտրինայի մշակումը: Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրինայի առանցքային հիմնադրույթներն են՝ հզոր ազգային բանակը եւ հզոր ռազմաարդյունաբերական համակարգը: Ռազմական արդյունաբերությունը պետք է զարգանա գիտության բարձրագույն նվաճումների հիման վրա: Այդ նպատակի համար միջոցներ չպետք է խնայվեն: Հայաստանի Հանրապետությունը, արդի աշխարհաքաղաքական իրավիճակից ելնելով, պետք է ունենա հզոր, ազգային, մարտունակ բանակ: Բանակը պետք է գտնվի պետության եւ ժողովրդի ուշադրության կենտրոնում: Բանակը պետք է համաժողովրդական սիրո առարկա լինի: Բանակում ծառայելը յուրաքանչյուր հայի համար պետք է լինի ազգային հպարտություն: Դասալիքները պետք է մերժվեն ժողովրդի կողմից եւ դիտվեն որպես Հայրենիքի դավաճաններ:

Ազգային բանակի հզորության հիմքը պետք է լինի ազգային ակունքներից բխող հայրենասիրությունը եւ ի սկզբանե հայ ցեղին տրված հերոսությունն ու քաջությունը, Հայրենիքի համար անձնազոհության պատրաստակամությունը եւ պաշտպանողական ու հարձակողական գերհզոր զենքը: Ապագա հայ զինվորը հայրենասիրության դպրոց է անցնում ընտանիքում եւ կրթական համակարգում՝ մանկապարտեզում, դպրոցում եւ բարձրագույն ուսումնական հաստատություններում: Զինվորի ազգային ոգին ձեւավորվում է կրթական համակարգում: Հայրենասիրության քարոզչությունը, ազգի, հայրենիքի եւ ազգային հերոսների սրբացումը տեղի է ունենում կրթական համակարգում՝ պատմության եւ պատմական հիշողության միջոցով: Այդ պատճառով էլ պատմությունը կրթական համակարգում պետք է ունենա հատուկ կարգավիճակ, որպիսին ունի լեզուն:

Ազգային ոգի ունեցող, Հայրենիքի համար անձնազոհության պատրաստ բանակը երբեք չի պարտվում: Բանակը՝ ժողովրդի գոյատեւման եւ անկախության գրավականն է, բանակը ազգային սրբություն է:

Ազգային բանակի հաղթական ոգին կոփվում է կրթական համակարգում: Այդ պատճառով էլ կրթական համակարգը իր բովանդակությամբ պետք է լինի ազգային: Ռազմահայրենասիրական դաստիարակությունը կրթական համակարգում պետք է առանցքային տեղ գրավի:

Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությունը պետք է ելնի երկրի աշխարհաքաղաքական եւ պատմական գործոնների հաշվառումից: Այդ հիմքի վրա պետք է մշակվի արտաքին քաղաքականության կուռ եւ ամբողջական կոնցեպցիա:

Պատմության ներկա փուլում կարեւորագույն նշանակություն է ստանում այն հարցը, թե Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության մեջ ինչպիսի՞ տեղ ու դեր է հատկացվելու Հայկական հարցի, հայոց ցեղասպանության եւ Սփյուռքի հիմնախնդիրներին:

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ:

Ելնելով չափազանց բարդ աշխարհաքաղաքական իրավիճակից եւ այն աննպաստ իրողությունից, որ հայոց նորանկախ պետականությունը դեռեւս գտնվում է կայացման պրոցեսում, Հայաստանի Հանրապետությունը պաշտոնապես Հայկական հարցը հռչակում է հայոց ազգային գաղափարախոսության ռազմավարական ծրագրի հիմնախնդիր, այն չմտցնելով մարտավարական ծրագրի մեջ, չդարձնելով պետության արտաքին քաղաքականության օրակարգային խնդիր: Շարունակվում է անզիջում պայքարը Արցախի պետության անկախության պահպանման

համար: Միաժամանակ բարձրացվում են Ադրբեջանի կողմից գավթված Նախիջեւանի եւ Շարուրի հարցերը, այդ ուղղությամբ քարոզչական լայն աշխատանք է ծավալվում: Պահանջվում է վերանայել 1921 թ. մարտի 16-ի ռուս-թուրքական պայմանագրի՝ Նախիջեւանին վերաբերող հոդվածը եւ նույն թվականի հոկտեմբերի 13-ի Կարսի պայմանագիրը: Անհրաժեշտ է նաեւ լայն քարոզչություն ծավալել Ադրբեջանի կողմից կազմակերպված հայոց ցեղասպանությանը միջազգային հանրությանը ծանոթացնելու ուղղությամբ, որը աշխարհին է ներկայացվել խեղաթյուրված ձեւով, որպես ադրբեջանցիների ցեղասպանություն: Նշված գործողություններով կարելի է Ադրբեջանին հարկադրել հարձակողական մարտավարությունից անցնել պաշտպանողականի:

Հայաստանի Հանրապետությունը Հայկական հարցը տակտիկական նկատառումներով չդարձնելով արտաքին քաղաքականության օրակարգային հարց, այնուամենայնիվ, հսկայածավալ աշխատանք պետք է տանի այդ հիմնախնդրի քարոզչությունը ազգային-քաղաքական բարձր մակարդակով իրականացնելու համար:

Պետք է ստեղծվի «Հայկական հարցի ռազմավարական ինստիտուտ», որի նպատակը պետք է լինի Հայկական հարցի կոնցեպցիայի ստեղծումը: Որքան էլ տարօրինակ լինի, հայ ժողովուրդը ցայսօր Հայկական հարցի կոնցեպցիա չունի: Այդ ինստիտուտը պետք է մշակի նաեւ Հայկական հարցի քարոզչության մեթոդներն ու ձեւերը: Հայկական հարցի ինստիտուտը պետք է զբաղվի ոչ միայն Հայկական հարցի, այլեւ նրա հետ սերտորեն առնչված բոլոր հիմնախնդիրներով: Այդ ինստիտուտի կազմում պետք է ընդգրկվեն հայ եւ այլազգի բոլոր արհեստավարժ ուժերը:

Հրավիրել Համաշխարհային Հայկական կոնգրես, որն իր ձեռքը պետք է վերցնի Հայկական հարցի ուղղությամբ տարվող բոլոր աշխատանքների կազմակերպումը, կոորդինացիան եւ ֆինանսավորումը: ՀՀԿ-ն պաշտոնապես պետք է լինի անկախ ազգային կազմակերպություն: Սակայն, այդ կազմակերպության աշխատանքներին գործուն մասնակցություն պետք է ցույց տան նաեւ Հայաստանի Հանրապետության իշխանությունները: ՀՀԿ-ն պետք է ղեկավարվի ազգային գաղափարախոսության հիմնադրույթներով, ազգային միասնության գաղափարով, որը մեծապես կօգնի հայ ժողովրդի միասնության հաստատմանը, Հայաստանի Հանրապետության հզորացմանը:

Շատ շնորհակալ պետք է լինել Հայ Դատի գրասենյակներից եւ այլ ազգային կազմակերպություններից՝ Սփյուռքի դժվարին պայմաններում Հայկական հարցի ուղղությամբ կատարած աշխատանքների համար, բայց այդ կարեւոր գործը պետք է գտնվի ոչ թե առանձին կուսակցությունների կամ ազգային կազմակերպությունների ձեռքում, այլ ամ-

բողջ հայ ժողովրդի կողմից ընտրված մի միասնական մարմնի, որպիսին կլինի ՀՀԿ-ն՝ իր նախագահությամբ:

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ:

Հայկական հարցի համար մղվող պայքարի քարոզչությունն ու ղեկավարությունը թողնելով Հայոց համաշխարհային կոնգրեսին, Հայաստանի Հանրապետությունը այդ բնագավառում իր հիմնական խնդիրը պետք է համարի հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման հասնելը, մի քաղաքականություն, որի ընդունման մասին ՀՀ նորընտիր նախագահը արդեն հրապարակայնորեն հայտարարել է:

Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը Հայկական հարցի լուծման համար միջազգային արենայում մղվող պայքարի առաջին փուլն է: Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումից, այդ իրողությունը ՄԱԿ-ի կողմից ընդունվելուց հետո արդեն հզորացած Հայաստանի Հանրապետությունը կմտնի Հայկական հարցի համար մղվող պայքարի երկրորդ փուլ՝ պաշտոնապես մարտավարական ծրագրի, պետության արտաքին քաղաքականության գործընթացի մեջ մտցնելով Հայկական հարցը:

Դա կլինի հայոց ազգային գաղափարախոսության հերթական հաղթանակը, իսկ նրա գործնական դրսեւորման ձեւերը եւ ուղիները կախված կլինեն տվյալ շրջանի աշխարհաքաղաքական գործոններից:

Այսպիսով, պատմության ներկա փուլում Հայաստանի Հանրապետությունը պետք է հետեւողականորեն պայքարի հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման համար, որը հիմք կհանդիսանա պետականորեն Հայկական հարցի համար մղվող պայքարի երկրորդ փուլին անցնելու համար:

ՍՓՅՈՒՌՔԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ:

Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության կոնցեպցիայի մեջ պետք է առանձնահատուկ տեղ գրավի նաեւ Սփյուռքը՝ որպես Հայկական հարցի եւ ցեղասպանության պրոբլեմի բաղկացուցիչ մաս, որպես հայոց ցեղասպանության արդյունք:

Այդ կապակցությամբ կարեւոր նշանակություն են ստանում հետեւյալ նկատառումները.

ա) Միջազգային ասպարեզում Հայկական հարցի կրողը եւ դրոշակակիրը պետք է լինի Սփյուռքը: Եթե պատմության արդի փուլում Հայաստանի Հանրապետությունը, ելնելով օբյեկտիվ աննպաստ իրավիճակից, տակտիկական նկատառումներով նպատակահարմար չի համարում իր ձեռքը վերցնել Հայկական հարցի համար մղվող պայքարի դրոշը, ապա դրոշակակիրը պետք է դառնա

Սփյուռքը:

բ) Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործում եւս Սփյուռքը կարեւոր դեր ունի խաղալու: Հայաստանի Հանրապետության եւ Սփյուռքի միացյալ ջանքերով, արտաքին եւ ներքին բոլոր գործոնների օգտագործմամբ միայն հնարավոր կլինի հասնել հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանը:

գ) Հիշյալ հիմնախնդիրները համազգային ուժերով լուծելու համար անհրաժեշտ է Հայաստանի Հանրապետությունում ստեղծել Սփյուռքի նախարարություն, որի ղեկավարությունը պետք է ստանձնեն էլիտար ազգային մտավորականության ներկայացուցիչները, որոնց հեղինակությունը եւ խոսքը Սփյուռքի համար ընդունելի կլինեն:

Միաժամանակ անհրաժեշտ է բոլոր գաղթօջախներում ստեղծել համայնքային ներկայացուցչական մարմիններ, որոնք եւ իրավասու կլինեն ներկայացնելու համայնքը Սփյուռք-Հայրենիք հարաբերություններում եւ միջազգային կազմակերպություններում:

Վերը նշված խնդիրների իրականացմամբ Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությունը հնարավորություն կստանա հայոց ցեղասպանության եւ Հայկական հարցի միջազգային ճանաչման համար մղվող պայքարում լիովին օգտագործել Հայաստանի եւ Սփյուռքի՝ հայ ժողովրդի բոլոր ուժերը, բոլոր հնարավորությունները: Հայ ժողովուրդը փորձով կհամոզվի, որ Հայաստանի Հանրապետության ղեկավարությունը վարում է ազգային գաղափարախոսությունից բխող ազգային քաղաքականություն, որն իր հերթին հիմք կհանդիսանա ազգային միասնության, ազգային համերաշխության եւ նորաստեղծ ազգային պետականության հզորացման համար:

Ընդհանուր գծերով այսպիսին պետք է լինի Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությունը՝ Հայկական հարցի, Հայոց ցեղասպանության եւ Սփյուռքի հիմնախնդիրների նկատմամբ:

Ելնելով ազգային անվտանգության շահերից՝ Հայաստանի Հանրապետությունը բոլոր դեպքերում պետք է լինի Ռուսաստանի դաշնակիցը եւ գտնվի նրա ռազմավարական ծրագրերի ոլորտներում:

Պատմության հրամայականով Հայաստանի Հանրապետությունը պետք է վարի հակակշիռ բլոկների քաղաքականություն: Հակաթուրքական բլոկում իրենց տեղը պետք է ունենան Ռուսաստանը, Հայաստանը, Հունաստանը, Սերբիան, քրդերը, Բուլղարիան, Իրանը, Սիրիան եւ Իրաքը: Հակակշիռ բլոկի ստեղծման դեպքում միայն Հայաստանը իրեն կարող է ապահով զգալ թուրքական վտանգից: Հակակշիռ բլոկի ստեղծումը Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության ամենահիմնական խնդիրներից մեկն է:

Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության կոնցեպցիայում կարեւորագույն տեղ են գրավում մշակույթի, գիտության եւ կրթական համակարգերը: Անվիճելի ճշմարտություն է, որ առանց մշակույթի ազգ չկա, որ հողը Հայրենիք է դառնում ազգային մշակույթով, որ անհատը ազգային մտածողություն, ազգային դիմագիծ է ձեռք բերում կրթական համակարգում: Եթե այս համակարգերը չեն գտնվում պետության հոգատարության կենտրոնում, անցնում են երկրորդ պլան, ապա մարդու համար վերանում է Հայրենիք հասկացությունը եւ մոլորակի բոլոր տարածքներն էլ նույն նշանակությունն են ստանում:

Այսպիսով, ՀՀ հիմնական խնդիրը արդի փուլում հայ անկախ պետականության ամրապնդումն ու հզորացումն է, ազգային գաղափարախոսության հիմնադրույթներից բխող՝ պետության ներքին եւ արտաքին քաղաքականության կոնցեպցիաների մշակումն ու իրագործումը, հայ մշակույթի, գիտության եւ կրթական համակարգի զարգացման համար բարենպաստ պայմանների ստեղծումը:

Հայաստանի Հանրապետության պատմական նշանակությունն այն է, որ նա ապահովում է հայ ժողովրդի ու հայ պետականության գոյատեւումը ու հետագա զարգացումը եւ միաժամանակ ելակետ է հանդիսանում Ազատ, Անկախ եւ Միացյալ Հայաստանի ստեղծման համար:

Հայաստանի անկախ Հանրապետությունը Միացյալ Հայաստանի ստեղծման առաջին փուլն է: Հայաստանի անկախ Հանրապետությունը առանցքային տեղ ունի հայոց ազգային գաղափարախոսությունում:

5. ԱԶԳԱՅԻՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹԸ՝ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆԱԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՆԿԱՐԱԳՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑ

Յուրաքանչյուր ժողովուրդ ունի իր ազգային ինքնագիտակցությունը, ազգային նկարագիրը եւ ազգային բնավորությունը: Առանց ազգային ինքնագիտակցության եւ ազգային նկարագրի ազգ գոյություն չունի: Ազգային ինքնագիտակցությունը ազգի գոյության հիմքն է: Հետեւաբար, ազգային ինքնագիտակցության, ազգային նկարագրի պահպանումն ու զարգացումը ազգային գաղափարախոսության հիմնախնդիրներից են: Ապազգայնացումը տանում է դեպի ազգային ինքնագիտակցության եւ ազգային նկարագրի ոչնչացում:

Ազգային ինքնագիտակցության եւ ազգային նկարագրի պահպանման ու զարգացման հիմնական միջոցը ազգային մշակույթն է եւ կրթության ազգային համակարգը, ազգային դաստիարակությունը՝ մանկապարտեզից մինչեւ բուհ:

Ազգային ինքնագիտակցությունը, մտածողությունը, նկարագիրը, բնավորությունը, անհատականությունը եւ հպարտությունը ձեւավորվում են ազգային մշակույթի հիման վրա, կրթական համակարգում: Առանց ազգային մշակույթի եւ ազգային կրթական համակարգի ազգը չի կարող հարատեւել:

Հայաստանի Հանրապետությունը՝ ելնելով հայ ժողովրդի հարատեւման գաղափարից, պետք է ունենա մշակույթի զարգացման, գիտության եւ կրթական համակարգի ազգային կոնցեպցիա:

Պետության կրթական համակարգի գերնպատակը պետք է լինի ազգային դաստիարակությունը, ազգային գաղափարախոսության հիման վրա՝ Ազգի, Հայրենիքի եւ անկախ պետականության գաղափարների սրբացումը: Հայը ստանալով հանդերձ համամարդկային գիտելիքներ, դառնալով միջազգային որակավորման մասնագետ, չպետք է կորցնի ազգային ինքնագիտակցությունը, ազգային նկարագիրը: Ընտանիքի եւ կրթական համակարգի միջոցով ազգի եւ Հայրենիքի գաղափարները եւ ընդհանրապես ազգային գաղափարախոսության բոլոր հիմնադրույթները պետք է մտնեն ազգի յուրաքանչյուր անդամի գենի եւ արյան մեջ: Հայրենիքի պաշտպանությունը արտաքին թշնամիներից պետք է ազգի յուրաքանչյուր անդամի սուրբ պարտականությունը համարվի: Մարդու կյանքը թանկ է, սակայն, այն վերարտադրվում է, Հայրենիքը չի վերարտադրվում: Հայրենիքը պահպանվում է սերունդների անձնազոհ պայքարով: Հայրենիքի պաշտպանությունից խուսափողները ազգային դա-

վաճաններ են:

Ազգի, Հայրենիքի, անկախ պետականության եւ մշակույթի հիմնադրույթները մշտապես պետք է լինեն ազգային դաստիարակության առանցքը՝ մանկապարտեզից մինչեւ բուհ: Ազգային մշակույթի եւ գիտության համակարգում առանձնահատուկ դեր են կատարում լեզուն, պատմությունը, գրականությունը եւ ընդհանրապես այն բոլորը, որոնք ամփոփված են Հայագիտության հասկացության մեջ:

ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ՄՇԵՑՊԵՍ ՊԵՏՔ Է ՀՈԳԱՏԱՐՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵՆ ԱԶԳԱՅԻՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻՆ՝ ԴՐԱՆՑ ՄԵՋ ՏԵՍՆԵԼՈՎ ՈՉ ԹԵ ԼՈԿ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՈՒ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԱՑԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐՆԵՐ, ԱՅԼ ՀԻՄՆԱԿԱՆՈՒՄ ԱԶԳԻ, ՀԱՅՐԵՆԻՔԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՅԱՏԵՎՄԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐ:

Առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձվի դպրոցում եւ բուհում լեզվի, պատմության եւ գրականության դասավանդման հիմնախնդրին, ազգային գաղափարախոսության էությունից ելնող դասագրքերի ստեղծմանը: Այդ առարկաները յուրովի երեխաներին պետք է մատուցվեն նաեւ մանկապարտեզներում: Երեխան ազգային ինքնագիտակցություն, ազգային նկարագիր եւ ազգային բնավորություն է ձեռք բերում աստիճանաբար: Ազգային ինքնագիտակցության եւ ազգային նկարագրի ձեւավորումը պետության կողմից պետք է ծրագրավորված լինի: Լեզվի,պատմության եւ գրականության դասավանդումը պետք է սերտորեն առնչվի հայ ժողովրդի անցած պատմական ուղու՝ պատմական հիշողության հետ: Ազգային մշակույթը եւ առաջին հերթին լեզուն,պատմությունը եւ գրականությունը ժողովրդի ինքնությունը հաստատող, ինքնագիտակցությունը եւ ազգային նկարագիրը ամրապնդող գործոններն են:

Ազգերն իրարից տարբերվում են առաջին հերթին իրենց մշակույթով, հատկապես լեզվով, պատմությամբ, գրականությամբ, արվեստով եւ այլն: Ազգային մշակույթով է պայմանավորված ազգի ինքնությունը, ազգային մտածողությունը եւ անհատականությունը:

Ազգային ինքնագիտակցության եւ ազգային նկարագրի ձեւավորման ու զարգացման ամենազորեղ գործոնները լեզուն եւ պատմությունն են: Պետությունը պետք է ստեղծի բոլոր բարենպաստ պայմանները՝ ազգային լեզվի անարգել զարգացման եւ բոլոր տեսակի կրթարաններում դասավանդման համար: Դպրոցի շրջանավարտը պետք է կատարելապես իմանա գրաբարը, միջին հայերենը եւ արդի հայերենը, որպեսզի դարերի ընթացքում ստեղծված հայոց ազգային մշակույթի գրավոր արժեքները նրան մատչելի լինեն: Լեզվի հետ միասին, ազգային ինքնագիտակցության եւ ազգային նկարագրի ձեւավորման գոր-

ծում ամենակարեւոր նշանակությունն ունի պատմությունը: Պատմությունը ազգային ինքնագիտակցության ողնաշարն է: Լեզուն ժողովրդի ոգին է,պատմությունը՝ միսն ու ոսկորը: Առանց ազգային պատմության, ազգային հիշողության ազգերը չեն կարող գոյատեւել: Պատմությունը ազգի կենսագրությունն է, հիշողությունը: Առանց կենսագրության եւ պատմական հիշողության ոչ մի ազգ չի կարող գոյատեւել: Պատմությունը հայրենասիրության քարոզչությունն է: Պատմությունն է հային հայրենասիրություն սովորեցնում, պատմությունն է հային կապում հայրենիքի հետ: Առանց պատմության, առանց պատմական հիշողության հայրենասիրություն չի կարող լինել: Հայը հայրենասիրություն է սովորում պատմությունից, որի մեջ կուտակվել է ամբողջ ժողովրդի դարավոր հայրենասիրությունը: Հայը պատմությամբ է հայի նկարագիր ստանում, նրանով է ծանոթանում իր ազգային հերոսներին, իր հայրենիքի անցած պատմական ուղուն, ազգի թշնամուն եւ բարեկամին: Պատմությունն է թելադրում ազգային գաղափարախոսությունը եւ ազգային ծրագիրը, քանզի ազգի բոլոր արդի հիմնական ազգային խնդիրները ունեն իրենց պատմական արմատները:

Ահա թե ինչու պատմությունը տարբեր մակարդակներով, ձեւերով ու մեթոդներով պետք է դասավանդվի բոլոր կրթական հաստատություններում՝ մանկապարտեզից մինչեւ բուհ: Կրթական համակարգից հանել ազգային պատմությունը,կեղծել կամ քաղաքականացնել, այդ նշանակում է հային կտրել իր արմատներից, իր հայրենիքից, իր պատմական հիշողությունից, որը անխուսափելիորեն հանգեցնում է ազգային ինքնագիտակցության եւ ազգային նկարագրի կորստի:

Պատմությունն այն գիտությունն է, առանց որի ոչ ազգային ինքնագիտակցություն, ոչ ազգային նկարագրեր եւ ոչ էլ ընդհանրապես ազգային գաղափարախոսություն գոյություն ունենալ չեն կարող: Ազգային գաղափարախոսությունը ձեւավորվում է պատմության փորձի հիման վրա, ժողովրդի պատմական հիշողության միջոցով: Ժողովրդին կտրել պատմությունից, պատմական հիշողությունից, այդ նշանակում է զրկել այն աղբյուրից, այն արմատներից, որից առաջացել եւ որից մշտապես սնունդ է առնում ազգային գաղափարախոսությունը: Ոչնչացնել պատմական հիշողությունը, այդ նշանակում է ոչնչացնել ազգային գաղափարախոսությունը, այդ նշանակում է ոչնչացնել ազգությունը:

Ահա թե ինչու ազգը պետք է ունենա մշակույթի, գիտության եւ կրթության ազգային համակարգ, որի կենտրոնում պետք է գտնվեն՝ Գիտությունների Ազգային Ակադեմիան՝ իր հայագիտական եւ հումանիտար ինստիտուտներով, Մայր բուհը՝ Երեւանի պետական համալսարանը, Գրողների միությունը եւ Մատենադարանը: Այդ ազգային համակարգում իրենց պատշաճ տեղը պետք է ունենան ազգային արխիվները,

պատմության, ցեղասպանության, ազգագրության, գրականության, հնագիտության, արվեստի եւ նման բնույթի այլ թանգարանները, պատմական, ճարտարապետական հուշարձանները եւ այլն: Դրանց մեծ մասը պետք է մտնի պետության կողմից հովանավորվող ազգային արժեքների ոսկե ֆոնդի մեջ:

Հայաստանի Հանրապետության կրթական համակարգը պետք է լինի ազգային եւ գործի՝ ելնելով ազգային գաղափարախոսության հիմնադրույթներից: Այն ժողովուրդները, որոնք հրաժարվում են ազգային կրթական համակարգից, նրանք որպես կանոն կործանվում են: Կրթության ազգային համակարգի, մասնավորապես ազգային դպրոցի հարցում զիջումներ չեն կարող լինել: Այդ է պատճառը, որ Հայաստանի Հանրապետության անկախության հռչակումից հետո հայ ազգային մտավորականությունը ճակատամարտ տվեց ապազգային մտավորականությանը եւ ապազգային իշխանություններին, հասավ հայ աշակերտներով ռուսական դպրոցների փակմանը եւ դրանց հիման վրա հայկական դպրոցների ստեղծմանը: Դա հայ ազգային մտավորականության խոշոր հաղթանակն էր: Ապազգային մտավորականությունը բերում էր այն անհիմն պատճառաբանությունը, թե իբր ռուսական դպրոցների փակումով հայ ժողովուրդը կտրում է այն ուղին, որով հաղորդակից է լինում համաշխարհային քաղաքակրթությանը, որ դրանով Հայաստանը վերածվում է գավառի, որ այդ քաղաքականությունը արդյունք է նացիոնալիստական, գավառական մտայնության տեր գործիչների: Իսկ քաղաքականապես կույր ռուսամետները դրան ավելացնում են, թե իբր փակելով ռուսական դպրոցները, մենք մեզ կտրում ենք Ռուսաստանից եւ ճանապարհ ենք հարթում արեւմտյան լեզուների համար՝ ուժեղացնելով արեւմտյան տերությունների տեղն ու դերը Հայաստանի Հանրապետությունում:

Ազգային դպրոցի շուրջը եղած ապազգային եւ ազգային մտավորականության տարաձայնությունների հիմքում ընկած են մոտեցումների արմատական տարբերություններ:

Հայ ժողովուրդը Ռուսաստանին եւ ռուսական կողմնորոշումը ընդունում է ոչ թե նրանում ձուլվելու, նրա կազմում լինելու,այլ նրա կողքին քայլելու, նրա բարեկամը լինելու, անկախ գոյատեւելու, ստրատեգիական ազատ պարտնյորը լինելու նպատակով:

Ռուսաց եւ ընդհանրապես օտար լեզվի հարցը չպետք է թույլ տրվի, որ Հայաստանի Հանրապետությունում քաղաքական շահարկումների ոլորտում գտնվի:

Օտար լեզուների դասավանդումը Հայաստանում պետք է տարվի բարձր պրոֆեսիոնալ մակարդակով, բայց հայերենին զուգահեռ եւ ոչ թե ի հաշիվ հայերենի: Հայը օտար լեզու պետք է սովորի ոչ ի հաշիվ

մայրենի լեզվի:

Չպետք է թույլ տրվի, որպեսզի նախկինում ռուսերենի ունեցած տեղը գրավեն արեւմտյան լեզուները:

Հայաստանի Հանրապետության դպրոցներում օտար լեզուները պետք է դասավանդվեն հավասար հիմունքներով՝ ոչ մի լեզվի առավելություն չտալով:

Այսպիսին պետք է լինի Հայաստանի Հանրապետության պետական քաղաքականությունը լեզվի հարցում: Վերը նշված բոլոր հարցերը պետք է լուծվեն պետականորեն, ելնելով հայոց ազգային գաղափարախոսության սկզբունքներից:

Ազգային մշակույթի համակարգում պատմության հրամայականով ղեկավար դերը պետք է պատկանի ազգային մտավորականությանը, որի ջանքերով ազգի, Հայրենիքի եւ ընդհանրապես ազգային գաղափարախոսության բոլոր հիմնադրույթները մտնում են ժողովրդի գենի ու արյան մեջ:

Ազգային գաղափարախոսության հիմնախնդիրները կենսագործելու, մշակույթի, գիտության եւ կրթության համակարգերը ազգային հունով տանելու համար խիստ անհրաժեշտ է, որ հիշյալ բնագավառների ղեկավարությունը պատկանի ազգային մտավորականությանը:

Այսպիսով, վերը շարադրվածը ցույց է տալիս, որ ազգային ինքնագիտակցության եւ ազգային նկարագրի հարատեւման ու զարգացման հիմնական լծակը ազգային մշակույթն է, հատկապես՝ հայագիտությունը եւ ազգային կադրերի պատրաստման համակարգը:

Ահա թե ինչու ազգային մշակույթը, գիտությունը, հատկապես՝ հայագիտությունը եւ կրթական համակարգը մշտապես պետք է գտնվեն հայոց պետականության, ժողովրդի եւ ազգային կազմակերպությունների ուշադրության կենտրոնում:

Ահա թե ինչու մշակույթը ազգային գաղափարախոսության հիմնադրույթն է:

6. ՄԵԿ ԱԶԳ- ՄԵԿ ՀԱՅՐԵՆԻՔ: ՀԱՅՐԵՆԻՔ- ՍՓՅՈՒՌՔ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ՝ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹ

Եղեռնից փրկված արեւմտահայությունը ապաստան գտավ աշխարհի բազմաթիվ երկրներում: Ստեղծվեց հայկական Սփյուռքը: Հայ ժողովուրդը երկատվեց: Սփյուռքահայությունը ձուլումից փրկելու համար՝ մեկ ազգ- մեկ Հայրենիք, Հայրենիք- Սփյուռք միասնական համակարգի ստեղծումը դառնում է ազգային գաղափարախոսության հիմնադրույթ:

Ելնելով ազգային գաղափարախոսության հրամայականից, անհրաժեշտ է մշտապես վարել մեկ ազգ- մեկ Հայրենիք քաղաքականությունը: Եւ այդ ազգային քաղաքականության մեջ թե՛ Հայաստանի Հանրապետությունը եւ թե՛ Սփյուռքը իրենց դերն ունեն կատարելու, իրենց պատմական առաքելությունը:

Սփյուռքը ցեղասպանության արդյունքն է եւ խորհրդանիշը: Եթե հայ ժողովուրդը պայքարելու է կորցրած Հայրենիքը ազատագրելու համար, ապա Սփյուռքի գոյությունը խիստ անհրաժեշտ է: Սփյուռքը կարեւորագույն տեղ է գրավում Հայկական հարցի եւ հայոց ցեղասպանության ճանաչման համար մղվող դժվարին պայքարում:

Հայաստանի Հանրապետության եւ Սփյուռքի ազգային քաղաքականությունը մի հունով տանելը, ազգային գաղափարախոսության սկզբունքներին ծառայեցնելը դյուրին գործ չէ եւ իր մեջ պարունակում է լուրջ դժվարություններ: Սփյուռքը կուսակցական եւ անկուսակցական ուժերի լայն սպեկտր ունի: Հայաստանի Հանրապետությունը եւս ունի կուսակցական եւ անկուսակցական ուժերի լայն սպեկտր: Տարբերությունն այն է, որ Սփյուռքում գործում են ավանդական կուսակցությունները, իսկ Հայաստանում՝ ինչպես ավանդական, այնպես էլ նոր ստեղծված կուսակցություններն ու կազմակերպությունները:

Հայրենիք- Սփյուռք միասնական համակարգի ստեղծումը հայոց ազգային գաղափարախոսության պահանջն է, հայ ժողովրդի առաջ ծառացած կարեւորագույն խնդիրների լուծման երաշխիքը:

Այդ նպատակով անհրաժեշտ է ստեղծել Համաշխարհային Հայկական կոնգրես կազմակերպությունը, որում ընդգրկված պետք է լինեն սփյուռքահայ բոլոր համայնքների, կուսակցությունների, կազմակերպությունների եւ, բնականաբար, Հայաստանի Հանրապետության իշխանությունների, կուսակցությունների եւ ազգային քաղաքական կազմակերպությունների ներկայացուցիչները:

Համաշխարհային Հայկական կոնգրեսը՝ վեր կանգնելով կուսակցական, հատվածական շահերից, ղեկավարվելով ազգային գաղափարա-

խոսության հիմնադրույթներով, իրավասու կլինի լուծելու հայ ժողովրդի համար կարեւոր համազգային նշանակություն ունեցող բոլոր հիմնախնդիրները:

Նման խնդրի իրականացման համար սփյուռքահայերը առաջին հերթին պետք է Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանան եւ որպես Հայաստանի քաղաքացիներ մասնակցեն երկրի հիմնական պրոբլեմների լուծմանը, զոհաբերությունների իրենց բաժինն ունենան Հայրենիքի ու հայ պետականության պաշտպանության հարցերում: Հայրենիքը ամբողջ ժողովրդինն է: Թույլատրելի չէ, որպեսզի վտանգի պահին ժողովրդի մի հատվածը արյուն թափի, զրկանքներ կրի, իսկ մյուս մասը՝ չմասնակցելով կռվին, մասնակցի նրա ճակատագրի լուծման հարցերին:

Սփյուռքահայությունը կենդանի, յուրահատուկ օրգանիզմ է, որն ունի գոյատեւման իր օրինաչափությունները: Սփյուռքահայության ֆենոմենը գիտականորեն ուսումնասիրված չէ, մինչդեռ այն ազգային եւ գիտաքաղաքական կարեւորագույն նշանակություն ունի:

Սփյուռքահայությունը երկար գոյատեւման հեռանկարներ չունի, նա դատապարտված է ձուլման: Հետեւաբար, սփյուռքահայության փրկության հույսը հայրենադարձությունն է:

Խորհրդային իշխանության տարիներին, տասնամյակներ շարունակ քարոզվում էր «Խորհրդային Հայաստանը բոլոր հայերի հայրենիքն է» կարգախոսը եւ կոչ էր արվում աշխարհասփյուռ հայությանը ներգաղթել Հայաստան: Այդ կարգախոսի իրականացումը համարվել է համազգային մեծ միջոցառում, սփյուռքահայության փրկության միակ միջոց:

Սակայն, այդ կարգախոսի իրականացումը շատ ավելի բարդ է, քան թե թվում է առաջին հայացքից: Հիմնախնդիրները բազմակողմանիորեն եւ խորությամբ քննելու դեպքում առաջանում են ոչ ստանդարտ հարցեր, որոնք պահանջում են ոչ ստանդարտ լուծումներ:

Առաջին. ամբողջ սփյուռքահայության ներգաղթը Հայաստանի Հանրապետություն արդի փուլում գործնականորեն հնարավոր չէ կազմակերպել: Հայաստանի սահմանափակ տարածքը այդքան մարդ չի կարող տեղավորել եւ կերակրել:

Երկրորդ. սփյուռքահայության ճնշող մեծամասնությունը չի ցանկանում բնակություն հաստատել Հայաստանի Հանրապետությունում: Եթե սփյուռքահայերը պետք է թողնեն իրենց ապրած երկրները եւ մեկնեն Հայրենիք, ապա դա կարող է լինել ոչ թե արեւելյան, այլ արեւմտյան Հայաստանը: Նորանկախ Հայաստանի պատմությունը ապացուցում է այդ թեզի առաջին մասը: Սփյուռքահայությունը ներգաղթ չի սկսել դեպի Հայաստանի Հանրապետություն:

Երրորդ. սփյուռքահայության մի մասը, հատկապես արտերկրում

ծնվածների մեծամասնությունը, հարմարվել է արտերկրին եւ սկզբունքորեն ոչ մի ցանկություն չունի Հայրենիք վերադառնալու, շատերի մոտ սկսել է ձեւավորվել երկրորդ հայրենիքի գաղափարը:

Չորրորդ. եթե անգամ հնարավոր լիներ համայն հայությանը հավաքել Հայաստանի Հանրապետությունում, պետք է լրջորեն քննարկել այն հարցը, թե կա՞ արդյոք դրա անհրաժեշտությունը:

Ամբողջ սփյուռքահայության ներգաղթի քաղաքականությունը՝ ելնելով ազգային գաղափարախոսության հիմնադրույթներից, պատմության ներկա փուլում ճիշտ համարել չի կարելի: Չափազանց մեծ է Սփյուռքի դերը Արեւմտյան Հայաստանի համար մղվող պայքարում: Ցեղասպանության եւ կորցրած Հայրենիքի կրողը, խորհրդանիշը սփյուռքահայությունն է: Հայաստանի Հանրապետությունը եւ կուսակցություններն ու կազմակերպությունները պետք է գործադրեն բոլոր ջանքերը՝ այդ գործոնը հաստատուն դարձնելու, Հայրենիքի համար մղվող պայքարում նրա դերը ավելի մեծացնելու համար:

Հինգերորդ. ամփոփելով ներգաղթի ուղղությամբ կատարված աշխատանքները,նկատի ունենալով նաեւ հայրենադարձների՝ խորհրդային իշխանության տարիներին ծայր առած արտագաղթը, զանգվածային աքսորները, կարելի է եզրակացնել, որ ներգաղթի քաղաքականությունը ձախողվել է:

Վեցերորդ. արտագաղթը շատ ավելի մեծ ծավալ է ընդունել Հայաստանի անկախ Հանրապետության տարիներին՝ հասնելով ավելի քան մեկ միլիոն մարդու, որը կազմում է երկրի բնակչության շուրջ մեկ երրորդը:

Սա չափազանց խոշոր երեւույթ է, որը չի կարելի անտեսել ազգային գաղափարախոսության, ներգաղթի եւ Հայրենիք- Սփյուռք հարաբերությունների հիմնախնդիրների քննարկման ժամանակ:

Հիշյալ խնդիրների ու երեւույթների քննարկմանը չպետք է պարզունակ մոտեցում ցուցաբերել: Պետք է նկատի ունենալ, որ Հայրենիք հասկացությունը ունի իր առանձնահատկությունները, պատմական, ազգային, ծագումնաբանական,զգացմունքային եւ գիտական ընկալումները:

Հայոց Հայրենիքը մեկն է՝ Ազատ, Անկախ եւ Միացյալ Հայաստանը: Սակայն, յուրաքանչյուր հայի համար այդ անվիճելի ճշմարտության հետ մեկտեղ թանկ է հատկապես Հայաստանի այն շրջանը, որտեղից սերվել են ինքը եւ իր նախնիները, որի հետ անմիջականորեն կապված է իր պատմական հիշողությունը: Այնտեղ են գտնվում հարազատների գերեզմանները: Մենք ականատեսն ենք այն բանի, թե որքան սուրբ ու անմոռանալի է Վանը՝ վանեցիների համար, Սասունը՝ սասունցիների, Զեյթունը՝ զեյթունցիների եւ այլն: Այդ երեւույթն ընդհանուր է ամբողջ Հայաստանի բոլոր շրջանների բնակչության համար: Այդ երեւույթը հա-

տուկ է աշխարհի բոլոր ժողովուրդներին: Հայերը բացառություն չեն: Հայրենակցական միությունների ստեղծումը Սփյուռքում եւ Հայաստանում խոսում է հենց դրա մասին: Մենք՝ հայերս դեռեւս խոր եւ բազմակողմանիորեն չենք վերլուծել հայոց ազգային կյանքի բազմաթիվ հետաքրքիր եւ խոր արմատներ ունեցող երեւույթներ:

Իրոք, ի՞նչ նպատակ են հետապնդում հայրենակցական միությունները: Կորցրած պատմական Հայրենիքի տարբեր շրջաններից սերված հայերը, նրանց որդիները, թոռներն ու ծոռները, որոնք չեն տեսել Արեւմտյան Հայաստանը, այսօր իրենց անվանում են վանեցի, էրզրումցի,մշեցի, սասունցի եւ այլն: Նրանք համախմբվում են հայրենակցական միություններում, վերակենդանացնում պատմական հիշողությունը, այն փոխանցում երիտասարդներին:Եւ դա շարունակվում է սերնդից սերունդ: Այդ միությունների հրատարակած գրքերը, կանգնեցրած հուշարձանները եւ ընդհանրապես կատարած բոլոր գործերը գիտակցաբար, թե ենթագիտակցաբար հետապնդում են միայն մեկ նպատակ.չմոռանալ պատմական հայրենիքը, չկորցնել վերադառնալու հույսը, պայքարել ազգային իդեալի իրականացման համար:

Դերերը Հայկական հարցի լուծման համար մղվող պայքարում Հայրենիքի եւ Սփյուռքի միջեւ պետք է հստակորեն բաշխվեն: Յուրաքանչյուրն իր խնդիրը պետք է ունենա այդ մեծ ազգային կռվում:

Պատմական Հայրենիքի հիմնախնդիրների լուծումը առանձին հայի, առանձին ազգային կազմակերպության եւ քաղաքական կուսակցության մենաշնորհը չէ եւ չի էլ կարող լինել: Այն չի կարող մենաշնորհը լինել առանձին-առանձին Հայաստանի Հանրապետության կամ էլ Սփյուռքի:

Անկախ եւ Միացյալ Հայաստանի համար մղվող պայքարի հիմնախնդիրների լուծման մենաշնորհը ամբողջ հայ ժողովրդինն է: Եւ հենց այդ առումով էլ խիստ անհրաժեշտ է Համաշխարհային հայկական կոնգրեսի ստեղծումը, որը կարտահայտի ամբողջ հայ ժողովրդի հավաքական կարծիքը եւ կնշակի Հայկական հարցի լուծման համար մղվող պայքարի մարտավարությունն ու ռազմավարությունը: Եւ ամենակարեւորն այն է, որ Հայկական հարցի հետ առնչված այն բոլոր հարցերը, որոնք տակտիկական պատճառներով նպատակահարմար չի համարի բարձրացնել հայոց պետականությունը, օրակարգի հարց կդարձնի Համաշխարհային հայկական կոնգրեսը:

7. ԱԶԳԱՅԻՆ ՀՊԱՐՏՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԸ

Յուրաքանչյուր ազգ գոյատեւելու եւ հաղթելու համար պետք է անպայման ունենա բարձր ազգային հպարտություն: Ազգը պետք է հպարտանա իր ազգային նկարագրով, Հայրենիքով, պետականությամբ,մշակույթով,ավանդույթներով, կրոնով եւ ընդհանրապես ազգային բոլոր սուրբ եւ անանց արժեքներով: Ազգի, հայրենիքի եւ պետականության գոյատեւման եւ հզորացման նախապայմաններից մեկը ազգային հպարտությունն է:

Ազգային հպարտությունից, ազգային արժանապատվությունից զուրկ, թերարժեքության բարդույթով տառապող ազգը չի կարող երկար ժամանակ գոյատեւել:

Ազգային հպարտության հիմնադրույթի քարոզչությունը հայոց ազգային գաղափարախոսության հրամայականն է, այն ելնում է հայ ժողովրդի պատմական ուղու առանձնահատկություններից:

Դժվարին է եղել հայոց պատմական ուղին: Ունենալով աշխարհակալ տերություն, հայերն այնուհետեւ զրկվել են պետականությունից եւ դարեր շարունակ գտնվել տարբեր նվաճողների տիրապետության տակ: Պետականության փառավոր ուղի անցած, մշակութային մեծ արժեքներ ստեղծած հայ ժողովուրդը, համաձայն պատմական աղբյուրների, եղել է հպարտ, քաջ, համարձակ, մարտնչող,հայրենասեր, հետեւողական, համառ եւ ստեղծագործող:

Հայաստան ներխուժած թուրքական, իսկ ավելի ուշ՝ նաեւ քրդական ցեղերը ձգտում էին ընկճել հայ ցեղի, հայ ազգի հերոսական ոգին, խաթարել նրա ազգային բնավորությունը, զրկել նրան իր նախնիների վսեմ հատկություններից եւ ֆային վերածել ազգային դեմքը կորցրած, ազգային ինքնագիտակցությունից եւ պատմական հիշողությունից զուրկ մանկուրտի: Թուրքերը եւ քրդերը հայերի համար ստեղծել էին ստրկական, ճորտական վիճակ: Դարերի ընթացքում թուրքերն ու քրդերը փորձում էին հայ ժողովրդին ներարկել ստրուկի հոգեբանություն, ճորտի հոգեբանություն:

Դարեր շարունակ պետականության, ազգային բանակի բացակայության պայմաններում, գտնվելով բարբարոսական ցեղերի տիրապետության տակ, հայ ժողովուրդը աստիճանաբար կորցնում է իր ավանդական բնավորության գծերը, մարտական հատկությունները, ազգային հպարտությունը, փոխում էր հոգեկան կերտվածքը, ձեռք էր բերում թերարժեքության բարդույթ, զոհի բարդույթ, պարտվողականությունը դարձնում ազգային բնավորության հիմնական գիծ: Այս ընդհանուր իրավիճակը շարունակվեց մինչեւ Արեւելյան Հայաստանի՝ Ռուսաստանի

տիրապետության տակ անցնելը, որից հետո նախկին վիճակում շարունակեց մնալ միայն արեւմտահայությունը:

Ռուսական կայսրության կազմում, բնականաբար, արեւելահայության թերարժեքության բարդույթը պետք է աստիճանաբար վերանար: Հայն ազատվել էր ՖԻԶԻԿԱՊԵՍ, սակայն, մնում էր ոգու ազատությունը, որը ձեռք է բերվում ավելի երկարատեւ ժամանակահատվածում:

Քննարկելով 1905-1906 թվականների հայ- թուրքական կռիվների պրոբլեմը, Դավիթ Անանունը արեւելահայերի թերարժեքության բարդույթի վերացման պրոցեսի մասին գրել է.

«1905 թվականից 100 տարի առաջ ռուսները մտել էին Այսրկովկաս (Գանձակի խանությունը նվաճվեց 1804 թ., Ղարաբաղի, Շեքիի, Շիրվանի, Բաքուի եւ Արեւելյան Այսրկովկասի մյուս խանությունները հպատակություն հայտնեցին 1805 թվին):

Այդ օրվանից էլ հիմք է դրվել հայերի ֆիզիկական ազատագրմանը...

ՌՈՒՍԱԿԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՄ ՀԱՅԵՐԻ ՆՈՐ ՀՊԱՏԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐ ԺՈՂՈՎՐԴԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱԶԱՏԱԳՐՈՒՄՆ ԷՐ ԳԻՇԱՏԻՉՆԵՐԻ ՄԱԳԻԼՆԵՐԻՑ: ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱԶԱՏԱԳՐՈՒՄԸ ՄԵԾ ԲԱՐԻՔ է: Այն հիմքն է կազմում մյուս բոլոր բարօրությունների: ՆՐԱՆ ՊԻՏԻ ՀԱՋՈՐԴԵՐ ՈԳՈՒ ԱԶԱՏԱԳՐՈՒՄԸ: Չէ՞ որ իդեաների ընթացքը դանդաղում է իրերի ընթացքից: Այդ ոգու ազատագրումը նախապատրաստվեց ամբողջ 100 տարի եւ կամաց- կամաց զգացնել տվեց իր ներկայությունը: Դա բարոյական վերածնություն էր հայերի համար... Այն համառ աշխատանքով էր նախապատրաստվել 100 տարվա ընթացքում ... նման պայմաններում պիտի հասներ հաշվեհարդարի օրը, որը եւ հայության ոգու ազատագրման պահը պիտի լիներ:

Այդ էլ եղավ 1905-1906 թվականներին... ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱԶԱՏԱԳՐՈՒԹՅԱՆՆ ԱՎԵԼԱՑԱՎ ՈԳՈՒ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՄԱՍՆՈՒԹՅՈՒՆԸ: Հայն ու թուրքը հավասարարժեք դարձան: Ցեղական առավելության առասպելը ջնջվեց հրացանների որոտով : Դա՝ բացառապես հայերի համար: Այս կետում թրքությունը նահանջեց եւ պատկառանքով տոգորվեց հայության նկատմամբ: Մեր ժողովրդի ազատագրության պատվանդանն ու վերնաշենքը ներդաշնակ վիճակ ստացան»[1]:

Դավիթ Անանունի սույն դիտարկումը սկզբունքորեն ճիշտ է, այն վերապահությամբ միայն, որ թերարժեքության բարդույթի երեւույթներն ու մնացորդները երկար ժամանակ, հատկապես պատմության անցումային, ծանր շրջաններում, իրենց զգացնել են տալիս: Հազարամյակում ստեղծված թերարժեքության բարդույթի վերջնական վերացման համար, ամենայն հավանականությամբ, ավելի երկարատեւ ժամանա-

1. Դ. Անանուն. Ռուսահայերի հասարակական զարգացումը. հատոր երրորդ (1901-1918) Վենետիկ, էջ 261-263:

կաշրջան է պահանջվում եւ անհրաժեշտաբար՝ չափազանց բարենպաստ պայմաններ:

Գարեգին Նժդեհը գրել է. «Գիտական հոգեբանությունը վաղուց է ապացուցել, որ աղետներ տեսած, արհավիրքների, ցնցումների ենթարկված ժողովուրդները, հատկապես փոքր ժողովուրդները, սկսում են տառապել հոգեկան ետընթացով, որն արտահայտվում է պարտվողականության տարբեր դրսեւորումների ձեւով: Աղետի ենթարկվածը, հոգեպես խիստ ուժասպառվելով, ամեն ինչ կորած է համարում, լքում է իր պատմական առաքելությունը, կրավորաբար եւ հնազանդորեն համակերպվում է իր վզին փաթաթված քաղաքական ճակատագրին: Նախ եւ առաջ նրան պատում է թերարժեքության տանջալից զգացումը, որի պատճառով դառնում է քաղաքական հոռետես, մշակույթի տեսակետից՝ անստեղծագործ: Հոգեպես նա դառնում է անիշխան. ժխտելով ամեն մի արժեք, հեղինակություն, իշխանություն, դառնում է զզվելի անձնապաշտ, փոքրոգի ու խորթ հասարակությանը եւ սկսում է հետապնդել սոսկ մեկ առօրեական նպատակ- իր սեփական հացն ու հանգիստը: Որպես «ուրացող» (պարտվողական) նա լքում է իր դիրքերը ողջ ճակատով: Իր գոյության պայքարը նա արտաքին ճակատից տեղափոխում է իր ներաշխարհը, որի հետեւանքով ավելի է «կոտրվում». ուժասպառվում: Այսպիսով նա մոռացության է մատնում իրեն սպառնացող արտաքին վտանգը՝ թշնամուն:

Միով բանիվ, նա անընդունակ է դառնում նոր պայքարի,ճիգի, զոհողության, դուրս ընկնում պատմության հունից եւ սկսում է քարշ տալ իր անստեղծ ու անիմաստ գոյությունը, հարուցելով իր հանդեպ ազգերի զզվանքն ու խղճահարությունը»[1]:

Ահա այդպես է բնութագրում «հայկական պարտվողականությունը» Գարեգին Նժդեհը:

Հայոց հայրենիքի ազատագրումը, անկախ պետականության վերականգնումը հնարավոր կարող էր դառնալ միայն արեւմտահայության մարտական, բարոյական եւ ազգային ավանդական այլ հատկությունների վերականգնման, թերարժեքության բարդույթի եւ պարտվողականության վերացման դեպքում:

Բայց կարելի՞ է արդյոք ձերբազատվել դարերի ընթացքում ձեռք բերած թերարժեքության բարդույթից: Արդի գիտությունը գտնում է, որ կարելի է: «Պարտվողականությամբ տառապող ժողովուրդները անբուժելի չեն»,- գրում է Գ. Նժդեհը[2]:

Դրանով է բացատրվում այն հանգամանքը, որ ազգային-ազա-

1. Գարեգին Նժդեհ. Երեւան, 1995, էջ 74:
2. Նույն տեղում, էջ 75:

տագրական պայքարի տարիներին ազատագրական կազմակերպությունները եւ քաղաքական կուսակցությունները առաջին հերթին ձեռնամուխ են լինում ազգային ինքնագիտակցության եւ ազգային հպարտության գաղափարների քարոզչությանը: Հայ ազատագրական միտքը լայնորեն քարոզում էր ազատագրական գաղափարները, հայոց պատմության հերոսական դրվագները, զենքով ու զոհաբերությամբ Հայրենիքն ազատագրելու գաղափարը: Դաշնակցության կողմից կյանքի կոչված ֆիդայական շարժումը իր հիմնական նպատակներից մեկը համարում էր հերոսական պայքարով ժողովրդին ոգեւորելը, նրան համաժողովրդական պայքարի, համաժողովրդական զինված ապստամբության հանելը:

Սակայն, դարերի ընթացքում ժողովրդի ձեռք բերած թերարժեքության բարդույթը, պարտվողականությունը միանգամից չի ոչնչանում: Օտարի տիրապետության տակ դարերի ընթացքում ձեռք բերած բնավորության արատավոր գծերից ձերբազատվելու համար ժողովրդին երկար ժամանակ էր անհրաժեշտ: Ընդ որում, այդ պրոցեսը տեղի է ունենում աստիճանաբար: Թերարժեքության բարդույթի վերացման անհրաժեշտ ժամանակահատվածում ժողովուրդը կարող է եւ հերոսության հրաշքներ ցույց տալ, ինչպես 1918 թ. Մայիսյան հերոսամարտում, եւ խայտառակ պարտություններ կրել, ինչպես 1920թ. թուրք- հայկական պատերազմում:

Այդ նույն երեւույթն ենք տեսնում նաեւ 19-րդ դարի վերջերին եւ 20-րդ դարի սկզբներին Արեւմտյան Հայաստանում ծավալված ազգային-ազատագրական պայքարի ժամանակահատվածում: Երկու հերոսական ապստամբություն է տեղի ունեցել Սասունում, մեկը՝ Զեյթունում: Բայց չի կարելի անտեսել այն ակնառու փաստը, որ արեւմտահայությունը զանգվածորեն չմասնակցեց ազատագրական պայքարին,որի հետեւանքով չիրականացվեց կուսակցությունների կողմից ծրագրված համաժողովրդական զինված ապստամբությունը:

Այս վերջին փաստը մեզ բերում է հետեւյալ եզրակացությանը. թուրքերի դարավոր տիրապետությունը, քրդերի հետ միասին նրանց իրագործած վայրագությունները իրենց հետեւանքներով Արեւմտյան Հայաստանի բոլոր շրջանների վրա՝ հայերի բնավորության փոփոխության, թերարժեքության բարդույթի ձեռքբերման իմաստով նույն ազդեցությունը չեն ունեցել: Մենք փաստորեն տեսնում ենք, որ Արեւմտյան Հայաստանի լեռնային որոշ շրջաններում, մասնավորապես, Սասունում եւ Զեյթունում հայ բնակչության բնավորության փոփոխություն, թերարժեքության բարդույթ, զոհի բարդույթ չի նկատվում: Այդ նույն երեւույթն ենք նկատում նաեւ Արեւելյան Հայաստանի երկու լեռնային շրջաններում՝ Արցախում ու Զանգեզուրում:

Ուրեմն, Հայաստանի որոշ լեռնային շրջանների բնակչությունը չէր կորցրել իր ազգային հպարտությունը եւ արժանապատվությունը: Այդ բացատրվում է ոչ միայն նրանով, որ այդ շրջանների բնակչությունը թշնամուն դժվար մատչելի լինելու պատճառով կիսաանկախ կյանքով էր ապրում, այլեւ նրանով, որ այդ վիճակը հիմք էր հանդիսացել պահպանելու նրանց բնավորության հիմնական գծերը՝ ռազմական ոգին, քաջությունն ու հերոսությունը: Եթե Հայաստանի այլ շրջաններում թերարժեքության բարդույթից ձերբազատված էին անհատներ եւ խմբեր, ապա հիշյալ շրջաններում՝ հիմնականում ամբողջ բնակչությունը:

Սակայն, սույն երեւույթը, որը Քրիստափոր Միքայելյանը անվանել էր «պատմական չարիք», գործում էր միայն այն տարածաշրջանում, որտեղ ձեւավորվել էր թերարժեքության բարդույթը:

Հետաքրքիր է, որ նույն հայը այդ տարածաշրջանից դուրս, այլ երկրների բանակներում հերոսության հրաշքներ էր ցուցաբերում, որոնք հատուկ են եղել իր նախնիներին: Ժամանակի իմաստով ինչքան շատ ենք հեռանում թուրքական տիրապետությունից ժառանգած «պատմական չարիքից», հայն այնքան ձերբազատվում է թերարժեքության բարդույթից եւ բացահայտում իր ազգային բնավորության նախասկզբնական ավանդական գծերը:

Այսօր հայ ժողովուրդը նորից հասել է իր ազգային բարձրագույն նպատակին՝ Հայաստանը հռչակվել է անկախ հանրապետություն:Հայ ժողովուրդը դժվարին պայմաններում, բայց հպարտորեն պայքարում է նորանկախ պետության կայացման համար: Ստեղծված իրավիճակներում հայ ժողովրդի բնականոն զարգացումը կարող է ընթանալ միայն ազգային հունով:Պետությունը գոյատեւելու համար պետք է կսնգնած լինի համամարդկային նվաճումների մակարդակին: Բայց դրա հետ մեկտեղ ժողովրդի հարատեւման շահը պահանջում է պետական քաղաքականության հիմքում դնել ազգային գաղափարախոսությունը:

Ազգային հպարտություն ունեցող ժողովուրդը չի կարող հանդուրժել ուրիշ ժողովրդի տիրապետությունը, չի կարող հրաժարվել իր լեզվից, իր պատմությունից եւ ձուլվել այլ ժողովրդի մեջ:

Ազգային հպարտություն ունեցող ժողովուրդները ղեկավարվում են մի կարգախոսով՝ Ազատություն կամ մահ, որովհետեւ Հայրենիքի հարցում զիջումներ չեն լինում: Ազատության եւ անկախության համար պայքարող ժողովուրդները գոյատեւում են, իսկ հարմարվողները եւ պայքարից խուսափողները՝ կործանվում:

Գերմանական հասարակական- քաղաքական մտքի պատմության փիլիսոփայության ճանաչված ներկայացուցիչ Հերդերը գրել է. «Կարելի է պատմության սկզբունք համարել, որ ոչ ոք չի կարող նվաճել մի ժողովուրդ, որն ինքը թույլ չի տա հպատակեցնել իրեն, ժողովուրդ, որն

արժանի չէ ստրկության:

Միայն ի ծնե վախկոտին, ստրուկին, միայն հիմարին է բնությունը ծառայության դնում խելոքին, բայց հիմարը լավ է զգում, երբ ծառայում է, եւ նա դժբախտ կլիներ, եթե նրան բաժին ընկներ հրաման տալը»[1]:

Հերդերը տվյալ դեպքում նկատի ունի թերարժեքության բարդույթ ունեցող, պարտվողական ժողովուրդներին:

Արդի փուլում հայ ժողովուրդը պատմական հաջողություններ է ձեռք բերել, վերականգնել է անկախ պետականությունը՝ հռչակել է Հայաստանի անկախ Հանրապետությունը, ազատագրել է Արցախը:

Բայց այս պատմական իրողություններից չի կարելի հետեւություն անել, թե հայ ժողովուրդը լիովին ձերբազատվել է թերարժեքության բարդույթից եւ պարտվողականությունից: Թերարժեքության բարդույթը եւ պարտվողականությունը լիովին հաղթահարված չեն: Այդ «պատմական չարիքից» լիովին ազատվելու համար դեռ ժամանակ է անհրաժեշտ: ՀՀՇԿ- ի եւ ՀՀՇ ական նախագահի իշխանության գլուխ գալը Հայաստանում, պարտվողականությունը պետական քաղաքականություն դարձնելը ցույց են տալիս, որ դեռեւս մեծ անելիքներ կան հայ ժողովրդի թերարժեքության բարդույթից ձերբազատվելու գործում:

Մենք չգիտենք՝ ի՞նչ է ճակատագիրը պատրաստում հայ ժողովրդի համար: Հայ ժողովուրդը պետք է պատրաստ լինի պատմության բոլոր փորձություններին: Իսկ դրա համար պետք է լիովին ձերբազատվել թերարժեքության բարդույթից, պարտվողական հոգեբանությունից:

Ահա թե ինչու ազգային հպարտության գաղափարը պետք է դառնա ազգային քարոզչության հիմնական խնդիրներից մեկը թե՛ Հայաստանի Հանրապետությունում եւ թե՛ Սփյուռքում: Ամբողջ հայ ժողովրդի կրթական համակարգը պետք է լինի ազգային: Հայաստանի Հանրապետությունում կրթական համակարգը պետք է ղեկավարվի ազգային գաղափարախոսության հիմնադրույթներով: Մանկապարտեզից մինչեւ բուհ եւ ընդհանրապես կրթական բոլոր տիպի հաստատություններում ազգային հպարտության քարոզչությունը պետք է պետության կարեւորագույն խնդիրներից մեկը լինի: Այդ նույն սկզբունքները պետք է գործեն նաեւ Սփյուռքի առանձնահատուկ պայմաններում:

Ժամանակի հրամայականն է՝ ստեղծել համազգային կրթական համակարգ, որի հիմքում պետք է դրված լինի ազգային գաղափարախոսությունը, հատկապես ազգային հպարտության դաստիարակությունը: «Ազգային հպարտությունը պիտի ձեւավորվի՝ ներառելով թե՛ հայրենասիրության անխառն զգացումը, թե դրական փաստերի ու նաեւ ազգա-

1. *Иоган Готфрид Гердер, Идеи к философии истории человечества, Москва, 1977, стр. 248*

յին ցավոտ հարցերի իմացությունը: Ազգային իրական արժեքներ կրող անձի համար խիստ կարեւոր է մեր ժողովրդի ճշմարտացի պատմության իմացությունը: Ազգային հպարտության ձեւավորման մեջ մեծ է հատկապես դպրոցական կրթության դերը, ուստի խնդիրը դիտարկվում է հիմնականում այս մակարդակի համար: Ազգային ինքնագիտակցության եւ արժանապատվության խթանումը պիտի դառնա այն շաղախը, որ կապելու է հանրակրթական բոլոր առարկաները՝ հայերենից մինչեւ երաժշտություն: Անշուշտ, այս իմաստով կարեւորվում են հատկապես հայագիտական առարկաները»[1]: Հեղինակը գտնում է նաեւ, որ « Ազգային հպարտության ձեւավորման մեջ առանձնահատուկ դեր ունի հայոց պատմությունը: Կարեւոր է հատկապես հիմնական ծանոթությունն այն դեպքերին ու դեմքերին, որոնք արարեցին Հայաստան աշխարհը եւ դարձան ազգային ինքնագիտակցության խորհրդանիշեր»[2]:

Դպրոցի ազգային լինելու, դպրոցում ազգային հպարտության, արժանապատվության, Հայրենիք գաղափարի դաստիարակության նշանակության մասին Գարեգին Նժդեհը գրել է. «Այն պիտի չլինի մեր դպրոցը, ինչ որ է այսօր:

Շեշտված նպատակը, ջերմությունը, հոգին է պակասում մեր արդի դպրոցին:

Նա չէ, բայց պիտի լինի հայրենագիտության ամբիոն. տաճար:

Դեռ այնտեղ հայ մանուկը պիտի ճանաչի եւ սովորի սիրել հայ ժողովուրդն ու երկիրը:

Նա է, որ հայ մանուկի հոգու մեջ պիտի քամի մեր պատմության բովանդակ գեղեցկությունն ու վեհությունը:

Բավական չեն մութ եւ՝ չփոթ տեղեկությունները հայրենի երկրի եւ ժողովրդի մասին:

Անպետք են այն դասագրքերը, ցամաք եւ անհոգի, որոնց մեջ հայրենիքի մասին խոսվում է ճիշտ այնպես, ինչպես նկարագրվում է Սահարայի անապատը կամ մի հեռավոր կղզի:

Կրոնական երկյուղածությամբ եւ անսահման քաղցրությամբ պիտի դասավանդվի հայրենագիտությունը:

Սրտի եւ մտքի կրակով պիտի խոսվի հայրենի երկրի մասին՝ հրահրելով վերջինի պաշտամունքը մանկական հոգիների մեջ:

Փաստերի հետ եւ խորհրդածություններ, որոնք հարստացնելով հիշողությունը,բեղմնավորեին նաեւ միտքը, ջերմացնեին նաեւ սրտերը:

«Կը գայ ժամանակ,- ասում է մեր դարի իմաստասերներից մեկը,- որ

1. *Էդուարդ Ղազարյան. Ազգային հպարտության ուսումնասիրություն. «Առավոտ» օրաթերթ. 1995 թ., հ.հ. 140-142:*
2. *Նույն տեղում:*

ամեն բանից առաջ կը մտածեն դաստիարակության մասին»:

Մի մեծ քայլ անենք դեպի այդ ժամանակը:

Ընդունենք, որ նա եկել է- այո, նա եկել է արդեն մեզ համար- եւ ամեն բանից առաջ մտածենք հայրենապաշտական փրկարար դաստիարակության մասին:

Նման դաստիարակությամբ պատրաստենք մեր ապահով ապագան»[1]:

Գարեգին Նժդեհի այս արժեքավոր դրույթը, որը պետք է կազմի ազգային դաստիարակության առանցքը, ցայսօր Հայաստանի Հանրապետությունում պետական քաղաքականության ուղենիշ չի դարձել, կրթական համակարգում տեղ չի գտել, որովհետեւ կրթական համակարգը եւ դպրոցը ազգային չեն:

Հետեւաբար, Հայաստանի Հանրապետության կրթական համակարգի ազգայնացումը, ազգային գաղափարախոսության եւ հատկապես ազգային հպարտության ոգով երիտասարդ սերնդի դաստիարակությունն այսօր հանդիսանում է պատմության հրամայականը, որը ելնում է անցյալից եւ կանխորոշում է ապագան:

Այսպիսով, ազգային հպարտությունը ազգի գոյատեւման կարեւորագույն գործոններից է: Առանց ազգային հպարտության, առանց ազգային արժանապատվության ոչ մի ժողովուրդ չի կարող գոյապահպանվել: Դատապարտելով ազգային սնապարծությունը, պետք է քարոզչության բոլոր միջոցներով պայքարել ազգային հպարտության գաղափարը ամբողջ հայ ժողովրդի գիտակցության անբաժան մասը դարձնելու համար:

1. Գ. Նժդեհ. Էջեր իմ օրագրեն. Բաց նամակ հայ մտավորականության. Որդիների պայքարը հայրերի դեմ. Երեւան. 1998, էջ 59-60:

8. ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱՀԱՅՆՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԸ

Ազգային համածայնության գաղափարը ազգային գաղափարախոսության հիմնադրույթներից է: Որպեսզի ազգը կարողանա գոյատեւել, կարողանա դիմադրել պատմության արհավիրքներին, պարտավոր է ղեկավարվել ազգային համածայնության գաղափարով:

Բոլոր ազգերը բաժանված են դասակարգերի եւ կուսակցությունների, որոնք ղեկավարվում են տարբեր սոցիալական գաղափարախոսություններով: Այդ հիմքի վրա էլ ծավալվում է դասակարգային եւ կուսակցական պայքարը: Սա իրողություն է, բնականոն վիճակ, որից ոչ մի ժողովուրդ խուսափել չի կարող: Իսկ ազգային գաղափարախոսությունը գտնում է, որ յուրաքանչյուր ազգ պարտավոր է առաջին հերթին լուծել իր գոյատեւման խնդիրը, իր ֆիզիկական գոյության, իր հայրենիքի անվտանգության եւ ամբողջականության հարցը, սոցիալական խնդիրները թողնելով երկրորդ պլանում:

Անվիճելի է այն թեզը, որ ոչ մի ժողովուրդ չի կարող արտաքին թշնամու դեմ մղվող պայքարում հաջողության հասնել, եթե նա համախմբված չէ, եթե նա չի ղեկավարվում ազգային համածայնության գաղափարով:

Յուրաքանչյուր ազգի բոլոր դասակարգերը, քաղաքական ուժերը պետք է գիտակցեն, որ ազգի գոյատեւման հիմնական պայմաններից մեկը ազգային համածայնությունն է: Ազգային համածայնության գաղափարը գերակայում է դասակարգային եւ կուսակցական գաղափարներից:

Ազգային գաղափարախոսության բոլոր գործոնների առկայության դեպքում, եթե բացակայում է ազգային համածայնության գործոնը, միեւնույն է, ազգի գոյատեւումը դրվում է հարցականի տակ:

Հայ ժողովուրդը, ցավոք, ազգային համածայնության բնագավառում պարծենալու հիմքեր չունի: Հայ ժողովուրդը, նրա քաղաքական ուժերը գոյապահպանման դարավոր պայքարում շատ դեպքերում չեն կարողացել հաղթահարել ներքին տարաձայնությունները, դասակարգային եւ կուսակցական պառակտումները, տեղայնականությունը, հատվածականությունը եւ արտաքին թշնամու դեմ մղվող ճակատագրական կռիվներում հասնել ազգային համածայնության: Եւ որպես կանոն, հայերը նման դեպքերում չարաչար պարտություն են կրել: Հայոց պարտությունների հիմնական պատճառներից մեկը, եթե ոչ ամենահիմնականը, եղել է հենց այդ գործոնը՝ պառակտվածությունը, անմիաբանությունը եւ ազգային համածայնության բացակայությունը պատմության բախտորոշ պահերին:

Հայոց պատմությունը այդ անվիճելի ճշմարտությունն ապացուցող բազմաթիվ ակնառու փաստեր ունի: Բավարարվենք երկու օրինակով: Առաջին. Վարդանանց պատերազմը, որի ժամանակ հայոց ղեկավարությունը պառակտված էր, չկարողացավ համախմբել ժողովրդին եւ միասնական ուժերով դուրս գալ պարսկական զորքերի դեմ: Հետեւանքը եղավ հայկական զորքերի պարտությունը: Այստեղ խոսքն այն մասին չէ, թե ով էր ճիշտ՝ Վարդանը, թե Վասակը: Վեճերը, տարաձայնությունները ժողովուրդների կյանքում բնականոն երեւույթ են: Խոսքն այն մասին է, որ եթե կռիվն սկսված է, ապա ամբողջ ժողովուրդը, նրա բոլոր քաղաքական ուժերը՝ ելնելով ազգային համաձայնության գործոնից, պարտավոր են համախմբվել եւ միասնականորեն հանդես գալ արտաքին թշնամու դեմ: Նման պայմաններում գործում է ժողովրդի ինքնապահպանման բնազդը: Հենց դա է պատճառը, որ ժողովուրդը Վարդանին դասեց սրբերի կարգում, իսկ Վասակին՝ դավաճանների:

Երկրորդ. 19-րդ դարի վերջի եւ 20-րդ դարի սկզբի ազգային- ազատագրական պայքարում, երբ դրված էր հայ ժողովրդի լինել- չլինելու հարցը, երբ թուրքերը ծեռնամուխ էին եղել հայ ժողովրդի ֆիզիկական ոչնչացմանը, հայ երեք ազատագրական, քաղաքական կուսակցությունները՝ արմենականները, հնչակյանները եւ դաշնակցականները չկարողացան հաղթահարել կուսակցական տարաձայնությունները, չկարողացան համախմբվել, ազատագրական պայքարի համազգային կենտրոն ստեղծել, միասնական մարտավարություն եւ ռազմավարություն մշակել եւ ժողովրդին առաջնորդել դեպի հաղթանակ:

Հայ քաղաքական կուսակցություններն ունենալով նույն հիմնական նպատակը՝ Հայաստանի ազատագրությունը, հասկանալով թուրքական տիրապետության դեմ մղվող պայքարում ազգային համաձայնության անհրաժեշտությունը, ինքնապահպանման այդ դաժան գոյամարտում իրենց կյանքը չխնայելով, այնուամենայնիվ, չկարողացան հաղթահարել տարաձայնությունները եւ հասնել ազգային համաձայնության հաստատմանը, որի պատճառով ազգային ազատագրական պայքարը չհասավ իր նպատակին:

Գարեգին Նժդեհը գրում է.

«Չկա ավելի մեծ չարիք, ավելի մեծ աղետ ժողովրդի համար- մասնավորապես մեզ նման փոքրիկ ժողովրդի համար- քան կույր կուսակցամոլությունը: Այդ տարամերժ ոգիի համար չկան բացարձակ ճշմարտություններ, նրա համար չկա հասարակական շահ, պետական բարոյական: Նրա համար օտար է այն ամենը, ինչ որ իր կուսակցության կնիքը չի կրում: Ինչ որ իր կուսակցության ծնունդը չէ,- անընդունելի է եւ անհիսնդուրժելի: Ծափահարելի է միայն այն, ինչ որ բխում է իր կուսակցությունից: Կուսակցականորեն կույր այդ դժբախտ արարածի համար

երկու անգամ երկու հավասար է ամեն ինչի, միայն ոչ չորսի...

Նա ստեղծում է ներքին ճակատներ, ջլատում ժողովրդի ուժերը, նա հասարակության թշնամին է, բարեկամը իր ժողովրդի թշնամիների: Դա անեծքն է մեր կյանքի: Կուսակցամոլության թունալի ախտով բռնված ժողովրդի ներկան տխուր է, ապագան՝ անհուսալի:

Այդ ախտով հիվանդ ժողովուրդը միշտ էլ ներքուստ պառակտված է, միշտ էլ պատրաստի որս՝ իր գիշատիչ հարեւանների համար»[1]:

Բոլոր ժողովուրդների պատմության փորձի ուսումնասիրությունը հաստատում է այն ճշմարտությունը, որ յուրաքանչյուր ազգի հաջողության, գոյատեւման գրավականը ազգային համաձայնությունն է: Ազգային համաձայնությունը հայ ժողովրդի համար կարեւոր է եղել անցյալում, կարեւոր է այսօր եւ կարեւոր է լինելու նաեւ վաղը:

Հայ ժողովրդի բոլոր քաղաքական ուժերը՝ թե իշխանության գլուխ գտնվող, թե ընդդիմադիր, թե չեզոք, քաղաքական պայքարում չպետք է թույլ տան այնպիսի քայլեր, որոնք կխարխլեն, կթուլացնեն հայոց պետականության գոյատեւման հիմքը՝ ազգային համաձայնությունը:

Ազգը եւ Հայրենիքը սրբություններ են: Ազգային պետականությունը ազգի՝ եւ Հայրենիքի գոյատեւման երաշխիքն է: Բոլոր ազգային ուժերը պարտավոր են խոնարհվելու այդ սրբությունների առաջ: Եթե ազգի բոլոր քաղաքական ուժերը չընդունեն այդ ճշմարտությունը, չհասնեն ազգային համաձայնության հաստատմանն ու պահպանմանը, ապա բնական է, որ հայոց պետականությունը չի դիմանա պատմության հետագա փորձություններին:

Ահա թե ինչու ազգային համաձայնության գաղափարը ազգային գաղափարախոսության կարեւորագույն հիմնախնդիրներից է:

1. Գ. Նժդեհ. Էջեր իմ օրագրեն. Բաց նամակներ հայ մտավորականության. Որդիների պայքարը հայրերի դեմ, Երեւան, 1998, էջ 39-40:

9. ԿՐՈՆԻ ԴԵՐԸ՝ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Հայաստանի պատմության առանձնահատկություններով պայմանավորված քրիստոնեությունը բախտորոշ դեր է կատարել հայ ժողովրդի պատմական ճակատագրում[1]:

301 թվականին պատմության մեջ առաջին անգամ քրիստոնեությունը դարձավ պետական կրոն, եւ դա հայոց պետությունում էր: Կարճ ժամանակում քրիստոնեությունը Հայաստանում ազգայնացվեց, ազգային դիմագիծ ընդունեց: Քրիստոնեությունը սատարեց ազգային գրի ստեղծմանը, որը հիմք հանդիսացավ հայկական նոր մշակույթի ստեղծման, հայոց քաղաքակրթության նոր փուլի արարման եւ աննախադեպ զարգացման համար:

ա) Եկեղեցին մշտապես եղել է հայ պետականության կողքին, աշխարհիկ իշխանությունների կողքին, համախմբել է հայ ժողովրդին ազատության եւ անկախության գաղափարների շուրջը, սատարել է հայ պետականության հզորացմանը, հանդիսացել է հայոց պետականության կրոնա- գաղափարական հիմքը:

Այն պատմական ժամանակահատվածներում, երբ հայ ժողովուրդը զրկված է եղել ազգային պետականությունից, հայոց եկեղեցին իր վրա է վերցրել պետականության դերը, համախմբել է ժողովրդին եւ կազմակերպել ազգային- ազատագրական պայքարը օտար նվաճողների դեմ:

բ) Եկեղեցին իր դարավոր պատմության ընթացքում մշտապես քարոզել է ազգային համաձայնության եւ համերաշխության գաղափարը: Եկեղեցին համերաշխություն է քարոզել հայոց աշխարհում, որպես հավերժական ազգային արժեք դիտելով Հայրենիքը եւ անկախ պետականությունը: Այդ գաղափարներն է դարերի ընթացքում քարոզել եւ սրբացրել հայ եկեղեցին: Եւ եթե Հայրենիքի ու անկախ պետականության գաղափարները հայ ժողովրդի գիտակցության մեջ ամուր են նստած եւ ազգային անանց արժեք են դիտվում, ապա դրա համար ժողովուրդը շատ բանով պարտական է հայ եկեղեցուն:

գ) Քրիստոնեությունը հայ ժողովրդին կապել է արեւմտյան քաղաքակրթության հետ, խթանել է հայկական քաղաքակրթության նոր փուլի ստեղծմանն ու զարգացմանը: Հայկական քաղաքակրթությունը քրիստոնեության շնորհիվ իր ազգային մշակույթի բարձրագույն

1. Հեթանոսական կրոնի հարցերը սույն աշխատության իմաստների մեջ չեն մտնում, դրանք առանձին ուսումնասիրության նյութ են:

արժեքներով դարձել է քրիստոնեական արեւմուտքի քաղաքակրթության համակարգի անբաժան մասը:

դ) Քրիստոնեության ընդունումը եւ գրերի գյուտը հիմք հանդիսացան մշակութային մեծ վերելքի համար: Հայ մշակույթը ձեռք է բերել խոշոր նվաճումներ, ստեղծել է դարակազմիկ արժեքներ, որոնք մտել են մարդկության ստեղծած մշակութային արժեքների ոսկե ֆոնդի մեջ: Եվ այդ նոր ազգային մշակույթի ստեղծման ու զարգացման գործում խոշոր, վճռական դեր է խաղացել հայ եկեղեցին: Հայ մշակույթը գրեթե ամբողջովին զարգացել է եկեղեցու ոլորտներում:

ե) Հայոց եկեղեցին հավատի միջոցով դարեր շարունակ միավորել է օտար պետությունների տիրապետության տակ գտնված Հայաստանի տարբեր մասերի եւ արտերկրի հայությանը, խթանել նրա ազգային ինքնագիտակցության պահպանմանը եւ զարգացմանը: Եկեղեցին խոշոր դեր է կատարել հայությանը ձուլումից փրկելու, հայոց ազգային նկարագիրը պահպանելու գործում:

զ) Հայաստանը այն սահմանագիծն է, որով ավարտվում է քրիստոնեական ժողովուրդների ապրելատարածքը, արեւմտյան քաղաքակրթությունը եւ սկիզբ է առնում մահմեդական աշխարհը, մահմեդական քաղաքակրթությունը: Այս տարածաշրջանում Հայաստանը Քրիստոնեական աշխարհի, արեւմտյան քաղաքակրթության առաջապահն է: Քրիստոնեության եւ հայ ժողովրդի պատմական ճակատագրերը փաստորեն միահյուսվել են, նույնացվել: Այս տարածաշրջանում քրիստոնեության դեմ ուղղված հարձակումները առաջին հերթին ուղղվել են հայ ժողովրդի դեմ: Հայ ժողովուրդը նոր հավատքից՝ քրիստոնեությունից ոչ միայն առատաձեռն վարձատրվել է, այլեւ վարձահատույց է եղել՝ արյունով ու զոհաբերություններով, իրողություն, որն իր ամբողջական, արժանվույն գնահատականը չի ստացել ոչ աշխարհիկ եւ ոչ էլ եկեղեցական գրականության մեջ:

Հայ ժողովուրդն ունի իր առաքելությունը եւ հետեւողականորեն, անզիջում տանում է իր խաչը:

Վերոշարադրյալը մեզ հիմք է տալիս եզրակացնելու, որ հայոց ազգային գաղափարախոսության համակարգում եկեղեցու գաղափարը առանցքային, հիմնադրույթային նշանակություն ունի:

10. ԱԶԳԱՅԻՆ ԹՇՆԱՄՈՒ ԿԵՐՊԱՐԸ

Պատերազմները, նվաճումները, հարստահարությունները ժողովուրդների բազմադարյան պատմության մեջ սովորական երեւույթ են: Բնականաբար, պարտված ժողովուրդը ատելությամբ եւ վրեժխնդրությամբ է լցվում հաղթող ժողովրդի նկատմամբ: Սակայն, որպես կանոն, եթե հաղթողը ինչ-որ ժամանակահատվածից հետո հեռանում է նվաճված երկրից, ապա պարտված ժողովուրդը ժամանակի ընթացքում բուժում է վերքերը, եւ ամենակարող ժամանակը ժողովրդի հիշողությունից ջնջում է ատելության եւ վրեժխնդրության զգացումը: Ժողովուրդները չարություն չունեն, նրանք անհիշաչար են: Եթե այդպես չլիներ, ապա բոլոր ժողովուրդները հիմա թշնամիներ կլինեին: Ժողովուրդների համար հավերժական թշնամիներ գոյություն չունեն: Թշնամու գաղափարը կամ կերպարը ժողովուրդների համար ունի մարտավարական եւ ոչ թե ռազմավարական նշանակություն:

ՍԱԿԱՅՆ, ԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ, ՈՐՈՆՔ ՀԱՎԵՐԺ ՄՆՈՒՄ ԵՆ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ: ԽՈՍՔԸ ՏՎՅԱԼ ԴԵՊՔՈՒՄ ՎԵՐԱԲԵՐՈՒՄ Է ՄԻ ԺՈՂՈՎՐԴԻ ԿՈՂՄԻՑ ՄՅՈՒՍԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆԸ ԵՎ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՁԱՎԹՄԱՆԸ: ՈՐԵՎԷ ԺՈՂՈՎՐԴԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԿԱՁՄԱԿԵՐՊԱԾ ԵՎ ՀԱՅՐԵՆԻՔԸ ՁԱՎԹԱԾ ԴԱՀԻՃԸ ՁՈՀԻ ՄՈՏ ՍՏԱՆՈՒՄ Է ԱԶԳԱՅԻՆ ԹՇՆԱՄՈՒ ԿԵՐՊԱՐ ԵՎ ՀԱՎԵՐԺ ՄՏՆՈՒՄ ՆՐԱ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ:

Այս անվիճելի թեզի մասին միջազգային սոցիալիստական շարժման ականավոր գործիչ, ազգային հարցի գիտակ Կարլ Կաուցկին դեռեւս 1908 թվականին գրել է. «Եթե մի ժողովուրդ նվաճում է մեկ այլ ժողովրդի ազգային տերիտորիան, հաստատում է այնտեղ իր տիրապետությունը, շահագործում է այն, ապա ՆԱ ԴԱՌՆՈՒՄ Է ԱԶԳԱՅԻՆ ԹՇՆԱՄԻ»[1]: Կաուցկու այս թեզին, որը պարունակում է միայն մի ժողովրդի կողմից մյուսի Հայրենիքի գրավումը, եթե ավելացնենք նաեւ ցեղասպանությունը, ապա պարզ է, որ այն ոչ մի հակաճառություն չի ընդունի:

Պատմության ընթացքում շատ հաճախ ժողովուրդների դերերը փոխվել են: Հայ ժողովուրդը եղել է եւ հաղթողի, եւ պարտվողի դերում:

1. К. Каутский
   1. Национальность нашего времени.
   2. О национальном вопросе в России.
   3. Национальность и международность.
   4. Еврейство и раса.

   Тифлис, 1924, стр. 74

Նա Տիգրան Մեծի ժամանակ ունեցել է աշխարհակալ տերություն, իսկ երկար ժամանակ էլ անգամ զրկված է եղել անկախ պետականությունից: Հայաստանը եղել է բյուզանդացիների, հռոմեացիների, մոնղոլների, արաբների, պարսիկների, թուրքերի եւ ռուսների տիրապետության տակ: Սակայն, բացի թուրքերից, նշված մյուս ժողովուրդների նկատմամբ հայ ժողովուրդը չունի ոչ ատելություն եւ ոչ էլ վրեժխնդրության զգացում: Ընդհակառակը, նշվածներից մի քանիսի նկատմամբ հայ ժողովուրդը անգամ համակրանք ունի:

Ընդհանրապես, պատմության փորձը ցույց է տալիս, որ եթե թշնամին հեռանում է նվաճած երկրից, ապա պարտված ժողովուրդը բուժելով վերքերը, ժամանակի ընթացքում աստիճանաբար կորցնում է ատելության եւ վրեժի զգացումը:

Սակայն, միանգամայն այլ բնույթ ունեն հայերի եւ թուրքերի հարաբերությունները: Միջինասիական թուրքական ցեղերը 11-րդ դարի կեսերին նվաճում են Հայոց Հայրենիքը եւ իրականացնում՝ սկզբից սպիտակ, իսկ այնուհետեւ՝ կարմիր ցեղասպանություն: Հայոց Հայրենիքը հռչակվում է թուրքերի հայրենիք:Նման իրավիճակը կարելի է գնահատել որպես դահիճի եւ զոհի հարաբերություն: Անվիճելի է, որ զոհը դահճի նկատմամբ միշտ էլ ունեցել է եւ ունենալու է ատելության եւ վրեժխնդրության զգացում: Զոհը միշտ էլ պայքարում է դահճից ազատվելու, իր իրավունքները վերականգնելու համար: Զոհի նման վարքագիծը ինքնապահպանման բնազդի թելադրանքն է: Պարտված ժողովրդի պայքարը ելնում է բնության առաջին եւ հիմնական օրենքից: Չպայքարող ժողովուրդները՝ պարտվողականները դատապարտված են ոչնչացման:

ԱՀԱ ԹԵ ԻՆՉՈՒ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՁՄԱԿԵՐՊԱԾ, ՀԱՅՈՑ ՀԱՅՐԵՆԻՔԻ 90 ՏՈԿՈՍԸ ԲՈՆԱՁԱՎԹՎԱԾ ԹՈՒՐՔԵՐԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԱԶԳԱՅԻՆ ԹՇՆԱՄԻՆ ԵՆ:

Ոտնակոխ անելով հայոց ազգային գաղափարախոսության հիմնադրույթները, հայ պարտվողականները կոչ են անում հայ ժողովրդին՝ մոռանալ կորցրած Հայրենիքը, ցեղասպանությունն անջատել պահանջատիրությունից եւ առանց նախապայմանների կանոնավորել հարաբերությունները թուրքերի հետ:

Դեռ ավելին, փորձ է արվում եղեռնի պատճառների մեջ մեղադրել հայերին, մի տեսակետ, որը փոխ է առնված թուրքերի հակահայկական գաղափարախոսության զինանոցից:

Հայաստանի ազգային ուժերը (ՀՀՇԿ-ն եւ նրանից ծնված ու գունափոխված բոլոր կազմակերպությունները) բոլշեւիզմից ժառանգած «ինտերնացիոնալիզմի եւ ժողովուրդների բարեկամության» դրոշով՝ ՆԵՈԲՈԼՇԵՎԻԶՄԻ դիրքերից գործադրում են բոլոր միջոցները՝ հայ ժո-

ղովրդի գիտակցությունից թուրքերին՝ որպես ազգային թշնամու կերպար, հանելու համար, որով թուլացնում ու բթացնում են հայոց ինքնապահպանման բնազդը, ապակողմնորոշում ժողովրդին եւ դատապարտում ոչնչացման: Դա Հայրենիքի դավաճանություն է:

Հարց է առաջանում. հնարավո՞ր է արդյոք ոչնչացնել հայ ժողովրդի մոտ դարերի ընթացքում ձեւավորված ազգային թշնամու կերպարը: Ժողովուրդների պատմական փորձը մերժում է այդ հնարավորությունը: Քանի դեռ գոյություն ունի կորցրած Հայրենիքը, քանի դեռ գոյություն ունի հայկական Սփյուռքը, հայ ժողովրդի պատմական հիշողության մեջ ազգային թշնամու կերպարը մշտապես գոյություն է ունենալու: Անհրաժեշտ է ընդգծել նաեւ այն կարեւոր հանգամանքը, որ քանի դեռ գոյություն ունի թուրքերի ազգային գաղափարախոսությունը՝ պանթուրքիզմը, Միացյալ Թուրանի գաղափարը, Հայաստանի Հանրապետության ոչնչացման ծրագիրը գտնվելու է օրակարգում: Հայերի եւ թուրքերի պատմական գոտեմարտն ավարտված չէ:

1920թ. հունվարի 29-ին Պոլսի համալսարանում կայացած միտինգում պանթուրքիզմի հիմնադիր Յուսուֆ Աքչուրան հայտարարել է. «Պետք է ոչնչացնել Հայաստանը, որը դաշնակիցները ցանկանում են իբրեւ թումբ կանգնեցնել երկու եղբայր հատվածների՝ Անատոլիայի եւ Կովկասի թրքության միջեւ»[1]:

Այսպիսի ելակետային պայմաններում ի՞նչ հիմքի վրա պետք է կանոնավորվեն հայ- թուրքական հարաբերությունները, ի՞նչ արգելքներ պետք է հաղթահարվեն, որպեսզի հայ եւ թուրք ժողովուրդները մոռանան անցյալը եւ բարեկամաբար ձեռք մեկնեն միմյանց:

Հայերը մաքսիմալիստներ չեն: Նրանք պատմության մեջ բազմաթիվ անգամ Հայկական հարցի փոխզիջումային տարբերակներ են առաջարկել թուրքերին: Սակայն, թուրքերը մերժել են այդ փոխզիջումային տարբերակները:

Պանթուրքիզմի խոշորագույն մասնագետներից մեկը՝ Զարեւանդը գրում է. «Մեր մաքսիմում պահանջներն հետզհետե իջանք մինչեւ մինիմումը եւ անկե ալ՝ մինչեւ «անհետացման կետը»[2]: Սակայն, թուրքերը մերժեցին հայերի բոլոր առաջարկները,որովհետեւ «երկու ժողովուրդներու միջեւ հաշտություն գոյանալու արգելքը ԹՈՒՐՔ ԺՈՂՈՎՐԴԻ ՄԵՐԺՈՒՄՆ է ճանաչելու մեր նույնիսկ ամենահամեստ պահանջները եւ անոնց հիման վրայ որեւէ հասկացության գալու մեզ հետ»[3]:

Ուրեմն, եզրակացնում է Զարեւանդը, հայ թուրքական հաշտությունը

1. Զարեւանդ, Միացյալ. Անկախ Թուրանիա. Աթենք. 1988, էջ 132:
2. Զարեւանդ, Կրնանք հաշտուիլ թուրքին հետ. Երեւան, 1997. էջ 24:
3. Նույն տեղում. էջ 25:

չի կարող կայանալ, որովհետեւ «ԹՈՒՐՔԸ ՄԵԶ ՀԵՏ ՀԱՇՏՈՒԻԼ ՉՈՒԶԵՐ»[1]:

Բայց ո՞րն է պատճառը, ինչու՞ թուրքերը դեմ են հայ- թուրքական հաշտության կայացմանը:

Որովհետեւ, գրում է Զարեւանդը, «Թուրքը իր կառավարությամբ ու մամուլով, մոլլաներով ու ինտելիգենտներով, կիներով ու ժողովուրդով, ՄԵՐ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԲՆԱՋՆՋՄԱՆ կը հետամտի, որովհետեւ բոլորը խորապես հավատացած են, որ հայուն ֆիզիկական գոյությունը ԻՐԵՆՑ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԶՈՐՈՒԹՅԱՆ ԱՐԳԵԼՔ է: Մեր կյանքը իրենց մահ կը սպառնայ»[2]:

Հայերի ֆիզիկական ոչնչացման քաղաքականությունը ելնում է պանթուրքիզմի գաղափարախոսությունից, որը թուրքերի «ազգային իդեալն է»[3], ազգային գաղափարախոսությունը:

Իսկ «ԹՈՒՐԱՆԸ,- ԳՐՈՒՄ է ԶԱՐԵՎԱՆԴԸ,- ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿԷ ԸԼԼԱԼ ՆՈՐԱԳՈՒՅՆ ԹՈՒՐՔԻՈՅ ԱՎԵՏԱՐԱՆԸ. ԱՆՓՈՓՈԽ է, ՈՒՐԵՄՆ, ԱՅՆ ՄԱՀԱՎԵՃԻՈՐ, ՈՐ ԹՈՒՐՔԸ ՏՎԱԾ է ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻՆ ՀԱՄԱՐ: Ուրեմն՝

Ի՞նչ կը ծրագրեն թուրքերը:

Թուրքերը նոր բան մը չեն ծրագրեր. անոնք կորոճան հին փանթրքական ծրագիրները, որոնք չեն ավարտված, այլ միայն ընդհատուած են առաջին պատեհությամբ վերսկսելու համար: Թրքական վտանգը չէ հեռացած հայ ժողովրդի գլխեն թրքահայության բնաջնջումով. այլ պիտի գայ, կու գայ: Ան կը սպառնայ Արագածյան Հայաստանին, Սյունյաց աշխարհին, մեր վերջին ապավենին:

Թուրքը հակառակ իր դարերէ ի վեր մարգարէացված քայքայումին, այդ քայքայումէն փրկուելու իսկ յոյսով, ուժեղ եւ անշեղ քայլերով կը դիմե դեպի Արեւելք: ԱՆ ԿՈՒԶԵ ՄԻԱՆԱԼ ԱՍԻԱԿԱՆ ԻՐ ՑԵՂԱԿԻՑՆԵՐՈՒՆ. ԻՍԿ ՄԵՆՔ ԿԵՑԵՐ ԵՆՔ ԻՐ ԵՒ ԱՆՈՆՑ ՄԻՋԵՒ: ՊԻՏԻ ԵՐԹԱՆՔ ԱՅՆՏԵՂԵՆ ԿԱՄ ՊԻՏԻ ԿՈՏՈՐՈՒԻՆՔ. ՈՒՐԻՇ ԵԼՔ, ԹՈՒՐՔԻ ՏԵՍԱԿԵՏՈՎ, ՉԿԱՅ:

Ահա ինչու կու գայ թուրքը եւ ինչու անողոքելի է ան»[4]:

Հայաստանի ոչնչացման քաղաքականությունը այսօր էլ հանդիսանում է թուրքերի ազգային ծրագրի առանցքը, այն ելնում է պանթուրքիզմի գաղափարախոսությունից, որը թուրքերի ազգային իդեալն է. ազգային գաղափարախոսությունը: Քանի դեռ գոյություն ունի պանթուրքիզմը՝ Միացյալ Թուրանի գաղափարը, Հայաստանի Հանրապետության ոչնչացման ծրագիրը գտնվելու է Թուրքիայի քաղաքականու-

1. Նույն տեղում, էջ 30:
2. Նույն տեղում, էջ 29:
3. Զարեւանդ, Միացյալ. անկախ Թուրանիա, Աթենք, 1988, էջ 144:
4. Նույն տեղում, էջ 170-171:

թյան օրակարգում:

Ետխորհրդային շրջանում Թուրքիայի վարած հակահայկական քաղաքականությունը գալիս է մեկ անգամ եւս հաստատելու այդ անվիճելի թեզը:

Թուրքական վտանգը հայ ժողովրդի գոյությանը սպառնացել է, սպառնում է եւ սպառնալու է նաեւ ապագայում:

Սհա թե ինչու թուրքը հայի համար ազգային թշնամի է եղել ինչպես անցած հազար տարում, այնպես էլ այժմ եւ այդպիսին է լինելու նաեւ ապագայում: Բոլոր նրանք, ովքեր փորձում են թուրքին հայ ժողովրդի գիտակցությունից՝ որպես ազգային թշնամու կերպար հանել, կամա թե ակամա թուլացնում ու բթացնում են հայոց ինքնապահպանման բնազդը եւ դրանով իսկ հայ ժողովրդին դատապարտում ինքնասպանության:

Հայ- թուրքական հարաբերությունները կարող են կանոնավորվել միայն այն դեպքում, եթե հայ ժողովուրդը, թեկուզ փոխզիջումային տարբերակով, ետ ստանա իր կորցրած Հայրենիքը: Անգամ նման դեպքում էլ ցավը չի անցնի, ժամանակի ընթացքում կանցնի ատելության եւ վրեժխնդրության զգացումը:

Այսօր դեռ կենդանի են բազմաթիվ հայեր, որոնք ծնվել են Արեւմտյան Հայաստանում, որոնց ընտանիքի անդամները, բարեկամները զոհ են գնացել ցեղասպանությանը եւ որոնք խոր վշտով հիշում են կորցրած Հայրենիքը, հարազատ ծննդավայրը, եղեռնի զոհերին:

Կանցնի ժամանակ, նրանք չեն լինի: Կվերանա կոնկրետ հիշողությունը, բայց կմնա ժողովրդի հավաքական ցավի զգացումը՝ պատմական հիշողությունը, որն անջնջելի է:

«Հայ ժողովուրդը չի կրնար ձեռք երկարել իր դահճին,- գրում է Զարեվանդը,- որքան ատեն, որ ան չէ ստացած իր արժանի պատիժը, չէ հատուցած մեր արդար իրավունքը, չէ զղջացած իր գործած չարիքին համար, ոչ մեկ երաշխավորություն տված մեր ապագա ապահովության համար»[1]:

Հայերի եւ թուրքերի թշնամական վերաբերմունքը միմյանց նկատմամբ փոխադարձ է: Թուրքերը եւս ատում են հայ ժողովրդին եւ հնարավորության դեպքում կձգտեն լիովին ոչնչացնել նրան: Կազմակերպելով հայոց ցեղասպանությունը, սեփականացնելով հայոց Հայրենիքը, թուրքերն, այնուամենայնիվ, իրենց հանգիստ չեն զգում: Ոճրագործ- թուրքը ձեռք է բերել դահճի բարդույթ: Նա անհանգիստ է: Ցեղասպանին հետապնդում է հատուցման պատասխանատվությունը:

Ֆրանսիայի պառլամենտի կողմից հայոց ցեղասպանության ճանաչման կապակցությամբ, գերմանական «Հանդես Բլատ» օրաթերթի

1. Նույն տեղում, էջ 7:

թղթակիցը, գրույց ունենալով թուրքական կառավարության խոսնակի հետ, 1998 թ. հուլիսի 9-ի համարում տպագրել է մի հոդված՝ «Հայկական ուրվականը հալածում է Անկարային» խորագրով: Թերթը արել է հետեւյալ եզրակացությունը. «Թուրքերի համար հայկական գործոնը կենդանի է, հայը թշնամու խորհրդանիշ է»: Այդ են հաստատում նաեւ Թուրքիայում բազմիցս անցկացված հարցումների արդյունքները:

Թուրքիայի պետական քարոզչությունը կերտել է թուրքերի թիվ առաջին ազգային թշնամու՝ հայի կերպարը, որին հետեւում է հույնը, իսկ հիմա արդեն նաեւ քուրդը:

Սհա այսպիսին է հայ- թրքական հարաբերությունների ճշմարիտ վիճակը:

Թուրքերը հայոց ազգային թշնամին են: Թուրքերը կդադարեն հայոց ազգային թշնամի լինելուց, հայ- թուրքական հարաբերությունները, թեկուզ փոխզիջումային տարբերակով, կկարգավորվեն միայն Արեւմտյան Հայաստանը հայերին վերադարձնելու դեպքում: Այդ պատմական կնճիռը վերացնելու այլ ուղիներ չկան:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ՝ ՉՈՐՐՈՐԴ ԳԼԽԻ

Այսպիսով, հայոց ազգային գաղափարախոսության հիմքում ընկած են ազգի գոյապահպանման, ամբողջական Հայրենիքի, անկախ ազգային պետականության, ազգային մշակույթի եւ կրոնի՝ բոլոր ժողովուրդների համար ընդհանուր գաղափարները, ինչպես նաեւ հայ ժողովրդի պատմության առանձնահատկություններից բխող՝ Ազատ, Անկախ եւ Միացյալ Հայաստանի, Հայաստանի անկախ Հանրապետության, Մեկ ազգ- մեկ Հայրենիքի, Ազգային հպարտության, Ազգային համաձայնության, Ազգային թշնամու հիմնադրույթները:

Այսպիսին է հայոց ազգային գաղափարախոսության բովանդակությունը:



ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԹՇՆԱՄԻՆ. ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԹՇՆԱՄՈՒ ԱՌԱՋԱՑՄԱՆ ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՐՄԱՏՆԵՐԸ

Ի՞նչ անեմ, մարդի՛կ, որ չեր փորարեն
Ես հազար անգամ « ավա՜ղ» կանչելով
Ու հառաչելով չեմ կարող չասել,
Որ սուր սերմեր կան ճշմարիտ հողում:
Չեմ կարող չասել, որ նախաստեղծման
Թթխմորների օրվանից ի վեր
Փոքրերը մեծին շատ են չարչարում,
Ու վատ բաներ կան այս լավ աշխարհում...

ՀԱՍՄԻԿ ՍԱՀՅԱՆ
«ՏՈՀՄԻ ԿԱՆՉԸ»

Մարդկությունը դատապարտված է Բարիի կողքին մշտապես Չարը տեսնելու, ու Չարի դեմ անվերջ պայքար մղելու: Դեռ ի սկզբանե Աստծո կողքին հանդես է եկել Սատանան, Ցորենի կողքին՝ Մոլախոտը, Հերոսի կողքին՝ Դավաճանը: Եւ դա եղել է միշտ՝ «Նախաստեղծման թթխմորների օրվանից»:

Յուրաքանչյուր ժողովրդի ազգային գաղափարախոսություն, բացի արտաքին թշնամիներից, ունի նաեւ ներքին թշնամիներ: Ամեն ազգի ներսում, հատկապես նրա պատմության բախտորոշ պահերին, ազգային գաղափարախոսության դեմ հանդես են գալիս առանձին անձինք եւ նույնիսկ խմբեր, որոնք ծնունդ են առնում ճշմարիտ հողի «սուտ սերմերից»: Դրանք ապազգային ուժերն են:

Այդ ապազգային ուժերը հրաժարվում են ազգային գաղափարախոսությունից, վարկաբեկում ժողովրդի պատմական հիշողությունը՝ պատմությունը, մերժում ազգային արժեքները եւ անցած պատմական ուղին:

Մերժելով ավանդականը, ապազգային ուժերը ժողովրդին առաջարկում են «նոր ուղի»:

Այդօրինակ ուժերը տեղ են գտել բոլոր ժողովուրդների կյանքում, չարիքներ են բերել իրենց ժողովուրդներին եւ, ի վերջո, որպես կանոն, դատապարտվել ժողովրդի կողմից եւ դեն նետվել պատմության բեմահարթակից:

Ապազգային ուժերը պատմաքաղաքական գրականության մեջ բնութագրվում են որպես պարտվողականներ:

Կռիվը ազգային եւ ապազգային ուժերի միջեւ անգիջում է:

Տարբեր ազգերի ապազգային ուժերի գաղափարներն ու գործելակերպը շատ ընդհանուր գծեր ունեն, որովհետեւ նրանց ծնող պատմական արմատները ընդհանուր առմամբ նույնն են:

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՊԱԶԳԱՅԻՆ ՈՒԺԵՐԸ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԳԼՈՒԽ: ՀԱՅՈՑ ԱՊԱԶԳԱՅԻՆ ՈՒԺԵՐԻ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԵՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԾԵՐԸ: ՆԵՈԲՈԼՇԵՎԻԶՄԸ ԱՊԱԶԳԱՅԻՆ ՈՒԺԵՐԻ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ԴՐՈՇ

Ապազգային ուժերը հայոց պատմության ներկա անցումային փուլում իշխանության գլուխ էին անցել Հայաստանի Հանրապետությունում: Պարտվողականությունը Հայաստանում իշխանության գլուխ եկավ հանձին Հայոց Համազգային Շարժում կուսակցության եւ նրա լիդեր Լեւոն Տեր- Պետրոսյանի:

Սույն ուսումնասիրության նախորդ գլուխներում շարադրված նյութը ցույց տվեց, որ ոչ մի ժողովուրդ առանց ազգային գաղափարախոսության չի կարող գոյապահպանվել: Ազգերը առանց ազգային գաղափարախոսության դատապարտված են կործանման:

Այս թեզը վիճահարույց չէ:

Բայց ահա, հայ ապազգային ուժերի լիդեր, ՀՀ նախկին նախագահ Լ. Տեր- Պետրոսյանը հայտարարում է.

«Կեղծ քաղաքական կատեգորիա է նաեւ «ազգային գաղափարախոսություն» հասկացությունը, որովհետեւ ժողովրդավարության պայմաններում անհնար է ողջ ազգին համախմբել մեկ միասնական գաղափարախոսության շուրջ»[1]: Շարունակելով իր միտքը, նա եզրակացնում է, որ ժողովրդավարության պայմաններում ազգային գաղափարախոսությունը ֆաշիզմ է: Ընդ որում, ազգային գաղափարախոսությունը՝ ՀՀ Գերագույն խորհրդի 1994 թ. ապրիլի 25-ի նիստում ունեցած ելույթում բնութագրելով որպես «ֆաշիզմ», Լ. Տեր- Պետրոսյանը հրատարակած տեքստից հանել է այդ արտահայտությունը:

Ուրեմն, համաձայն Հայաստանի ապազգային ուժերի, հայոց ազգային գաղափարախոսությունը՝ ազգի գոյապահպանման, ամբողջական Հայրենիքի, անկախ պետականության, ազգային մշակույթի եւ ազգային կրոնի հիմնադրույթներով կեղծ քաղաքական կատեգորիա է, ոչ ավել, ոչ պակաս՝ ֆաշիզմ:

Այսպիսով, ՀՀՇԿ-ն հրաժարվում է ազգային գաղափարախոսությունից, այն հայտարարելով «կեղծ քաղաքական կատեգորիա» եւ նույնիսկ՝ ֆաշիզմ: Սակայն, այդ դեպքում ՀՀՇԿ- ն ինչո՞վ է փոխարինում ազգային գաղափարախոսությունը: Չէ՞ որ ազգը գոյատեւելու համար պետք է ունենա իր ազգային գաղափարախոսությունը:

1. Հայաստանի Հանրապետություն. 26 ապրիլի. 1994:

Հայտնի է այն ճշմարտությունը, որ ցանկացած գաղափարախոսություն ոչնչացնելու համար անհրաժեշտ է նրան հակադրել նոր գաղափարախոսություն:

ՀՀՇԿ- ն մերժելով ազգային գաղափարախոսությունը, որպես հակագաղափար՝ առաջ է քաշում պետական գաղափարախոսությունը:

Եվ ահա, ՀՀ ապազգային ղեկավարության պաշտոնական օրգան «Հայաստանի Հանրապետություն» թերթը հանդես է գալիս « Պահանջվում է գաղափարախոսություն» հոդվածով, որում հայտարարում էր, որ «ՀՅԴ գաղափարախոսության առանցքը հանդիսացող Հայ Դատը այսօրվա պայմաններում ,իրոք, արդեն ժամանակավրեպ է եւ չունի ազգապահպան հատկություն»[1]:

Նախ՝ թերթը քաղաքականացնում է քննարկվող հիմնախնդիրը: Հայ Դատը միայն Դաշնակցության գաղափարախոսության առանցքը չէ, այլ բոլոր ազգային կուսակցությունների եւ որ ամենակարեւորն է՝ ամբողջ հայ ժողովրդի:

Երկրորդ. Հայ Դատը ամբողջ հայ ժողովրդին համախմբող, ազգապահպան կարեւորագույն գործոն է:

Մերժելով Հայկական հարցը՝ որպես ազգային գաղափարախոսության առանցք, թերթը առաջ է քաշում « պետական գաղափարախոսության» ստեղծման անհրաժեշտությունը[2]:

Ուրեմն, համաձայն ՀՀՇԿ- ի, գաղափարախոսական առումով Հայաստանը բաց դաշտ է, պետք է շուտափույթ կյանքի կոչվի պետական գաղափարախոսություն:

Սակայն, հարցն այն է, որ ՀՀՇԿ-ն ի վիճակի չեղավ սեփական, ինքնուրույն պետական գաղափարախոսություն ստեղծելու: Հայաստանի պարտվողական ղեկավարությունը գլխավորվում էր տարաբնույթ, ապազգային, պոպուլիստական գաղափարներով, որոնք փոխ են առնված ապազգային ուժերի միջազգային զինանոցից: Ապազգային ուժերի միջազգային գաղափարախոսությունը իր ամբողջական արտահայտությունն է գտնում «կոսմոպոլիտիզմի գաղափարախոսություն» հասկացության մեջ: Պետք է նկատի ունենալ նաեւ, որ մարտավարական նպատակներով շատ հաճախ ապազգային ուժերը իրենց կոսմոպոլիտական գաղափարները քողարկում են ինտերնացիոնալիզմի գաղափարախոսության շղարշով: Այդպիսի քաղաքականություն են վարում նաեւ Հայաստանի ապազգային ուժերը: Սեփական գաղափարների բացակայություն, մտքերի քաոս, իրարամերժ գաղափարների քարոզչություն, մարտավարական եւ ռազմավարական համակարգված ծրագրերի պակաս. ահա թե ինչով էր աչքի ընկնում արդի Հայաստանի ապազ-

1. Նույն տեղում, 2 դեկտեմբերի, 1993:
2. Նույն տեղում:

գային ղեկավարությունը:

Ընդհանուր առմամբ այսպիսին էր ՀՀՇԿ- ի կողմից հայ ժողովրդին ներկայացվող պետական կոչվող քաղաքականությունը:

Բայց Հայաստանի պարտվողական ուժերը միայն վերոհիշյալով չեն բավարարվել, նրանք առաջ են քաշել ապազգային մի շարք գաղափարներ եւս, որոնց ճնշող մասը պատկանում է ՀՀՇԿ լիդեր Լ. Տեր-Պետրոսյանին: Նշենք ամենակարեւորները.

ա) Լ. Տեր- Պետրոսյանը «խորանալով» ազգային գաղափարախոսության հիմնադրույթի մեջ, մերժում է նաեւ ազգային համաձայնության գաղափարը, գրելով.

«Հարցերի խորքը թափանցելու պարագայում ակնհայտ է դառնում, որ իրականում ազգային համաձայնություն հասկացությունն ընդամենը կեղծ քաղաքական կատեգորիա է, որովհետեւ ազգի գոյությունն ինքնին ազգային համաձայնության իրողություն է»[1]:

բ) Հայաստանի Հանրապետության նախկին նախագահը կեղծ գիտություն է համարում նաեւ պատմությունը: Նա գրում է.

«Մի մոռացեք, որ ես պատմաբան եմ: Եվ այսօր գործնական քաղաքականության մեջ 6 տարի ներգրավված լինելուց հետո, պատրաստ եմ վստահ հայտարարել. պատմությունը կեղծ գիտություն է: Ոչ մի պատմաբան սա չի հասկանա, մինչեւ ինքը չմասնակցի պատմության արարմանը»[2]:

Ի դեպ, նշենք, որ Լ. Տեր- Պետրոսյանը ոչ թե պատմաբան է, այլ բանասիրական գիտությունների դոկտոր եւ մասնագիտական առումով ոչ մի առնչություն չունի հայ ժողովրդի հատկապես նոր եւ նորագույն շրջանի պատմության հիմնախնդիրների հետ: Այդ պատճառով էլ նրա արտահայտած տեսակետները ոչ պրոֆեսիոնալ են, արտառոց ու անհեթեթ:

գ) Մերժելով պատմագիտությունը, ՀՀՇԿ լիդերը սխալ է համարում ու մերժում է նաեւ հայ ժողովրդի անցած ամբողջ պատմական ուղին:

Նա գրում է. « ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ՄԵՆՔ ՈՐՈՇԵՑԻՆՔ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ ՆԱՅԵԼ ԻՐԱՏԵՍՈՐԵՆ»[3]:

Լ. Տեր- Պետրոսյանի այդ միտքը մտել է ՀՀՇԿ ծրագրի մեջ հետեւյալ ձեւակերպմամբ.

«1988 թվականին սկիզբ առած ժողովրդական շարժումը հայոց նորագույն պատմության այն փուլը եղավ, որը նշանավորվեց որակապես նոր ազգային մտածողության բյուրեղացմամբ: Նախընթաց

1. Հայաստանի Հանրապետություն. 26 ապրիլի. 1994:
2. Արմենիին Ինթերվեյշնլ Մեգրզին. մարտ. 1994
3. Հայաստանի Հանրապետություն. 25 օգոստոսի 1992:

պատմաշրջանի փորձի վերաիմաստավորումը հնարավորություն տվեց նորովի մոտենալ ազգային խնդիրներին, դրանք ԴԻՑԱԲԱՆԱԿԱՆԱՑՎԱԾ ՈԼՈՐՏԻՑ ՏԵՂԱՓՈԽԵԼՈՎ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԸ»[1]:

Նույն տեսակետն է պաշտպանել նաեւ ՀՀՇԿ-ի լիդերներից ՀՀ Ազգային ժողովի նախկին նախագահ Բաբկեն Արարքցյանը, գրելով.

«Ամենամեծ նվաճումը պրագմատիկ, իրատեսական քաղաքականությունն էր, որ մենք վարում էինք: Մենք ձերբազատվել էինք առասպելաբանության հետ կապված գաղափարներից: Գուցե այդ առասպելաբանությունը կենսունակ է ժողովրդի մեջ, բայց դա չի կարող լինել պետական քաղաքականության հիմք»[2]:

Բայց նման քաղաքականությամբ ի՞նչ նպատակ է հետապնդում ՀՀՇԿ ծրագիրը: Բաբկեն Արարքցյանը այդ հարցին պատասխանում է.

«Վերջինս գաղափարների համակարգ է, մենք դա էինք իրականացնում: ՄԵՆՔ ԺՈՂՈՎՐԴԻ ՄՏԱԾԵԼԱԿԵՐՊՆ ԷԻՆՔ ՓՈԽՈՒՄ ԵՎ ՄԵՆՔ ՓՈԽԵԼ ԵՆՔ ԱՅԴ ՄՏԱԾԵԼԱԿԵՐՊԸ»[3]:

Այս թեզերով Հայաստանի ապազգային ուժերը հայտ են ներկայացնում վերանայելու հայ ժողովրդի ամբողջ պատմությունը:

ԱՅՍՊԻՍՈՎ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՊԱԶԳԱՅԻՆ ՈՒԺԵՐԸ ՀԱՅՈՑ ԴԱՐԱՎՈՐ ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ, ՀԱՅՈՑ ԱՄԲՈՂՋ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ ԵՆ «ԴԻՑԱԲԱՆԱԿԱՆԱՑՎԱԾ» ԵՎ ՄՇԱԿՈՒՄ ԵՆ «ՆՈՐՈՎԻ» ՄՈՏԵՑՈՒՄ, ՈՐԻ ԱՌԱՆՑՔԸ «ԻՐԱՏԵՍՈՒԹՅՈՒՆՆ» է, ԱՅՍԻՆՔՆ՝ ՊԱՐՏԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ:

ԱՊԱԶԳԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՓՐՓՈՒՐՆ է, ԵՎ ԱՅԴ ՓԸՐՓՈՒՐԸ ՓՈՐՁՈՒՄ է ՓՈԽԵԼ ԺՈՂՈՎՐԴԻ ԱԶԳԱՅԻՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ, ԱՅՍԻՆՔՆ՝ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆԸ:

դ) Հայ ժողովրդի պատմության ամբողջական վերանայումը թողնելով ավելի հարմար ժամանակների, ապազգային ուժերը որոշում են առաջին հարվածը հասցնել հայոց ռուսական կողմնորոշմանը, վերջին երեք հարյուր տարվա պատմությանը:

Ղարաբաղյան շարժման՝ Հայաստանի կոմիտեի 1989 թ. հունիսի 24-ի հայտարարության մեջ, կարդացված Լ. Տեր-Պետրոսյանի կողմից՝ ՀԽՍՀ ԳԽ նստաշրջանում, այդ մասին ասվում է.

«Չնայած պատմական դառը փորձին, չնայած հայ ժողովրդի կրած բազմաթիվ հիասթափություններին, մեր որոշ մտավորական գործիչների կողմից շարունակվում է տենդագին կերպով քարոզվել քաղա-

1. Հայոց Համազգային Շարժման ծրագիր. Երեւան, 1993, էջ 1:
2. Հայաստանի Հանրապետություն, 17 փետրվարի, 1998:
3. Հայոց Աշխարհ, 5 փետրվարի, 1998:

քականապես սնանկ եւ վտանգավոր այն մտայնությունը, որ Հայաստանը՝ շրջապատված լինելով այլակրոն- թշնամի ազգերով, իր գոյությունը կարող է պահպանել միայն որեւէ հզոր պետության հովանավորության շնորհիվ: Այս մտայնությունը մեր ժողովրդին մատնում է բարոյական ստրկության եւ զրկում նրան քաղաքական պարտնյոր դառնալու հնարավորությունից, որը քաղաքականության մեջ հաջողության հասնելու միակ երաշխիքն է»[1]:

Շուրջ մեկ տարի հետո, 1990 թ. նոյեմբերին, ՀՀՇԿ երկրորդ համագումարում ունեցած ելույթում, Լ. Տեր- Պետրոսյանը վերոհիշյալ թեզը ավելի է կոնկրետացնում, հայտարարելով.

«Ես կարծում եմ, որ վերջին տարիներին քաղաքական մտքի մեջ տեղի ունեցած ամենամեծ հեղափոխությունը հրաժարումն է օտարին ապավինելու, երրորդ պետության հովանավորության վրա հույս դնելու սնանկ գաղափարից: 300 տարի շարունակ հայ ժողովրդի քաղաքական միտքը թունավորվել է այն պատրանքով, որ մեծ տերությունները՝ երբեմն Արեւմտյան Եվրոպան, իսկ ՈՐՊԵՍ ՕՐԵՆՔ՝ ՌՈՒՍԱՍՏԱՆԸ, ՊԵՏՔ է ԼԻՆԵՆ ՄԵՐ ԱԶԳԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԳՈՐԾՈՂԸ: Սա այն ԳԱՂԱՓԱՐՆ է ԵՂԵԼ, ՈՐԻՆ ՏՈՒՐՔ ՏԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՄԵՆՔ ՀԱՏՈՒՑԵԼ ԵՆՔ ՄԵԾԱԳՈՒՅՆ ԿՈՐՈՒՍՏՆԵՐՈՎ»[2]:

ՀՀՇԿ լիդերը իր կուսակցության իրատեսությունը բացատրում է հետեւյալ կերպ.

«Մենք հրաժարվեցինք «օրիենտացիայի» գաղափարից (որի վրա համարյա 300 տարի հիմնված էր Հայաստանի ողջ քաղաքական միտքը), քանզի սեփական պատմական փորձով տեսնում ենք նրա սխալականությունը: Դրա համար, իհարկե, մեզ հայհոյում են՝ մինչեւ այժմ էլ դեռեւս չհասկանալով, թե այդ ինչպես կարող ենք մենք առանց ռուս քեռու, առանց ամերիկացիների, առանց Եվրոպայի գոյատեւել: Սակայն, Հայաստանի գոյատեւման անվտանգության ամենահուսալի երաշխիքը ոչ թե նրա տնտեսական կամ ռազմական հզորությունն է, այլ բոլոր հարեւանների հետ նորմալ հարաբերություններ հաստատելը: Այս սկզբունքն էլ հենց ընկած է մեր արտաքին քաղաքական դոկտրինայի հիմքում»[3]:

Օրիենտացիայի հարցում Լ. Տեր-Պետրոսյանը ոչ օրիգինալ է եւ ոչ էլ ինքնուրույն:

Հակառուսական քաղաքականության սկզբունքները եւ Թուր-

1. ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ. Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտե, 24 հունիսի 1989թ. (անշնական արխիվ):
2. Հայաստանի Հանրապետություն, 28 նոյեմբերի 1990:
3. Նույն տեղում, 25 օգոստոսի 1992:

քիայի ու Ադրբեջանի հետ հարաբերությունները կարգավորելու հիմնադրույթները դեռ Ղարաբաղյան շարժման առաջին օրերից առաջ է քաշել Ռ. Իշխանյանը՝ «Երրորդ ուժի բացառման օրենքը» հոդվածում, որը ավարտվում է հետեւյալ եզրակացությամբ.

«300 տարի մենք ապավինել ենք երրորդ ուժի (նկատի ունի Ռուսաստանը- Լ.Խ.) եւ 300 տարի անընդհատ կորցրել ենք»[1]: Հեղինակը հայ ժողովրդի վերջին 300 տարվա բոլոր պարտությունների ու ողբերգությունների պատճառը վերագրում է ռուսներին, հայերի ռուսական օրիենտացիային:

Հենց այս նույն ժամանակաշրջանում Ղարաբաղյան կոմիտեն առաջ է քաշում այն կարգախոսը, որը պետք է հիմք հանդիսանար հետագայում ռուսական օրիենտացիայից հրաժարվելու համար: Ղարաբաղյան կոմիտեի ծրագրային փաստաթղթում այդ մասին ասվում է. «Ստրկամտության արտահայտություն է նաեւ այն մտայնությունը, ըստ որի՝ ազգն ունի մշտական բարեկամ եւ մշտական թշնամի»[2]:

Ի լրացումն այդ կարգախոսի՝ «Գնացքից թռչելու ժամանակը» ծրագրային հոդվածով հանդես եկավ Ղարաբաղ կոմիտեի եւ ՀՀՇԿ գաղափարախոս Վազգեն Մանուկյանը[3]:

Ի դեպ, նշենք, որ Ղարաբաղ կոմիտեն եւ նրա հիման վրա ստեղծված ՀՀՇԿ-ն ղեկավարվել են նույն գաղափարախոսությամբ:

Եւ այսպես, Հայաստանում ծրագրավորված սկիզբ առավ հակառուսական հիստերիան: Եթե պատմականորեն Ռուսաստանը հայոց պատմության մեջ հանդես էր գալիս որպես «Չարյաց փոքրագույն», ապա նորաթուխ գավառական քաղաքագետները այն հռչակեցին բացարձակ չարիք:

Արեւմուտքը թելադրում էր իր պայմանները...

Նման մոտեցումով ապազգային ուժերը նպատակ էին հետապնդում վարկաբեկել հայ ժողովրդի անցած պատմական ուղին, հայոց ազատագրական պայքարի ղեկավարությանը եւ մերժել հայոց ռուսական օրիենտացիան: Ընդ որում, համաձայն ապազգային ուժերի, հայերը այդ օրիենտացիայի համար հատուցել են «մեծագույն» կորուստներով:

Այս հայտարարությամբ հայ ապազգային ուժերը հավանություն են տալիս հայկական հարցի թուրքական կոնցեպցիային, որի համա-

1. Ռաֆայել Իշխանյան. Երրորդ ուժի բացառման օրենքը. տե՛ս «Որն է մեր ճանապարհը (հոդվածների ժողովածու)». Երեւան. 1990. էջ 115:
2. Հայոց Համազգային Շարժում. Երեւան, 19.08.1988 թ., (անձնական արխիվ):
3. Վազգեն Մանուկյան. Գնացքից թռչելու ժամանակը, տե՛ս «Որն է մեր ճանապարհը (հոդվածների ժողովածու)», էջ 7-43:

ծայն հայոց կոտորածների եւ ցեղասպանության պատճառը եղել է նրանց ռուսական կողմնորոշումը,

ե) Հայաստանի անվտանգության տեսանկյունից ամենավտանգավոր թեզը, որ առաջ են քաշում հայ ապազգային ուժերը, հետեւյալն է. ՊԱՆԹՈՒՐՔԻԶՄԸ «ՆԵՐԿԱՅՈՒՄՍ ՓԱՍՏՈՐԵՆ ԿՈՐՑՐԵԼ է ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾՈՆԻ ԻՐ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ, քանի որ թուրքալեզու ժողովուրդները բռնել են ազգային զարգացման ուղին, սակայն, նրա դեմ ուղղված խաչակրաց արշավանքի կոչերը ընդունակ են այն նորից վերածելու քաղաքական գործոնի եւ Հայաստանը դարձնելու պանթուրքիզմի ու պանիսլամիզմի թիրախ: Ղարաբաղյան շարժման՝ Հայաստանի կոմիտեն, ավելի քան մեկ տարի գլխավորելով համաժողովրդական շարժումը, սկզբից եւեթ մերժել է օտար հովանավորի վրա հույս դնելու եւ պանթուրքիզմը որպես մշտական սպառնալիք դիտելու վնասակար մտայնությունը»[1]:

Վերը բերված նյութերը ցույց են տալիս, որ հայ քաղաքական դիլետանտները՝ ապազգային գործիչները ոչ մի գաղափար չունեն ոչ պանթուրքիզմից եւ ոչ էլ հայ ժողովրդի «կողմնորոշում» հասկացությունից: Հայ ապազգային ուժերը սկիզբ են դնում մի քաղաքականության, որը շարունակվելու դեպքում ի վերջո հասցնելու է հայ ժողովրդի ոչնչացմանը:

Առաջ քաշելով վերը բերված տեսակետները, Հայաստանի ապազգային ուժերը եւ նրանց լիդեր Լ. Տեր-Պետրոսյանը հայ ժողովրդին առաջարկում են ապրելու եւ գոյատեւելու նոր ուղի, որը Հայաստանի Հանրապետության նախկին նախագահը ձեւակերպել է հետեւյալ կերպ.

«Փնտրենք, ստեղծենք մեր ազգի գոյության նոր, ավելի հուսալի երաշխիքներ: Ահա այս երաշխիքների շղթայի օղակներից մեկն է միայն Հայաստանի եւ Թուրքիայի հարաբերությունների կարգավորումը»[2]:

Այսպիսով, համաձայն Հայաստանի ապազգային ուժերի, հայոց ռուսական կողմնորոշումը «սնանկ» է ու «կորստաբեր», իսկ Թուրքիայի հետ հարաբերությունների կարգավորումը՝ «հուսալի երաշխիք»:

Այս անհեթեթությունները, բնականաբար, ոչ մի առնչություն չունեն ոչ գիտության եւ ոչ էլ պատմական իրողության հետ:

ՀՀՇԿ գաղափարախոսությունը ապազգային է, հակապատմական եւ ազգակործան: ՀՀՇԿ գաղափարախոսությունը կյանքի է կոչվել կենաց ու մահու կռիվ տալու ազգային գաղափարախոսությանը:

Իսկ առանց ազգային գաղափարախոսության, ինչպես ցույց է տա-

1. ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ. Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտե, 24 հունիսի, 1989թ.
2. Հայաստանի Հանրապետություն, 28 նոյեմբերի, 1990:

լիս պատմության փորձը, ոչ մի ժողովուրդ չի կարող գոյատեւել:

Պարտվողականությունը եւ ապազգային գաղափարախոսությունը պահանջում են առաջին հերթին ոչնչացնել կրթության եւ գիտության ազգային համակարգը, ազգային մշակույթը, չեզոքացնել եւ թուլացնել ազգային մտավորականությանը եւ ազգային կուսակցություններին, այսինքն՝ մի քաղաքականություն, որը Հայաստանում իրականացնում էր Հայոց Համազգային Շարժում կուսակցությունը:

Այդ է պատճառը, որ Հայաստանի Հանրապետությունում կրթական համակարգը հանձնվել էր «Նոր ուղի» պարտվողական, թուրքամետ կուսակցության ողորմածությանը, որը գաղափարական առումով ՀՀՇԿ ավելի ռեակցիոն թեւն էր:

Ի՞նչ է պահանջում «Նոր ուղի» կուսակցությունը, ո՞րն է նրա ծրագրի էությունը:

1. Այդ կուսակցությունը առաջին հերթին մերժում է հայ ժողովրդի «ավանդական քաղաքականությունը»: «Նոր ուղի» թերթի առաջին համարի խմբագրականում ասվում է.

«Հնացած մտածողության ու դրանից բխող քաղաքականության հետեւանքով այսօր վտանգված է աշխարհով մեկ սփռված բոլոր հայերի հավաքական Հայրենիքը: Վտանգն օր-օրի ահագնանում եւ սպառնում է նահիրցիների վերջին գոյությանն իրենց հայրենիքում»[1]:

2. Մերժելով հայ ժողովրդի ավանդական քաղաքականությունը, ավանդական արժեքները, «Նոր ուղին» եզրակացնում է.

«Մենք ենք հորինել մեր անմեղության ու արդարության առասպելը: Համոզված ենք, որ ճշմարտությունը բարեհաճ բառերով թաքցնելուց հայրենիքը չի օգտվում: Հին արժեքների կրողների համար, այո, հայրենիքը միշտ էլ եղել է պարզունակ սիրո հրավառության թատերաբեմ: Անցած երկու տարին հավելյալ ապացույցն է այն բանի, որ այդ ճանապարհով չի ստեղծվի ու ձեւավորվի ժողովրդի հավաքական կամքը՝ պետականությունը: ՆՈՐ ԱՐԺԵՔՆԵՐ ԵՆ ՀԱՐԿԱՎՈՐ»[2]:

Որո՞նք են այդ նոր արժեքները:

«Բացատրել ու ապացուցել, որ առանց հարեւանների հետ դարավոր հարաբերվելու կերպը փոխելու (գործով, ոչ խոսքով) եւ խաղաղ գոյակցության բանաձեւը գտնելու, վտանգի տակ է դրված հայոց պետականության կայացումը»[3]:

««Նոր ուղին» խաղաղ գոյակցության բանաձեւ» է համարում՝ հրաժարումը հայոց պատմական հայրենիքից եւ ընդհանրապես տարածքային որեւէ պահանջից, Ադրբեջանի տարածքային ամբողջականության ճանաչումը:

1. «Նոր ուղի», համ. 1, 1993:
2. Նույն տեղում:
3. Նույն տեղում:

Վերոհիշյալով «Նոր ուղին» կանգնում է Հայաստանը՝ 30 հազար քառակուսի կիլոմետր հայեցակարգի դիրքերում, որը փոխ է առնված ՀՀՇԿ զինանոցից:

Եվ պատահական չէ, որ Հանրապետության կրթական գործը վստահվել էր այդ կուսակցության անհայրենիք ղեկավարին: Պայքար է սկսվում դպրոցից ազգային ոգին հանելու, այն ապազգային դարձնելու համար: Դպրոցական ծրագրերից հանվում էին հայ գրողների ազգային գործերը, ազգային պատմության կարեւոր դրվագները, կեղծվում էր ցեղասպանության, Հայկական հարցի եւ ընդհանրապես հայոց ազգային պայքարի վերջին երեք հարյուր տարվա պատմությունը: Կամայականորեն հանվում էին գործող դասագրքերը եւ փոխարինվում ապազգային դասագրքերով:

Գործը հասնում է այնտեղ, որ հրատարակվում եւ որպես հայոց պատմության ուսումնական ձեռնարկ դպրոցին է առաջարկվում Լեոյի «Թուրքահայ հեղափոխության գաղափարախոսությունը» խորագրով երկհատոր աշխատությունը, որը իր նիհիլիստական բնույթի պատճառով անգամ չէր մտել ճանաչված պատմաբանի 10 հատորանոց հրատարակության մեջ:

Ծրագրավորված քայքայվում էր հայոց ազգային դպրոցը, քայքայվում էր ընդհանրապես Հանրապետության կրթական համակարգը:

Հայ ազգային մտավորականությունը, բնականաբար, չէր կարող թույլ տալ հայ ազգային դպրոցը դարձնել ապազգային: Ամբողջ հայ մտավորականությունը մի քանի տարի պայքարեց ազգային դպրոցը փրկելու, այդ չարորակ ուռուցքը կրթական համակարգից հեռացնելու համար:

Հայոց պատմության, պատմական հիշողության, ազգային արժեքների դեմ կատարվող հարձակումները Հայաստանի Հանրապետությունում հանդիսանում էին պետական քաղաքականություն: Հայաստանի Հանրապետության բարձրաստիճան պետական գործիչները, «Հայաստանի Հանրապետություն» եւ «Հայք» թերթերը գովերգում էին Թուրքիայի հակահայկական պետական կոնցեպցիաները, հայոց ցեղասպանության մեղքը բարդում հայերի վրա:

Հայոց պատմության դասավանդման ժամերը կրճատվում էին դպրոցում, բուհում եւ այլ տիպի բոլոր կրթարաններում: Հումանիտար բուհերի բոլոր բնագիտական ֆակուլտետներում եւ բնագիտական բուհերում հայ ժողովրդի պատմության դասավանդման ժամաքանակը խիստ անբավարար է, եւ առարկայի դասավանդումը ձեւական բնույթ է կրում: Հայ ժողովրդի պատմության բուհական դասագրքերի համար միջոցներ

չեն տրամադրվում:

Եվ սա տեղի էր ունենում Հայաստանի Հանրապետությունում, որի զարգացման հիմքում պետք է դրված լիներ ազգային գաղափարախոսությունը: Թվում էր, թե ԽՍՀՄ փլուզումով հայոց պատմությունը պետք է դառնա նորանկախ ազգային պետության հոգատարության առարկա, սակայն, իրականում ստացվեց հակառակը:

Ի տարբերություն Հայաստանի ապազգային իշխանությունների քաղաքականության, Թուրքիայի վարչապետ Ն. Էրբաքանը Անկարայի Հաջիթեփե համալսարանի 1996-1997 ակադեմիական տարվա սկսման հանդիսավոր արարողության ժամանակ ունեցած ելույթում համալսարանների դերի մասին ասել է.

«Մեծ Թուրքիա ստեղծելը (խոսքը Մեծ Թուրանի մասին է - Լ. Խ.) եւ այն ապագայի առաջատար երկիր դարձնելը հիմնականում կապված է համալսարանների ջանքերից ու հետագա աշխատանքների հաջողություններից:

Այժմ երկրում հաջողությամբ գործում են 60 համալսարաններ, օրեցօր աճում է ուսանողների թիվը: Թուրքիան այսօր համալսարան է հիմնում նաեւ արտասահմանում: Անկասկած, Թուրքիան կդառնա կառուցվող մի նոր աշխարհի առաջամարտիկը, եւ այդ առումով մենք պետք է ձգտենք, որպեսզի Թուրքիայի համալսարանները աշխարհի մյուս բոլոր համալսարանների համար օրինակ ծառայեն»[1]:

Դրա հետ միասին Թուրքիայի միջոցներով թուրքագիտական ամբիոններ են ստեղծվում աշխարհի շատ համալսարաններում, այդ ամբիոնների հիմնական խնդիրը թուրքերի ազգային գաղափարախոսության եւ Հայկական հարցի ու ցեղասպանության թուրքական կոնցեպցիայի քարոզչությունն է:

Թուրքիայի եւ Հայաստանի ղեկավարությունների միջեւ՝ կրթական համակարգի միջեւ ունեցած մոտեցման հարցերում անդունդներ գոյություն ունեն:

Քայքայվում է հայկական բուհը, պետությունը բուհերին հատկացնում է աղքատիկ միջոցներ, բուհերում՝ տեխնիկական լաբորատորիաների մեծ մասը ֆինանսների բացակայության պատճառով չի գործում: Դասախոսները զրկված են այլ երկրներ գործուղվելու հնարավորությունից: Բուհական դասագրքերի հրատարակությունը գործնականորեն հնարավոր չէ, ուսանողությունը մնացել է առանց դասագրքերի:

Կրթական համակարգին զուգահեռ քայքայվում է նաեւ գիտական համակարգը: ՀՀ ԳԱԱ համակարգում զանգվածորեն կրճատվում է գիտական աշխատողների քանակը: Գիտնականների հոսք է տեղի ունենում դեպի արեւմտյան երկրներ, նրանց տրվող աշխատավարձը չի բավարարում հաց գնելու համար: Ինստիտուտների լաբորատորիաների մեծ մասը չի աշխատում:

1. Ազգ. 4 հոկտեմբերի, 1996:

Ողորմելի վիճակում է նաեւ մշակույթի համակարգը:

Ստեղծված իրավիճակը Հայաստանի ապազգային իշխանությունների քաղաքականության արդյունք էր: Եթե ազգային Թուրքիան պայքարում է թուրքերի ազգային գաղափարախոսության իրականացման համար, ապա Հայաստանի ապազգային ղեկավարությունը պայքարում էր Հայոց ազգային գաղափարախոսությանը դեմ, դրանով իսկ օբյեկտիվորեն սատարելով Թուրքիայի հաղթանակին: Թուրքիան՝ մի կողմից, Հայաստանի իշխանությունները՝ մյուս կողմից կատաղի պայքար էին մղում Հայոց ազգային գաղափարախոսության դեմ:

Այդպիսին էր Հայաստանի Հանրապետության ապազգային ղեկավարության քաղաքականության տրամաբանությունը[1]:

Սակայն, վերը շարադրվածը դեռ բոլորը չէ: Թուրքիային հաճոյանալու, նրա վստահությունը ձեռք բերելու, իր հիմնական, ամենաուժեղ հակառակորդից ազատվելու համար Հայաստանի ապազգային ղեկավարությունը 1994 թ. դեկտեմբերի 28-ին կասեցրեց Հ. Յ. Դաշնակցության գործունեությունը, բազմաթիվ արհեստական մեղադրանքներ հարուցեց եւ դատական պրոցես սկսեց այդ կուսակցության դեմ, մի կուսակցություն, որը ավելի քան 100 տարի եղել է Հայոց ազգային գաղափարախոսության իրականացման համար մղված պայքարի դրոշակակիրը: Բանտերը լցվեցին քաղաքական կալանավորներով, փակվեցին Դաշնակցության թերթերը:

Հայաստանի Հանրապետության իշխանությունների հակաժողովրդական քաղաքականության հետեւանքով ստեղծվել էր մի իրավիճակ, երբ, ինչպես խորհրդային իշխանության տարիներին, դաշնակցության եւ ազգային գաղափարախոսության մասին դրական կարծիքով հանդես գալը համարվում էր համարձակություն:

ՀԱՅՈՑ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՇԱՐԺՈՒՄ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՔՈՒՄ ԴՐՎԱԾ ԷՐ ԱՊԱԶԳԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆԵՈԲՈԼՇԵՎԻԶՄԸ: Հայաստանի ապազգային ուժերի քաղաքականությունը հանցագործություն էր սեփական ժողովրդի դեմ: Պատմությունն անողոք է

1. Հայ ապազգային ուժերի հակաազգային գաղափարախոսության մասին ավելի մանրամասն տես՝ ա) Որն է մեր նանապարհը (հոդվածների ժողովածու. կազմող՝ Աշոտ Բլեյան), Երեւան, 1990: բ) Կիրիա Սարդարյան. Պատմություն եւ իրականություն, Երեւան, 1991: գ) Վարդգես Դավթյան Առասպելի եւ իրականի սահմանագծին. դ) Լեւոն Տեր-Պետրոսյան. Քաղաքացին եւ քաղաքագիտը, Երեւան, 1996. ինչպես նաեւ «Հայաստանի Հանրապետություն». «Հայք», «Նոր ուղի» թերթերը:

ապազգային ուժերի նկատմամբ, նրանք պատմության կողմից դատապարտված են: Քաղաքականության մեջ անփորձ ժողովրդին ժամանակ էր հարկավոր հասկանալու համար այդ կուսակցության հակաազգային էությունը:

1998 թվականի փետրվարին Հայաստանի ապազգային ուժերը դեն նետվեցին պատմության բեմահարթակից եւ կմոռացվեն, սակայն, նրանց հասցրած վերքը երկար ժամանակ չի սպիանալու, իսկ թողած օրինակը ժամանակ առ ժամանակ, հատկապես ժողովրդի պատմության անցումային փուլերում, նորից է իրեն զգացնել տալու:

Հայաստանի ապազգային ուժերի պատճառած չարիքի, հանցագործության աստիճանը շատ ավելի մեծ է, քան թե կարող է թվալ առաջին հայացքից:

Անգլիական պատմագրության տեսաբան Լորդ Բոլինգբրոկը 18-րդ դարի առաջին կեսին նման հանցագործության աստիճանի մասին հայտնել է հետեւյալ տեսակետը.

«Ցանկացած հասարակությունում ղեկավար անձանց՝ հատկապես թագավորների ու նախարարների մեղավորությունը ոչ միայն նրանց կատարած հանցագործությունների մեջ է, այլ նաեւ այդ հանցագործությունների ուղղակի հետեւանքների, այդ պատճառով էլ նրանց մեղավորության աստիճանը չի կարող չափվել միայն այդ հանցագործություններով:

ԱՅԴՊԻՍԻ ՄԱՐԴԻԿ ՄԵՂԱՆՉՈՒՄ ԵՆ ԻՆՉՊԵՍ ՍԵՐՈՒՆԴՆԵՐԻ, ԱՅՆՊԵՍ ԷԼ ԻՐԵՆՑ ՍԵՓԱԿԱՆ ԴԱՐԻ ԴԵՄ: ԵԹԵ ՆՐԱՆՑ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐՆ ԱՆԳԱՄ ՄՈՌԱՑՎՈՒՄ ԵՆ, ԱՊԱ ՏՎԱԾ ՕՐԻՆԱԿԻ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ՄՆՈՒՄ ԵՆ»[1]:

* * *

Ծանոթանալով հայ ապազգային ուժերի գաղափարախոսությանը եւ քաղաքականությանը՝ հարց է առաջանում. ինչպե՞ս կարող էր հայոց աշխարհում ծնունդ առնել ապազգային գաղափարախոսություն, ինչպե՞ս կարող էր ազգային միջավայրում ծնունդ առնել ինքնաոչնչացման գաղափարը: Այդ երեւույթը պատահականությու՞ն է, թե՞ օրինաչափություն:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ապազգային ուժերի առաջացումը պատահական երեւույթ չէ եւ ունի իր պատմական ու կենսաբանական արմատները:

Տեսնենք, թե որո՞նք են ապազգային ուժերի առաջացման պատմական ու կենսաբանական արմատները:

1. *Болингброк, Письма об изучении и пользе истории, М., 1978, ст. 198.*

2. ԻՆՔՆԱՊԱՀՊԱՆՄԱՆ ԲՆԱԶԴԻ ԹՈՒԼԱՑՄԱՆ ԵՎ ՈՉՆՉԱՑՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ: ՊԱՐՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԹԵՐԱՐԺԵՔՈՒԹՅԱՆ ՔԱՐԴՈՒՅԹԻ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ:

Յուրաքանչյուր էթնոսի անհատ ունի ինքնապահպանման բնազդի երկու ձեւ՝ «Ես»-ի եւ բիոլոգիական տեսակի՝ « Մենք»-ի: Բնության այդ մեծ հրաշքը՝ ինքնապահպանման բնազդը, տրված է տեսակի ինքնապահպանումը հավերժացնելու համար: «Ես»-ի ինքնապահպանման բնազդն ապահովում է առանձին անհատի գոյապահպանումը, իսկ «Մենք»-ինը՝ կոլեկտիվի, ամբողջ էթնոսի, տեսակի:

Ինքնապահպանման բնատուր բնազդը տարբեր գործոնների ազդեցության տակ կարող է թուլանալ, իսկ երբեմն էլ լիովին անհետանալ: Ընդ որում, այդ երեւույթը նկատվում է ինչպես առանձին անհատների, այնպես էլ առանձին խմբերի ու զանգվածների մոտ, ժողովուրդների պատմության հատկապես ճգնաժամային, անցումային շրջաններում :

Բացի դրանից: « Ես»-ի եւ « Մենք» -ի գոյապահպանման բնազդները կոդավորված են կենդանի էակի օրգանիզմում եւ ենթակա են խաթարումների: Երեխաները երբեմն ծնվում են բնատուր հիվանդություններով եւ մարմնական արատներով: Այդ բնատուր հիվանդությունների շարքում լինում է նաեւ ինչպես «Ես»-ի, այնպես էլ «Մենք»-ի ինքնապահպանման բնազդի խաթարվածությունն: Առաջին դեպքում «Ես»-ը անխուսափելիորեն կործանվում է, երկրորդ դեպքում «Ես»-ը գոյապահպանվում է, սակայն, մեծ վնասներ է հասցվում տեսակին, էթնոսին:

«Ես»-ի եւ «Մենք»-ի գոյապահպանման բնազդներն ունեն էական տարբերություններ: Հարցն այն է, որ «Մենք»-ի ինքնապահպանման բնազդը կոդավորված լինելով կենդանի էակի գենի մեջ, այնուամենայնիվ, լիովին ձեւավորվում է, էթնոսային բովանդակություն ստանում կյանքի կոչվելուց հետո, իր տեսակի միջավայրում եւ նրա կյանքի փորձի հիման վրա: Եթե մի ազգի պատկանող նորածին երեխան ընկնում է մի այլ էթնոսի միջավայր, հասունանում այդ ազգի լեզվի, մշակութային եւ հոգեվոր արժեքների միջավայրում, պատմական հիշողության եւ ավանդույթների հենքի վրա. ապա չնայած նրա տեսակի ինքնապահպանման բնազդը պահպանվում է, բայց փոխում է իր էթնոսային բովանդակությունը: Օրինակ. Օսմանյան կայսրությունում դարեր շարունակ թուրքերը վարել են նվաճած քրիստոնյա ժողովուրդների երեխաներին թուրքացնելու քաղաքականություն: Թուրքերը դարերի ընթացքում

թուրքացրել են հարյուր-հազարավոր երեխաների: Թուրքացած երեխաները, բնականաբար, ունեին ինքնապահպանման բնազդ, սակայն, այդ բնազդն արդեն ծառայում էր ոչ թե իրենց արարած ժողովուրդներին, այլ՝ թուրքերին: Նրանք իրենց ինքնագիտակցությամբ արդեն թուրքեր էին եւ պայքարում էին այդ ժողովրդի ազգային գաղափարախոսության խնդիրների իրականացման համար:

Հիշում եմ, երբ երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին հայկական ծագում ունեցող մի ամերիկյան օդաչու հայտարարել էր, որ եթե անհրաժեշտություն լինի, ելնելով ԱՄՆ-ի շահերից, կռմբակոծի Հայաստանը, հայ ազգային մտավորականությունը զարմացած էր ու զայրացած: Սակայն, զարմանալու եւ զայրանալու հիմքեր չկան: Այդ երեւույթը օրինաչափ էր: Հիշյալ ամերիկյան օդաչուն կորցրել էր իր էթնոսի ինքնապահպանման բնազդի բովանդակությունը:

Սարդկային հասարակությունը լի է անհատների խմբերի եւ փոքր ժողովուրդների ձուլման դեպքերով:

Սակայն, այդ ձուլումը՝ ինքնապահպանման բնազդի կորուստը, մի դեպքում տեղի է ունենում խաղաղ պայմաններում՝ երկարատեւ անբարենպաստ գործոնների ազդեցության տակ, մյուս դեպքում բռնի ձեւով՝ ֆիզիկական ոչնչացման սպառնալիքի տակ:

Մենք տվյալ դեպքում երեւույթին մոտենում ենք ազգային գաղափարախոսության հիմնախնդիրների պարզաբանման տեսանկյունից, նպատակ չհետապնդելով շարադրել ինքնապահպանման բնազդի կորուստի բոլոր ձեւերը, որոնք չեն մտնում սույն աշխատության խնդիրների մեջ:

Ազգային գաղափարախոսությունը ձեւավորվում է էթնոսի ինքնապահպանման բնազդի, «Մենք»-ի հավաքական գիտակցության հենքի վրա, իսկ ապազգային գաղափարախոսությունը ձեւավորվում է «Ես»-ի, անհատի ինքնապահպանման բնազդի գիտակցության հենքի վրա: Հենց այս հենքի վրա է առաջանում կոսմոպոլիտիզմը, որը տանում է դեպի ամեն մի ազգայինի լիովին ոչնչացում: Զրկված լինելով էթնոսային ինքնապահպանման բնազդից, յուրաքանչյուր անհատ բնականաբար կտրվում է իր ազգային արմատներից եւ պայքարում ազգային գաղափարախոսության դեմ՝ հանուն «համաշխարհային, համամարդկային մեծ գաղափարների», որոնց հիմքում որպես կանոն դնում է կոսմոպոլիտիզմի գաղափարախոսությունը:

Ժողովուրդների պատմության խաղաղ շրջանում էթնոսի ինքնապահպանման բնազդը կորցրածները մեծ վնասներ չեն կարող հասցնել իրենց ծնած ժողովրդին, բայց անցումային, ճգնաժամային փուլերում նրանց պատճառած չարիքը շատ հաճախ կարող է ճակատագրական լինել:

Ժողովուրդների պատմության ճգնաժամային, անցումային շրջաններում ինքնապահպանման բնազդը դրսեւորվում է երկու ձեւով.

ա) Ցեղի ինքնապահպանման բնազդը վտանգի պահին, որպես կանոն, մեծ վերելք է ապրում: Ցեղը լարում է բոլոր ուժերը՝ թշնամուն դիմակայելու, իր ապրելու իրավունքը պաշտպանելու համար: Այս դեպքում գործում է «Մենք»-ի ինքնապահպանման բնազդը: Հայ ժողովրդի ինքնապահպանման կոլեկտիվ, հավաքական բնազդը նման ձեւով դրսեւորվեց 1918 թվականի Մայիսյան հերոսամարտերի ժամանակ, երբ թվում էր, թե փրկության ելք չկա: Բայց ժողովուրդը հաղթեց: Հաղթեց ինքնապահպանման բնազդը: Դա հրաշք էր:

Հայոց պատմության նոր եւ նորագույն շրջանում ցեղի ինքնապահպանման բնազդը շատ անգամ է անկրկնելի հերոսության օրինակներ տվել. Զեյթունի ապստամբությունները, Սյունիքի ազգային-ազատագրական պայքարը՝ Դավիթ Բեկի ղեկավարությամբ, Արցախի ազգային-ազատագրական պայքարը, Զանգեզուրի հերոսամարտը՝ Նժդեհի ղեկավարությամբ, Վանի ինքնապաշտպանությունը եւ այլն, եւ այլն:

Ցեղի ինքնապահպանման բնազդի բնականոն դրսեւորման ձեւն էր այդ:

բ) Ինքնապահպանման բնազդի թուլացում կամ լիովին ոչնչացում, որի պատճառով առաջանում է պարտվողականությունը եւ թերարժեքության բարդույթը:

Պետականության կորուստը, դարեր շարունակ օտարի տիրապետության տակ գտնվելը, ռազմական պարտությունները, կոտորածները, ազգային, կրոնական, տնտեսական եւ քաղաքական դժոխային վիճակը, հուսալքումը, ապագայի անհեռանկարությունը եւ այլ պատճառներ ի վերջո հանգեցնում են բիոլոգիապես թույլ անհատների ինքնապահպանման բնազդի թուլացմանը կամ կորուստին:

Այս երեւույթը հայերի մոտ ավելի ուժեղ է արտահայտվել այն պատճառով, որ Հայոց աշխարհը շուրջ հազար տարի գտնվել է օտարների տիրապետության տակ, դարեր շարունակ հայերը սեփական Հայրենիքում հալածվել են, կոտորվել եւ վերջապես 19-րդ դարի վերջերից մինչեւ 1923 թվականը ենթարկվել են զանգվածային ցեղասպանության:

Հայ ժողովրդին սպառնում էր լիակատար ոչնչացման վտանգը: Հայ ժողովրդի փրկված բեկորներին սպառնում էր անհայրենիք մնալու վտանգը:

Այդ բոլորը ամբողջ հայ ժողովրդի, մասնավորապես արեւմտահա-

յության մոտ հիմք էր ստեղծել ինքնապահպանման բնազդի թուլացման. ճորտի, ստրուկի հոգեբանության առաջացման համար: Դարերի ընթացքում աստիճանաբար առաջանում էր դահճի եւ զոհի, տիրոջ եւ ծառայի հոգեբանություն: Եւ կարծեք թե թուրքը քիչ էր, պատմությունը հայի համար նոր դահիճներ է ստեղծում՝ հանձինս քրդերի եւ չերքեզների:

Ահա այսպես, դարերի ընթացքում հայերի մի մասի մեջ ձեւավորվել է պարտվողական հոգեբանությունը. թերարժեքության բարդույթը: Հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարն աստիճանաբար հայերի մոտ արմատախիլ էր անում պարտվողականության հոգեբանությունը եւ թերարժեքության բարդույթը: Սակայն, շուրջ հազար տարվա ընթացքում հայի գենի մեջ մտած այդ բացասական գործոնը կարճ ժամանակահատվածում չէր կարող վերանալ եւ, բնականաբար, ժամանակ առ ժամանակ իրեն զգացնել էր տալու: Դրանով է բացատրվում այն, որ հայ զինվորները եւ զորահրամանատարները օտար բանակներում քաջության հրաշքներ էին ցուցաբերում, մինչդեռ 1918 թվականի սկզբներին, գրեթե առանց կռվի, թշնամուն թողեցին Արեւմտյան Հայաստանը, իսկ 1920թ. թուրք-հայկական պատերազմում խայտառակ պարտություն կրեցին: Սեփական հայրենիքում ավանդական թշնամու՝ թուրքերի դեմ մղվող ճակատագրական պատերազմում ազգային բանակում գործեց դեռ լիովին արմատախիլ չարված պարտվողականության բարդույթը, իսկ օտար բանակներում, օտար հողի վրա այդ բարդույթը չէր գործում: Հայոց ցեղասպանության ընթացքում եւս արեւմտահայության լայն զանգվածները ղեկավարվեցին «Ես»-ի ինքնապահպանման բնազդով, չկարողացան համախմբված կռվել իրենց ինքնապահպանման համար եւ կոտորվեցին: Իսկ արեւմտահայության այն հատվածները, որոնք ղեկավարվեցին ցեղի ինքնապահպանման բնազդով, կոլեկտիվ ինքնապաշտպանություն կազմակերպեցին, թեկուզեւ զոհերի գնով, բայց փրկվեցին անխուսափելի մահից (Վան, Մուսալեռ եւ այլն):

Պարտվողականությունը եւ ազգային թերարժեքության բարդույթը տարբեր ձեւերով են արտահայտվում: Այդ երեւույթին չի կարելի պարզունակ եւ միանշանակ մոտեցում ցուցաբերել:

Հայ պարտվողականները, դավաճանները, դասալիքները. մատնիչները, Հայրենիքը լքողները, կրոնափոխները, ազգային ինքնությունից հրաժարվողները, կոսմոպոլիտները եւ այլն պատկանում են այն մարդկանց թվին, որոնց ինքնապահպանման բնազդը կամ թուլացել է, կամ էլ լիովին անհայտացել: Հասկանալի է, որ տվյալ դեպքում խոսք է գնում ցեղի ինքնապահպանման բնազդի մասին: Վերը նշվածները գործում են «Ես»-ի ինքնապահպանման բնազդի հրամայականով:

Սակայն, գոյություն ունի նաեւ պարտվողականության արտահայտման ավելի բարդ եւ բարձր ձեւ: Դա պարտվողության եւ թերարժեքության բարդույթի արտահայտման կոլեկտիվ ձեւն է :

Լինում են պատմական պահեր՝ հիմնականում անցումային եւ ճգնաժամային, երբ պարտվողականները, թերարժեքության բարդույթ ունեցողները համախմբվում են, վերցնում իշխանությունը եւ փորձում ժողովրդին «փրկել», այսինքն՝ տանել իրենց ուղիով, մի երեւույթ, որը տեղ էր գտել Հայաստանում:

Գրավելով իշխանությունը, այդ ուժերն առաջին հերթին պատերազմ են հայտարարում ազգային գաղափարախոսությանը եւ ժողովրդին պարտադրում պարտվողական, ապազգային գաղափարախոսություն:

Եթե նման բախտորոշ, պատմական պահին հոգնած, հուսալքված ժողովուրդը չհասկանա սպառնացող վտանգի մեծությունը եւ հետեւի ապազգային ուժերին. նրա կործանումը կդառնա անխուսափելի:

Այդպիսի պատմական պահերին վճռական դեր ունի խաղալու ազգային գաղափարախոսության կրողը՝ ազգային մտավորականությունը, որը պետք է բացահայտի ապազգային ուժերի գաղափարախոսության հակաազգային էությունը:

Ազգի հավերժացման համար մղվող պայքարի ղեկավարությունը ազգային մտավորականության պատմական առաքելությունն է: Այդ պատճառով էլ ազգային մտավորականության եւ ապազգային ուժերի միջեւ մղվող պայքարում փոխզիջումներ չեն կարող լինել:

Ահա թե որտեղ են թաքնված հայության մեջ ժամանակ առ ժամանակ հարություն առնող պարտվողականության արմատները, ահա թե ինչպիսի կենսաբանական եւ պատմական արմատներից են ծնունդ առնում ապազգային ուժերը:

3.ԱԶԳԱՅԻՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՂԱՇԱՐԺԵՐԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ: ԽՈՐՀՐԴԱՀԱՅ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՖԵՆՈՄԵՆԸ:

Հայաստանի՝ Խորհրդային Ռուսաստանի կազմի մեջ մտնելը հայ ժողովրդի համար Չարյաց փոքրագույնն էր:

Հայ ժողովուրդը, ճիշտ է, կորցրեց անկախ պետականությունը, սակայն, ԽՍՀՄ կազմում ձեռք բերեց խոշորագույն հաջողություններ՝ գիտության, մշակույթի, կրթական համակարգի, արդյունաբերության եւ ընդհանրապես տնտեսության բոլոր բնագավառներում: Երբեմնի հետամնաց Հայաստանը դարձավ աշխարհի առաջավոր արդյունաբերական երկրներից մեկը: Խորհրդային Հայաստանի տարածքում հայ ժողովուրդը կոնսոլիդացվեց: Ստեղծվեց այն հենքը, որի վրա հետագայում պետք է վեր խոյանար հայոց անկախ պետականությունը:

Խորհրդային իշխանության տարիներին հայ ժողովրդի ամենախոշոր ձեռքբերումներից մեկը խորհրդահայ մտավորականության ստեղծումն էր:

Խորհրդահայ մտավորականությունն իր պրոֆեսիոնալ բարձր մակարդակով, կազմով, բնույթով, ժողովրդի ազգային եւ սոցիալական կյանքում խաղացած դերով իրենից չափազանց բարդ մի ֆենոմեն էր ներկայացնում, որին չի կարելի միանշանակ գնահատական տալ:

Մի կողմից՝ խորհրդահայ մտավորականության ջանքերով, Հայաստանը դարձավ առաջավոր գիտության, մշակույթի եւ արդյունաբերության երկիր, մյուս կողմից էլ, հենց այդ նույն մտավորականության մի ստվար խավի գործունեությամբ, կամա թե ակամա քանդվում էին այն հիմքերը, որոնց շնորհիվ գոյապահպանվում էր հայ ժողովուրդը:

Տեսնենք, թե ինչպես էր գործում այդ մեխանիզմը:

ԽՍՀՄ-ը ապրում էր բոլշեւիկյան գաղափարախոսության օրենքներով:

Բազմազգ կայսրությունում ստեղծվում էր մեկ ժողովուրդ՝ խորհրդային ժողովուրդ, կերտվում էր մեկ Հայրենիք՝ Խորհրդային Հայրենիք, հեռանկարում՝ խորհրդային ժողովուրդը պետք է խոսեր մեկ լեզվով՝ ռուսերենով:

Ազգային մշակույթների մասին կոմունիստական կուսակցության կողմից օրակարգի մեջ մտցված՝ «Չեւով՝ ազգային, բովանդակությամբ՝ սոցիալիստական» կարգախոսն անցումային նշանակություն ուներ եւ պետք է ԽՍՀՄ ոչ ռուս ժողովուրդների համար ուղի լիներ ռուս-

ների մեջ ձուլվելու համար:

Բոլշեւիկները կյանքի էին կոչել «Չեւով՝ ազգային, բովանդակությամբ՝ սոցիալիստական մշակույթ» կարգախոսը եւ անհաշտ պայքար հայտարարել նացիոնալիզմին եւ ազգային գաղափարախոսությանը: Ընդհանրապես, որպես կանոն, յուրաքանչյուր ազգային մշակույթի հիմքը, էությունը, բովանդակությունը կազմում է տվյալ ազգի ազգային գաղափարախոսությունը, ազգային ինքնությունը: Իսկ ձեւն արտաքին կողմն է եւ արտահայտում է բովանդակությունը: Չեւը բովանդակության արտահայտությունն է:

Առաջ քաշելով «Չեւով՝ ազգային, բովանդակությամբ՝ սոցիալիստական մշակույթ» ռազմավարական կարգախոսը, բոլշեւիկները նպատակ ունեին աստիճանաբար փոխել ԽՍՀՄ ժողովուրդների ազգային մշակույթների բովանդակությունը, դրանք դարձնել նոր ստեղծվող մարդկային հանրության, այսինքն՝ ռուսական մշակույթ: Փոխելով ազգային մշակույթների բովանդակությունը, բնականաբար, ժամանակի ընթացքում, անհրաժեշտաբար կփոխվեր նաեւ ձեւը՝ արտահայտելով իր նոր բովանդակությունը: Այսպիսի ճանապարհով ժամանակի ընթացքում ԽՍՀՄ բոլոր ժողովուրդները կկորցնեին իրենց ազգային ինքնությունը:

Իսկ այդ կարեւոր խնդիրն իրականացնելու համար, առաջին հերթին, յուրաքանչյուր ժողովուրդ պետք է կտրվեր իր ազգային ակունքներից, ավանդույթներից, լեզվից ու պատմությունից, ինքնապահպանման մեխանիզմից՝ նացիոնալիզմից եւ ընդհանրապես այն բոլորից, որն ամփոփվում է Ազգային գաղափարախոսություն հասկացության մեջ:

ԽՍՀՄ-ում ծրագրավորված ընթանում էր ռուսականացման պրոցես: Ռուսականացման պրոցեսն ազգային հանրապետություններում եւ ընդհանրապես կայսրության բոլոր ազգային տարածքներում մեծ ծավալ էր ստացել:

Առաջին հերթին հարվածի տակ էր դրվել ազգային կրթական եւ գիտական համակարգը, ամբողջ մշակույթը: Ծրագրավորված ոչնչացվում էր այն հիմքը, առանց որի ժողովուրդները կորցնում են իրենց ինքնությունը եւ դադարում գոյություն ունենալուց:

Հայաստանը պատվել էր ռուսական դպրոցներով: Հայ երեխաները, եւ հատկապես մտավորականության ճնշող մեծամասնության երեխաները, ռուսական դպրոց էին հաճախում: Մտավորականությունից ետ չէր մնում միջին խավը, որն այդ հարցում ավելի շուտ ղեկավարվում էր տնտեսական նկատառումներով: Հայ մտավորականության ճնշող մեծամասնության խոսակցական լեզուն ռուսերենն էր: Աստիճանաբար Հայաստանի քաղաքային բնակչության, հատկապես Երեւանի խոսակցական լեզուն դառնում էր ռուսերենը: Հայաստանի բուհերի մեծ մասում օգտագործվում էին ռուսերեն դասագրքեր: Շատ ֆակուլտետնե-

ռում դասախոսությունները կարդացվում էին ռուսերեն: Պետական հիմնարկներում, կուսակցական ղեկավար մարմիններում աշխատանքները եւ գրագրությունը գնում էին ռուսերեն: Հայ մտավորականության այդ ռուսացող խավը նման երեւույթն արդարացնում էր եւ իրեն սփոփում այն կեղծ տեսությամբ, որ հայ ժողովուրդը «Համաշխարհային եւ ռուսական մշակույթի հետ պետք է հաղորդակցվի ռուսերենի միջոցով»:

Այս միանգամայն սխալ թեզը մինչեւ այսօր էլ դեռ գտնվում է հայ մտավորականության գինանոցում:

Վերոհիշյալ թեզից հետեւում է, որ ռուսական եւ համաշխարհային մշակույթին հաղորդակից լինելու համար պետք է անպայման ռուսանալ: Մինդեռ այդ պրոբլեմի լուծման միակ բանալին հայոց ազգային դպրոցում օտար լեզուների դրվածքի արմատա'ան բարելավումն է:

***

Խորհրդային կայսրության ազգային գլոբալ քաղաքականության շրջագծում Հայաստանում խորհրդային իշխանության տարիներին տեղի էր ունենում հայ ժողովրդի եւ մտավորականության ազգային-քաղաքական դիմագծի բեւեռացում. ազգը մասնատվում էր ազգային եւ ապազգային ուժերի:

Խորհրդային Հայաստանում մարքս-լենինյան գաղափարախոսության ազդեցության տակ ամբողջ հայ ժողովրդի ընդերքում տեղի էին ունենում լուրջ, արմատական տեղաշարժեր:

Ի վերջո, գաղտնիք չէր, բոլշեւիկները չէին թաքցնում, որ մարքս-լենինյան գաղափարախոսության կենսագործումը, պրոլետարական ինտերնացիոնալիզմի եւ պրոլետարիատի դիկտատուրայի իրականացումն առաջին հերթին պայմանավորված է ԽՍՀՄ ժողովուրդների ազգային գաղափարախոսությունների ոչնչացմամբ:

Այդ պատճառով էլ Խորհրդային իշխանության տարիներին բոլշեւիկները կենաց ու մահու կռիվ էին հայտարարել ազգային գաղափարախոսությանը եւ նացիոնալիզմին:

Նացիոնալիզմի եւ ազգային գաղափարախոսության դեմ մղվող պայքարի ռազմավարական որոշումներն ընդունվում էին Մոսկվայում, բոլշեւիկյան կուսակցության ղեկավար մարմինների կողմից՝ տեղայնացվում կայսրության ազգային շրջանների կոմկուսների միջոցով:

Հայկոմկուսը նացիոնալիզմի դեմ մղվող պայքարի հիմնախնդիրները քննարկել է 1928թ. նոյեմբերի 9-12-ը տեղի ունեցած իր 5-րդ պլենումում, որի որոշումները ծրագրային, ռազմավարական նշանակություն ունեին: Այդ պլենումում մշակվեցին հայկական նացիոնալիզմի դեմ մղվող պայքարի հիմնական սկզբունքներն ու ձեւերը[1]:

1. ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, գ. 8, գ. 8, թթ. 155-184:

Որպեսզի Հայկոմկուսի կողմից հայկական նացիոնալիզմի դեմ մղվող պայքարի մասին պատկերացումներն ամբողջական լինեն, մենք նպատակահարմար ենք համարում ընթերցողի ուշադրությանը ներկայացնել այդ պլենումի որոշումից առանձին հատվածներ:

«Բուրժուական իդեոլոգիաներն իրենց բոլոր բազմապիսի ձեւերով հաղթահարելու համար անհրաժեշտ է պայքարել հանուն պրոլետարական իդեոլոգիայի հստակության: Պրոլետարական իդեոլոգիան ոչ երանգներ ունի եւ ոչ էլ գունավորումներ: Նա մեկ է եւ միասնական: Կուսակցությունը թույլ չի տա իր շարքերի մեջ բուրժուական «մտքերի ազատություն» մտցնելու որեւէ ճիգ ու ջանք: Միայն բոլշեւիկյան անհաշտությունը կարող է ցրել իդեոլոգիական այն մշուշը, որ ստեղծում են բուրժուազիան եւ նրա կամավոր եւ ակամա գործակիցները»:

«Խորհրդային Հայաստանում, ինչպես եւ ամբողջ Անդրկովկասում, պրոլետարիատի դիկտատուրայի դեմ մղվող պայքարում, բուրժուազիայի հիմնական, ամենատարածված եւ առավելապես ճկուն իդեոլոգիական զենքը նացիոնալիստական իդեոլոգիան է:

Նացիոնալիզմն արտահայտվում է ամենատարբեր ձեւերով, սկսած անսքող, անասնական շովինիզմից մինչեւ ամենանուրբ, հմտորեն վարագուրված նացիոնալիստական տենդենցները, որոնք հաճախ քողարկված են լինում նույնիսկ սոցիալիստական ֆրազեոլոգիայով: Սակայն, անկախ նրա զանազան արտահայտություններից, նացիոնալիզմը միշտ մնում է որպես նույն ռեակցիոն, բուրժուական իդեոլոգիան:

Նացիոնալիզմի արմատները մեկ են ամեն տեղ. նա կոչված է իդեոլոգիապես զարդարելու եւ քողարկելու կապիտալիստական բուրժուազիայի անզուսպ ձգտումը՝ իր շուկաներն ընդարձակելու եւ բանվոր դասակարգի սանձարձակ շահագործման կայուն պայմաններ ստեղծելու: Բուրժուազիան իր այդ դասակարգային տնտեսական եւ քաղաքական նպատակներն իրագործելու համար մոբիլիզացիայի է ենթարկում իր ամբողջ իդեոլոգիական արսենալը, հորինվում են ազգասիրության եւ «ընտրյալ ազգի» թեորիաներ. բուրժուական պատմաբաններն սկսում են կեղծել պատմությունը, մամուլն ու գրականությունը, դպրոցն ու եկեղեցին, ստեղծում են «հայրենասիրական» առասպելներ: Այսպիսով, նացիոնալիզմը վտանգավոր է նրանով, որ բուրժուազիան աշխատում է պատվաստել այն աշխատավոր մասսաներին՝ տնայնագործներին եւ արհեստավորներին, գյուղացիներին ու բանվոր դասակարգի հետամնաց խավերին, իրեն ենթարկել նրանց իդեոլոգիաբար եւ քաղաքականորեն, պաշտպան կանգնեցնել նրանց «համազգային», իրականում՝ «բուրժուազիայի դասակարգային շահերին»:

«Պրոլետարիատի ազգային քաղաքականությունը կատարյալ հա-

կադրություն է բուրժուազիայի նացիոնալիստական քաղաքականության: Պրոլետարիատը պաշտպանում է ճնշված ժողովուրդների ազգային ազատագրական շարժումները, երբ դրանք հանդիսանում են համաշխարհային հեղափոխության ֆրոնտի մի մասը, ուղղակի կամ կողմնակի կերպով ուղղված են իմպերիալիզմի դեմ, սակայն, այստեղ էլ պրոլետարիատը կատաղի կռիվ է մղում նացիոնալիզմի՝ որպես ռեակցիոն մի իդեոլոգիայի դեմ, ազատելով նրա ազդեցությունից իրեն եւ աշխատավորների այլ խավերին:

Եթե պրոլետարիատը պաշտպանում եւ զարգացնում է ազգային կուլտուրան, ապա միայն այն չափով, որ այդ կուլտուրան, լինելով ձեւով ազգային, իր բովանդակությամբ ինտերնացիոնալ բնույթ ունի, այսինքն՝ այն չափով, ինչ չափով որ նա աշխատավոր մասսաների կուլտուրան է, սպասարկում է նրանց կարիքները: Պրոլետարիատը վերցնում է հին բուրժուական կուլտուրայից այն, ինչը որ կարելի է ծառայեցնել պրոլետարիատի ինտերնացիոնալ դասակարգային խնդիրներին եւ, պահպանելով նրա ազգային ձեւերը,- քանի որ ազգային այն առանձնահատկությունները, որոնք կազմված են տարբեր ազգությունների լեզվից, կենցաղային եւ կուլտուրական ձեւերից պատմական փաստ են հանդիսանում,- կառուցում է իր դասակարգային կուլտուրան, որի մեջ բուրժուական, նացիոնալիստական ոչինչ չկա:

Պրոլետարիատի ազգային քաղաքականությունը նրա դասակարգային քաղաքականության արտահայտությունն է, բուրժուազիայի դեմ ուղղված դասակարգային պայքարի հատուկ ձեւը: Մինչդեռ նացիոնալիզմը մի զենք է բուրժուազիայի ձեռքին՝ պրոլետարիատի եւ նրա իշխանության դեմ մղվող պայքարում:

Նացիոնալիստական տրամադրությունների ամենաչնչին արտահայտությունն անգամ բուրժուական, հակահեղափոխական տրամադրությունների արտահայտություն է:

Սակայն, նացիոնալիզմն ընդունում է այնքան բազմազան, քողարկված, գաղտնի ձեւեր, որ հաճախ հնարավորություն է ստանում թափանցել այնպիսի ասպարեզներ եւ խավեր, որտեղ ամենից քիչ սպասելի էր: Աննկատելի կերպով նա թափանցում է մեր մամուլի էջերը, մեր գրականության ասպարեզը, կուլտուրական-դաստիարակչական հիմնարկներ եւ այլն, իդեոլոգիաբար քայքայելով մեր խորհրդային եւ տնտեսական ապարատի մասնիկները, մեր գյուղացիության եւ պրոլետարիատի առանձին խավերը եւ նույնիսկ՝ մեր կուսակցական կազմակերպությունների որոշ շերտերը:

Այդ պատճառով նացիոնալիզմի արտահայտության զանազան ձեւերի ուսումնասիրությունը նախադրյալ է հանդիսանում մեր կուսակցության ճիշտ դիրքավորման՝ իդեոլոգիական ֆրոնտի պայքարում» :

Որո՞նք են նացիոնալիզմի արտահայտության ձեւերը՝ հարցին պլենումի որոշումը պատասխանում է.

1. «Ռազմատենչ նացիոնալիզմն ամենացայտուն կերպով արտահայտվում է դաշնակիզմով: Այդ իդեոլոգիան իր մեջ մարմնացնող կուսակցությունը՝ դաշնակների կուսակցությունը՝ հայ բուրժուազիայի կուսակցությունն է, հայ իրականության հեղափոխական կուսակցություններից ամենաազդեցիկն ու ամենավտանգավորը: Այդ պատճառով էլ դաշնակիզմի ճիշտ գնահատումն ու որակումը բացառիկ կարեւորություն ունի մեր կուսակցության անսխալ օրիենտացիայի համար:

Դաշնակցությունը պատմական ասպարեզ է իջել որպես Տաճկական Հայաստանի «անկախության մարտիկ», որպես Տաճկաստանի հայ զարգացող բուրժուազիայի դժգոհության արտահայտիչն ընդդեմ տաճկական կես-ավատական կապանքների, որպես Անդրկովկասի հայ առեւտրական բուրժուազիայի՝ ռուս արդյունագործական կապիտալի այդ հնազանդ գործակատարի: Տաճկահայաստանի խոշոր հնարավորություններով հարուստ շուկաներին տնտեսապես տիրանալու անզուսպ ցանկության իրագործման պայքարի ղեկավար: Հայ ընդարձակ զանգվածների քաղաքական, իրավական եւ տնտեսական դրությունը թե՛ Տաճկահայաստանում, եւ՛ թե Անդրկովկասում հնարավորություն էր տալիս այդ կուսակցությանը «համազգային» եւ «համաժողովրդական» մորթով խաբեբայաբար ծածկել իր դասակարգային բնույթը: Տասնյակ տարիների ընթացքում հայ բուրժուազիայի նպատակների համար հայ ժողովրդի զանգվածները թնդանոթի միս դարձնող Դաշնակցությունն ինքը մի խաղալիք էր իմպերիալիստների ձեռքին: Առավել պարզորոշությամբ, քան երբեւիցե, համաշխարհային պատերազմը հրապարակ հանեց մի կողմից՝ ռուսական, իսկ մյուս կողմից՝ անգլո-ֆրանսիական իմպերիալիզմի ղեկավարող ձեռքը Դաշնակցության գործունեության նկատմամբ:

Մեր կուսակցությունը միշտ պայքարել է դաշնակիզմի դեմ ոչ միայն որպես ռեակցիոն ազգայնական իդեոլոգիայի, այլեւ այդ իդեոլոգիան կրող կուսակցության եւ սրա քաղաքականության դեմ, եւ այդ ոչ միայն այն պատճառով, որ այդ կուսակցությունը քակում էր հայ եւ թուրք զանգվածների կապերը, մեկուսացնում էր հայ ժողովրդի ազատագրական շարժումը, բաժանում այդ շարժումը թուրք ժողովրդի հեղափոխական կռվից եւ այն հակադրում վերջինիս, այլեւ այն հիմնական պատճառով, որ դաշնակները հայ բուրժուազիայի իղձերը կենսագործելու համար իրենց քաղաքականությունը ենթարկում էին եվրոպական իմպերիալիստների շահերին՝ առանց որեւէ խտրություն դնելու միջոցների միջեւ, դառնում նրանց կամակատարը՝ հայկական հարցը իմպերիալիստական խավերի հակահեղափոխական գործիք դարձնելու եւ միշտ

գործիք պահելու խնդրում».

«Այսպիսով, Դաշնակցությունը եղել է հայ բուրժուազիայի իղձերի ու ձգտումների արտահայտիչն ու մարտական կուսակցությունը: Նա կատարել եւ կատարում է համաշխարհային իմպերիալիզմին սպասավորելու ամենաստոր պաշտոնը: Դաշնակիզմը բուրժուական-ազգայնական-շովինիստական-հակահեղափոխական իդեոլոգիա է: Նա հայ իրականության ֆաշիզմն է... Եվ, ինչպես որ բոլոր թշնամական իդեոլոգիաներից ամենավտանգավորը համապարփակ նացիոնալիզմն է, այնպես էլ այդ նացիոնալիզմի ամենահետեւողական արտահայտիչը՝ Դաշնակցությունը՝ հակահեղափոխական ճակատի հեգեմոնն է ու ղեկավարը»:

2. «Բացի դաշնակիզմից, մեր իրականության մեջ գոյություն ունեն նաեւ ուրիշ թշնամական նացիոնալիստական իդեոլոգիաներ, որոնք ավելի կամ նվազ չափով են արտահայտվում: Չխոսելով արտասահմանյան հայ բուրժուազիայի կուսակցության՝ Ռամկավարների մասին, հիմնական թշնամական իդեոլոգիաներն սպառվում են հետեւյալ մտայնություններով - Հնչակիզմ, Սմենովեխականություն, Մենշեւիզմ, Սպեցիֆիզմ եւ Տրոցկիզմ:

Որքան էլ անախրոնիստական մտայնություն լինի Հնչակիզմը, որքան էլ նա մարած լինի մեզ մոտ, այնուամենայնիվ, հայ գաղութներում նա դեռ գոյություն ունի: Այդ մտայնությունը նույն դաշնակիզմն է, միայն ավելի թույլ եւ անգույն, ավելի վախկոտ , երերվող ու քաոսային»:

3. «Ինչպես Խորհրդային Միության մեջ ընդհանրապես, այնպես էլ մեր երկրում Սմենովեխականությունը պաշտպանողական լոզունգներով վարագուրված բուրժուական իդեոլոգիա է, որը ձգտում է հարմարվել նոր պայմաններին եւ մասսաների վրա ազդելու նպատակով գործադրել նոր մեթոդներ: Նա ամբողջովին թափանցվել է նացիոնալիստական տրամադրություններով եւ ձեւավորում է խորհրդային կարգերին հարմարեցված բուրժուական տարրերի եւ ինտելիգենցիայի վերնախավերի իղձերն ու տրամադրությունները: Այդ տրամադրություններն արտահայտվում են մեզ մոտ կամ ազատամտական սմենովեխականությամբ, կամ դաշնակցական սմենովեխականությամբ, կամ էլ եկեղեցական սմենովեխականությամբ: Անկախ իր տեսակետներից, սմենովեխականությունը մեր դասակարգային թշնամու ձեռքին նկատելի զենքերից մեկն էր այն պայքարում, որ մղում է նա՝ դասակարգային թշնամին մեր երկրի մանր-բուրժուական մասսաների վրա ազդեցություն ձեռք բերելու համար: Եթե առաջինի հարմարվելու խողովակը ռուսական օրիենտացիան է, ապա երկրորդինը ոչ միայն դա, այլեւ դեպի «մայր» Դաշնակցությունն ունեցած վերաբերմունքը, որ արտահայտվում է կամ բացասական լիկվիդատորությամբ, կամ էլ դրական հաշտեցողությամբ: Իսկ եկեղեցական սմենովեխականության հարմարվելու

խողովակը եկեղեցական ռեֆորմներն են»:

4. «Սպեցիֆիզմը դաշնակիզմի եւ մենշեւիզմի խառնուրդն է: Սպեցիֆիզմը նույն դաշնակիզմն է, միայն «բանվորական» իդեոլոգիայով ծածկված: Դաշնակիզմի էականը նացիոնալիզմն է, իսկ մենշեւիզմի էականը՝ օպորտունիզմը: Հետեւապես, սպեցիֆիզմի էականը նացիոնալիզմն ու օպորտունիզմը՝ հավասարապես:

Սակայն, սպեցիֆիկյան իդեոլոգիայի մեջ նացիոնալիզմն այն չէ, ինչ դաշնակցական նացիոնալիզմը: Որքան վերջինս շեշտված է, գռեհիկ, անասնական, այնքան սպեցիֆիկյան նացիոնալիզմը քողարկված է, նուրբ, «կուլտուրական»: Սպեցիֆիզմը ոչ թե բացարձակ թշնամության քարոզ է մյուս ազգությունների նկատմամբ, այլ ազգությունների ինքնամփոփման, մեկուսացման քարոզ»:

5. «Մենշեւիզմը Հայաստանում երբեք չի ունեցել քիչ թե շատ աչքի ընկնող ազդեցություն: Սակայն, վերջին տարիներս նա փորձում է ակտիվություն զարգացնել առավելապես մանր-բուրժուազիայի վերնախավերում եւ մանր-բուրժուական ինտելիգենցիայի շարքերում: Նա հույս ունի որոշ հաջողություն ձեռք բերել այն հիման վրա, որ դաշնակիզմի իդեոլոգիան վերջին ութը տարվա ընթացքում վարկաբեկվել է, եւ խորհրդային ինտելիգենցիայի ու մանր բուրժուազիայի որոշ տարրեր իդեոլոգիական սիստեմի «ավելի բարձր որակ» են պահանջում: Սպասարկելով մանր բուրժուազիային եւ մանր բուրժուական ինտելիգենցիային, մենշեւիզմն անխուսափելիորեն համակվում է նացիոնալիզմով, ընդունում է «սպեցիֆիկ» ձեւեր եւ զարգանում է դեպի դաշնակիզմը»:

6. «Տրոցկիզմը Խորհրդային Հայաստանում, այնպես, ինչպես եւ Խորհրդային Միության այլ մասերում, վերջին հաշվով արտահայտում է սնանկացող եւ քայքայվող մանր-բուրժուազիայի հուսահատությունը: Մեզանում նա գլխավորապես հենվում է ապադասակարգայնացած ինտելիգենցիայի ու մանր սեփականատիրական հոգեբանության գերի մնացած՝ քաղաքականապես ետամնաց բանվորների վրա, որոնց սոցիալիզմի շինարարության դժվարությունները թվում են անհաղթելի: Տրոցկիզմն այդպիսով, դարձած լինելով հակախորհրդային եւ հակահեղափոխական իդեոլոգիա, անխուսափելիորեն թափանցվում է նացիոնալիզմով եւ, վերջիվերջո, պետք է մոտենա, մինչեւիսկ՝ ձուլվի, դաշնակցության հետ»:

7. «Նացիոնալիզմի իդեոլոգիան մանր բուրժուական շրջապատի եւ դասակարգային թշնամու աշխուժության պայմաններում մասամբ թափանցել է նաեւ մեր կուսակցության շարքերը, առաջ բերելով նրանում ուկլոնիստական տրամադրություններ եւ սպեցիֆիզմի ռեցիդիվներ: Հայաստանի Կոմկուսի նախկին ղեկավարությունը որոշ տուրք էր տալիս թշնամի դասակարգերի կողմից ներշնչված այդ տրամադրությունն-

ներին, որոնք արտահայտվում էին մի շարք խոշոր սկզբունքային-քաղաքական սխալներով եւ սայթաքումներով՝ տնտեսական եւ իդեոլոգիական աշխատանքների բնագավառում: Կուսակցության նախկին ղեկավարության սկզբունքային քաղաքական սխալներն արտահայտում էին այդ ղեկավարության աջ-նացիոնալիստական թեքումը: Այս հանգամանքը մի ավելորդ անգամ ցույց է տալիս, որ մեր պայմաններում աջ տրամադրություններն ընդհանրապես միանալով նացիոնալիստական տրամադրությունների հետ, շատ հաճախ, նացիոնալիստական-ուկլոնիստական կերպարանք են ստանում»:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, համաձայն Հայկոմկուսի 1928թ. 5-րդ պլենումի՝ նացիոնալիզմի դեմ պայքարի ծրագրային որոշման, հայ բոլոր հասարակական-քաղաքական կազմակերպություններն ու կուսակցությունները, հասարակական-քաղաքական միտքը եւ ընդհանրապես ամբողջ հայ ժողովուրդը ներծծված էր նացիոնալիզմով: Նացիոնալիզմը թափանցել էր անգամ Կոմկուսի եւ նրա ղեկավարության շարքերը, որն ընկել էր աջ-նացիոնալիստական թեքման մեջ եւ ազատվել աշխատանքից:

ՍՏԵՂԾՎԱԾ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ, ՓԱՍՏՈՐԵՆ, ԽԱՉԱԿՐԱՑ ԱՐՇԱՎԱՆՔ ՍԿՍՎԵՑ ՆԱՑԻՈՆԱԼԻԶՄԻ ԴԵՄ. ԱՅԴ ՆՇԱՆԱԿՈՒՄ ԷՐ՝ ՊԱՏԵՐԱԶՄ ՀԱՅՏԱՐԱՐԵԼ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻՆ:

Պլենումը կոնկրետ խնդիր դրեց. մեծ աշխատանքներ ծավալել ինտելիգենցիայի եւ բանվորագյուղացիական շրջաններում, պետական ապարատում՝ նացիոնալիստական տարրերին բացահայտելու ուղղությամբ:

Համաձայն ընդունված որոշման. Հայկոմկուսի ուշադրության կենտրոնում պետք է գտնվեին՝ դպրոցը, բուհը, գեղարվեստական գրականությունը, հասարակական կազմակերպությունները, մամուլը, ռադիոն, թատրոնը, երգը եւ երաժշտությունը, ակումբները, գեղարվեստական պլակատը եւ այլն:

Լավ հասկանալով, որ բոլշեւիկյան սոցիալիզմի եւ նացիոնալիզմի՝ ազգային գաղափարախոսության պայքարում վճռորոշ դերը պատկանում է երիտասարդությանը, Հայկոմկուսը հատուկ ուշադրություն է նվիրում երկրի կրթական համակարգին, երիտասարդության դասակարգային դաստիարակության հիմնախնդրին: Այդ պատճառով էլ պլենումի որոշման մեջ տեղ են գտնում հետեւյալ առաջադրանքները.

«Ուժեղացնել ուշադրությունը դեպի ուսուցչության շրջանում կատարվող աշխատանքը, թե՛ նրանց վերապատրաստման եւ՛ թե կուսակցական միջնախավի ուժեղացման գծով: Մի քանի դասագրքեր դեռ թափանցված են շովինիստական-քաղքենիական իդեոլոգիայով. անհրաժեշտ է ամենալուրջ կերպով հետամուտ լինել մեր դպրոցական ձեռ-

նարկների հարազատությանը: Պետք է լուրջ ուշադրություն դարձնել դպրոցական եւ հասարակական գրադարանները մաքրելու եւ լրացնելու գործի վրա: Մինչեւ այժմ գրքերի մեծ մասն իդեոլոգիական տեսակետից դաստիարակության համար անընդունելի նյութ են հանդիսանում»: Պլենումի որոշման մեջ շատ խիստ, անզիջում մոտեցում է ցուցաբերվում պատմության եւ գրականության հիմնախնդիրներին, որոնց մասին արձանագրվում է հետեւյալը.

«Անպայման պետք է կազմակերպել մեր զարգացման պատմական պրոբլեմները մշակելու աշխատանքը: Անդրկովկասի, Հայաստանի պատմությունը, Անդրկովկասի հեղափոխական բանվորական շարժման պատմությունը եւ այլն, համարյա չեն ենթարկվել մարքսիստական հետազոտության, այնինչ, այդ բոլոր պրոբլեմները, որոնք ժամանակին լուսաբանվել են ազգային-ռոմանտիկական, տերտերական-իդեալիստական, բուրժուական հայեցակետերով, դեռեւս միակ ձեռնարկն են հանդիսանում նոր սերունդների համար:

Ամբողջ, այսպես կոչված «կլասիկ» գրականությունը (Ռաֆֆի, Պատկանյան, Աիարոնյան եւ հայ ուռա-պատրիոտիզմի ու ազգային ռոմանտիզմի մյուս երգիչները) դեռ սպասում են իրենց քննադատներին:

Այս եւ մյուս բոլոր բնագավառներում գիտության տեսական ամրությունները նվաճելու համար մեր մղած պայքարում մենք Հայաստանում չափազանց ետ ենք մնացել: Մեր շինարարության վերակառուցման շրջանը եւ նրան ուղեկցող դասակարգային թշնամի ուժերի ակտիվության ուժեղացումը հրամայաբար պահանջում են մեզանից՝ ուժեղացնել տեսական աշխատանքը: Նույնիսկ ամենավերացական տեսության հարցերը տվյալ շրջանում վերին աստիճանի գործնական բնույթ են ստանում, հարցեր, որոնց չլուծած՝ մենք չենք կարող հաջող կերպով առաջ ընթանալ»:

Եվ այսպես, 1928 թվականին Հայկոմկուսը ընդունում է նացիոնալիզմի դեմ պայքարի ծրագրային, ռազմավարական բնույթ ունեցող փաստաթուղթ, որը պետք է ճանապարհ հարթեր 1937 թվականի զանգվածային ոճրագործությունների համար: Այդ փաստաթղթում հայ բոլշեւիկները տեսականորեն «հիմնավորում» էին ինչպես նացիոնալիզմի, այնպես էլ «հակապրոլետարական բոլոր իդեոլոգիաների դեմ անհաշտ կռիվ մղելու» անհրաժեշտությունը:

Այդ որոշման համաձայն, շրջանառությունից հանվում են գործող դասագրքերը: Դպրոցական, բուհական եւ հասարակական գրադարանները «մաքրվում» են գաղափարական առումով անընդունելի գրքերից: Արգելվում է Հայոց դասական- -հայրենասիրական գրականությունը եւ ազգային ակունքներ ունեցող պատմագիտությունը:

Անողոք պատերազմ է հայտարարվում Ազգային գաղափարախո-

սությանը: Այդ պատերազմի բարձրակետը եղավ 1937 թվականը: Ինչպես ամբողջ Խորհրդային Միությունը, այնպես էլ Խորհրդային Հայաստանը թեւակոխել էին զանգվածային ձերբակալությունների, աքսորի եւ գնդակահարությունների շրջանը:

Բոլշեւիկյան կուսակցությունն իր հիմնական թշնամու՝ ազգային գաղափարախոսության եւ նացիոնալիզմի ոչնչացման համար մղվող պայքարում այլընտրանք չէր ընդունում:

Բոլշեւիկներն այս քաղաքականությունը թուլացրեցին Հայրենական պատերազմի տարիներին՝ ելնելով խորհրդային ժողովուրդների հայրենասիրությունը գերմանական ֆաշիզմի դեմ օգտագործելու անհրաժեշտությունից: Սակայն, այդ քաղաքականությունը պատերազմից հետո նորից օրակարգ մտավ եւ շարունակվեց մինչեւ Ստալինի մահը ու ՍՄԿԿ 20-րդ համագումարը: Որոշ ընդմիջումից հետո Կոմկուսն ավելի մեղմ ձեւերով նորից վերսկսեց գաղափարական պայքարը, որին փոխարինելու եկավ Գորբաչովի «վերակառուցման» քաղաքականությունը:

***

Բոլշեւիկյան կուսակցության՝ նման հակաազգային քարոզչության պայմաններում խորհրդային իշխանության տարիներին Հայաստանում տեղի ունեցան լուրջ գաղափարական, քաղաքական տեղաշարժեր, աստիճանաբար ձեւավորվեցին նոր ազգային ուժեր:

ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ԱՌՈՒՄՈՎ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ՄԱՍՆԱՏՎԱԾ ԷՐ ԵՐԵՔ ՀԱՏՎԱԾԻ:

ԱՌԱՋԻՆ ՀԱՏՎԱԾԸ խորապես հավատացած էր մարքս-լենինյան գաղափարների ճշտության մեջ: Այդ հատվածը հայ ժողովրդի փրկությունը եւ լուսավոր ապագան տեսնում էր խորհրդային իշխանության մեջ: Այս հատվածում առաջատար տեղ էին գրավում ռոմանտիկ բոլշեւիկները, որոնց համար ազգային հարցի լուծումը սահմանափակվում էր լենինյան-ստալինյան դոգմաներով:

Այս հատվածը ղեկավարվում էր կոմունիստական կուսակցության «Ինտերնացիոնալ» հիմնի հետեւյալ կարգախոսով.

«Այս հին աշխարհը կփորենք մենք
Մինչեւ հիմքերը եւ հետո՝
Մեր նոր աշխարհը կշինենք մենք,
Ուր ոչ ստրուկ կա, ոչ դժգոհ»:

Քննադատելով բոլշեւիկյան սոցիալիզմը եւ բոլշեւիկներին, նրանց ստեղծած վարչակարգը համարելով ֆաշիզմի ռուսական տարատեսակ, մենք, այնուամենայնիվ, ցանկանում ենք հայ կոմունիստների գործունեության կապակցությամբ տալ որոշ պարզաբանումներ: Մերժելով բոլշեւիկյան սոցիալիզմը եւ նրա կրողին՝ կոմունիստական կուսակցությանը, որի մասն է կազմել Հայկոմկուսը, չի կարելի, սակայն, խաչ քաշել հայ բոլոր կոմունիստների գործունեության վրա: Հայ կոմունիստների գործունեությանը չի կարելի միանշանակ գնահատական տալ: ՀԱՐՑՆ ԱՅՆ է, ՈՐ ՀԱՅ ԿՈՄՈՒՆԻՍՏՆԵՐԸ, ԸՍՏ ԷՈՒԹՅԱՆ, ԲԱԺԱՆՎՈՒՄ ԷԻՆ ԵՐԵՔ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՄԲԻ:

ԱՌԱՋԻՆ ԽՈՒՄԲԸ ազնվորեն հավատում էր մարքս-լենինյան գաղափարախոսությանը, բոլշեւիկյան ինտերնացիոնալիզմի եւ պրոլետարական դիկտատուրայի գաղափարներին ու մերժում էր ազգային գաղափարախոսությունը: Այդ կոմունիստներն անհայրենիք ռոմանտիկներ էին, որոնք հավատում էին համաշխարհային հեղափոխությանը, «պրոլետարները հայրենիք չունեն» կարգախոսին, ազատության, հավասարության եւ եղբայրության հիմքերի վրա նոր հասարակություն ստեղծելու խոստումներին: Կոմունիստների այս խումբը, հանուն անհայրենիք վառ ապագայի, մեծ ավերածություններ էր կատարում հայոց ազգային կյանքում, փորձելով ոչնչացնել ազգային բոլոր գործոնները՝ դրանք որակելով ազգայնական:

ԵՐԿՐՈՐԴ ԽՈՒՄԲԸ բաղկացած էր անգաղափար, կարիերիստ մարդկանցից, որոնք ոչ մի սրբություն չունեին եւ անձնական շահի ու կարիերայի համար վաճառում էին ամեն ինչ, որի համար կարող էին վարձատրվել: Բնականաբար, այս գաղափարազուրկ խումբը եւս մեծ չարիքներ է պատճառել հայ ժողովրդին:

ԵՐՐՈՐԴ ԽՈՒՄԲԸ: Սակայն, ազգային-քաղաքական ոչ բոլոր գործիչներին է կարելի բնութագրել միայն սեւ եւ սպիտակ գույներով, բոլշեւիկներին հատուկ գաղափարական պիտակներով եւ դոգմաներով: Կոմունիստական կուսակցության շարքերում կային շատ գործիչներ, որոնք առանձնահատուկ տեղ են գրավում հայ ժողովրդի պատմության մեջ:

Սոցիալիզմը մի գաղափարախոսություն է, որի հիմքում ընկած են արդարության, հավասարության եւ եղբայրության հիմնադրույթները, որոնց մասին դարեր շարունակ երազել է մարդկությունը: Այդ հիմնադրույթները տեղ են գտել «Աստվածաշնչում» :

Ահա թե ինչու կոմունիստական կուսակցության շարքերն են ընդունվել հայ ազգային մտածելակերպ ու դիմագիծ ունեցող շատ գործիչներ, որոնք կոմունիզմի գաղափարախոսության մեջ տեսնում էին նաեւ հայ ժողովրդի իղձերի իրագործումը: Նրանք կարծում էին, որ կոմունիզմի գեղեցիկ գաղափարներն ազատություն կբերեն հայ ժողովրդին: Այդ գործիչներն օժտված էին ազգային ուժեղ բնավորությամբ, հոգեկան կերտվածքով, մեծ անհատականությամբ եւ գործադրեցին բոլոր ջան-

քերը՝ հայ ժողովրդի հիմնախնդիրները լուծելու ուղղությամբ: Նրանց մի մասը հետագայում հասկացավ բոլշևիկյան հասարակարգի հակաազգային էությունը եւ մեծ հուսախաբություն ապրեց: Հեղափոխական շարժումներին մասնակցած հայ ազգային կոմունիստների մեծ մասը դարձավ անհատի պաշտամունքի զոհ:

Այս խմբի առկայությունն ընդունում է անգամ կոմունիստական կուսակցության նկատմամբ անսահման ատելություն ունեցող Դաշնակցության հայտնի գործիչ Ռուբեն Դարբինյանը, որն առանձնացնում է հետեւյալ գործիչներին՝ Ստ.Շահումյան, Ալ.Մյասնիկյան, Լուկաշին (Սրապիոնյան), Կարախան, Սահակ Տեր-Գաբրիելյան[1]: Բերված ցանկը կարելի է շատ մեծացնել, սակայն, մենք տվյալ դեպքում նպատակ ունենք բնութագրելու երեւույթը եւ ոչ թե առանձին գործիչների, որը սույն աշխատության խնդիրների մեջ չի մտնում:

Սակայն, ելնելով պատմության հրամայականից, մենք չենք կարող չանդրադառնալ Ստեփան Շահումյանի գործունեության բնութագրմանը:

Ստեփան Շահումյանը պատկանում է Հայոց Մեծերի թվին: Նա Մեծ հայ էր. Մեծ հեղափոխական:

Ղարաբաղյան շարժման տարիներին, հատկապես ԽՍՀՄ փլուզումից հետո, Ստ. Շահումյանը հայտնվեց երկու կրակի միջեւ: Այդ տարիները բարդ էին ու ոչ միանշանակ: Ազատվելով խորհրդային կայսրության աքցաններից, յուրաքանչյուր ժողովուրդ, ելնելով իր ազգային գաղափարախոսության հիմնադրույթներից, վերաքննում էր անցած պատմությունը, սրբագրում սխալները, առաջադրում օրակարգի առաջնահերթ խնդիրները: Այս շրջանում կարեւորագույն նշանակություն է ստանում ազգային դաստիարակության հիմնախնդիրը: Կործանվում էին խորհրդային աստվածները, տապալվում արձանները, վեր էին խոյանում ժողովրդի պատմական հիշողության մեջ ջերմորեն պահպանված ազգային գործիչների հուշարձանները, ազգային շարժման ալիքներով հրապարակ էին գալիս նոր գործիչներ, որոնք վրեժով ու ատելությամբ լեցուն՝ հինը ջարդելու եւ պատմության աղբարկղ նետելու կոչեր էին անում: Նման պատմական իրավիճակում Ադրբեջանում առաջին ծրագրավորված հարվածներն ուղղվում էին Ստ. Շահումյանի դեմ: Ամենուրեք հանվում են նրա արձանները, վերանվանվում նրա անունը կրող բնակավայրերը, փողոցները եւ հիմնարկ-ձեռնարկները: Մամուլում արշավանք է սկսվում Շահումյանի դեմ, որպես հայ նացիոնալիստի: Այդ թեզը նոր չէ, այն ժամանակին առաջին անգամ առաջ է քաշել Ն.Նասրիմանովը՝ Լենինին ուղղված նամակում: Ադրբեջանի մուսավաթական կա-

1. Ռուբեն Դարբինյան, Երկեր, Ա հատոր, Բեյրութ, էջ 260:

ռավարությունը 1919 եւ 1920 թվականներին 1918թ. մարտի 31-ը նշել է որպես համազգային սգի օր: Իսկ Հեյդար Ալիեւը 1998թ. ապրիլի 26-ին հրամանագիր է ստորագրել՝ մարտի 31-ը ադրբեջանցիների ցեղասպանության օր հայտարարելու մասին: Հարց է առաջանում. ինչո՞վ է պայմանավորված ադրբեջանցիների համազգային ատելությունը Ստ. Շահումյանի նկատմամբ:

Ստ. Շահումյանը կոմունիստական կուսակցության ականավոր գործիչ էր, բայց միաժամանակ ուներ ազգային բնավորություն եւ դիմագիծ ու բոլոր հիմնախնդիրները լուծելիս ելնում էր հայոց ազգային գաղափարախոսության պահանջներից: Հայ ժողովրդի եւ հայոց հայրենիքի գաղափարները նրա մոտ ելակետային էին:

Կանգ առնենք մի քանի կարեւոր փաստերի վրա: 1917-1918թթ. Ստ. Շահումյանը հետեւողականորեն պայքարում էր Հայաստանի անկախ պետության ստեղծման համար: Այս շրջանում Ստ. Շահումյանը եւ Հ.Յ. Դաշնակցությունը Հայոց պետականության վերականգնման հարցում գործում էին միասնական ծրագրով, համաձայնեցված:

1917թ. հուլիսի 26-ին Ռոստոմը Սոցիալիստական կուսակցությունների միջազգային կոնֆերանսի կազմակերպիչ մարմնին Ստոկհոլմում ներկայացնում է Հայկական հարցի լուծման՝ դաշնակցության տարբերակը, որը կայանում էր հետեւյալում.

«Ռուսահայաստանը Վրաստանի եւ Թաթարստանի (Անդրկովկասի) հետ պետք է լինի ինքնավար՝ դաշնակցային ու հանրապետական Ռուսաստանի ծոցում... Թուրքահայաստանը պետք է ազատագրվի թուրքական տիրապետությունից: Ազատ Հայաստանը բովանդակելու է Հայկական 6 վիլայեթները եւ Կիլիկիան»[1]:

Ստ. Շահումյանը պայքարում էր այդ նույն խնդիրներն իրականացնելու համար: 1917թ. հոկտեմբերին ՌՍԴԲ/բ/Կ Կովկասյան երկրային համագումարում նա առաջ քաշեց հետեւյալ կարգախոսը. «Թող Ռուսաստանը լինի ազատ հանրապետությունների միություն»[2], այսինքն՝ ֆեդերացիա, որը «Հավասար միավորների միություն է»[3]: Ցավոք, Շահումյանի առաջարկը մերժվում է: Բայց նրա ելույթի ազդեցության տակ համագումարին ներկայացված բանաձեւի նախագծում կատարվում է փոփոխություն: Ընդունվում է հետեւյալ տեսակետը. «Կովկասի ավտոնոմիա՝ սեյմի ստեղծմամբ... տեղական լայն ինքնավարություն՝ Կովկասի ներսում վարչատնտեսական նոր միավորների սահմանմամբ»[4]:

1. Ս. Վրացյան. Հայաստանի Հանրապետություն. Փարիզ. 1928. էջ 37:
2. Ա.Ի.Միկոյան. Պայքարի ուղիով. Երեւան, 1972. էջ 150:
3. Սպ.Շահումյան, ԵԼԺ. հատ. 3, էջ 269:
4. Борьба за победу советской власти в Грузии (документы и материалы 1917-1921 гг.), Тбилиси, 1958, стр. 106.

Այդ որոշման համաձայն, Շահումյանն առաջարկում է Անդրկովկասը բաժանել երեք մարզերի «1/Արեւմտյան Անդրկովկաս- Քութայիսի, Բաթումի նահանգները եւ Թիֆլիսի նահանգի մի մասը. 2/ Արեւելյան Անդրկովկաս - Երեւանի, Կարսի, Ելիզավետպոլի նահանգները եւ Թիֆլիսի նահանգի մի մասը. 3/ Բաքվի, Ելիզավետպոլի մի մասը եւ Դաղստանի մարզը»[1]:

Արեւմտյան Հայաստանի ճակատագրի մասին Շահումյանն արեց հետեւյալ առաջարկը.« Ազգային հարցի լուծման ժամանակ, անխուսափելիորեն, դրվում է նաեւ Թուրքահայաստանի հարցը: Այդ հարցի լուծումը մենք պետք է թողնենք հենց այդ մարզի բնակչությանը, որն ինքը պետք է որոշի իր բախտը: Ռուսաստանին միանալու՝ նրանց որոշման դեպքում, նրանք պետք է միացվեն հայերին»[2]:

Շահումյանի ջանքերով, 1917թ. դեկտեմբերի 29-ին, Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը դեկրետ է ընդունում «Թուրքահայաստանի մասին», որում ասվում է. «Ժողովրդական կոմիսարների սովետը հայտարարում է հայ ժողովրդին, որ Ռուսաստանի բանվորա-գյուղացիական կառավարությունը պաշտպանում է Ռուսաստանի կողմից օկուպացված «Թուրքահայաստանի» հայերի ինքնորոշման իրավունքը, ընդհուպ մինչեւ լիակատար անկախություն»[3]:

Ինչպես տեսնում ենք, Շահումյանի ազգային ծրագրերը լիովին բխում էին հայ ժողովրդի շահերից եւ շատ քիչ են տարբերվում դաշնակցության մոտեցումներից: Թերեւս դա է պատճառը, որ դաշնակցությունն այդ շրջանում համագործակցում էր Շահումյանի հետ: 1918թ. սկզբներին, երբ Թուրքիան հարձակվել էր Հայաստանի վրա, Շահումյանը հանդես է գալիս հակաթուրքական միասնական ճակատ ստեղծելու կոչով եւ համաձայնագիր է կնքում դաշնակցության հետ՝ հայոց աշխարհը միացյալ ուժերով պաշտպանելու մասին[4]:

1918թ. մարտի 31-ին մուսավաթը Բաքվում դիմում է զինված խռովության՝ իշխանությունը վերցնելու եւ իր կողմից Անդրկովկաս հրավիրված թուրքական զորքերի առաջընթացը դյուրացնելու համար: Իշխանությունը վերցնելու դեպքում, Բաքվում պետք է կազմակերպվեր հայերի զանգվածային կոտորած: «Եթե նրանք հաղթանակեին Բաքվում,- գրում է Շահումյանը,- քաղաքը կհայտարարվեր Ադրբեջանի մայրաքաղաք, բոլոր ոչ մուսուլմանական տարրերը զինաթափ կարվեին եւ կկոտորվեին: Մուսուլմանական հակահեղափոխական տարրերը

1. Ստ.Շահումյան, ԵԼԺ. հատ. 3. էջ 270:
2. Նույն տեղում:
3. Տե՛ս Լ.Ա.Խուրշուդյան, Սովետական Ռուսաստանը եւ Հայկական հարցը, Երեւան, 1977, էջ 23, 40-41:
4. Նույն տեղում, էջ 58-59:

դրության տերը կդառնային ամբողջ Անդրկովկասում[1]:

Բաքվի խորհրդի զինված ուժերը փայլուն հաղթանակ տարան: Մուսավաթական ուժերը ջախջախվեցին: Այդ կռիվներին մասնակցեցին նաեւ դաշնակցության զինված ուժերը: Շահումյանն այդ մասին գրում է.

«ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎՍ ՈՒՆԵՐ ՄՈՏ 3-4 ՀԱԶԱՐ ԱԶԳԱՅԻՆ ԶՈՐԱՄԱՍԵՐ, ՈՐՈՆՔ ՄԵՐ ՏՐԱՄԱԴՐՈՒԹՅԱՆ ՏԱԿ ԷԻՆ: ՎԵՐՋԻՆՆԵՐԻՍ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՍԱՄԲ ԱԶԳԱՅԻՆ ԿՈՏՈՐԱԾԻ ԲՆՈՒՅԹ ՏՎԵՑ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ, ԲԱՅՑ ԴՐԱՆԻՑ ԽՈՒՍԱՓԵԼՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՉԿԱՐ: ՄԵՆՔ ԳԻՏԱԿՑԱԲԱՐ ՀԱՄԱՁԱՅՆԵՑԻՆՔ ԴՐԱՆ»[2]:

Այդ եռօրյա մարտերին (մարտի 30 - ապրիլի 1) մասնակցեցին երկու կողմից ավելի քան 20 հազար մարդ, սպանվածների թիվը կազմում էր ավելի քան 3 հազար հոգի:

Ահա այս իրադարձություններն են օգտագործել ադրբեջանական իշխանությունները՝ մարտի 31-ը ադրբեջանցիների ցեղասպանության օր հայտարարելու համար:

Ականատեսները պատմում են, որ երբ Մուրադը եւ Սեպուհը անցնում են Բաքվի ճակատը՝ թուրքերի դեմ կռվելու համար, Շահումյանը , նրանց ընդունելով, ասել է. «Կը լսեք այս թնդանոթներու որոտը, թշնամին կաշխատի գրավել Պագուն, որ հետո պիտի հարձակվի այն փոքրիկ ժողովրդի վրա, որ քաշված է Երեւանի շուրջը եւ որ շնչահեղձ կտառապի: Պագուն պաշտպանել կը նշանակե Երեւանը պաշտպանել, գնացեք հանգստանալու. երկու օրեն ամեն միջոց կը դնենք ձեր տրամադրության տակ եւ դուք կը կազմեք ձեր կարմիր գունդը»[3]: Ստ.Շահումյանը Բաքվի կոմունայի ժամանակաշրջանում՝ խրախուսելով հայությանը, հայտարարել է. «Պագուի պաշտպանությունը՝ պաշտպանությունն է նաեւ Արարատյան Հայրենիքին »[4]:

Այսպիսով, Ստեփան Շահումյանի քաղաքականության շնորհիվ. ա/ Խորհրդային Ռուսաստանը ճանաչեց Արեւմտյան Հայաստանի անկախության իրավունքը: բ/ Թուրքերը հարկադրված էին զգալի ուժեր կենտրոնացնել Գանձակում: Բաքվի վտանգի դեպքում, այդ ուժերը պետք է մասնակցեին հայերի դեմ մղվող պատերազմին: գ/ Մարտյան կռիվներում հաղթանակ տանելու դեպքում, մուսավաթական ուժերը պետք է շարժվեին դեպի Հայաստան՝ Հայերի համար բացելով պատերազմի երկրորդ ճակատ: դ/ Այդ երկու լրացուցիչ ուժերի մասնակցությունը թուրք-հայկական պատերազմին կարող էր հայերի համար ճակա-

1. Ստ. Շահումյան, ԵԼԺ, հատ. 4. էջ 201:
2. Նույն տեղում, էջ 201-202:
3. Մ.Ավետյան, Հայ ազատագրական հիսնամյա / 1870-1920/ հուշամատյան եւ զոր.Անդրանիկ, Փարիզ . 1954. էջ 210:
4. Նույն տեղում. էջ 243:

տագրական նշանակություն ունենալ: ե/ Հիշյալ հանգամանքները որոշակի նշանակություն ունեցան Մայիսյան հերոսամարտերի հաղթանակի գործում, որը հիմք հանդիսացավ Հայաստանի Անկախ Հանրապետության հռչակման համար: զ/1918թ. մարտին Շահումյանը Բաքվի հայությանը փրկեց ցեղասպանության վտանգից:

Ամփոփենք. ինչպես տեսնում ենք, Ստ. Շահումյանն անվիճելի ներդրում ունի մայիսյան հերոսամարտերի հաղթանակի եւ Հայոց անկախ պետականության հռչակման գործում:

Շարադրված փաստերն անհերքելի են: Ադրբեջանցիներն այդ մասին շատ լավ գիտեն: Ադրբեջանցիների անսահման ատելությունը Շահումյանի նկատմամբ դրանով է բացատրվում: Ադրբեջանում Շահումյանի դեմ սանձազերծված քարոզչական պայքարը կազմում է պանթուրքիզմի դիրքերից Հայերի դեմ առաջ քաշված հակահայկական կոնցեպցիայի բաղկացուցիչ մասը: Ադրբեջանում Շահումյանը չի առանձնացվում հայ ժողովրդից եւ չի դիտվում որպես կոմունիստ:

Սակայն, տարօրինակ կերպով, նույն իրավիճակն էր տիրում նաեւ Հայաստանում: Ինչպես Ղարաբաղյան կոմիտեն, այնպես էլ նրա կողմից ստեղծված ՀՀՇԿ-ն, հրաժարվելով ազգային գաղափարախոսությունից, պատերազմ հայտարարեցին այն ամենին, որն ազգային էր: Հոդվածները Շահումյանի, Մյասնիկյանի եւ այլոց դեմ դարձան սովորական երեւույթ: Հանվում էին, պղծվում կամ ապականվում էին արձանները եւ գերեզմանաքարերը: Հանրահավաքներում, միտինգներում եւ ժողովներում կոչեր էին հնչում արձանները տապալելու պահանջով: Շահումյան դպրոցի մուտքի մոտ տեղադրված Շահումյանի կիսանդրին վար նետվեց եւ անհետացավ: Ես ներկա եմ եղել Ազատության հրապարակում կազմակերպված բազմահազարանոց մի հանրահավաքի, որտեղ, Ղարաբաղ կոմիտեի անդամ Համբարձում Գալստյանը կոչ էր անում՝ Շահումյանի հրապարակից Շահումյանի արձանը հանելու մասին: Արձանը տապալելու մի քանի փորձեր վերջացան անհաջողությամբ: Կարծում եմ, այստեղ դեր է խաղացել ժողովրդի սերը Շահումյանի նկատմամբ: Նույնը պետք է ասել նաեւ Ալ.Մյասնիկյանի արձանի մասին: Իսկ Լենինի եւ Սպանդարյանի արձանները հանվեցին. ժողովուրդը նրանց չէր սիրում:

ՀՀՇԿ ազգային էր: Նա պատերազմ էր հայտարարել ոչ միայն մեռած, այլեւ կենդանի հայ ազգային հայտնի գործիչներին: Այդ հարձակումներից զերծ չմնաց անգամ Հայոց կաթողիկոս ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆԸ:

ՀՀՇԿ հակաազգային քաղաքականությունը շարունակվեց մինչեւ 1998թ. սկզբները, երբ հանրապետության նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը մերժվեց ժողովրդի կողմից եւ դեն նետվեց պատմության բեմահարթակից:

Քաղաքական գործիչների պատմական դերի գնահատության մասին, կարծում եմ.պիտի ղեկավարվել Գարեգին Նժդեհի հետեւյալ մոտեցումով.

«Մեծ մեռելները ամենեն քիչ իրենց եւ իրենց կուսակցությանց կպատկանեն, ամբողջովին՝ իրենց ցեղին եւ պատմության:

Իրենց ընտրած ճանապարհի բերմամբ, նրանք կաշխատեն ու կզոհաբերեն այս կամ այն կուսակցության դրոշի տակ, նահատակվելով՝ նրանք կազգայնանան, կդառնան սրբազան սեփականությունը ողջ ազգի:

Չկան կուսակցական նահատակներ ու հերոսներ, կա ու կմնա ազգային մարտիրոսագրությունը եւ հերոսականը...

Իր ընտիր մեռելների պաշտամունքը չունեցող ժողովուրդը՝ ապերախտ ու բարբարոս, անարժան է անկախ հայրենիքի, որը միշտ էլ նահատակների սրբազան աճյունից է բարձրանում:

Մի ժողովուրդ բարոյապես այնքան է ուժեղ, որքան ջերմ է նրա պաշտամունքը դեպի իր մեծ մեռելները:

Իր նահատակների, իր անմահների դեմ մեղանչող ժողովուրդը մեծապես մեղանչում է իր ապագայի դեմ»[1]:

Գ. Նժդեհի մոտեցումը վերաբերում է բոլոր կուսակցությունների ազգային-քաղաքական գործիչների գործունեության գնահատությանը:

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՏՎԱԾԸ ոչ մի գաղափարախոսություն չէր դավանում, բոլշեւիզմը եւս չէր ընդունում: Այս հատվածը պրագմատիկ մոտեցում ուներ գաղափարախոսական հիմնախնդիրների նկատմամբ: Սրանք, ցանկացած պահին, տարբեր շարժառիթներով, կարող էին շրջվել աջ կամ ձախ՝ լրացնելով այս կամ այն բանակը: Սույն հատվածի համար ՀԱՅՐԵՆԻՔԻ գաղափարը վճռորոշ չէր, նրանք, հարմար պահին, լքում էին հայրենիքը եւ հեռանում օտար երկրներ: Ապազգային մտավորականության հիմքը հանդիսանում էր այս հատվածը, սրանց էին միացել նաեւ նախախորհրդային շրջանի ապազգային ուժերը:

ԵԹԵ ԺՈՂՈՎՐԴԻ ԱՌԱՋԻՆ՝ ԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ ՀԱՏՎԱԾԸ, ՈՐԸ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ ԷՐ ՀԱԿԱԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱԿԸ, ՓՈՔՐԱՔԱՆԱԿ ԷՐ ՈՒ ԹՈՒՅԼ ԵՎ ԻՐ ՀԶՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՊԱՀՈՎՈՒՄ ԷՐ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ-ՊԵՏԱԿԱՆ ԼԾԱԿՆԵՐԻ ՇՆՈՐՀԻՎ, ԱՊԱ ԵՐԿՐՈՐԴԸ, ՈՐԸ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ ԷՐ ԱՊԱԶԳԱՅԻՆ ՈՒԺԵՐԻՆ, ԹՎԱԿԱՆ ԱՌՈՒՄՈՎ ԲԱՎԱԿԱՆԻՆ ՄԵԾԱՔԱՆԱԿ ԷՐ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔՈՒՄ ԽԱՂԱՑԱԾ ԴԵՐԻ ԱՌՈՒՄՈՎ՝ ՈՉ ՆՇԱՆԱԿԱԼԻՑ:

ԵՐՐՈՐԴ ՀԱՏՎԱԾԸ ազգային գաղափարախոսության կրողներն են,

1. Գ. ՆԺԴԵՀ, էջեր իմ օրագրեն, Բաց նամակներ հայ մտավորականության. Որդիների պայքարը հայրերի դեմ, Երեւան, 1998թ, էջ 41-42:

որոնք ծրագրավորված, նպատակամղված, հետեւողականորեն պայքարում էին հակաազգային եւ ապազգային ուժերի դեմ՝ հանուն հայ ժողովրդի եւ հայոց հայրենիքի գոյատեւման, հայոց անկախ պետականության վերականգնման: Ժողովրդի այս հատվածը հայ էթնոսի գոյատեւման հիմքն է, ազգային գաղափարախոսության, հայրենիքի գաղափարի կրողը: Այս հատվածում չափազանց ուժեղ է ազգային բնավորությունը, հոգեկան կերտվածքը. անհատականությունը եւ համարձակությունը: Ժողովրդի ինքնապահպանման բնազդը գործում է հենց այս միջավայրում. այստեղ են ծնունդ առնում ազգային մտավորականությունը, ազգային կուսակցություններն ու կազմակերպությունները, այստեղ են խմորվում ու զարգանում ազատագրական գաղափարները, այստեղ է սկիզբ առնում ու ծավալվում ազգային-ազատագրական պայքարը: Վտանգի ժամին այս հատվածի ներկայացուցիչներն են առաջին հերթին հայտնվում առաջավոր դիրքերում՝ իրենց կյանքը Հայրենիքին զոհաբերելու պատրաստակամությամբ: Ազգային հերոսներ է տալիս հենց այս միջավայրը:

Անցած 10 տարիները հայ ժողովրդի համար դաժան փորձություններով լի մի ժամանակաշրջան էր: Եվ այդ ծանրությունը հիմնականում ընկավ ժողովրդի հենց այս հատվածի ուսերին: Վտանգի ժամին ժողովրդի մյուս խավերը գրեթե անհետանում են, իսկ հաջողությունների ժամանակ անմիջապես հայտնվում՝ բարիքներ կորզելու ակնկալությամբ: Պետք է նկատի ունենալ նաեւ, որ թվարկված հատվածները չինական պարսպով չեն բաժանված իրարից: Առնչված Շարժման հաջողությունների եւ անհաջողությունների հետ՝ ազգային շարժման շարքերը համալրվում կամ նոսրանում էին՝ ժողովրդի մյուս հատվածների ներկայացուցիչների հաշվին: Նման տեղաշարժերը հատուկ են աշխարհի բոլոր ժողովուրդներին:

Ժողովրդի ԵՐՐՈՐԴ հատվածում կարեւորագույն տեղ ու դեր ունի ազգային մտավորականությունը:

Ազգային գաղափարախոսություն կրողը, ազգի եւ Հայրենիքի ազատագրության համար մղվող պայքարի դրոշակակիրը ազգային մտավորականությունն է: Նա իր պատմական առաքելությունն է կատարում, իր խաչն է տանում: Ազգային մտավորականության նպատակը ազգի եւ հայրենիքի գոյատեւումն է, ազգային իղձերի իրականացումը: Այդ ազգային մտավորականությունն էր, որ խորհրդային իշխանության՝ քաղաքական տեռորի ծանր պայմաններում, հետեւողականորեն պայքարում էր ազգային գաղափարների, ազգային գաղափարախոսության հաղթանակի համար:

Այդ ազգային մտավորականությունն էր վառ պահում հայոց պետական անկախության գաղափարը: Ազգային գաղափարախոսության

կրողները ձերբակալվում, աքսորվում եւ գնդակահարվում էին:

Ե՛վ Հայաստանի անկախության գաղափարախոսությունը, ե՛ւ Ղարաբաղյան շարժման գաղափարախոսությունը մշակվել է ազգային մտավորականության կողմից:

Առանց ազգային մտավորականության ոչ Հայաստանի անկախ հանրապետություն կլիներ, ոչ էլ Լեռնային Ղարաբաղի անկախ հանրապետություն:

Հայոց բոլոր ազգային գաղափարախոսները ազգային մտավորականության զավակներն են: Այդ պատճառով էլ հայոց ազգային գաղափարախոսները հայոց ազգային թշնամիների կողմից հռչակվել են «Նացիոնալիզմի գաղափարախոսներ»:

***

Վերը նշվածի հետ միասին Հայաստանում տեղի էր ունենում մի այլ կարեւոր պրոցես եւս, որն արժանի է հատուկ ուսումնասիրության:

Խորհրդային Միության աշխարհահռչակ գիտական կենտրոնները գտնվում էին Մոսկվայում, Լենինգրադում, Նովոսիբիրսկում, Դուբնայում եւ Ռուսաստանի այլ քաղաքներում: Հայ երիտասարդները զանգվածաբար ձգտում էին դեպի այդ գիտական կենտրոնները: Խոսքը հավասարապես վերաբերում է եւ բնագետներին, ե՛ւ հասարակագետներին, ինչ-որ չափով նաեւ հայագետներին՝ հատկապես պատմաբաններին: Նրանք այդ կենտրոններում ստանում էին հիմնավոր գիտելիքներ՝ աշխարհահռչակ գիտնականների ղեկավարությամբ:

Սակայն, ԽՍՀՄ գիտական կենտրոններում ուսումնառության մեկնած հայ երիտասարդների մոտ այնտեղ գտնված ժամանակահատվածում աշխարհայացքային լուրջ փոփոխություններ էին տեղի ունենում: Այդ փոփոխություններն ավելի ուժեղ էին արտահայտվում հատկապես ուսանողների մոտ:

Պետք է ընդգծել նաեւ, որ ռուսական միջավայրի ազդեցությունը հայ երիտասարդների վրա տարբեր ձեւերով էր արտահայտվում:

1. ԽՍՀՄ գիտական կենտրոններ մեկնած հայ երիտասարդների մի ստվար հատվածը մի քանի տարի գտնվելով մեծ գիտության ոլորտներում, հեռանում էր հայոց ազգային գաղափարախոսությունից՝ այն դիտելով որպես նացիոնալիզմի եւ գավառականության դրսեւորում: Չմոռանանք, որ գիտական առումով բարձր մակարդակ ունեցող խորհրդահայ միջնակարգ դպրոցն իր էությամբ ազգային չէր: Հայ երիտասարդը դպրոցն ավարտում էր՝ գրեթե պատկերացում չունենալով ազգային գաղափարախոսության հիմնախնդիրների մասին: Հայկական դպրոցն սկսում է ազգային դառնալ 50-ական թվականների կեսերից:

Հայ երիտասարդների մի մասը, բնականաբար, գաղափարական առումով բաց դաշտ էր եւ անմիջապես ներծծվում էր ոչ միայն մեծ գիտությամբ, այլեւ բոլշեւիկյան ինտերնացիոնալիզմի գաղափարներով:

Հայ երիտասարդների հիշյալ խումբը, ավարտելով ուսումնառությունը ԽՍՀՄ գիտական կենտրոններում, ստանալով գիտական կոչումներ ու աստիճաններ, վերադառնում էր Հայաստան՝ որպես մեծ գիտության, դասական գիտության ներկայացուցիչ եւ, որպես այդպիսին, ղեկավար պաշտոններ էր ստանում կուսակցական, պետական եւ գիտական վերադաս մարմիններում:

Մտավորականության հենց այս խմբին էլ բաժին էր ընկնում ղեկավարելու Հայրենիքում «նացիոնալիզմի եւ գավառականության» դեմ մղվող պայքարը՝ հանուն մեծ գիտության, հանուն ինտերնացիոնալիզմի:

Գրավելով բարձր պաշտոններ, ապազգային մտավորականության ներկայացուցիչները Հայրենիքում ստեղծում էին իրենց գիտական դպրոցները, որոնք, բնականաբար, դառնում էին ապազգային կադրերի ստեղծման կենտրոններ: Այսպիսին էր հայ ապազգային էլիտար մտավորականության ստեղծման հիմնական ուղիներից մեկը: Հենց այս մտավորականությունն էլ իր հերթին հիմք էր դնում ապազգային կադրերի մասսայական արտադրությանը: Հայրենիքում այդ ապազգային մտավորականությունը գիտակցաբար, թե անգիտակցաբար, պայքարում էր ազգային գաղափարախոսության դեմ: Չափազանց դառն իրողություն, որի ականատեսն ենք մենք նաեւ այսօր:

2. Հայ երիտասարդության մի մասն էլ բնակություն էր հաստատում Ռուսաստանում, իր կյանքն ու ճակատագիրը կապելով ռուս ժողովրդի կյանքին ու ճակատագրին: Ապրելով ու ստեղծագործելով Ռուսաստանում, նրանց մեծ մասն իր ժողովրդի ազգային գաղափարախոսությանը նայում էր արհամարհական, ռուսական մեծապետական շովինիզմի դիրքերից: Սա մտավորականության այն խումբն է, որն աստիճանաբար ձուլվում է ռուսների մեջ:

Հենց այս երկու, հատկապես առաջին խմբի ճանաչված ներկայացուցիչներն էին՝ մեծ գիտության եւ ինտերնացիոնալիզմի դրոշի ներքո, քանդում հայոց ազգային գաղափարախոսության հիմքերը:

3. Ռուսաստանի գիտական եւ մշակութային կենտրոններում ուսումնառությունն ստացած հայ մտավորականության մի ստվար մասն էլ ռուսական մեծապետական շովինիզմի հարվածների տակ ավելի էր զգաստանում, ազգային ինքնապահպանման բնազդն այս խմբի մեջ ավելի էր ամրանում, նրանց մոտ ընդվզում էր վիրավորված ազգային արժանապատվությունը:

Մտավորականության այս խմբի ներկայացուցիչները համալրում էին

ազգային մտավորականության շարքերը, միանում ազգային շարժմանը, պայքարում ազգային գաղափարախոսության հաղթանակի համար:

4.ՀԱՅ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԳԱ ԷՎՈԼՅՈՒՑԻԱՆ ԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ

1988 թվականից սկսած Հայաստանի հասարակական-քաղաքական կյանքում տեղի ունեցան արմատական փոփոխություններ: Կյանքի կոչվեցին մեծ թվով ազգային-քաղաքական կուսակցություններ ու կազմակերպություններ: Սփյուռքից Հայաստան եկան ավանդական կուսակցությունները: Հայաստանը դարձավ բազմակուսակցական երկիր:

Հայաստանում ստեղծված բազմակուսակցականության պայմաններում խորհրդահայ մտավորականության շարքերում տեղի ունեցան լուրջ տեղաշարժեր: Կոմկուսի եւ խորհրդային իշխանությունների հարկադրանքից ձերբազատված խորհրդահայ մտավորականությունը հնարավորություն ստացավ նորաստեղծ դեմոկրատիայի պայմաններում ազատորեն դրսեւորելու իր քաղաքական եւ ազգային տեսակետները:

Հայ ժողովրդի պատմության այդ փուլում, որը կարելի է բնութագրել որպես ԱՆՑՈՒՄԱՅԻՆ, գործունեությամբ առանձնանում է խորհրդահայ մտավորականների մի ստվար խավ, որի գաղափարախոսական ակունքները կարիք ունեն հատուկ ուսումնասիրության:

Խորհրդային տարիներին Հայաստանում ձեւավորվել էր մտավորականների մի սերունդ, մի բավականին ստվար խավ, որի քաղաքական էությունը կայանում էր հետեւյալում. կանգնած մնալով խորհրդային իշխանության դիրքերում, չմերժելով Սիստեմը, մնալով խորհրդային կայսրության կազմում՝ համոզելու, քննադատելու միջոցով Մոսկվային ստիպել լուծելու հայ ժողովրդի ազգային չլուծված հիմնախնդիրները: Պատմության կողմից մերժված այդ պարզունակ եւ միամիտ քաղաքականությունը դրսեւորվեց Ստալինի մահից հետո եւ շարունակվեց մինչեւ Խորհրդային Միության փլուզումը:

Հիշյալ մտավորականները ժողովրդի կողմից ընկալվում էին որպես ազգային առաջնորդներ, իսկ իշխանությունների կողմից էլ երբեմն ենթարկվելով քննադատության, այնուամենայնիվ, արժանանում էին շքանշանների, կոչումների, պետական մրցանակների եւ բազմաթիվ այլատիպ շնորհների, որովհետեւ նրանք գործում էին Սիստեմի շրջանակներում: Այդ մտավորականները քննադատելով խորհրդային իշխանության քաղաքականության առանձին հիմնախնդիրներ, այնուամենայնիվ, շրջանցում էին Սիստեմի արատավորության հարցը, չբացա-

հայտելով այն կարեւոր հանգամանքը, որ ազգային կյանքում առկա անբուժելի խոցերն արդյունք են խորհրդային վարչակարգի, բոլշեւիկյան գաղափարախոսության:

Չնայած դրան, հանուն ճշմարտության, անհրաժեշտ է ընդգծել, որ մտավորականության այդ թեւի ներկայացուցիչներն իրենց գործունեությամբ մեծ թափ տվեցին այն մեծ պայքարին, որն ի վերջո հասցրեց Հայաստանի անկախ Հանրապետության հռչակմանը, Լեռնային Ղարաբաղի ազատագրմանը, Լեռնային Ղարաբաղի անկախ հանրապետության հռչակմանը: Այդ մտավորականները շատ մեծ գործ կատարեցին խորհրդային իշխանության ծանր պայմաններում՝ Հայկական հարցի, Հայոց ցեղասպանության հիմնախնդիրները բարձրացնելու, հայ ժողովրդին ազգային-ազատագրական պայքարի գաղափարների շուրջը համախմբելու համար:

Հետագա արագ զարգացող ազգային-քաղաքական իրադարձությունները՝ խրուշչովյան քաղաքական Չնհալը, ԽՄԿԿ 20-րդ համագումարը, պայքարն անհատի պաշտամունքի դեմ, գորբաչովյան Վերակառուցման քաղաքականությունը, ի վերջո, հանգեցրին խորհրդահայ մտավորականության բաժանմանը երկու՝ արմատապես տարբեր գաղափարական խմբերի:

Արդեն անհատի պաշտամունքի դեմ մղվող պայքարն իր մեջ պարունակում էր այլախոհության տարրեր, որը զարգանալով, պետք է հասցներ Սիստեմի մերժմանը:՝ Այդ պատճառով էլ Կոմկուսը, զգալով սպառնացող վտանգը, շուտով անցավ խստությունների եւ թույլ չտվեց, որպեսզի սկսված շարժումը դուրս գա ծրագրած շրջանակներից:

Սակայն, այն, ինչ հաջողվեց անել Չնհալի ժամանակ, չհաջողվեց Վերակառուցման տարիներին: Վերակառուցման տարիներին, փաստորեն, երկրի դեմոկրատացման համար մղվող պայքարող ուժերը բաժանվում էին երկու թեւերի: Առաջին թեւը պայքարում էր երկիրը դեմոկրատացնելու, Սիստեմը պահպանելու համար: Երկրորդ թեւը բաղկացած էր այլախոհներից, որոնք պայքարում էին Սիստեմը կործանելու համար:

Մեծ Եղեռնի 50-ամյակն այդ առումով կարեւորագույն տեղ է գրավում հայ հասարակական-քաղաքական մտքի, ազատագրական պայքարի պատմության մեջ:

Երկրորդ թեւի ներկայացուցիչները Մեծ Եղեռնի 50-ամյակի օրերին հանդես եկան «Հողերը, հողերը» կարգախոսով եւ անկախության գաղափարը դարձրին մարտավարական ծրագիր: Այդ թեւի արմատական մասն անցավ ընդհատակ: Կյանքի կոչվեցին ազատագրական կուսակցություններ եւ կազմակերպություններ: Այդ թեւը լավ էր հասկանում, թե Խորհրդային Ռուսաստանը ինչպիսի կործանարար դեր է կատարել հայ

ժողովրդի պատմական ճակատագրում՝ հայ պետականության կործանման եւ հայկական տարածքների կորստի իմաստով: Միաժամանակ հստակորեն ընդգծվում էր այն իրողությունը, որ ցեղասպանության ճանաչման եւ Հայկական հարցի լուծման համար մղվող պայքարը մի միասնական պրոցես է: Հայաստանում սկսվեցին ձերբակալություններ եւ քաղաքական դատավարություններ, խստացավ գրաքննությունը:

Մտավորականության առաջին թեւը մասնակցեց Եղեռնի 50-ամյակի ԲՈԼՈՐ ԼԵԳԱԼ միջոցառումներին, շարունակեց ավանդական քաղաքականությունը, հավատարիմ մնաց Սիստեմին:

Այնուամենայնիվ, 1988-1991 թվականներին խորհրդահայ մտավորականությունը կանգնեց իր դիրքերը վերջնականապես ճշտելու անհրաժեշտության առաջ: Օրակարգ էր մտել Անկախության հարցը:

Խորհրդահայ մտավորականության մի մասը հրապարակայնորեն հրաժարվեց անցյալի գաղափարախոսությունից, բոլշեւիկյան Սիստեմից եւ անմնացորդ նվիրվեց անկախության համար մղվող պայքարին:

Սակայն, խորհրդահայ մտավորականության մի ստվար խավ, առավելապես էլիտար մտավորականներ, մեծ մասամբ անկուսակցական դրոշով, երբեմն էլ տարբեր կուսակցությունների շարքերում, մնացին Սիստեմի պաշտպանության, ԽՍՀՄ կամ Ռուսաստանի կազմում լինելու դիրքերում, որն ստացավ «կարոտախտ» անվանումը:

Կարոտախտը միանշանակ երեւույթ չէ, նրա արտահայտության ձեւերը բազմազան են եւ բազմաձալք: Դրա արտահայտությունն սկսվում է խորհրդային ժամանակների էժան երշիկի եւ շաքարի գովերգությունից եւ տրամաբանորեն ավարտվում է Սիստեմի պաշտպանությամբ:

Կարոտախտի քարոզչությունը կատարվում է չափազանց նուրբ եւ ճկուն ձեւերով: Անկախության կորուստը կարոտախտի քարոզիչներն առաջին պլան չեն բերում: Ընդհակառակը, նրանք փորձում են ապացուցել, որ Սիստեմի շրջանակներում ազգային փոքրամասնությունները եւ մասնավորապես հայերը անկախ ազգային պետականություն ունեցել են:

ԿԱՐՈՏԱԽՏԻ ԿՐՈՂՆԵՐԸ ԲՆՈՒԹԱԳՐՎՈՒՄ ԵՆ ՈՐՊԵՍ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ: ԵՐԿՎՈՒԹՅՈՒՆՆ ԱՅԴ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԻԾՆ Է, ՈՐՆ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ՇՐՋԱՆԻ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆ Է: ԿԱՐՈՏԱԽՏԸ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԻԴԵԱԼՆԵՐԸ ՉԵՆ ՀԱՄԱՏԵՂՎՈՒՄ:

Ազգերի ձուլումը, Ռուսաստանի ժողովուրդներից մարդկային մի նոր հանրության ստեղծումը ռազմավարական ծրագիր հռչակած բոլշեւիկյան գաղութային կայսրության պետական մեքենայի տեղական մարմինը՝ Խորհրդային Հայաստանը, անցումային մտավորականության կողմից բնութագրվում է որպես անկախ ազգային պետականություն՝ Հայաստանի Երկրորդ Հանրապետություն, իսկ հայ ժողովրդի ձուլման

պրոցեսը՝ ռուսացումը, որպես ռուս մեծ ժողովրդին եւ համաշխարհային մշակույթին հաղորդակցվելու միջոց:

Համաձայն անցումային մտավորականության գրավոր եւ բանավոր խոսքի, Խորհրդային Միությունը եղել է ոչ թե բռնապետական-գաղութային կայսրություն, այլ՝ ժողովուրդների բարեկամության բեմահարթակ: Այդ երկիրը ներկայացվում է առանց պրոլետարիատի դիկտատուրայի, Գուլագների, միլիոնավոր մարդկանց գնդակահարությունների, բանտարկությունների, աքսորի եւ կամայականությունների: Այսօրվա դժվարությունների ֆոնի վրա փորձում են շրջանցել եւ մոռացության տալ ազգային արժեքների դեմ մղված խաչակրաց արշավանքը, մոլեգնող գրաքննությունը, բոլոր բարոյական նորմերի ոտնակոխ անելը, մատնությունն ու դավաճանությունը, որի խորհրդանիշը դարձել էր անգամ դպրոցական դասագրքերում տեղ գտած Պավլիկ Մորոզովը:

Խորհրդահայ մտավորականությունը խորհրդային իշխանության տարիներին ակտիվորեն մասնակցել է ազգայնականության դեմ մղվող պայքարին: Այդ պայքարում տարբերություն չի դրվել ազգայնամոլության եւ ազգայնականության միջեւ, որը պաշտպանական բնույթ ունի եւ ազգի ինքնապահպանման բնազդն է: Սակայն, տարօրինակն այն է, որ իրեն ազգային համարող անցումային մտավորականությունը դեռ այսօր էլ շարունակում է նացիոնալիզմը համարել թշնամական գաղափարախոսություն: Դա հատկապես վերաբերում է գիտական աշխատողների այն սերնդին, որը դժբախտություն է ունեցել դաստիարակվելու Լենինի-Ստալինի աշխատություններով, բոլշեւիկյան գաղափարախոսության սկզբունքով:

Ո՞րն է անցումային մտավորականության՝ նշված ֆենոմենի գաղտնիքը: Մի՞թե Հայրենիքի անկախությունը, պետական անկախությունը ազգային մտավորականության բարձրագույն իդեալը չէ: Ինչո՞վ է բացատրվում անցումային մտավորականության ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ԵՐԿՎՈՒԹՅՈՒՆԸ:

Խորհրդային պայմաններում ձեւավորված անցումային մտավորականությունը հիանալի գիտի, թե ինչպիսին է եղել ազգային փոքրամասնությունների, մասնավորապես, հայ ժողովրդի վիճակը Խորհրդային Միությունում,որտեղ նրանք զրկված են եղել իրական անկախ պետականությունից եւ գտնվել են զսպաշապիկի մեջ:

Եթե այս տարրական ճշմարտությունները տասնամյակներ շարունակ մեզ են մատուցվել Արեւմուտքի գիտնականների կողմից, ապա այսօր տեղ են գտել անգամ Ռուսաստանի Դաշնության բուհական դասագրքերում:

Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո մի շարք ժողովուրդներ

դուրս եկան ցարական Ռուսաստանի կազմից եւ բռնեցին պետական անկախության ուղին: Ավելի ուշ՝ Խորհրդային Ռուսաստանը՝ ամրապնդելով իր դիրքերը, ձեռնամուխ եղավ ցարական Ռուսաստանի տարածքային ամբողջականության վերականգնմանը: 1920-1921թթ. Խորհրդային Ռուսաստանը զինված ուժով նվաճեց Անդրկովկասը եւ ոչնչացրեց երկրամասի երեք ժողովուրդների անկախ ազգային հանրապետությունները:

Ռուսաստանի Դաշնության բուհական ուսումնական ձեռնարկում այդ մասին ասվում է. «Ուկրաինայում եւ Անդրկովկասում, Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո, Ռուսաստանից անջատվելու փորձերը /նկատի է առնվում այդ շրջաններում անկախ ազգային հանրապետությունների ստեղծումը- Լ.Խ./ արագ կերպով խափանվեցին խորհրդային իշխանության կողմից՝ ռազմական ուժի օգնությամբ»[1]:

Ստալինը դեռ 1922թ. ազգային հարցում պաշտպանում էր հետեւյալ տեսակետը. «Եթե մենք հիմա չջանանք կենտրոնի եւ ծայրամասերի փոխհարաբերությունները հարմարեցնել իրական փոխհարաբերություններին, որի համաձայն՝ ծայրամասերը , բոլոր հիմնական հարցերում, անպայման պետք է ենթարկվեն կենտրոնին, այսինքն՝ ԵԹԵ ՄԵՆՔ ՀԵՆՑ ՀԻՄԱ ՉՓՈԽԱՐԻՆԵՆՔ ՁԵՎԱԿԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆԸ՝ ՁԵՎԱԿԱՆ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹՅԱՄԲ /ավտոնոմիայով/, ապա մեկ տարի հետո անհամեմատ դժվար կլինի խորհրդային հանրապետությունների փաստական միասնությունը պահպանել»[2]:

Հետագայում, ասվում է Ռուսաստանի Դաշնության բուհական ձեռնարկում, «Ստալինի մենիշխանության ուժեղացմանը համընթաց, ազգային քաղաքականությունն ավելի ու ավելի հետեւողականորեն էվոլյուցիա է ապրում՝ դեմոկրատական ֆեդերալիզմը դաժան ունիտարիզմով փոխարինելու ուղղությամբ, որի շրջանակներում ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱՆՐԱԿՇՌՈ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԴԱՌՆՈՒՄ ԷԻՆ ՖԻԿՑԻԱ»[3]:

Ստալինը՝ Լենինի մահից հետո, աստիճանաբար կենսագործեց 1922թ.՝ վերը հիշատակված տեսակետները: ԽՍՀՄ ինչպես Միութենական հանրապետություններում, այնպես էլ ինքնավար շրջաններում ստեղծվել էին բոլշեւիկյան կայսրության տեղական մարմիններ:

Այն իրողությունը, որ Խորհրդային Միությունում ազգային փոքրամասնություններն անկախ պետականություն չեն ունեցել, այսօր անվիճելի ճշմարտություն է: Հենց այդ է պատճառը, որ առաջին իսկ հնարա-

1. *Политическая история России, (ուսումնական ձեռնարկ Ռուսաստանի Դաշնության բուհերի համար), Москва, 1988. էջ 346*
2. *Նույն տեղում, էջ 484:*
3. *Նույն տեղում, էջ 490-491:*

վորության դեպքում ԽՍՀՄ Միութենական հանրապետությունները դուրս եկան կայսրության կազմից եւ բռնեցին անկախության ուղին: Իսկ հիմա էլ այդ ուղու վրա են գտնվում ինքնավար հանրապետությունները: Իրական անկախության առկայության պայմաններում «անկախության շքերթ» տեղի չէր ունենալ, քանզի ԽՍՀՄ ազգային շրջանները մետրոպոլիայի հետ կապված էին չափազանց սերտ, տնտեսական, քաղաքական եւ ազգային անվտանգության ապահովման գործոններով: Սակայն, անկախությունը, մյուս գործոնների հետ համեմատած, գերակայող է. այդ պատճառով էլ ԽՍՀՄ Միութենական հանրապետությունները, առանց տատանվելու, դուրս եկան կայսրության կազմից:

Տեղի ունեցած իրադարձություններն օրինաչափ պատմական զարգացման արդյունք էին:

Ստեղծվել է տարօրինակ իրավիճակ: Համաշխարհային պատմագիտությունը, հակաճառություն չընդունելով, տասնամյակներ շարունակ պնդում է, որ Խորհրդային Միությունում ազգային փոքրամասնությունները զրկված են եղել անկախ ազգային պետականությունից: Նույնն է հաստատում նաեւ Ռուսաստանի անկախ պատմագիտությունը: Սակայն, անկախ այդ բոլորից, արդի Հայաստանում բոլոր մակարդակներով՝ պաշտոնական եւ ոչ պաշտոնական, հայտարարվում է, որ Միութենական Հանրապետություն հռչակված ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՀԱՆԴԻՍԱՆՈՒՄ է ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ԱՆԿԱԽ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ:

Երեւույթն արտառոց է եւ ազգային գաղափարախոսության տեսանկյունից՝ կարոտ հատուկ ուսումնասիրության:

Անվիճելի փաստերը ցույց են տալիս, որ ռուսական զորքերը 1920թ. նվաճել են Հայաստանը եւ կործանել Հայոց անկախ ազգային պետականությունը, իսկ անցումային մտավորականությունը գտնում է, որ հայ ժողովուրդն ազատագրվել է ռուսական 11-րդ բանակի կողմից եւ ԽՍՀՄ կազմում ունեցել է անկախ պետականություն: Ընդգծենք, որ տվյալ դեպքում խոսքը չի վերաբերում կոմունիստական պատմագիտությանը, այլ՝ անցումային մտավորականությանը:

Այս բավականին բարդ երեւույթն ունի պատմահոգեբանական խոր արմատներ: Դարերի ընթացքում էթնոսի Տեսակի ինքնապահպանման բնազդը՝ առնչված նրա գոյապահպանման առանձնահատկությունների, աշխարհաքաղաքական դժվարին պայմանների հետ, փոխում է իր բնույթը, փոխակերպում իր Նախասկզբնական բովանդակությունը եւ շեղվում բնականոն զարգացման ուղուց: Լինում են դեպքեր, երբ թույլ Տեսակը, դարերի փորձությունից հետո, հարկադրված է լինում իր ինքնապահպանման բնազդի խնդիրը փոխանցել ավելի ուժեղ Տեսակի՝ հանձնվելով նրա ողորմածությանը, ընդունելով նրա իշխանությունը, անցնելով նրա տիրապետության տակ: Նման իրողություն տեղի է ունե-

ցել նաեւ հայերի հետ: Հայն ընդունում է ուժեղ Տեսակի՝ ռուսի տիրապետությունը, թուրքի դեմ մղվող պայքարում իր ինքնապահպանման խնդրի լուծումը թողնելով նրան:

Սակայն, որպես կանոն, ուժեղ Տեսակն իր վրա վերցնելով թույլ Տեսակի պաշտպանությունը, նպատակ է հետապնդում ժամանակի ընթացքում կլանել նրան, ձուլել իր տեսակի մեջ: Թույլ Տեսակը, բնականաբար, մտնելով ուժեղ Տեսակի տիրապետության տակ, սպասում է բարենպաստ պատմական պահի, որպեսզի անկախություն ձեռք բերի: Հայ ժողովրդի համար նման համար պահը 1918 թվականն էր: Սակայն, ուժեղ Տեսակը Թույլի՝ նվաճված հայրենիքը համարում է իրենը եւ գործադրում է բոլոր միջոցները՝ զոհին իր երախից բաց չթողնելու համար: 1920 թվականին Ռուսաստանը հենց այդպես էլ վարվեց: Ուժեղի տիրապետության տակ գտնվող Թույլ Տեսակը երբեմն ձուլվում է, ոչնչանում, երբեմն էլ, օգտվելով պատմական բարենպաստ պահից, ուժ եւ կամք է գտնում իր մեջ՝ դուրս գալու ստեղծված վտանգավոր իրավիճակից եւ բռնելու անկախության ուղին: Պատմությունն առատաձեռն չէ՝ փոքր ժողովուրդներին անկախություն տալու հարցում, սակայն, այդ առումով հայ ժողովուրդը բախտավոր գտնվեց, ԽՍՀՄ-ը փլուզվեց, Միութենական հանրապետություններն անկախություն ստացան:

ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԺՈՂՈՎՈՒՐԴ ԻՆՔՆ Է ԱՊԱՀՈՎՈՒՄ ԻՐ ԻՆՔՆԱՊԱՀՊԱՆՈՒՄԸ, ԻՐ ԱՆԿԱԽ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ: ՈՉ ՄԻ ԺՈՂՈՎՈՒՐԴ ՄԻ ԱՅԼ ԺՈՂՈՎՐԴԻ՝ ԻՐ ՀԱՇՎԻՆ ՉԻ ՊԱՀՈՒՄ: ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿԱԶՄՈՒՄ ԼԻՆԵԼՈՒ ԳԱՂԱՓԱՐԸ՝ ՊԱՐԱԶԻՏԻԶՄԻ ԳԱՂԱՓԱՐ է, ՈՒՐԻՇԻ ՀԱՇՎԻՆ ԱՊՐԵԼՈՒ ԳԱՂԱՓԱՐ, ՄԻ ԵՐԵՎՈՒՅԹ, ՈՐԸ ՊԱՏՄԱԿԱՆՈՐԵՆ ԵՐԲԵՔ ՀԱՏՈՒԿ ՉԻ ԵՂԵԼ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻՆ: ԸՆԴ ՈՐՈՒՄ, ԱՅԴ ՊԱՐԱԶԻՏԻԶՄԻ ԳԻՆԸ ՇԱՏ ԹԱՆԿ ԱՐԺԵ: ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴՆ ՍԿԶԲԻՑ ԿՈՐՑՆՈՒՄ է ԻՐ ԱՆԿԱԽ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ԱՆԿԱԽ ՀԱՅՐԵՆԻՔԸ, ԻՍԿ ԱՅՆՈՒՀԵՏԵՎ՝ ՆԱԵՎ՝ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆԸ: ԱՅՆ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԸ, ՈՐՈՆՔ ՓՈՐՁՈՒՄ ԵՆ ԳՈՅԱՏԵՎԵԼ ՈՒՐԻՇԻ ՕԳՆՈՒԹՅԱՄԲ, ՈՒՐԻՇԻ ՄԻՋՈՑՈՎ, ՆՐԱՆՔ ԿՈՐԾԱՆՎՈՒՄ ԵՆ:

Ռուսաստանի տիրապետության տակ հայ ժողովուրդը, իրոք, ձերբազատված էր ֆիզիկական ոչնչացման վտանգից, բայց զրկված էր նաեւ ազգային անկախ պետականությունից եւ գտնվում էր կայսրության ժողովուրդների դանդաղ ձուլման մսաղացում: Հայերը՝ Ռուսաստանի կազմում գտնվելը համարել են Չարյաց փոքրագույնը, որպես հարկադրական, ժամանակավոր քայլ:

Դրա հետ միասին, ինչպես արդեն նշել ենք, ելնելով հայոց ազգային գաղափարախոսության հրամայականից, նկատի ունենալով թուրքական վտանգը եւ պանթուրքիզմի առկայությունը, Հայաստանը եւ ամբողջ հայ ժողովուրդը, ճակատագրի ընդհանրությամբ, ազգային ծրագրերից ելնող առանցքային հիմնախնդիրներով, առնչված են Ռուսաստանի հետ, բայց ոչ թե նրա կազմում, այլ կողքին գտնվելով, կազմակերպչորեն համախմբվելով Եվրոմիության նման մի կազմակերպության մեջ, որը կհանդիսանա անկախ պետությունների միավորում եւ կփոխարինի Վարշավայի պակտին, մի բան, որի կարիքը շատ է զգացվում:

Ինչեւիցե, անկախ հայ-ռուսական հարաբերությունների ռազմավարական բնույթից, անհրաժեշտ է ընդգծել այն կարեւոր իրողությունը, որ խորհրդային իշխանության տարիներին ծնված եւ ձեւավորված մտավորականության ինքնապահպանման բնազդը, անկախ պետականության անհրաժեշտության գաղափարը թուլացել էր:

Հենց դրանով է պայմանավորված այն չափազանց կարեւոր երեւույթի առկայությունը, որ քննադատելով Խորհրդային Հայաստանի առանձին թերությունները, բոլշեւիկյան կուսակցության ազգային քաղաքականության բնագավառում թույլ տված կոպիտ սխալները, Հայկական հարցի եւ Հայոց ցեղասպանության նկատմամբ ցուցաբերած անընդունելի մոտեցումները, այնուամենայնիվ, խորհրդահայ մտավորականությունը չհասավ բոլշեւիկյան Սիստեմի մերժման գաղափարին: Նույնիսկ այն ժամանակ, երբ Խորհրդային Միությունը գտնվում էր կործանման եզրին, երբ կայսրությունը նմանվում էր եռացող կաթսայի, երբ սկսվել էր Ղարաբաղյան Շարժումը, երբ շատ Միութենական հանրապետություններ արդեն առաջ էին քաշել անկախության պահանջը, Ղարաբաղյան շարժումը գնում էր՝ «Լենին-պարտիա-Գորբաչով» կարգախոսով, որի նպատակը Լեռնային Ղարաբաղի միացումն էր Խորհրդային Հայաստանին:

Խորհրդահայ մտավորականությունը սերտորեն կապված էր բոլշեւիկյան կայսրությանը: Խորհրդային տարիները խորհրդահայ մտավորականության ոսկեդարն էին: Խորհրդահայ մտավորականի՝ վերը նշված մոտեցման ձեւավորման վրա վճռական ազդեցություն է թողել «թուրքական վտանգի» առկայությունը, Ռուսաստանի հետ ռազմավարական դաշինքի անհրաժեշտությունը, որը փաստորեն պատմականորեն ձեւավորված թերարժեքության բարդույթի արտահայտությունն է:

Այդ իմաստով էլ զարմանալի չէ, որ Հայաստանի անկախության հռչակումից հետո, հանդիպելով առաջին իսկ լուրջ տնտեսական եւ քաղաքական դժվարություններին, Անցումային մտավորականությունը դարձավ դրոշակակիրը այն շարժման, որի նպատակը նահանջն էր անկախությունից, դեռեւս չձեւավորված Ռուսաստան-Ուկրաինա միությանը միանալը, որին ԱՊՀ մյուս երկրները հրաժարվեցին միանալ, քանզի այն նշանակում էր ազգային անկախության կորուստ:

Անցումային մտավորականությունը շատ լավ է հասկանում ազգային արժեքների նշանակությունը, բայց դեռեւս չի հասել այն գիտակցութ-

յան, որ ազգի եւ ազգային գոյատեւման հիմնական նախապայմանը անկախ պետականությունն է: Ստեղծված բարդ եւ ոչ միանշանակ իրավիճակում անցումային մտավորականությունը Հայաստանի եւ հայ ժողովրդի փրկությունը տեսնում է միայն Ռուսաստանի կազմում: Անցումային մտավորականության մոտ Ռուսաստանը հանդես է գալիս երկրորդ հայրենիքի դերում, իսկ ռուսերենը՝ երկրորդ մայրենիի դերում, որը նշանակում է սեփական հայրենիքի անկախության գաղափարի թուլացման եւ կորստի սկիզբ: Հայրենիքի գաղափարը չի կիսվում, այն ամբողջական հասկացություն է: Եթե որեւէ էթնոսի ներկայացուցիչ հանգում է երկրորդ հայրենիքի գաղափարին, այդ նշանակում է, որ նա գտնվում է սեփական անկախ Հայրենիքի գաղափարի կորստի ճանապարհին: Այդպես է տեղի ունենում մի էթնոսի անդամների ձուլումը մի այլ էթնոսի մեջ:

Գաղափարական խարխափումները, մի ծայրահեղությունից մյուսն ընկնելը, իրարամերժ տեսակետների պաշտպանությունը անցումային մտավորականության գործունեության առանցքն են կազմում: Անցումային մտավորականությունը մի կողմից պահպանում է ազգային արժեքները, մյուս կողմից էլ փորձում է Խորհրդային Հայաստանը ներկայացնել դրախտավայր, իսկ նրա ղեկավարներին՝ հրեշտակներ: Խորհրդային տարիներին միջազգային ստանդարտներով աղքատիկ կյանք վարած հայ աշխատավորի վիճակը ներկայացվում է վառ գույներով:

Երբ Հայաստանի Հանրապետության պարտվողական ղեկավարության լիդերի կողմից հայոց ազգային գաղափարախոսությունը՝ կեղծ քաղաքական կատեգորիա. ֆաշիզմ, իսկ պատմությունը՝ կեղծ գիտություն հռչակվեց, անցումային էլիտար մտավորականությունը ոչ գրավոր եւ ոչ էլ հրապարակային խոսքով հանդես չեկավ՝ ի պաշտպանություն ազգի գոյատեւման գաղափարի:

1997թ. աշնանը Հայաստանի պարտվողական իշխանությունների նախագահը հայտարարեց, որ Լեռնային Ղարաբաղը պետք է թողնել Ադրբեջանի կազմում՝ ներքին ինքնավարությամբ: Հայ ժողովուրդը՝ ազգային ուժերի ղեկավարությամբ, իր բողոքի ձայնը բարձրացրեց ցույցերում, հանրահավաքներում, ժողովներում, մամուլում, արտասահմանյան դեսպաններին ուղղված բողոքագրերում, թռուցիկներում եւ այլն: Ի վերջո ժողովուրդը հասավ իր բաղձալի նպատակին՝ պարտվողական իշխանությունները տապալվեցին:

Անցումային էլիտար մտավորականությունն այս պայքարին չէր մասնակցում:

Բարոյական տարրական նորմերը պահանջում են՝ պատմական իրադարձությունների ավարտից հետո, ետին թվով, հերոսի կեցվածք չընդունել: Սակայն, բարոյական ավանդական նորմերը եւ կյանքի հիմք դարձած արդի բարոյականության նորմերը ոչ մի ընդհանուր բան չունեն:

ՀՀ պարտվողական նախագահի տապալումից հետո արագորեն մեծանում է ազգային գաղափարախոսության, Հայկական հարցի պաշտպանների թիվը. գրվում են ոչինչ չասող գրքեր. հոդվածներ, հրավիրվում են դիլետանտական գիտաժողովներ եւ կազմակերպվում բազմաբնույթ այլ միջոցառումներ, որոնց թիվը շատ է, արդյունքը՝ չնչին:

Այս տխուր իրավիճակին վերջ տալու համար անհրաժեշտ է ստեղծել Հայոց ազգային գաղափարախոսության եւ Հայկական հարցի մեկ համազգային կենտրոն, որի աշխատանքներին պետք է մասնակցեն հայ ժողովրդի բոլոր կարող գիտական ուժերը:

Այսպիսով, որպես անցման շրջանի յուրահատկություն, Հայաստանի Հանրապետության քաղաքական դաշտի նշանակալից գործոններից մեկն է դարձել անցումային մտավորականությունը, որը մի ոտքով կանգնած է կարոտախտի դիրքերում, մյուս ոտքով՝ ազգային արժեքների պաշտպանության:

Սակայն, ազգը, ազգային գաղափարախոսությունը եւ բոլշեւիկյան «սոցիալիզմը» անհամատեղելի են, անհաշտ թշնամիներ: Բոլշեւիկյան «սոցիալիզմի» նպատակը ազգերի ոչնչացումն է:

Եթե հայ ժողովուրդը որպես ապրելակերպ պետք է ընտրի սոցիալիզմը, ապա դա լինելու է ոչ թե պատմության կողմից մերժված բոլշեւիկյան «սոցիալիզմը», այլ ավանդական եվրոպական սոցիալիզմը, դեմոկրատական սոցիալիզմը, որը մեծ հաջողությամբ կենսագործվում է հատկապես Սկանդինավյան երկրներում:

Պատրանքներ չպետք է լինեն: Խորհրդային իշխանության 70 տարիների ընթացքում քարոզված բոլշեւիկյան գաղափարախոսության ազդեցությունը միանգամից չի կարող վերանալ: Յուրաքանչյուր գաղափար, որն ստեղծվել է ժամանակի ընթացքում, կարող է վերացվել նույնպես ժամանակի ընթացքում, այն էլ՝ նոր գաղափարի, հակագաղափարի առաջքաշման դեպքում: Այդպիսի գաղափար հանդիսանում է ազգային գաղափարախոսությունը:

Հայոց պետականության՝ Հայաստանի անկախ Հանրապետության գոյատեւման եւ զարգացման միակ երաշխիքը ազգային գաղափարախոսությունն է, որը պետք է դրվի ազգային-պետական քարոզչության եւ կրթական համակարգի հիմքում: Այդ կարեւորագույն խնդրի կատարման ծանրությունն ընկնում է ազգային մտավորականության ուսերին:

5. «ՓՈՔՐ ԺՈՂՈՎՐԴԻ» ԿՈՆՑԵՊՑԻԱՆ

«Փոքր ժողովրդի» կոնցեպցիան պատկանում է ֆրանսիացի հայտնի գիտնական Օ. Կոշենին[1]:

Համաձայն Օ. Կոշենի կոնցեպցիայի, ֆրանսիական հեղափոխության մեջ վճռական դեր է կատարել մարդկանց մի խումբ, մի խավ, որին նա անվանում է«փոքր ժողովուրդ»: Հենց այդ «փոքր ժողովուրդն» է ստեղծում հեղափոխությանն անհրաժեշտ մարդու կերպարը, որի համար թշնամական ու զզվելի են այն ամենը, որոնք կազմում են ազգի արմատները:

«Փոքր ժողովրդի» ներկայացուցիչներին միավորող կազմակերպություններն իրենց անդամների համար ստեղծում են արհեստական մի աշխարհ, որտեղ լիովին ընթանում է նրանց կյանքը:

«Փոքր ժողովուրդը» ղեկավարվում է՝ «Ազատագրում մեռած ծանրությունից» կարգախոսով, որ նշանակում է ազատվել «հին աշխարհի» օրենքներին խիստ ենթարկված մարդկանցից. պատվի, գործի եւ հավատի մարդկանցից: Այդ նպատակով, հիշյալ կազմակերպություններում պարբերաբար իրականացվում են մաքրագործումներ, որի հետեւանքով ստեղծվում է՝ գաղափարական առումով ավելի մաքուր «փոքր ժողովուրդ», որը շարժվում է դեպի «ազատություն» այն իմաստով, որ ավելի ու ավելի է ազատագրվում «մեծ ժողովրդից»:

Համաձայն այդ կոնցեպցիայի, «փոքր ժողովրդի» անդամին, եթե նա անցել է դաստիարակության ամբողջ ճանապարհը, սպասում է հրաշալի գոյատեւում, նրա համար իրական կյանքի բոլոր դժվարությունները եւ հակասությունները դադարում են գոյություն ունենալուց, նա, կարծեք թե, ազատագրվում է կյանքի շղթաներից, ամեն ինչ նրա համար դառնում է հասարակ ու հասկանալի:

Բայց, դրա հետ միասին, նա արդեն չի կարողանում ապրել «փոքր ժողովրդից» դուրս: «Մեծ ժողովրդի աշխարհում» նա խեղդվում է՝ ջրից հանված ձկան նման: Այսպես՝ «Մեծ ժողովուրդը» վտանգ է դառնում «փոքր ժողովրդի» գոյության համար, եւ սկսվում է նրանց պայքարը՝ լիլիպուտները փորձում են կապել Գուլիվերին:

Ընդ որում, «փոքր ժողովուրդը» միայն իրեն է անվանում ժողովուրդ:

1.«Փոքր ժողովրդի» կոնցեպցիայի շարադրանքը տրվում է Ի.Շաֆարեւիչի՝ « Ոչնչի արդյոք Ռուսաստանն ապագա» / Մ.1991, ռուսերեն/ գրքի նյութերի հիման վրա. էջ 417-428:

Դրանով է բացատրվում այն պարադոքսային իրավիճակը, երբ հաղթական ժողովուրդը հայտնվում է փոքրամասնության մեջ, իսկ ժողովրդի թշնամի «փոքր ժողովուրդը»՝ մեծամասնության:

«Փոքր ժողովուրդը» «մեծ ժողովրդի» դեմ մղվող պայքարում ձգտում է կտրել բոլոր կապերը պատմական ավանդույթների հետ: Նա անտեսում է ժողովրդական տրադիցիաները, ժողովրդի բնավորությունը, դարերով մշակված ազգային արժեքների համակարգը:

«Փոքր ժողովրդի» գործունեության հիմնական ուղեգծերից մեկը դառնում է սեփական ժողովրդի պատմության սեւացումը, պատմությունը անհաջողությունների մի ամբողջ շղթա ներկայացնելը, պատմական տրադիցիաներից հրաժարումը, որպեսզի ազատվի ապագան «կառուցելու» խանգարիչ հանգամանքներից:

«Փոքր ժողովուրդը» ստեղծում է համոզմունք այն մասին, որ ամեն մի բանական բան կարելի է վերցնել միայն դրսից, պատճենավորելով օտար քաղաքական համակարգերը:

Ռուս հայտնի գիտնական, հասարակական-քաղաքական գործիչ Ի.Շաֆարեւիչն իր վերոհիշյալ գրքում շարադրելով Օ. Կոշենի «փոքր ժողովրդի» կոնցեպցիայի հիմնախնդիրները, ասել է. « Ինձ թվում է, այդ հիանալի կոնցեպցիան կիրառելի է ոչ միայն ֆրանսիական հեղափոխության էպոխայի նկատմամբ. նա լույս է սփռում պատմական երեւույթների շատ ավելի լայն շրջանակի վրա:

Հավանական է, յուրաքանչյուր ժողովրդի կյանքի ճգնաժամային, բեկումնային շրջանում առաջանում է այդպիսի «փոքր ժողովուրդ», որի բոլոր կենսական դիրքորոշումները ՀԱԿԱՌԱԿ են ժողովրդի աշխարհայացքին: Այն ամենը, որ օրգանապես աճել է դարերի ընթացքում՝ ազգի հոգեւոր կյանքի բոլոր արմատները, նրա կրոնը, ավանդական պետական կառուցվածքը, բարոյական սկզբունքները, կյանքի կերտվածքը - այդ բոլորը թշնամական են համարվում եւ ներկայացվում են որպես ծիծաղելի ու կեղտոտ նախապաշարմունքներ, որոնք ենթակա են անգիջում ոչնչացման»[1]:

Եվ իրոք, ամեն մի արմատական հեղափոխություն մերժում է ժողովրդի անցյալն ու ներկան, հրաժարվում «պատմության բեռից» եւ ներկայացնում ապագա հասարակարգի ստեղծման ծրագիր:

Ապազգային բոլոր ուժերը, այսինքն՝ «փոքր ժողովուրդները» իշխանության համար մղվող պայքարում մերժում են ժողովրդի անցյալն ու ներկան, ազատագրվում անցյալի «բեռից» եւ առաջադրում են ապագայի ծրագրեր:

Համաշխարհային պատմության փորձը ցույց է տալիս, որ իրոք, աշ-

1. Ի.Շաֆարեւիչ, նշվ. աշխատությունը, էջ 423:

աշխարհի բոլոր ժողովուրդների պատմության շրջադարձային պահերին, անցումային շրջաններում պատմական ասպարեզ է մտնում «փոքր ժողովուրդը», ակտիվ գործունեություն է ծավալում՝ ժողովրդին «փրկելու» եւ «Նոր ուղիով» տանելու կարգախոսներով:

Ժյուլ Միշլեն իր «Ժողովուրդ» խորագրով հայտնի աշխատության մեջ խոսելով ֆրանսիական հեղափոխության մասին, գրել է «Հեղափոխությունը խաչ է քաշել Ֆրանսիայի ամբողջ անցյալի վրա, հայտարարել է ժողովրդին, որ անցյալում ուշադրության արժանի ոչ մի բան չկա»[1]:

Բոլոր քաղաքական հեղափոխությունները հանդես են գալիս հին աշխարհը քանդելու եւ նոր աշխարհ ստեղծելու արմատական կարգախոսներով: Հաջողության հասնելու, իշխանությունը գրավելու դեպքում «փոքր ժողովուրդը» փորձում է իրականացնել հին աշխարհը քանդելու իր ծրագիրը: Սակայն, իշխանությունը վերցնելուց հետո «փոքր ժողովուրդը» ընդհարվում է ազգային ուժերի խաղաղ կամ ոչ խաղաղ դիմադրությանը: Այդ պայքարը, ի վերջո, ավարտվում է ազգային ուժերի հաղթանակով:

Ազգային արժեքները հավերժական բնույթի են եւ ունեն իրենց էվոլյուցիոն զարգացման օրինաչափությունները: Քաղաքական հեղափոխությունները վճռորոշ ազդեցություն չեն ունենում ազգային արժեքների զարգացման ընթացքի վրա: Եթե քաղաքական հեղափոխությունները գալիս են մեկը մյուսին ժխտելու, ապա ազգային հեղափոխությունները հետապնդում են մեկ նպատակ՝ ավելի կատարյալ դարձնել ազգային արժեքների համակարգը եւ անվտանգ ուղի հարթել ազգի ինքնապահպանման ու զարգացման համար:

Ընդհանրապես, անկախ տարբեր երկրներում ունեցած առանձնահատկություններից, որպես կանոն, բոլոր արմատական հեղափոխությունների ժամանակ հանդես են գալիս ապազգային ուժեր՝ «փոքր ժողովուրդների» ձեւով եւ փորձում ժողովրդին կտրել անցյալից, իր պատմությունից, իր ազգային խնդիրներից ու տանել մի ճանապարհով, որը լիովին հակասում է ազգային շահերին:

Ահա թե ինչու «մեծ ժողովուրդը», ելնելով ինքնապահպանման բնազդից, պետք է ժամանակին վիրահատի իր մարմնում տեղ գտած այն չարորակ ուռուցքը, որն անվանվում է «փոքր ժողովուրդ»:

1. *Жюль Мишле, Народ, М., 1965, стр. 8.*

***

Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեի եւ նրա հիման վրա ստեղծված Հայոց Համազգային շարժում կուսակցության պատմության եւ գաղափարախոսության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հանձին այդ կազմակերպությունների, Հայաստանում գործում էր «փոքր ժողովուրդը»:

Ծանոթությունը «փոքր ժողովրդի» եւ ՀՀՇԿ գաղափարախոսությունների հիմնադրույթներին ոչ մի կասկած չի թողնում, որ այդ կազմակերպությունները ծնունդ են առել նույն արմատներից եւ հետապնդում են նույն խնդիրները:

«Փոքր ժողովրդի» եւ ՀՀՇԿ գործելակերպի անգամ թռուցիկ համեմատության դեպքում աչքի են խփում այդ երկու կազմակերպություններում պարբերաբար իրագործվող մաքրագործումները, որոնք նպատակ են հետապնդում մաքրվել անհարազատ տարրերից եւ ամրապնդվել գաղափարապես՝ ապազգային սկզբունքներով: Անցած տարիների ընթացքում ՀՀՇԿ հիմնադիր ղեկավարների մեծ մասը հեռացել կամ հեռացվել է այդ կազմակերպությունից: Հայաստանում գոյություն ունի ՀՀՇ-ածին կուսակցությունների մի մեծ խումբ: Ընդ որում, ՀՀՇ-ածին կուսակցությունների եւ ՀՀՇԿ-ի գաղափարախոսությունները գրեթե չեն տարբերվում: Ելնելով բոլշեւիկների փորձից, հայտնի է, որ մաքրագործումները նման կազմակերպություններում վերջ չունեն: Ժամանակ առ ժամանակ կատարվող կադրային այդ վիրահատությունները նպատակ ունեն ապահովել կազմակերպության կուլտի անառարկելիությունը:

Մերժելով ազգային գաղափարախոսությունը, ազգային համաձայնությունը, պատմությունը, ժողովրդի անցած ամբողջ պատմական ուղին համարելով սխալ, Հայոց Համազգային շարժում կուսակցությունը եւ նրա լիդեր Լ. Տեր-Պետրոսյանն ազատվում են պատմության «բեռից» եւ ազատ են անելու այն, ինչ կթելադրի ապազգային գաղափարախոսությունը: Բայց այդ քաղաքականության կենսագործումը հանդիպում է ազգային մտավորականության անզիջում դիմադրությանը:

ՀՀՇԿ պայքարն ազգային մտավորականության դեմ «փոքր ժողովրդի» պայքարն է «մեծ ժողովրդի» դեմ՝ Հայաստանի Հանրապետությունում:

Ականատեսները լավ են հիշում, թե ինչպիսի անողոք մեթոդներով էին ապազգային ուժերը պայքարում ազգային մտավորականության դեմ:

Ազգային ոչ մի ավանդույթ, արժեք, ազգային ոչ մի գործիչ՝ մեռած, թե կենդանի, անգամ հայոց կաթողիկոսը, չխնայվեց այդ տարիներին: Տեղի էր ունենում համատարած վարկաբեկում, ազգային արժեքների

կործանում, պատմության սեւացում, արծանների տապալում եւ այլն: Համատարած հարձակում էր գնում հայ ժողովրդի ամբողջ պատմության դեմ: Տգետները վարկաբեկում էին հայոց մեծերին, ընդ որում, ազգային բոլոր գործիչները մեղադրվում էին ՊԱԿ-ի գործակալներ լինելու մեջ:

Ավելի ուշ, երբ Ղարաբաղյան կոմիտեի անդամների մասին մամուլում նյութեր հրապարակվեցին, նրանց՝ ՊԱԿ-ի գործակալներ լինելու մասին, այդ նյութերը մնացին անպատասխան:

Բայց, ի վերջո, եթե ոչ բոլորի, ապա գոնե Հայաստանի Հանրապետության նախագահի մասին ժողովուրդը պետք է ստանար անհրաժեշտ բացատրություններ: Հայաստանի Հանրապետության նախագահը շրջում էր ԽՍՀՄ ՊԱԿ-ի նախագահ Կրյուչկովի նվիրած մեքենայով: ԽՍՀՄ ՊԱԿ-ի նախագահը հո ամեն շարքային մահկանացուի ավտոմեքենա չի՞ նվիրում...

Այս հարցադրումը, բնականաբար, չէր լինի, եթե Հայաստանի Հանրապետության նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը չղեկավարվեր ապազգային գաղափարախոսությամբ եւ ազգային գաղափարախոսությունը չորակեր ֆաշիզմ:

Ամփոփենք. պատմական իրադարձությունների համեմատական ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ժամանակին Օ.Կոշենի կողմից առաջ քաշված «փոքր ժողովուրդ» եւ արդի փուլում գիտական շրջանառության մեջ գտնվող «ապազգային ուժեր» հասկացությունները համարժեք են:

Ազգային արմատներից կտրված, ազգի ավանդույթների ու պատմական հիշողության դեմ պայքարող ուժերին Կոշենն անվանում է «փոքր ժողովուրդ», իսկ մեր ժամանակներում՝ «ապազգային ուժեր»:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ՝ ՀԻՆԳԵՐՈՐԴ ԳԼԽԻ

Հինգերորդ գլխի հիմնախնդրի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ յուրաքանչյուր ազգի ազգային գաղափարախոսություն ունի նաեւ իր ներքին թշնամին, որը բաղկացած է ապազգային ուժերից: Ապազգային գաղափարախոսության ներքին թշնամին իր դրսեւորումն է գտնում պարտվողականության եւ թերարժեքության բարդույթի ձեւով, որի հիմքում ընկած է ինքնապահպանման բնազդի թուլացումը կամ լիովին կորուստը:

Ապազգային ուժերի առաջացման առաջին աղբյուրը պատմակենսաբանական է, երկրորդը՝ սոցիալական, առնչված հեղափոխությունների եւ ժողովուրդների պատմության առանձնահատկությունների հետ:

Յուրաքանչյուր արմատական սոցիալական հեղափոխություն մերժում է ազգային անցյալը, ներկան եւ առաջարկում զարգացման «նոր ուղի»: Ընդ որում, ապազգային ուժերն իշխանության գլուխ են գալիս անցյալի պատմության հիմնախնդիրների շահարկմամբ: Նրանք, իրենց ծրագրերն ազատ իրականացնելու համար, մերժում են անցյալը: Իսկ անցյալը ժողովրդի պատմությունն է, մշակութային արժեքների համակարգը եւ ազգային գաղափարախոսությունը:

Ապազգայնացման պրոցեսը հայերի մոտ ավելի է խորացել այն պատճառով, որ Հայոց աշխարհը, շուրջ հազար տարի, գտնվել է օտարի տիրապետության տակ, վերջապես՝ հայ ժողովուրդը ենթարկվել է ցեղասպանության:

Դարերի ընթացքում հայերի մոտ արտահայտություն գտած պարտվողականության հոգեբանությունը եւ թերարժեքության բարդույթը չէին կարող կարճ ժամանակահատվածում լիովին վերացվել եւ իրենց զգացնել են տալիս հատկապես պատմության անցումային շրջաններում:

Ժողովրդի պատմության շրջադարձային, բախտորոշ պահերին ապազգային ուժերը միավորվում են՝ ազգային մտավորականությանը ոչնչացնելու, ազգին «նոր ուղիով» տանելու համար: Իսկ ապազգային ուժերի «նոր ուղին» ազգին տանում է դեպի անխուսափելի կործանում:

Ապազգայնության գաղափարախոսությունը Հայաստանում ներկայացնում է Հայոց Համազգային շարժում կուսակցությունը:

Պարտվողականությունը Հայաստանում իշխանության ղեկի մոտ հայտնվեց, պետական գաղափարախոսություն հռչակվեց, հասարակական-քաղաքական ուժ դարձավ Ղարաբաղյան կոմիտեի եւ ՀՀՇԿ-ի միջոցով:

ՎԵՐՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ԵՐՐՈՐԴ ՀԱԶԱՐԱՄՅԱԿԻ ՇԵՄԻՆ. ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՁԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ.

Բաբելոնն է եղել մեր սիրոյանը, տե՛ս-
Անհետ կորել, անցել է- չար մշուշի պես

Ասորիքն է եղել մեր թշնամին- ահա
Դաշտ է տեղը եւ չկա քար քարի վրա:

Ամրակուռ է մեր հոգին- դարերի զավակ՝
Շատ է տեսել մեր սիրտը ավեր ու կրակ:

Բարբարոսներ շատ կրգան ու կանցնեն անհետ.
Արքայական իսուքը մեր կըմնա հավետ:

Եգիպտական բուրգերը փոշի կդառնան,
Արեւի պես, երկիր իմ, կըվառվես վառման:

ՎԱՀԱՆ ՏԵՐՅԱՆ

Հայ ժողովուրդը մի քանի հազարամյակ ապրել է ու ստեղծագործել, ունեցել է մեծ հաջողություններ ու պատմության տխուր էջեր՝ գոյատեւելով աշխարհաքաղաքական ու պատմաէթնիկական անբարենպաստ գործոնների շրջանակներում:

Հայ ժողովուրդը ոչ միայն կարողացել է գոյատեւել եւ զարգանալ, այլեւ երրորդ հազարամյակ է թեւակոխում դարակազմիկ հաջողությամբ՝ վերականգնել է անկախ ազգային պետականությունը:

Հայոց անկախ պետականությունը ձեռք է բերվել բազմաթիվ սերունդների հազարամյա հերոսական պայքարի, մաքառումների եւ թափված արյան գնով:

Մինչդեռ, հայ ժողովրդին հասակակից շատ ժողովուրդներ եւ քաղաքակրթություններ պահպանվել են միայն պատմության էջերում: Հայ ժողովուրդը գոյապահպանվել եւ խոշորագույն հաջողությունների է հասել շնորհիվ հայոց ազգային գաղափարախոսության:

Աշխարհաքաղաքական գլոբալ իրադարձությունները, ժողովուրդների տեղաշարժերը եղել են մշտական երեւույթ համաշխարհային պատմության մեջ: Դարերի ընթացքում ստեղծվել են հզոր կայսրություններ եւ քաղաքակրթություններ, որոնք, չդիմանալով պատմության փորձություններին, դադարել են գոյություն ունենալուց, անցել են պատմության գիրկը: Աշխարհաքաղաքական այդ պրոցեսները որոշ ժողովուրդների համար եղել են բարենպաստ, իսկ շատերի համար էլ՝ աննպաստ եւ նույնիսկ՝ կործանարար:

Համաշխարհային պատմական իրադարձությունների ոլորտում հայ ժողովուրդը բռնել է պատմության քննությունը, կարողացել է դիմակայել պատմության փորձություններին: Հայ ժողովուրդը, ճիշտ է, չի կարողացել պահպանել իր անկախ պետականությունը, տարածքային ամբողջականությունը, բայց չի կործանվել, ապահովել է իր գոյապահպանումը եւ հետեւողականորեն պայքարել ազգային անկախության համար:

Միջինասիական տափաստաններից դեպի արեւմուտք շարժվող թուրքական ցեղերը, նվաճելով հսկայածավալ տարածություններ, կործանեցին նաեւ Հայոց պետականությունը եւ սպառնում էին անգամ եվրոպական քաղաքակրթության գոյությանը: Կռիվն անզիջում էր եւ անողոք: Հայ ժողովուրդն այդ ճակատագրական կռվի մի փոքրիկ օղակն է միայն:

Եվ այդ կենաց ու մահվան կռվից հայ ժողովուրդը, թեկուզեւ մեծ կորուստներով, դուրս եկավ հաղթանակած, որովհետեւ պահպանեց իր ազգային ինքնությունը եւ պետականությունը, որն իրական երաշխիք է՝ գալիք հազարամյակներում ապրելու եւ զարգանալու համար:

Երկրորդ հազարամյակը ՀԱՅՈՑ համար սկսվեց պետականության կորստով եւ ավարտվեց՝ Պետականության վերականգնումով:

Հայ ժողովուրդը երրորդ հազարամյակ է տանում իր «Պատմական բեռը»՝ ՀԱՅԿԱԿԱՆ հարցը՝ որպես ռազմավարական ծրագիր: Երրորդ հազարամյակի շեմին Հայաստանի ավանդական աշխարհաքաղաքական եւ պատմա-էթնիկական գործոնները չեն փոխվել: Չի փոխվել նաեւ վերջին՝ շուրջ հազար տարվա ազգային թշնամին, որը կազմակերպել է Հայոց ցեղասպանությունը եւ գրավել Հայոց Հայրենիքի տարածքի շուրջ 90 տոկոսը: Օրակարգում է գտնվում թուրքախոս ժողովուրդների ազգային գաղափարախոսությունը՝ պանթուրքիզմը, որի իրականացումը նշանակում է Հայաստանի եւ Հայ ժողովրդի ոչնչացում:

Եվ, չնայած դրան, այսօր, 21-րդ դարի շեմին, ապազգային ուժերի կողմից հայ ժողովրդին առաջարկվում է հրաժարվել հայոց ազգային գաղափարախոսությունից եւ ընտրել զարգացման «նոր ուղի»: Հայոց ազգային գաղափարախոսությունը հայտարարվում է կեղծ քաղաքա-

կան կատեգորիա, անգամ՝ ֆաշիզմ: Այսինքն՝ հայ ժողովրդին առաջարկվում է գոյապահպանվել եւ գործել առանց ազգային գաղափարախոսության :

Մինչդեռ անվիճելի է, որ այն ժողովուրդները, որոնք չեն ղեկավարվել... ազգային գաղափարախոսությամբ, կործանվել են:

Հայոց ազգային գաղափարախոսությունից հրաժարվելու դեպքում, հայ ժողովրդին սպառնալու է ոչնչացման, նոր ցեղասպանության վտանգ:

Իսկ ազգային գաղափարախոսության ավանդական հունով ընթանալու, ազգային սրբությունների ու արժեքների վրա հենվելու, ազգային շահերից ելնելու՝ ավանդական դաշնակիցներից, մասնավորապես, ռուսական կողմնորոշումից չհրաժարվելու դեպքում 21-րդ դարը Հայ ժողովրդին կբերի նոր պատմական հաջողություններ. ՀԱՅԱՍՏԱՆԻ հզոր Հանրապետություն, իսկ այնուհետեւ՝ պատմական Հայրենիքի ազատագրում:

Հայ ժողովուրդը գործել ու գործելու է ազգային գաղափարախոսության հրամայականով:

ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔ ՉՈՒՆԻ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄՈՒՏՔ 5

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 6

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ. ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ 7

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ. ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՉԵՎԱՎՈՐՄԱՆ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ 50

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ. ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՄԱՐՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ՉԵՎԱՎՈՐՄԱՆ ՈՒՂԻՆԵՐՈՒՄ 116

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ. ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ 168

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ. ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԹՇՆԱՄԻՆ. ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԹՇՆԱՄՈՒ ԱՌԱՋԱՑՄԱՆ ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՐՄԱՏՆԵՐԸ. 223

ԼԵՆԴՐՈՒԾ ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ

ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Համակարգչային շարվածքը
եւ ձեւավորումը՝ Մ. Հարությունյանի
Տեխ. խմբագիր՝ Վ. Մնացականյան

Ստորագրված է տպագրության՝ 21.06.1999թ.: Ծավալը՝ 17.5 պայմանական մամուլ: Չափսը՝ 60x84 1/32: Թուղթը՝ օֆսեթ տպագրական թիվ 1: Տպագրությունը՝ օֆսեթ: Տպաքանակը՝ 1000 օրինակ: Գինը՝ պայմանագրային:

Տպագրված է «Հրազդան-1» ՍՊԸ տպարանում:
Երեւան-1999